

Նախագիծ

«ՇԻԿԱՀՈՂ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ ՊՈԱԿ-Ի

(«ՇԻԿԱՀՈՂ» արգելոց, «ԶԱՆԳԵԶՈՒՐ», «ԽՈՒՍՏՈՒՓ» և «ՍՈՍՈՒ
ՊՈՒՐԱԿ» արգելավայրեր)

2014-2018թթ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Երևան 2013 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	7
1.1 ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքները.....	7
1.2. Կառավարման պլանի մշակման անհրաժեշտությունը	10
1.3. «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլանավորման նպատակը և խնդիրները.....	10
 ԳԼՈՒԽ 2. «ՇԻԿԱՀՈՂ» ԱՐԳԵԼՈՑԻ, «ԶԱՆԳԵԶՈՒՐ», «ԽՈՒՍՏՈՒՓ» և «ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	12
2.1. Տեղադիրքը	12
2.1.1. «Շիկահող» արգելոց.....	12
2.1.2. «Զանգեզուր» արգելավայր.....	12
2.1.3. «Խուստուփ» արգելավայր	12
2.1.4. «Սոսու պուրակ» արգելավայր	13
2.2. Ռելիեֆը.....	13
2.2.1. «Շիկահող» արգելոց.....	13
2.2.2. «Զանգեզուր» արգելավայր.....	14
2.2.3. «Խուստուփ» արգելավայր	15
2.2.4. «Սոսու պուրակ» արգելավայր	15
2.3. Կլիման.....	15
2.3.1. «Շիկահող» արգելոց.....	15
2.3.2. «Զանգեզուր» արգելավայր.....	15
2.3.3. «Խուստուփ» արգելավայր	16
2.3.4. «Սոսու պուրակ» արգելավայր	16
2.4. Զրագրությունը	16
2.4.1. «Շիկահող» արգելոց.....	16
2.4.2. «Զանգեզուր» արգելավայր.....	17
2.4.3. «Խուստուփ» արգելավայր	17
2.4.4. «Սոսու պուրակ» արգելավայր	17
2.5. Հողերը	17
2.5.1. «Շիկահող» արգելոց.....	17
2.5.2. «Զանգեզուր» արգելավայր.....	18
2.5.3. «Խուստուփ» արգելավայր	18
2.5.4. «Սոսու պուրակ» արգելավայր	19
2.6. Էկոհամակարգերը	19
2.6.1. «Շիկահող» արգելոց.....	19
2.6.2. «Զանգեզուր» արգելավայր.....	20
2.6.3. «Խուստուփ» արգելավայր	21
2.6.4. «Սոսու պուրակ» արգելավայր	21
 ԳԼՈՒԽ 3. «ՇԻԿԱՀՈՂ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ	22
3.1. Բուսական աշխարհը	22
3.1.1. «Շիկահող» արգելոց.....	22
3.1.2. «Զանգեզուր» արգելավայր.....	23
3.1.3. «Խուստուփ» արգելավայր	24
3.1.4. «Սոսու պուրակ» արգելավայր	25
3.2. Կենդանական աշխարհը	26
3.2.1. «Շիկահող» արգելոց.....	26

3.2.2. «Զանգեզուր» արգելավայր.....	30
3.2.3. «Խուստուփ» արգելավայր	34
3.2.4. «Սոսու պուրակ» արգելավայր	37
ԳԼՈՒԽ 4. «ՇԻԿԱՀՈՂ» ԱՐԳԵԼՈՑԻ, «ԶԱՆԳԵԶՈՒՐ», «ԽՈՒՍՏՈՒՓ» և «ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ	38
4.1. Ժողովրդագրություն.....	38
4.2. Հողերի և բնական ռեսուրսների օգտագործումը.....	48
ԳԼՈՒԽ 5. «ՇԻԿԱՀՈՂ» ԱՐԳԵԼՈՑ ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	59
5.1. «Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման վարչական ծրագիր	60
5.1.2. «Շիկահող» ՊՈԱԿ-ի անձնակազմի որակավորման բարձրացում	61
5.1.3. Վարչական ծրագրով նախատեսվող ենթակառուցվածք.....	62
5.1.4. «Շիկահող» ՊՈԱԿ-ի վարչական շենք, այցելուների կենտրոն, ավտոտնակներ և առանձին տեղամասեր տանող ճանապարհներ	62
5.2. Արգելոցի և արգելավայրերի պահպանության խնդիրները.....	63
ԳԼՈՒԽ 6. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	68
6.1. Գիտական հետազոտություններ	68
6.2. Կենսաբազմազանության մոնիտորինգի նպատակը և խնդիրները	73
6.3. Արգելոցի և արգելավայրերի կենսաբազմազանության մոնիթորինգի օբյեկտները.....	73
6.4. ԿԲՄ հիմնական ինդիկատորների ընտրությունը	74
6.5. Տեսակի և պոպուլյացիայի մակարդակով առաջարկվող ինդիկատորները	74
6.6. Խոշոր կաթնասունների մոնիթորինգի մեթոդներ և դրանց ստանդարտացում	74
6.6.1. Մոնիթորինգի մեթոդներ	74
6.6.2. Մոնիթորինգի ստանդարտացում	92
ԳԼՈՒԽ 7. «ՇԻԿԱՀՈՂ» ԱՐԳԵԼՈՑ ՊՈԱԿ-Ի ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ	93
7.1. Ընդհանուր տեղեկություններ	93
7.2. Ծրագրի նպատակը և խնդիրները	94
7.3. Հնարավոր խոչընդոտներ	94
7.4. Բնական ժառանգություն	95
7.5. Պատմամշակութային ժառանգություն	97
7.6. Հիմնական ենթակառուցվածքներ	99
7.7. Համայնքների տուրիզմի ներուժը	99
7.7.1. Գեղանուշ	100
7.7.2. Ճակատեն	100
7.7.3. Շիկահող	101
7.7.4. Ծավ/Շիշկերտ	101
7.7.5. Լեռնաձոր	102
7.7.6. Վարդանիձոր.....	103
7.8. Երթուղիների ընտրության չափանիշները	104
7.9. Էկոտուրիզմի ձևերը.....	104
7.10. Էկոտուրիզմի երթուղիների նկարագրություն	105
7.11. Շիկահող» պետական արգելոց.....	105

«Շիկահողե արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

7.11.1. Շիկահող - Կենտու պուրակ	105
7.11.2. Սրաշեն -Ներքին Հանդ -Մոսու պուրակ արգելավայր.....	106
7.11.3. Շիկահող - Ջրվեժ - Կեմանց գյուղատեղի.....	107
7.11.4. Շիկահող - Քսաջուր /Քոսաջուր/- Մազրա գյուղատեղի	107
7.11.5. Ծավ - Սանալու - Մթնածոր.....	108
7.12. «Խուստուփ» արգելավայր.....	108
7.12.1. Կապան – Ջազեձոր – Խուստուփ լեռնագագաթ	109
7.12.2. Շիշկերտ – Խուստուփ լեռնագանգված - Գեղանուշ	110
7.13. «Զանգեզուր» արգելավայր.....	111
7.13.1. Շինուհայր – Սատանի կամուրջ - Տաթև - Արամազդ	111
7.13.2. Գեղի - Քիրս - Արամազդ	112
7.13.4. Վերին Գիրաթաղ – Համլետավան – Շղարջիկ	113
7.13.5. Քաջարան - Օաղքարի լիճ	113
7.13.6. Քաջարանցի ձոր - Գոգի լիճ /Կապուտան/	114
7.14. Կարողությունների հզորացում.....	114
7.15. Անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորում	115
7.16. Էկոտուրիզմի շուկայավարում.....	118
7.17. Տեղական բնակչության մասնակցություն.....	119
7.18. Ծառայությունների և սպասարկման կազմակերպում	119
7.19. Ընդհանուր պահանջներ	121
7.20. Ենթակառուցվածքներին ներկայացվող պահանջներ	122
7.21. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները.....	123
7.22. Էկոտուրիզմի ազդեցությունների մոնիթորինգ	124

ԳԼՈՒԽ 8. «ՇԻԿԱՀՈՂ» ԱՐԳԵԼՈՑԻ, «ԶԱՆԳԵԶՈՒՐ», «ԽՈՒՍՏՈՒՓ» և «ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ 2014 -2018ԹԹ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.....

8.1.«Շիկահող» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակ.....	127
8.2. «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի գործադրման ծախսերի հաշվարկ.....	129
8.3. «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի վարչական շենքերի և շինությունների` 2014 թվականի ջեռուցման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկ.....	130
8.4.«Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի 2014 թ.-ի էլեկտրաէներգիայի ծախսերի /բացառությամբ ջեռուցման/ հաշվարկ.....	132
8.5.Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ - ի ջրօգտագործման նորմայի հաշվարկ	134
8.6. «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի 2014 թվականի կապի ծառայությունների վճարների հաշվարկ	135
8.7.«Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերի հաշվարկ	138
8.8 «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող այցելուների ծառայություններից և տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների հաշվարկ	140
8.9 «Զանգեզուր» պետական արգելավայրի 2014-2018թ. գնահատված գործառնական բյուջե համաձայն կառավարման պլանի.....	141

ԳԼՈՒԽ 9. «ՇԻԿԱՀՈՂ» ԱՐԳԵԼՈՑԻ, «ԶԱՆԳԵԶՈՒՐ», «ԽՈՒՍՏՈՒՓ» և «ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ 2014 – 2018ԹԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Աղյուսակ 30.....

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	161
Հավելված 1. Մնկերի և բույսերի տեսակների ներկայացվածությունը «Զանգեզուր» արգելավայրի տարածքում	
Հավելված 2. Մնկերի և բույսերի տեսակների ներկայացվածությունը նախատեսվող «Խուստուփ» արգելավայրի տարածքում.....	237

Հավելված 3. Մսկերի և բույսերի տեսակների ներկայացվածությունը նախատեսվող «Շիկահող» արգելոցի տարածքում.....	288
Հավելված 4. Կենդանական տեսակների ներկայացվածությունը «Զանգեզուր» արգելավայրի տարածքում...	315
Հավելված 5. Կենդանական տեսակների ներկայացվածությունը նախատեսվող «Խուստուփ» արգելավայրի տարածքում.....	331
Հավելված 6. Կենդանական տեսակների ներկայացվածությունը «Շիկահող» արգելոցի տարածքում.....	345
Հավելված 7. Խոշոր կաթնասունների մոնիթորինգի արձանագրությունների ձևեր	

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԷԱԿ	Էկոտուրիզմի և այցելությունների կազմակերպման ծրագիր
ՄԱԿՁԾ/UNDP	Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
KfW	Գերմանական զարգացման բանկ
IUCN	Բնության պահպանության միջազգային միության
ԱՍՔ	Անդրսահմանային միացյալ քարտուղարություն
ԲՀՀ/WWF	Բնության համաշխարհային հիմնադրամ
GEF	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
CEPF	Կրիտիկական էկոհամակարգերի համագործակցության հիմնադրամ
CPAF	Պահպանվող տարածքների Կովկասյան հիմնադրամ
ՀՀ ԲՆ	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն
ՀՀ ԳՆ	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն
ՀՀ ՏԿՆ	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն
ԿԿԳ	Կենսառեսուրսների կառավարման գործակալություն
ՀՀ ԳԱԱ	ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածք
ԲՊ	Բնական պարկ
ԿԲ	Կենսաբազմազանություն

Քարտեզներ

- Քարտեզ 1 Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները
- Քարտեզ 2 «Շիկահող» պետական արգելոցի, «Սոսու պուրակ», «Խուստուփ», «Զանգեզուր» պետական արգելավայրերի և ընդլայնվող տարածքի տեղադրությունը
- Քարտեզ 3 «Շիկահող» պետական արգելոցի լանդշաֆտային գոտիները
- Քարտեզ 4 «Զանգեզուր» պետական արգելավայրի սահմանները և ընդլայնվող տարածքի հողօգտագործումը
- Քարտեզ 5 «Խուստուփ» պետական արգելավայրի սահմանները և հողօգտագործումը
- Քարտեզ 6 «Շիկահող» պետական արգելոցի ենթակառուցվածքը
- Քարտեզ 7 «Զանգեզուր» պետական արգելավայրի ենթակառուցվածքը
- Քարտեզ 8 «Խուստուփ» պետական արգելավայրի ենթակառուցվածքը
- Քարտեզ 9 «Շիկահող» պետական արգելոցի այցելուների ծրագրի ենթակառուցվածքը
- Քարտեզ 10 «Խուստուփ» պետական արգելավայրի այցելուների ծրագրի ենթակառուցվածքը
- Քարտեզ 11 «Զանգեզուր» պետական արգելավայրի այցելուների ծրագրի ենթակառուցվածքը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը ապահովելու նպատակով սոցիալ տնտեսական ժամանակակից պայմաններին համահունչ կառավարման պլանի մշակումը նպատակաուղղված է «Կենսաբազմազանության մասին» Կոնվենցիայի դրույթների իրականացմանը, հանրապետության լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության պահպանության հետագա բարելավմանը, բնապահպանական և բնօգտագործման աշխատանքների ներդաշնակեցմանը, այդ բնագավառում միասնական համակարգված քաղաքականությանը և միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը:

Կառավարման պլանի մշակման ընթացքում ուսումնասիրվել և գնահատվել են «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման, արգելոցի և արգելավայրերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության առանձնահատկությունները:

Սույն կառավարման պլանը պատրաստվել է 2010 թ. մեկնարկած «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ՄԱԶԾ/ԳԷՀ միջին ծավալի ծրագրի շրջանակներում: «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման (2014-2018թթ.) պլանում օգտագործվել են ՄԱԶԾ/ԳԷՀ և ԲՀՀ ծրագրերի շրջանակներում իրականացված հետազոտությունների տվյալները՝ արգելոցի և արգելավայրերի տարածքի ֆլորայի և ֆաունայի՝ այդ թվում հազվագյուտ և անհետացող տեսակների արեալների վերաբերյալ, ինչպես նաև օգտագործվել են ՀՀ ազգային արխիվի տարբեր նյութերը (սկսած 1958թ.): Ուսումնասիրվել են արգելոցի և արգելավայրերի հարակից տարածքների և պահպանման գոտու սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, բնօգտագործման վիճակը և բնապահպանական ծրագրերը:

Կառավարման պլանի մշակման ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- «Շիկահող» պետական արգելոցի և արգելավայրերի վերաբերյալ արխիվային նյութերի հավաքագրում,
- «Շիկահող» պետական արգելոցի և արգելավայրերի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվության հավաքում,
- Արգելոցում և արգելավայրերում և նրանց պահպանման գոտում տնտեսական և ռեկրեացիոն գործունեության, ինչպես նաև բնական պաշարների օգտագործման ներկա վիճակի ուսումնասիրություն,
- Արգելոցի և արգելավայրերի կառավարման համակարգի և վարչատնտեսական կազմակերպման վերլուծություն և առաջարկների մշակում,
- Արգելոցում և արգելավայրերում էնդեմիկ, հազվագյուտ և վտանգված տեսակների, դրանց աճելավայրերի, ապրելավայրերի և միգրացիոն ուղիների վիճակի ու դրանց վատթարացման պատճառների բացահայտում,
- Արգելոցում և արգելավայրերում տուրիզմի ձևերի (մեքենայով, ձիով, ոտքով) և բնույթի (գիտաճանաչողական, էկոտուրիզմ և այլն) սահմանում,
- Արգելոցի և արգելավայրերի տարածքում էկոտուրիզմի և կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ստեղծման և իրականացման աշխատանքների վերաբերյալ առաջարկությունների մշակում,
- Կառավարման ու կենսաբազմազանության վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման առաջարկների մշակում,
- Արգելոցի և արգելավայրերի 5-ամյա գործողությունների պլանի և թեմատիկ քարտեզների պատրաստում:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքները

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների ներկա համակարգի ձևավորումը սկսվել է 1958 թվականից, ստեղծվել են «Խոսրովի», «Դիլիջան» և «Շիկահող» պետական արգելոցները, իսկ Գյումրիի, Գյուլագարակի, Ջերմուկի, Հեր-Հերի անտառպետությունները, ինչպես նաև ՀՀ տարածքում կենու, արջատիլենու, սոսու, հունական ընկուզենու, տանձենու, խնձորենու, գիհու և հոնի վայրի ծառափային տեսակների տարածքները հայտարարվել են պետական արգելավայրեր:

1959թ. պետական արգելավայրեր հայտարարվել են նաև Բանքսի սոճու պուրակը, Գոռավանի ավազուտները, Արագածի հարավային գագաթնամերձ ալպյան մարգագետինները և «Քարե լիճը», Հանքավանի մրտավարդենու աճելավայրերը և Սևանա լճի ազատված հողագրունտները: Հետագայում, կենսաբազմազանության պահպանությունը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակներով ԲՀՊՏ-երի համակարգը ընդլայնվեց՝ ստեղծվեցին նոր արգելոցներ և արգելավայրեր:

Հայաստանի ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 380 հազ. հա, որը հանրապետության տարածքի մոտ 13%-ն է, իսկ առանց Սևանա լճի մակերեսի այն կազմում է հանրապետության տարածքի մոտ 8%-ը: Ընդ որում, այս տարածքների 54%-ը, իսկ առանց Սևանա լճի մակերեսի՝ 91%-ը զբաղեցնում են անտառային էկոհամակարգերը:

ԲՀՊՏ-երում պահպանվում են հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60-70%-ը, որոնց թվում հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող, վտանգված և էնդեմիկ տեսակների գերակշռող մասը, ինչպես նաև վայրի գենետիկ ռեսուրսները:

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 40 տեսակի գլխարկավոր սնկերից ԲՀՊՏ-ներում ներկայացված են 33-ը (82.5 %-ը), ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 452 տեսակի բարձրակարգ բույսերից ԲՀՊՏ-ներում ներկայացված են 166-ը (36.7 %-ը), ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված 155 տեսակի անողնաշարներից 95-ը (61.3 %-ը), ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված 153 տեսակի ողնաշարավորներից 96-ը (61.3 %-ը):

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի (2006 թ.) Հայաստանի Հանրապետությունում ԲՀՊՏ-ները ըստ կատեգորիայի դասակարգվում են պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը ներառում է՝

- 3 պետական արգելոցներ. Խոսրովի անտառ, Շիկահողի, Էրեբունի, որտեղ մարդկային գործունեությունը սահմանափակվում է միայն գիտական աշխատանքներով, ինչպես նաև սահմանափակ քանակությամբ ճանաչողական զբոսաշրջությամբ,
- 4 ազգային պարկեր՝ «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ»,
- 27 արգելավայրեր, որոնք հիմնականում կազմավորվել են 1958-80-ական թվականներին,
- 230 բնության հուշարձաններ:

Լանդշաֆտային և կենսաբանական հարուստ բազմազանություն և բնական էկոհամակարգերի վրա մարդածին ակտիվ ճնշում ունեցող այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, պահպանվող տարածքների նշված քանակությունը և զբաղեցրած տարածքը խիստ անբավարար է՝ հաշվի առնելով, որ այդ ցանցի ստեղծման հիմքում չեն դրված լանդշաֆտների ձևավորման և զարգացման երկրա-աշխարհագրական մի շարք հիմնարար օրինաչափություններ,

«Շիկահողե արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

ինչպիսիք են տարածքների բարձրունքագոտիական բաշխվածությունը և փոխկապակցվածությունը, տարածքների ավազանային ամբողջականությունը և այլն: Վերջիններիս անտեսման արդյունքում ներկա պահպանվող տարածքների գերակշիռ մասը անտառային էկոհամակարգեր են: ԲՀՊՏ-ների համակարգում չեն ներառված կամ թույլ են ներկայացված Հայաստանի համար սոցիալ-տնտեսական և բնապահպանական, այդ թվում նաև կենսաբազմազանության պահպանության առումով, տափաստանային, մարգագետնային և մարգագետնատափաստանային էկոհամակարգերը:

Ներկայումս կենսաբազմազանության օգտագործումը հանրապետությունում գերազանցում է կենսապաշարների վերարտադրության հնարավորությունները բնական պայմաններում: Գերօգտագործման և ապրելավայրերի յուրացման արդյունքում տեղի է ունեցել առանձին տեսակների թվաքանակի նվազում և որոշ տեսակների ոչնչացում, ինչն էլ հանգեցրել է կենսաբազմազանության ընդհանուր աղքատացմանը և բնական միջավայրերի դեգրադացմանը (ներառյալ անտառները, լեռնային արոտավայրերը և գերխոնավ տարածքները), իսկ մի շարք տեսակներ կանգնած են անհետացման եզրին: Այս երևույթները առավել ինտենսիվ են ընթացել վերջին հարյուրամյակում շրջակա միջավայրի արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, էներգետիկ աղտոտումների, ինչպես նաև էկոհամակարգերի վրա մարդածին այլ ազդեցությունների մեծացման արդյունքում:

Հայաստանի փոքր տարածքը, բնակչության բարձր խտությունը (100մ/կմ²), արդյունաբերական և գյուղատնտեսական գործունեության բացասական ազդեցությունները հանգեցրել են լանդշաֆտների զգալի փոփոխությունների: Տարաբնակեցման անհավասարաչափությունը և բնակավայրերի խիտ ցանցի առկայությունը դժվարացրել է ԲՀՊՏ-ների ձևավորումը՝ էկոհամակարգերի և լանդշաֆտների ամբողջականության սկզբունքների կիրառմամբ: Դրանց մեծ մասի սահմանները կտրտված են, չեն ներառում որոշ արժեքավոր էկոհամակարգեր, ԲՀՊՏ-ների առանձին հատվածների միջև տեղակայված են բնակավայրեր և ճանապարհներ, կան նաև չպահպանվող անկլավային տեղամասեր: ԲՀՊՏ-ներում առկա են բնակչության կողմից տարածքների ավանդական օգտագործման և դրանց ռեժիմային պահպանության հակասություններ:

Հայաստանի լանդշաֆտների և էկոհամակարգերի պահպանության նպատակով պահանջվում է պահպանվող տարածքներից դուրս գտնվող արժեքավոր էկոհամակարգերի ընդգրկումը ԲՀՊՏ-ների համակարգում:

ՀՀ ԲՀՊՏ-ների ներկա համակարգի պահպանումն ու զարգացումը երկրի բնապահպանական քաղաքականության կարևոր բաղադրիչն է, որը չի կարող ստորադասվել կամ փոխարինվել սոցիալ-տնտեսական իրավիճակից բխող ժամանակավոր գերակայություններով: Այն հանդիսանում է երկրի կայուն և երկարաժամկետ զարգացման հիմնական երաշխիքներից մեկը:


Աղյուսակ 1 - ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ներառված in-situ և ex-situ պահպանության օբյեկտները.

<i>In-situ</i> պահպանության օբյեկտները	Կառավարումն իրականացնող կազմակերպությունը
«Խոսրովի անտառ» պետական արգելոց «Խոր Վիրապ» պետական արգելավայր «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայր	«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ
«Շիկահող» պետական արգելոց «Արևիկ» ազգային պարկ «Սոսու պուրակ» պետական արգելավայր «Զանգեզուր» պետական արգելավայր «Խուստուփ» պետական արգելավայր «Բողաքար» պետական արգելավայր «Սև լիճ» պետական արգելավայր	«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ
«Դիլիջան» ազգային պարկ	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

«Շիկահողե արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

«Ախնաբադի կենտու պուրակ» պետական արգելավայր	
«Սևան» ազգային պարկ	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ
«Սևանի գիհու նոսրանտառային» պետական արգելավայր	
«Արփի լիճ» ազգային պարկ	«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ
«Զիկատար» պետական արգելավայր	«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ
«Էրեբունի» պետական արգելոց	«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ
«Որդան կարմիր» պետական արգելավայր	
«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր	
«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր	
Ex-situ պահպանության օբյեկտները	
Զրվեժի անտառ-պուրակ	
Ստեփանավանի «Մոճուտ» դենդրոպարկ	
Տավուշի «Մորաններ» դենդրոպարկ	
Վանաձորի դենդրոպարկ	
Իջևանի դենդրոպարկ	

Քարտեզ 1. ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքները



1.2. Կառավարման պլանի մշակման անհրաժեշտությունը

Ընդհանուր առմամբ տարածքային կառավարման պլանավորման հիմնական արդյունքը հավաստի տվյալների վերլուծության հիման վրա հետագա կառավարչական որոշումների կայացման հիմնավորումն է, ինչպես նաև որոշակի միջոցառումների նախանշումը և գործողությունների պլանավորումը: Պլանավորման ընթացքում իրականացվում է կառավարվող օբյեկտի ընթացիկ իրավիճակի վերլուծություն, խոչընդոտների վերհանում և առաջնահերթում, հիմնախնդիրների լուծման ուղիների և մեթոդների հստակեցում, վտանգների կանխատեսում, կանխարգելում, շահագրգիռ կողմերի ներգրավում և ռիսկերի նվազեցում:

Կառավարման պլանները հանդիսանում են առանցքային փաստաթղթեր, որոնք ապահովում են տարածքի կառավարման արդյունավետությունը և զարգացումը՝ երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան: Դրանք հաշվի են առնում տարածքի բնապատմական ժառանգության և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, նախանշված միջոցառումների իրատեսական լինելը, տարածքի հեռանկարային զարգացման միտումները, ռեսուրսների արդյունավետ և խնայողական օգտագործման համալիր մոտեցումները: Կառավարման պլանները ենթակա են հետագա լրամշակման՝ արտացոլելով օրենսդրական, կառուցվածքային կամ իրավիճակային փոփոխությունները, հարմարեցվելով առաջացած կոնկրետ խնդիրների լուծմանը և ԲՀՊՏ-ների նպատակային գործունեության իրականացմանը:

ԲՀՊՏ-ների կառավարման պլանների մշակման անհրաժեշտությունը արտացոլված է նաև «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» նոր օրենքի նախագծում (2013թ.), որտեղ սահմանված է կառավարման պլանի հասկացությունը:

Արգելոցի տարածքում բուսական և կենդանական աշխարհի գիտական ուսումնասիրությունները երբեք չեն կրել համակարգված և համապարփակ բնույթ: Կառավարման պլանի բացակայության պայմաններում լիարժեք չեն իրականացվում պահպանվող տարածքների պահպանության աշխատանքները, բացակայում է էկոտուրիզմի կազմակերպման և իրականացման փորձը: Մինչև վերջերս ճշգրիտ սահմանների բացակայության հետևանքով արգելոցի և արգելավայրերի տարածքը ենթակա էր հարակից համայնքների կողմից անթույլատրելի հողօգտագործման և ռեսուրսների ղեգրադացման անթույլատրելի ճնշումների:

1.3. «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլանավորման նպատակը և խնդիրները

Համաձայն ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի (2013 թ. հոդված 8)՝ բնության հատուկ պահպանվող տարածքի, բացառությամբ բնության հուշարձանի, կառավարման պլանը պաշտոնական փաստաթուղթ է, որով սահմանվում են բնության հատուկ պահպանվող տարածքի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ գործողությունները; բնության հատուկ պահպանվող տարածքի կառավարման պլանը ենթակա է վերանայման՝ առնվազն հինգ տարին մեկ անգամ: Կառավարման պլանը կազմվում է համաձայն լիազոր մարմնի կողմից հաստատված մեթոդական ուղեցույցի:

Կառավարման պլանն ընդգրկում է՝

ա) Բնության հատուկ պահպանվող տարածքի մասին հիմնական տեղեկատվությունը, այդ թվում՝ էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների (ներառյալ՝ դրանց պաշարների, վիճակի և սպառնացող վտանգների) նկարագրությունը և անցած ժամանակաշրջանում դրանց փոփոխությունների գնահատականն ու զարգացման հեռանկարները,

«Շիկահողե արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

բ) Բնության հատուկ պահպանվող տարածքի գոտիավորման, սահմանների, կենսաբանական բազմազանության, այդ թվում՝ կենսաբանական պաշարների տեղաբաշխման, հոդօգտագործման և այլ թեմատիկ քարտեզներն ու հատակագծերը,

գ) Բնության հատուկ պահպանվող տարածքի սոցիալ-տնտեսական և բնօգտագործման առանձնահատկությունները,

դ) Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանությանը և օգտագործմանը մասնակցող շահագրգիռ կողմերը,

ե) Բնության հատուկ պահպանվող տարածքի մոնիտորինգի տվյալների հիման վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանը (վերացմանը) ուղղված գործողությունների ամենամյա պլանը և ժամանակացույցը,

զ) Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանության, դրանում գիտահետազոտական ուսումնասիրության և այլ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ծախսերը և ֆինանսավորման աղբյուրները:

«Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլանը նպատակաուղղված է «Շիկահող» արգելոցի, «Զանգեզուր», «Խուստուփ» և «Սոսու պուրակ» արգելավայրերի էկոհամակարգերի բնականոն զարգացման ապահովմանը, այդ տարածքներում լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանությանը և օգտագործման արդյունավետ ուղիների մշակմանը, գիտական ուսումնասիրությանը, մոնիթորինգի իրականացմանը, զարգացման ուղիների ծրագրերի մշակմանը, կադրերի վերապատրաստմանը և մասնագիտական որակավորման բարձրացմանը, էկոտուրիզմի կազմակերպմանը:

«Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլանի մշակման աշխատանքն ընդգրկում է հետևյալ նպատակները և խնդիրները՝

- Արգելոցում և արգելավայրերում հազվագյուտ և անհետացող բուսական և կենդանական տեսակների գույքագրում,
- Արգելոցի և արգելավայրերի հարակից համայնքների սոցիալ տնտեսական իրավիճակի գնահատում,
- Էնդեմիկ, հազվագյուտ և վտանգված բուսակենդանական տեսակների, դրանց աճելավայրերի, բնադրավայրերի, ապրելավայրերի և միգրացիոն ուղիների վիճակի ու դրանց վատթարացման պատճառների բացահայտում,
- Արգելոցում, արգելավայրերում և դրա պահպանման գոտում զբոսաշրջության զարգացման հեռանկարների գնահատում,
- Արգելոցում և արգելավայրերում տուրիզմի թույլատրելի ձևերի սահմանում,
- Արգելոցում և արգելավայրերում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի և տվյալների բազայի ստեղծման վերաբերյալ առաջարկությունների մշակում,
- Էկոհամակարգերի բնականոն զարգացումն ապահովելու նպատակով առաջարկությունների մշակում,
- Արգելոցում և արգելավայրերում առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվող աշխատանքների պլանավորում:

ԳԼՈՒԽ 2. «ՇԻԿԱՀՈՂ» ԱՐԳԵԼՈՑԻ, «ԶԱՆԳԵԶՈՒՐ», «ԽՈՒՍՏՈՒՓ» և «ԽՈՍՏՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Տեղադիրքը

2.1.1. «Շիկահող» արգելոց

«Շիկահող» պետական արգելոցը գտնվում է հանրապետության հարավ-արևելյան մասում՝ Կապանի տարածաշրջանում: Արգելոցի կենտրոնական հատվածին սահմանակից են Շիկահող, Ծավ/Շիշկերտ/, Ներքին Հանդ գյուղական համայնքները: Հարավից այն սահմանակցում է «Արևիկ» ազգային պարկին՝ Մեղրու լեռնաշղթայի ջրբաժանով, իսկ հյուսիս արևմուտքից Բաղասարի և Խուստուփի լեռնաբազուկներին: Արգելոցի տարածքը գտնվում է Շիկահող, Ծավ, Սրաշեն և Ներքին Հանդ գյուղական համայնքների վարչական սահմաններում:

Արգելոցը զբաղեցնում է 12137.08 հա տարածք և կազմված է Շիկահողի և Մթնաձորի տեղամասերից:

2.1.2. «Զանգեզուր» արգելավայր

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի և Սիսիանի տարածաշրջանում՝ Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և հյուսիսային, ինչպես նաև Զանգեզուրի լեռնաշղթայի հարավարևելյան լանջերին: Համաձայն 2012 թ-ին իրականացված արգելավայրի սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքների արդյունքների ՀՀ կառավարության 15. 10. 2009թ. N 1187-Ն որոշմամբ, գործող պետական արգելավայրը զբաղեցնում է 17368,77 հեկտար տարածք: Ընդլայնված վիճակում «Զանգեզուր» պետական արգելավայրի տարածքը կզբաղեցնի 25870.64 հեկտար և կընդգրկի ՀՀ Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի և Սիսիանի տարածաշրջանում Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և հյուսիսային, Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերը: Արգելավայրի ընդլայնման ենթակա տարածքը կազմված է Բնունիսի, Դաստակերտի, Ձորաստանի, Լեռնաձորի, Շենաթաղի, Տաթևի, Նժդեհի, Գեղիի և Նոր Աստղաբերդի տեղամասերից:

Տարածքն ընդգրկում է Ողջի գետի վերին հոսանքները՝ Քաջարանց և Ծաղքար վտակների ջրհավաք ավազանները /Քաջարանի տեղամաս/, Գեղի գետի ձախափնյա վտակների (Աջաբաջ, Կարդ, Արամազդ) վերին հոսանքներն, Արամազդի լեռնազանգվածի հարավային հովիտները /Գեղիի տեղամաս/, Արամազդի լեռնազանգվածի հյուսիսային հովիտները /Տաթևի տեղամաս/, ինչպես նաև Զանգեզուրի լեռնաշղթայի հարավարևելյան լանջերի հյուսիսային հատվածը /Սիսիանի տեղամաս/: Արգելավայրի տարածքը գտնվում է Քաջարան, Գեղի, Լեռնաձոր, Նոր Աստղաբերդ, Ձորաստան, Տաթև, Շենաթաղ, Դաստակերտ, Նժդեհ և Բնունիս գյուղական համայնքների վարչական սահմաններում: Արևմուտքից արգելավայրի տարածքը սահմանակից է Նախիջևանի /Ադրբեջան/ հետ պետական սահմանին և Զանգեզուրի լեռնաշղթայի ջրբաժանով սահմանագատվում է Նախիջևանում գտնվող նույնանուն ազգային պարկից:

2.1.3. «Խուստուփ» արգելավայր

«Խուստուփ» արգելավայրը գտնվում է Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում՝ Խուստուփ լեռնազանգվածի վրա: Արգելավայրի նախատեսվող տարածքը 6946.74 հա է, որը հարավից սահմանագատված է Մեղրու լեռնաշղթայի ջրբաժանով, արևմուտքից Զանգեզուրի լեռնաշղթայով, արևելքից Խուստուփ լեռնազանգվածով, իսկ հյուսիսից Ողջի գետի հովտով:

Արգելավայրի նախատեսվող տարածքին սահմանակից են Շիկահող, Սրաշեն, Ծավ /Շիշկերտ/, Դավիթ Բեկ, Լեռնաձոր, Զագեձոր, Վանք, Կալեր, Տաշտուն և այլ համայնքներ, ինչպես նաև Քաջարան և Կապան քաղաքները: Հարավից արևելքից այն հարակից է «Շիկահող» պետական

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան


արգելոցին, իսկ հարավից «Արևիկ» ազգային պարկին: Արգելավայրի տարածքը գտնվում է Շիկահող, Ծավ, Ճակատեն, Գեղանուշ և Լեռնաձոր, գյուղական համայնքների վարչական սահմաններում:

2.1.4. «Սոսու պուրակ» արգելավայր

«Սոսու պուրակ» արգելավայրը գտնվում է Հարավային Հայաստանի Սյունիքի մարզի Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային մակրոլանջի ստորոտով անցնող Ծավ գետի ափին, հովտի ողողատային մասում, 700-750 մ բարձրության վրա:

«Սոսու պուրակ» պետական արգելավայրի սահմանների ճշգրտման և քարտեզագրման արդյունքում արգելավայրի տարածքի չափը կազմել է 64.2 հեկտար:

Քարտեզ 2. «Շիկահող» պետական արգելոցի, «Սոսու պուրակ», «Խուստուփ», «Զանգեզուր» պետական արգելավայրերի և ընդլայնվող տարածքի տեղադրությունը



2.2. Ռեզիմ

2.2.1. «Շիկահող» արգելոց

Արգելոցը զբաղեցնում է Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային, Բաղասար և Խուստուփ լեռնազանգվածների հարավարևելյան լանջերի միջև ընկած տարածքը:

Ռելիեֆը բնորոշվում է ծալքաբեկորավոր միջին բարձրության լեռներով, աստիճանավոր գագաթներով, խորը առանձնացված V-աձև հովիտներով և իջվածքներով: Արգելոցային տարածքների զգալի մասը տեղակայված է 1400 -1800 մ բարձրությունների վրա: Գերակշռում են 30-40օ թեքությամբ լանջերը, որոնց մեծ մասը անտառապատ է:

Մեղրու լեռնաշղթան ունի հիմնականում հարավարևելյան ձգվածություն: Արգելոցի մեջ է մտնում լեռնաշղթայի հյուսիսային մակրոլանջը՝ մինչև Բարթաս գագաթը: Լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերի միջին մասում տարածված է անտառային, իսկ ավելի բարձր՝ լեռնատափաստանային լանդշաֆտը:

Խուստուլի-Կատարի աղեղնաձև լեռնաշղթան ունի մոտ 38կմ երկարություն և սկսում է Բարգուշատի լեռնաշղթայի Թառկատար գագաթից:

Արգելոցի և նրա հարակից տարածքի բարձր լեռնագագաթներից են Նավսը՝ 2369մ, Բարթասը՝ 2186 մ, Մագրան՝ 2198 մ, Շիշկերտը՝ 2735մ, Գյումարանցը՝ 2366մ: Ամենացածր բարձրությունների նիշերը գտնվում են արգելոցի արևելյան սահմանի մոտ (մոտ 700մ)՝ Ծավ գետի կիրճում, իսկ Մեղրու լեռնաշղթայի ամենաբարձր գագաթները հասնում են 3256 մ-ի (Բաղասար):

2.2.2. «Զանգեզուր» արգելավայր

Արգելավայրի տարածքի հիմնական լեռնագրական միավորներն են Զանգեզուրի, Բարգուշատի, Մեղրու լեռնաշղթաները և միջլեռնային գոգավորությունները /Կապանի, Քաջարան-Գեղու և այլն/: Տեղանքը բնորոշվում է ռելիեֆի ալպյան ձևերով, աստամնավոր լեռնագագաթներով, հարթեցված մակերևույթներով, աստիճանաձև դարավանդներով, սառցադաշտային հովիտներով, կրկեսներով և կառային լճերով:

Զանգեզուրի լեռնաշղթան աչքի է ընկնում խոր ու խիտ մասնատվածությամբ, այստեղ առկա են ծալքաբեկորավոր կառուցվածքներով ռելիեֆի տիպեր, նեղ, սրածայր գագաթներ, 30-40օ թեքությամբ գառիթափ լանջեր, սառցադաշտային ձևեր, կառեր, տրոգներ և մորենային կուտակումներ: Տարածքի միջին բարձրությունը 2200 մետր է, առանձին գագաթներն ունեն 3500մ-ից ավել բարձրություն՝ Կապուտջուղ՝ 3904մ, Նահապետ՝ 3506մ, Սիսկատար՝ 3827մ, Փարական՝ 3828մ և այլն: Լեռնանցքները գտնվում են 3200մ –ից ավել բարձրության վրա:

Բարգուշատի լեռնաշղթան առանձնանում է Զանգեզուրի լեռնաշղթայի Այրիսար գագաթից դեպի արևելք և ձգվում մոտ 70կմ: Այն կազմված է նստվածքային և հրաբխածին ապարներից, ինչպես նաև գրանիտային ներժայթուկներից: Առավել բարձր է Լեռնաշղթայի հյուսիս արևմտյան աստամնավոր հատվածը /Արամազդ լեռ՝ 3392մ, Գեղաքար՝ 3343մ, Քառակատար՝ 3270մ/, որտեղ պահպանվել են սառցապատման հետքեր: Լեռնաշղթայի հարավային լանջերը մասնատված են խորը գետահովիտներով: Գիրաթաղի լեռնանցքից սկսած շղթան աստիճանաբար ցածրանում է:

Մեղրու լեռնաշղթան տարածվում է Զանգեզուրի շղթայից դեպի հարավ արևելք, սկսվում է Ծաղքարի լճից և ունի մոտ 70 կմ երկարություն: Այն կազմված է գրանիտային ներժայթուկներից և հիմնականում տարածված են բյուրեղային ապարները: Ամենաբարձր կետը Բաղասարն է՝ 3256 մ բարձրությամբ, որը գտնվում է լեռնաշղթայի կենտրոնական մասում: Հյուսիսային դիրքադրության լանջերին բնորոշ են էրոզիոն սառցադաշտային, իսկ հարավային լեռնալանջերին ռելիեֆի դենուդացիոն ձևերը: Գետահովիտներն ունեն V-ձև կառուցվածք, որոնց միջև տեղտեղ պահպանվել են սելանաձև սարավանդներ: Լեռնաշղթան մասնատված է Մեղրի, Մալև, Շվանիձոր, Նյուվաղի գետերի խորը հովիտներով:

2.2.3. «Խուստուփ» արգելավայր

Արգելավայրը տեղակայված է Հայաստանի հանրապետության հարավ-արևելյան մասում, զբաղեցնելով հիմնականում Խուստուփ լեռնագանգվածի և նրա հարակից տարածքը: Ռելիեֆը բնորոշվում է ծալքաբեկորավոր կառուցվածքով, ատամնավոր գագաթներով, V-աձև խոր հովիտներով:

Խուստուփ-Կատարի աղեղնաձև լեռնաշղթան ունի մոտ 38կմ երկարություն և սկսում է Բարգուշատի լեռնաշղթայի Թառկատար գագաթից: Ողջի գետի հովտով այն բաժանվում է երկու մասի: Խուստուփի գանգվածը հարավ արևելյան ուղղությամբ կազմում է Շիկահող և Ծավ գետերի ջրբաժանը: Նրա գագաթային մասը խիստ ատամնավոր է և գահավեժ՝ մի քանի հարյուր մետր բարձրությամբ քարափներով (Խուստուփ լեռնագագաթ):

Արգելավայրի բարձր լեռնագագաթներից են Շիշկերտը՝ 2735մ, Խուստուփը՝ 3208մ և Բաղասարը՝ 3256մ:

2.2.4. «Սոսու պուրակ» արգելավայր

Արգելավայրի ռելիեֆը լեռնահովտային է և հիմնականում զբաղեցնում է Շիկահողի արգելոցին հարակից Ծավ գետի միջին հոսանքի ափամերձ գոտին:

2.3. Կլիման

2.3.1. «Շիկահող» արգելոց

Ընդհանուր առմամբ արգելոցի կլիման տաք է և խոնավ, ինչը հետևանք է մի կողմից Զանգեզուրի և Բարգուշատի բարձր լեռնային պատվարի ազդեցությամբ, որը կասեցնում է Կասպից ծովից եկող խոնավ օդի հոսանքները, մյուս կողմից արևադարձային տաք հոսանքների ներթափանցումը խոչընդոտող Մեղրու լեռնաշղթայի ազդեցությամբ:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը արգելոցի ստորին սահմաններում 11.5 օC է, միջին լեռնայինում 8.4օC , բարձր լեռնայինում -2.7 օC, հունվարին 0 օC, -1.3 օC և -12.8 օC, հուլիս-օգոստոսին համապատասխանաբար 22.7 , 18.1 և 8.5 օC: Առավելագույն ջերմաստիճանը ստորին լեռնային հատվածում 39 օC է, միջին լեռնային գոտում 33օC, իսկ բարձր լեռնայինում 21օC, ամենացածրը-համապատասխանաբար -27, -27 և -38օC:

Ցածր լեռնային գոտում տարեկան միջին տեղումների քանակը 530մմ է, միջլեռնայինում 670մմ, իսկ բարձրլեռնայինում՝ 850մմ: Ամենաշատ տեղումները դիտվում են գարնանը և ամռան սկզբին, երբ դրանց քանակը կազմում է տարեկան նորմայի մոտավորապես կեսը: Գարնանը հաճախ են կայծակներով ուղեկցվող տեղատարափները: Ամռան կեսերին տեղումների քանակը նվազում է, իսկ աշնանը կրկին աճում:

Ձմռանը ցածր լեռնային գոտում ձնածածկույթն անկայուն է և ձևավորվում է ոչ ամեն տարի, պահպանվում է 20-30 օրից ոչ ավել (հաստությունը 5-10 սմ): Միջին լեռնային գոտում ձյան ծածկույթը մնում է ավելի երկար (մինչև 100 օր) և մեծանում է նրա բարձրությունը (միջինը 30 սմ): Բարձրլեռնայինում ձյան ծածկույթը մնում է մինչև 200-230 օր և հասնում է մինչև 150-200 սմ:

2.3.2. «Զանգեզուր» արգելավայր

Տարածքի կլիմայական պայմանների ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողնում ծովի մակերևույթից բացարձակ բարձրությունները: Հիմնական կլիմայական տիպերը պայմանավորված են ուղղաձիգ գոտիականությամբ և լեռնաշղթաների դիրքադրությամբ, գետահովիտների և գոգավորությունների ձևաբանական առանձնահատկություններն ու պարփակվածությունը:

Լեռնային, չափավոր ցուրտ կլիման ձևավորվում է 2200-3000 մ բարձրությունների վրա: Տարեկան տեղումների քանակը կազմում է մինչև 800 մմ: Ձմեռը ցուրտ է, երկարատև, ստեղծվում է հաստատուն ձնածածկույթ, ամառը կարճատև է, զով ու խոնավ: Գարունը ցուրտ է և համեմատաբար երկարատև, ցրտահարությունները սովորաբար դադարում են մայիսի վերջին: Աշունը ցուրտ է, կարճ, առաջին սառնամանիքները, սկսվում են սեպտեմբերին:

Սկսած 3000մ բարձրություններից ձևավորվում է բարձր լեռնային ցուրտ կլիման: Առանձնանում է խիստ կլիմայով և ընդգրկում է բարձր լեռնային ալպյան արոտավայրերը (տեղտեղ ալպյան գորգեր): Բնորոշվում է երկարատև, ցրտաշունչ ձմեռներով և հզոր ձնածածկով (2 մ և ավելի): 3200-3500 մ բարձրություններից վեր, ձևավորվում է սուբնիվալ և նիվալ լեռնատունդրային դաժան կլիման: Մթնոլորտային տեղումները հիմնականում թափվում են ձյան տեսքով, որոշ տեղերում ձնածածկը պահպանվում է ամբողջ տարին: Տարեկան տեղումների քանակը կազմում է մինչև 900 մմ:

Այս գոտու ստորին մասերն օգտագործվում են որպես ամառային արոտավայրեր:

2.3.3. «Խուստուփ» արգելավայր

Ընդհանուր առմամբ նախատեսվող արգելավայրի տարածքին բնորոշ է բարձրլեռնային գոտու լեռնային կլիման և բնորոշվում է երկարատև, ցրտաշունչ ձմեռներով և զով, կարճատև ամառներով:

Լեռնային, չափավոր ցուրտ կլիման ձևավորվում է մինչև 2500 մ բարձրությունների վրա: Տարեկան տեղումների քանակը կազմում է մոտ 800 մմ: Ձմեռը ցուրտ է, երկարատև, ստեղծվում է հաստատուն ձնածածկույթ, ամառը կարճատև է, զով ու խոնավ:

Սկսած 2500-3000 մ բարձրություններից ձևավորվում է լեռնային ցուրտ կլիման: Բնորոշվում է երկարատև, ցրտաշունչ ձմեռներով և հզոր ձնածածկով (2 մ և ավելի): Տարեկան տեղումների քանակը կազմում է մինչև 900 մմ:

2.3.4. «Սոսու պուրակ» արգելավայր

Արգելավայրի կլիման նույնն է ինչ Շիկահողի արգելոցի ստորին գոտում:

2.4. Ջրագրությունը

2.4.1. «Շիկահող» արգելոց

Արգելոցի տարածքի հիմնական ջրային զարկերակը Ծավ գետն է, որի գլխավոր վտակներն են Շիկահողը, Շիշկերտը և Մագրան: Գետերի հոսքը համեմատաբար հավասարաչափ է, հորդանում են ապրիլ – մայիս ամիսներին: Ունեն հիմնականում խառը /ձնա-անձրևային և ստորերկրյա/ սնում:

Ծավի և նրա վտակների ողողադաշտը արտահայտված չէ, գետի երկարությունը մոտ 28 կմ է, միջին հոսանքն աչքի է ընկնում մեծ թեթություններով: Ծավի ջրերն օգտագործվում են ոռոգման և էներգետիկ նպատակներով:

Շիշկերտը հոսում է նեղ, V–աձև հովիտներով և կիրճերով, երկարությունը մոտ 17 կմ է միջին հոսանքն ունի մեծ անկում և տեղտեղ առաջանում են սահանքներ: Շիկահող գետի երկարությունը 21կմ է, այն միանում է Ծավին արգելոցի արևելյան սահմանների մոտ:

Արգելոցում կան փոքրադեբիտ, քաղցրահամ և հանքային աղբյուրներ, որոնք առանձնանում են ռեժիմի կայունությամբ:

2.4.2. «Զանգեզուր» արգելավայր

Հիմնական գետն Ողջին է /ձևավորվում է Քաջարանց և Ծաղքար վտակներից/ և նրա Գեղի վտակը: Տարածաշրջանի բոլոր գետակները սնվում են աղբյուրներից և մթնոլորտային տեղումներից և հիմնականում առավել ջրառատ են դառնում ապրիլ-հունիս ամիսներին բարձր լեռների ինտենսիվ հալոցքի և հորդառատ անձրևների շնորհիվ:

Ողջի գետը պատկանում է Արաքսի ավազանին և հոսում է մերձհորիզոնական ուղղությամբ: Գետը սկսվում է ծովի մակերևույթից մոտ 3300 մ բարձրությունից, Կապուտջուղ լեռան սառցադաշտային կրկեսից: Ծախսը 9,6 խմ/վրկ է, տարեկան հոսքը՝ 303 մլն խմ, հոսքի մոդուլը՝ 14,5 լ/վրկկմ², հոսքի շերտի բարձրությունը՝ 457 մմ: Մնումը հիմնականում ձնաանձրևային է /73%/, հորդանում է զարնանը, սակավաջրությունը նկատվում է ամռանը և ձմռանը (նվազագույն ծախսը 2,96 խմ/վրկ): Գետի երկարությունը 82 կմ է ավազանի մակերեսը՝ 1175 կմ²: Ողջիի վտակներն են Գեղին, Նորաշենիկը, Արծվանիկը, Գեղանուշը, Վաչագանը: Գետի վերին և միջին հոսանքն ունի մեծ անկում. գետը հոսում է կիրճով և տեղ-տեղ առաջացնում սահանքներ:

Գեղի գետը սկիզբ է առնում Կապուտջուղ լեռնագագաթից և ձևավորվում է Աջիբաջ, Արամազդ, Կարդ վտակների միախառնումից, երկարությունը 24 կմ է:

Տարածքը ենթարկվել է սառցապատման (վյուրմ) և Զանգեզուրի լեռնաշղթայի մերձգագաթային՝ հատկապես Կապուտջուղ լեռանը հարող տարածքներում կան բազմաթիվ ֆիոներ, ձնաբծեր և փոքր սառցադաշտեր (թվով շուրջ 44, մոտ 1,58 քառ. կմ), բազմաթիվ սառցադաշտային ծագման կառեր և կառային լճեր:

Հատկապես աչքի են ընկնում Գազանա լիճը (Գեղի գետի ակունքներում, 3111,8մ բարձրության վրա, երկ – նը 400մ, լայն–նը 150մ, խոր–նը 10մ), Կապուտանը (Գոգի լիճ, Քաջարանց գետի ակունքներում, 3286մ բարձրության վրա, երկ– նը 500մ, լայն–նը 200մ, առավելագույն խորությունը 22մ), Ծաղքարի լիճը (Ծաղքար գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10կմ հվ-արմ, 3271մ բարձրության վրա) և Կապույտ լիճը (Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8կմ հս-արմ):

2.4.3. «Խուստուփ» արգելավայր

Արգելավայրի տարածքը ջրաբաշխ է հանդիսանում Շիկահող, Շիշկերտ, Մազրա, Բաղացջուր, Վաչագան, Գեղանուշ և մի քանի այլ փոքր գետակների համար: Գետերի հոսքը համեմատաբար հավասարաչափ է, ունեն հիմնականում խառը /ձնա-անձրևային և ստորերկրյա/ սնում:

Արգելավայրի տարածքը հյուսիսից եզերված է Ողջի գետի հովտով:

2.4.4. «Սոսու պուրակ» արգելավայր

Արգելավայրի տարածքով հոսում է Ծավ գետը:

2.5. Հողերը

2.5.1. «Շիկահող» արգելոց

Արգելոցի հողային ծածկը ներկայացված է հիմնականում հողային երկու տիպերով՝ լեռնա-անտառայինով և լեռնամարգագետնայինով՝ իրենց համապատասխան ենթատեսակներով:

Շագանակագույն լեռնաանտառային հողերը տարածված են անտառային գոտու ստորին և միջին հատվածներում (մինչև 1900մ), որոնք հիմնականում զարգացած են կաղնուտային, կաղնուտ-բոխուտային և բոխուտային անտառներում, սովորաբար հյուսիսահայաց դիրքադրության լանջերին:

Գորշ լեռնաանտառային հողերը զարգացած են հիմնականում 1700-2400մ բարձրության վրա, սովորաբար խոշորառեջ կաղնու անտառներում: Նրանք միջին հզորության են (մինչև 60սմ), ավազակավային, հատիկա-փոշային կառուցվածքով, չհիմնայնացված:

Լեռնամարգագետնային հողեր տարածված են 2200-2400-ից մինչև 3100մ բարձրության վրա: Ներկայացված են մարգագետնա-տափաստանային, ճիմային և տորֆային հողերի ենթատիպերով:

Անտառի ստորին գոտիներում հանդիպում են սևահողանման հողեր ենթատափաստանային և երկրորդաբար տափաստանացված բուսականությամբ:

Տեղ-տեղ արգելոցի տարածքում, հիմնականում բարձրալեռնային գոտում, առաջանում են խոշորքարային փլվածքներ և ցրվածքներ պարզունակ հողերով, գրեթե զրկված փտումից:

2.5.2. «Զանգեզուր» արգելավայր

Լեռնամարգագետնային հողերը տարածված են բոլոր լեռնաշղթաների և լեռնաճյուղավորումների լանջերին՝ 2200-2400-ից մինչև 3100 մ բարձրության վրա: Ներկայացված են մարգագետնատափաստանային, ճիմային և տորֆային հողերի ենթատիպերով: Դրանց բնորոշ է ուժեղ ճմապատումը, մանրահատիկային կառուցվածքը և հումուսի մեծ պարունակությունը վերին շերտերում: Այդ հողերի հզորությունը և հումուսի պարունակությունը նվազում է ըստ տեղանքի բացարձակ բարձրության: Ալպյան գոտու ստորին մասերում տարածվում են հիմնականում խոնավ մերձալպյան և լեռնամարգագետնային սևահողանման հողերը: Այս հողատիպերում հողառաջացման պայմանները, ուժեղ խոնավացումը և թույլ գոլորշիացումը նպաստում են հացազգա-տարախոտային և ընդավոր խմբավորումների զարգացմանը: Ալպյան գոտու կրագերծ, խոնավ և թեթև տորֆայնությամբ հողատիպերում տիրապետող ալպյան մարգագետիններում գերակշռում են ցորենագիները, բոշխերն ու տարախոտերը: Բարձր լեռնային ալպյան գոտում շատ են նաև քարացրոններն ու մորենային կուտակումները, որտեղ բացակայում է հողածածկը:

Հնագույն սառցադաշտային տրոգների գոտում տարածված են լեռնամարգագետնային ճմակավիված դարչնագույն հողեր, որտեղ հումուսի հզորությունը, մանրահողի կազմը և քարքարոտությունը կախված են ռելիեֆի առանձնահատկություններից: Մերձձնային /սուբնիվալ/ գոտում սառնամանիքային հողմահարման արդյունքում տարածված են քարացրոններ և թույլ զարգացած, իսկ կտերի և սառցադաշտային կրկեսների հարթ տեղամասերում ճմատորֆային լեռնատունդրային հողեր՝ հումուսի մեծ պարունակությամբ: Ֆիոնային բծերին և ուղղորդ լեռնալանջերին հարող տարածքներում տարածված են թույլ զարգացած՝ մանրահողից և սառնամանիքային հողմահարման մանր բեկորային նյութերից կազմված հողեր:

2.5.3. «Խուստուփ» արգելավայր

Լեռնամարգագետնային և մերձալպյան գոտում տարածվում են հիմնականում մարգագետնային սևահողանման հողերը: Այս հողատիպերում հողառաջացման պայմանները, ուժեղ խոնավացումը և թույլ գոլորշիացումը նպաստում են ճմակավմանը:

Տարածված են լեռնաշղթաների և լեռնաճյուղավորումների լանջերին՝ 2200-2400-ից մինչև 3100մ բարձրության վրա: Ներկայացված են մարգագետնատափաստանային, ճմային և տորֆային ենթատիպերով: Դրանց բոլորին բնորոշ է մանրահատիկային կառուցվածքը և հումուսի մեծ պարունակությունը վերին շերտերում: Այդ հողերի հզորությունը և հումուսի պարունակությունը նվազում է ըստ տեղանքի բացարձակ բարձրության:

Խուստուփ լեռնագանգվածի կատարային մասը հիմնականում ժայռոտ է և հոգազուրկ:

Արգելավայրի տարածքին հարող անտառի վերին գոտու գորշ լեռնաանտառային հողերը զարգացած են հիմնականում 1700-2400մ բարձրության վրա, սովորաբար խոշորառեջ կաղնու անտառների տակ: Նրանք միջին հզորության են (մինչև 60սմ), ավազակավային, հատիկա-փոշային

կառուցվածքով, չհիմնայնացված: Անտառի վերին եզրում դիտվում է անտառային դարչնագույն հողերից անցում կաղնուտներին բնորոշ բաց գորշավուն հողերի:

2.5.4. «Սոսու պուրակ» արգելավայր

Արգելավայրի հողային ծածկը ներկայացված է լեռնա-անտառային տեսակներով:

2.6. Էկոհամակարգերը

2.6.1. «Շիկահող» արգելոց

Բարդ լեռնային ռելիեֆը, ուղղաձիգ գոտիականությունը, բարձրությունների և հողակլիմայական պայմանների տատանումները պայմանավորում են «Շիկահող» պետարգելոցի լանդշաֆտային բազմազանությունը և ձևավորում են տարբեր լանդշաֆտային տիպեր՝ անտառայինից մինչև լեռնային տափաստաններ և ալպյան մարգագետիններ:

Արգելոցի տարածքում գետերի ափերի երկայնքով, ինչպես նաև Սրաշեն, Շիշկերտ և Ներքին հանդ բնակավայրերի մերձակայքում ներկայացված են նաև ինտրազոնալ ջրա-ճահճային էկոհամակարգեր: Արգելոցը գտնվում է ծովի մակարդակից 700 մ-ից (Ծավ գետ) մինչև 2300 մ-ից բարձր բարձրությունները: Ստորոտները և միջին բարձրությունները ծածկված են խիտ լայնատերև անտառներով, որոնք ավելի բարձր վայրերում փոխարինվում են ենթալպյան մարգագետիններով: Գերակշռում են կաղնու, բոխու և կաղնուտա-բոխուտային անտառները, որոնք գտնվում են 1000-2200 մ միջին բարձրությունների վրա:

Վրացական կաղնու (*Quercus iberica*), գերակշռությամբ անտառները լայնորեն տարածված են գորշ անտառային հողերի վրա 1300-1400 մ բարձրությունների վրա: Որպես ուղեկցող տեսակներ հանդիպում են բոխի սովորական (*Carpinus betulus*), դաժի (*Carpinus orientalis*), ճապկի հարավի (*Swida australis*), ինչպես նաև իլենի (*Euonymus*), տանձենի (*Pyrus*), սզնի (*Crataegus*), ցախակեռաս (*Lonicera*) ցեղերի տարբեր տեսակները: Խոտածածկը ներկայացված է լայն տարածում ունեցող տեսակներով, որոնցից են պտեր առական (*Dryopteris filix-mas*), դաշտավլուկ կաղնութային (*Poa nemoralis*), ոզնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), շյուղախոտ մարգագետնային (*Festuca pratensis*), եղեսպակ կաչուն (*Salvia glutinosa*) և այլն, այստեղ աճում է նաև Հայաստանի կարմիր գրքում գրանցված լերդախոտ հիրկանական (*Teucrium hyrcanicum*) հազվագյուտ տեսակը:

1300-1400 մ բարձրություններից բարձր վրացական կաղնուն փոխարինում է խոշորաառեջ կաղնին (*Quercus macranthera*), որի անտառները տարածվում են մոտավորապես մինչև անտառի վերին սահմանը: Անտառի վերին սահմանին մոտ նշված տեսակն առաջացնում է նոսր պուրականման անտառներ, իսկ ավելի ցածր բարձրություններում այն կազմում է բավական մեծ լրիվություն ունեցող խիտ անտառներ: Արգելոցի որոշ տարածքներում աճում են չխախտված կուսական անտառներ: Դրանցում ներկայացված են վրացական կաղնուն ուղեկցող նույն տեսակները: Հարավային լանջերը հիմնականում ծածկված են կաղնու ճիմային չոր անտառներով՝ խոտածածկում գերակշռում են դաշտավլուկ կաղնութային (*Poa nemoralis*) և տփիկ շան (*Elymus caninus*), իսկ հյուսիսային լանջերը՝ կաղնու ճիմային խոնավ անտառներով (խոտածածկում ներկայացված են ավելի ենթալպյան տեսակներ):

Կաղնուտա-բոխուտային անտառները (*Quercus macranthera* և *Carpinus betulus*) հիմնականում զբաղեցնում են հարավ-արևմտյան և հարավ-արևելյան լանջերը (երբեմն նաև հարավային լանջերը):

Բոխու (*Carpinus betulus*) անտառները հիմնականում աճում են հյուսիսային լանջերի գորշ և բաց գորշավուն անտառային հողերի վրա: Որպես ուղեկցող տեսակներ հանդիպում են հացենի սրապտուղ (*Fraxinus oxycarpa*), թեղի տերևաշատ (*Ulmus glabra*), թեղի կապրիֆոլի (*U. carpinifolia*), թխկի վրացական (*Acer iberica*), արոսենի սովորական (*Sorbus aucuparia*), կաղնի արևելյան (*Quercus macranthera*), ինչպես նաև զկեռ սովորական (*Mespilus germanica*), գերիմաստի (*Viburnum lantana*):

Արաքսյան կաղնու (*Quercus araxina*) նոսրանտառները տարածված են մինչև 900-1000 մ.ծ.մ.: Նույն բարձրություններում գտնվում է շիբլյակը՝ ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) տեսակի գերակշռությամբ համակեցությունը: Երկու համակեցություններում էլ հիմնական ուղեկցող տեսակներն են փռնի խոշոր (*Celtis glabrata*), թխկի վրացական (*Acer iberica*), նոնենի (*Punica granatum*): Նշված համակեցություններով ծածկված տարածքները բավական փոքր են, սակայն վերջին տասնամյակների ընթացքում ցածրադիր տարածքների անտառազրկման արդյունքում շիբլյակի զբաղեցրած տարածքներն ընդլայնվում են:

Միջին լեռնային գոտում ներկայացված են տափաստանային բուսականության փոքր հատվածներ և երկրորդային հետանտառային մարգագետիններ: Այդ մարգագետնային տարածքները շատ սահմանափակ են, քանի որ անտառազրկումը մեծ չափերի չի հասնում. մարգագետինների ֆլորիստիկական կազմը չափազանց հարուստ է անտառային տեսակների առկայության շնորհիվ: Տափաստաններում ներկայացված են շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*) տեսակի գերակշռությամբ համակեցությունները: Այդ տափաստանների ֆլորիստիկական կազմը շատ փոփոխական է բնորոշ տափաստանային տեսակներին ուղեկցում են անտառային և մարգագետնային տեսակներ: Միջին լեռնային գոտու բաց տարածքներում լայնորեն տարածված են այսպես կոչվող «տափաստանային թփուտների» համակեցությունները՝ ասպիրակ արևբուրիկատերև (*Spiraea hypericifolia*) և դեղնածաղիկ անդրկովկասյան (*Genista transcaucasica*) տեսակների գերակշռությամբ:

Անտառի վերին սահմանի մոտ լայնորեն տարածված են տրագականտային համակեցությունները գազ մանրագլդիկ (*Astragalus microcephalus*), ոգնաթուփ սահենդի (*Acantholimon sahendicum*) և կորնգան եղջյուրավոր (*Onobrychis cornuta*) տեսակների գերակշռությամբ:

Ենթալպյան գոտու տարածքների մեծ մասը ծածկված է ենթալպյան մարգագետինների տարբեր համակեցություններով: Ամենաշատը տարածված են ճիմա-տարախոտային մարգագետինները սիզախոտ մարգագետնային (*Phleum pratense*), ցորնուկ (*Bromus variegatus*), շյուղախոտ տարբեր (*Festuca varia*) տեսակների առկայությամբ: Ավելի չոր լանջերը ծածկված են մարգագետիններով գայլաթաթ (*Alchemilla sp.*), բոշխ (*Carex sp.*), փայլասենի ուղիղ (*Nardus stricta*) և սիբբալդիա մանրածաղիկ (*Sibbaldia parviflora*) տեսակների առկայությամբ: Այդ մարգագետիններում հանդիպում են բազմաթիվ հազվագյուտ և գեղազարդ բույսերի տեսակներ՝ վարդակակաչ խճճված (*Tulipa confusa*), զանգակ լայնատերև (*Campanula latifolia*), զիվան Զիխաչովի (*Cephalaria tchihatchevii*) և այլն: Ջրհավաք ավազաններին կից փոքր տարածքներ ծածկված են ալպյան մարգագետիններով տարբեր տեսակների առկայությամբ՝ գայլաթաթ (*Alchemilla*), մատնունի (*Potentilla*), շյուղախոտ տարբեր (*Festuca varia*), սիբբալդիա մանրածաղիկ (*Sibbaldia parviflora*), բարակոտնուկ կովկասյան (*Koeleria caucasica*) և այլն:

Պետք է նշել, որ արգելոցի տարածքում աճում են տարբեր ռելիկտային տեսակներ: Դրանցից է հատապտղային կենու (*Taxus baccata*) փոքրիկ պուրակը, որն այդ տեսակի միակ աճելավայրն է հարավային Հայաստանում: Նույնը կարելի է ասել հաճարենու (*Fagus orientalis*) մի քանի ծառերից կազմված չափազանց փոքր պուրակի մասին, որը նույնպես միակն է հարավային Հայաստանում: Արգելոցի անտառներում հանդիպում են արևելյան սոսու (*Platanus orientalis*) առանձին ծառեր. դրանց հիմնական պոպուլյացիան գտնվում է արգելոցին կից «Սոսու պուրակ» արգելավայրում:

2.6.2. «Զանգեզուր» արգելավայր

Արգելավայրի բուսականության հիմնական տիպերը ենթալպյան և ալպյան մարգագետինները և քարասեր բուսականությունն է: Արգելավայրի ալպյան մարգագետինները և գորգերը շատ փոփոխական են. այս բուսականությունում գերակշռում են խատուտիկ Ստեննի (*Taraxacum stevenii*), կատաբրոզելա խայտաբղետ (*Catabrosella variegata*), զանգակ եռատամ (*Campanula tridentata*), սիբբալդիա մանրածաղիկ (*Sibbaldia parviflora*), մինուարցիա աիգոնման

(*Minuartia aizoides*) տեսակները՝ կախված միկրոպայմաններից: Ենթալայան մարգագետինները նույնպես շատ փոփոխական են, դրանք զբաղեցնում են լեռնային լանջերը ծովի մակարդակից 2400-2700 մ բարձրությունների վրա: Այստեղ սովորաբար գերակշռում են ցորնուկ խայտաբղետ (*Bromus variegatus*), գարի մանուշակագույն (*Hordeum violaceum*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), սիգախոտ ալպիական (*Phleum alpinum*), դաշտավլուկ երկարատերև (*Poa longifolia*) տեսակները: Փոքր տարածքներ զբաղեցված են ենթալայան մարգագետիններով, որոնցում գերակշռում են Հարավային Անդրկովկասի երկու էնդեմիկ տեսակներ՝ բրոմոպսիս Գաբրիելյանի (*Bromopsis gabrielianae*) և բրոմոպսիս զանգեզուրի (*Bromopsis zangezura*): Այստեղ քարափներին և ժայռերի վրա աճում են գնդապտուղ կասպիական (*Physoptychis caspica*), զանգակ զանգեզուրի (*Campanula zangezura*), զանգակ հայկական (*C. armena*) և այլ հազվագյուտ տեսակների համակեցություններ: Քարաթափվածքների վրա աճում են վավիլովիա նրբագեղ (*Vavilovia formosa*), սոխ Դերդերիանի (*Allium derderianum*), բալդրդան Շելկովնիկովի (*Heracleum schelkovnikovii*) և այլ հազվագյուտ տեսակներ: Արգելավայրի տարածքում կան բազմաթիվ փոքր լճեր, սակայն ծովի մակարդակից 3000 մետրից ավելի բարձրությունների վրա ջրաճահճային բուսականությունը լավ չէ զարգացած: Արգելավայրի խոնավ տարածքներում երբեմն գերակշռում են մատիտեղ մանդիկ (*Polygonum carneum*), դորոնիկում խոշորատերև (*Doronicum macrophyllum*), ապուզան տգրկախոտային (*Epilobium anagallidifolium*), կոլպոդիում բազմագույն (*Colpodium versicolor*), շահոքրամ գետային (*Geum rivale*), աղվեսախոտ մկնապոչանման (*Alopecurus myosuroides*) տեսակները:

2.6.3. «Խուստուփ» արգելավայր

Խուստուփ լեռնային զանգվածը գտնվում է Հարավային Հայաստանում և ներկայացնում է մեծ հետաքրքրություն բուսաբանական և կենդանաբանական տեսանկյունից: Դրա լանջերին է գտնվում «Շիկահող» պետական արգելոցը, իսկ «Սոսու պուրակ» արգելավայրը՝ Ծավ գետի ստորին հոսանքներում: Այս բնության հատուկ պահպանվող տարածքները հիմնականում ներառում են անտառային բուսականություն, իսկ բարձր լեռնային ենթալայան և ալպյան մարգագետինները և ժայռային ապրելավայրերը բնութագրող բուսականությունը դուրս է մնացել դրանց սահմաններից: Ներկայումս առաջարկվում է Խուստուփ լեռան ենթալայան և ալպյան գոտիներում ստեղծել պետական արգելոց: Այդ տարածքի բուսականությունը հիմնականում ներառում է ալպյան և ենթալայան մարգագետիններ և քարասեր բուսականության աճելավայրեր, ինչպես նաև ենթալայան գոտու անտառային բուսականություն (պուրակային կաղնու անտառներ՝ *Quercus macranthera*): Կան նաև Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված մի շարք հազվագյուտ բուսատեսակներ՝ սոխ Դերդերիանի (*Allium derderianum*), քեմոն Կոմարովի (*Carum komarovii*), մարգացնցնուղ կովկասյան (*Peucedanum caucasicum*), զանգակ Զանգեզուրի (*Campanula zangezura*), ծվծվուկ Խուստուփի (*Silene chustupica*), ծվծվուկ Ռադդեի (*S. raddeana*), թանթանիկ ընձյուղակիր (*Sedum stoloniferum*), գազ չոված (*Astragalus divaricatus*), վարդակակաչ խճճված (*Tulipa confusa*) և այլն:

2.6.4. «Սոսու պուրակ» արգելավայր

Յուրահատուկ, սոսու (*Platanus orientalis*) Կովկասում միակ բնական պուրակը գտնվում է Սյունիքի մարզում՝ Ծավ գետի ավազանում Ներքին Հանդ գյուղի մոտ: Դա գետափնյա բուսականության նեղ ժապավեն է, որի լայնությունը որոշ տեղերում հասնում է մինչև 200 մետրի, իսկ այլ վայրերում նեղանում է մինչև 50 մ (EUNIS դասակարգման համաձայն այն պատկանում է G1.37 Իրանա-Անատոլիական խառը գետային անտառներին): Պուրակի հիմնական հատվածը կազմված է ավելի քան հազար սոսու ծառերից, որոնց տարիքը 200-250 տարի է. դրանց բարձրությունը հասնում է 30-35 մ: Կան նաև ավելի մեծ ծառեր՝ սովորաբար մեծ փչակներով, դրանց բարձրությունը հասնում է 50 մետրի, իսկ բնի տրամագիծը՝ 4 մետր է: Այստեղ առանձնյակների տեսքով ներկայացված են ընկուզենի սովորական (*Juglans regia*), կաղնի արաքսյան (*Quercus araxina*),

թխկի դաշտային (*Acer campestre*), հացենի սովորական (*Fraxinus excelsior*), ուռենի անուշահոտ (*Salix aegyptiaca*) և փռնի կովկասյան (*Celtis caucasica*) տեսակները: Անտառի հովանոցում սովորական են շրջահյուս հունական (*Periploca graeca*), իլենի թավշային (*Euonymus velutina*), սզնի (*Crataegus*) տարբեր տեսակներ՝ սզնի մուգ արնագույն (*C. atrosanguinea*), սզնի կեռասունակավոր (*C. curvisepala*), սզնի մանրածաղիկ (*C. microphylla*), սզնի հինգառնականի (*C. pentagina*), սզնի Ստենի (*C. stevenii*): Խոտածածկում սովորական են քրքում հրաշալի (*Crocus speciosus*), թրաշուշան իտալական (*Gladiolus italicus*), կտտկենի սև (*Sambucus nigra*), մորմ պարսկական (*Solanum persicum*), թթվաովույտ եղջրավոր (*Oxalis corniculata*), կնքաբույս հասարակ (*Tamus communis*) տեսակները: Այստեղ աճում են բազմաթիվ հազվագյուտ բույսեր, որոնք գրանցվել են Հայաստանի Կարմիր գրքում՝ իժալեզու հասարակ (*Ophioglossum vulgatum*), արծվապտեր (*Pteridium tauricum*), գնարբուկ Որոնովի (*Primula woronowii*), գ. Կոմարովի (*P. komarovii*), լերդախոտ հիրկանական (*Teucrium hircanicum*), մորենի Թախտաջյանի (*Rubus takhtadjanii*), Կորոնարիա (*Coronaria coriacea*) և այլն:

ԳԼՈՒԽ 3. «ՇԻԿԱՀՈՂ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

3.1. Բուսական աշխարհը

3.1.1. «Շիկահող» արգելոց

«Շիկահող» արգելոցի տարածքում աճում են բարձրակարգ բույսերի ավելի քան 1100 տեսակ: Արգելոցում ներկայացված է Հայաստանի ֆլորայի մոտ 30%-ը: Այստեղ աճում են Հայաստանի 3 էնդեմ տեսակներ՝ տանձենի Հերիերի - (*Pyrus gergerana*), մորենի Թախտաջյանի (*Rubus takhtadjanii*), մորենի Զանգեզուրի (*Rubus zangezura*) և Հարավային Անդրկովկասի 4 էնդեմ տեսակներ՝ ձագախոտ կարմրակապույտ (*Erysimum lilacinum*), վարդակակաչ Սոսնովսկու (*Tulipa sosnowskyi*), սզնի Զանգեզուրի (*Crataegus zangezuricus*), տանձենի Ռադեի (*Pyrus raddeana*):

Հայաստանի կարմիր գրքում ընդգրկված են 50 տեսակներ 39 ցեղերից և 27 ընտանիքներից. 8 տեսակ CR կատեգորիայի տակ, 28՝ EN, 14՝ VU: Երեքը գնահատվել են որպես NT կատեգորիային պատկանող տեսակներ:

Արգելոցի տարածքում աճում են պտերի 15 տեսակներ: Դրանցից 2-ը գրանցված են Հայաստանի կարմիր գրքում: Արծվապտեր տավրիկյանը (*Pteridium tauricum*) (CR) զարմացնում է իր բարձրությամբ (մինչև 2 մ) և Հայաստանում հանդիպում է միայն «Շիկահող» արգելոցի տարածքում. ընդհանրապես այն հանդիպում է միայն Ղրիմում և Կովկասում: Իժալեզու հասարակը (*Ophioglossum vulgatum*) (CR) Հայաստանում հանդիպում է 2 վայրում, որոնցից միայն մեկն է պահպանվում «Շիկահող» արգելոցում:

Հատապտղային կենու (*Taxus baccata*) (VU) պուրակը արգելոցի հարստություններից է: Կենին Հայաստանում ներկայացված է ընդամենը մի քանի պոպուլյացիաներում: Հատապտղային կենին երրորդական դարաշրջանի ռելիկտ է և շատ հազվագյուտ է Հայաստանի տարածքում:

Արգելոցի անտառներում աճում են հարավային Հայաստանի ֆլորայի համար յուրահատուկ արևելյան հաճախենու (*Fagus orientalis*) և ցանովի շագանակենու (*Castanea sativa*) (EN) փոքր պոպուլյացիաները:

Հնադարյա միջերկրածովյան ֆլորայի ներկայացուցիչ բոշխ կախվածը (*Carex pendula*) (EN) Հայաստանում աճում է միայն արգելոցի կենու և սոսու պուրակներում: Քարաովույտ կրետականը (*Coronilla cretica*) (EN) Հայաստանում հանդիպում է միայն Ներքին Հանդ գյուղի մոտ չոր քարքարոտ լանջերին:

Այստեղ հանդիպում են գնարբուկի 2 ենթատեսակներ (*Primula vulgaris subsp. woronowii*, EN և *Primula vulgaris subsp. komarovii*, EN), որոնք ունեն շատ մեծ սպիտակ և վարդագույն ծաղիկներ: Կովկասի էնդեմ հանդիսացող այս տեսակները հանդիպում են Հայաստանում միայն Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանի հարավային մասում:

Մարտին ծաղկում է գեղատեսիլ Արտյուշենկոյի ձնծաղիկը (*Galanthus artjuschenkoae*) (VU): Այն Անդրկովկասի (Հայաստան և Թալիշ) էնդեմ տեսակ է և Հայաստանում ներկայացված է ընդամենը 2 պոպուլյացիաներով, որոնցից մեկը պահպանվում է «Շիկահող» արգելոցի տարածքում:

Արգելոցում աճում են չափազանց գեղեցիկ վարդակակաչներ (*Tulipa confusa*, *Tulipa sosnowskyi*) մեծ կարմիր, վարդագույն և դեղին ծաղիկներով, որոնք Հարավային Անդրկովկասի էնդեմներ են:

Գարնանը և վաղ ամռանը արգելոցի անտառներում շատ են ծաղկած վայրի խոլորձները: Դրանցից երկուսն ընդգրկված են Հայաստանի կարմիր գրքում որպես վտանգված՝ խոլորձ եռաստամ (*Orchis tridentata*) և խոլորձ կետավոր (*Orchis punctulata*) տեսակներ:

Կորոնարիա կաշվեկերպը (*Coronaria coriaceae*) (EN) մուգ կարմիր ծաղիկներով գեղեցիկ բարձր բազմամյա խոտաբույս է, որը Կովկասի տարածքում հանդիպում է միայն Հարավային Անդրկովկասում (Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանի հարավային հատված, Նախիջևան) և Թալիշում:

«Շիկահող» արգելոցի ֆլորայում շատ են բակլազգիների ընտանիքի (*Fabaceae*) ներկայացուցիչները՝ 21 ցեղ և 73 տեսակ: Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանի հարավային հատվածը միակ վայրն է Անդրկովկասում, որտեղ աճում է վիկ ոլոռանմանը (*Vicia pisiformi*) (CR): Այդ եզակի պոպուլյացիայի մի մասը գտնվում է «Շիկահող» արգելոցում: Տեսակը լայն տարածված է ամբողջ Եվրոպայում:

Արգելոցի տարածքում է աճում խորդենի ալբանական (*Geranium albanum*) (EN) տեսակի Հայաստանում եզակի պոպուլյացիայի մի մասը: Մուգ վարդագույն ծաղիկներով այս գեղատեսիլ խորդենին հանդիպում է նաև Արևելյան Անդրկովկասում և Իրանում:

Արգելոցի տարածքում աճում են մի շարք վայրի պտղատուներ. վայրի սզնու, տանձենու, մորենու տեսակներ: Դրանց շարքում են տեսակները, որոնք գնահատվել են որպես վտանգված՝ տանձենի Հերիերի (*Pyrus gergerana*), Տանձենի հիրկանյան (*Pyrus hyrcana*), տանձենի Ռադեի (*Pyrus raddeana*), մորենի Թախտաջանի (*Rubus takhtajanii*), մորենի Զանգեզուրի (*Rubus zangezurus*), սզնի մանրատերև (*Crataegus mycrophylla*), սզնի Զանգեզուրի (*Crataegus zangezura*):

3.1.2. «Զանգեզուր» արգելավայր

«Զանգեզուր» արգելավայրի տարածքում աճում են 264 ցեղերին և 69 ընտանիքներին պատկանող 646 տեսակ բարձրակարգ բույսեր: «Զանգեզուր» արգելավայրի տարածքում հանդիպում են Հայաստանի 7 և Անդրկովկասի ավելի քան 30 էնդեմ տեսակներ: 29 ցեղերին և 19 ընտանիքներին պատկանող 37 տեսակ գրանցվել են Հայաստանի Կարմիր գրքում. 5-ը որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» տեսակ, 28-ը՝ «Վտանգված տեսակ», 4-ը՝ «Խոցելի տեսակ»: Երկու տեսակ գնահատվել են որպես «Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ»:

Վարդագույն ծաղիկներով կիսագնդաձև ծաղկաբույլ ունեցող շատ գեղազարդային փոքր վայրի սոխ Դերդերիանի (*Allium derderianum*) (EN) տեսակը Հայաստանում աճում է միայն Զանգեզուր ֆլորիստիկական շրջանում և հանդիպում է «Զանգեզուր» և «Խուստուփ» արգելավայրերի տարածքում:

Հայաստանի էնդեմ պսեֆելուս Զանգեզուրի (*Psephellus zangezuri*, EN) տեսակը աճում է միջին լեռնային գոտում և հունիս-հուլիսին ծածկվում է գրավիչ բաց վարդագույն ծաղիկներով: Այն տարածված է միայն Հայաստանի Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում և դրա պոպուլյացիայի մի մասը գտնվում է «Զանգեզուր» արգելավայրի տարածքում:

Փոքրիկ լվածաղիկ Ջանգեզուրի (*Tanacetum zangezuricum*) (EN) տեսակի հայկական պոպուլյացիայի մի մասը գտնվում է «Ջանգեզուր» արգելավայրի և «Արևիկ» ազգային պարկի տարածքներում: Այս տեսակը Անդրկովկասի էնդեմ է և աճում է միայն ալպյան լեռնային գոտում:

Արգելավայրի տարածքում ժայռերի վրա հանդիպում են վառ ծաղիկներով շատ գեղազարդային փոքր բույսեր, ինչպիսին են՝ Հայկական բարձրավանդակի էնդեմ ծվծվուկ Ռադդեի (*Silene raddeana*) (EN) տեսակը և Անդրկովկասի էնդեմ մեխակ Ռադդեի (*Dianthus raddeanus*) տեսակը:

Ժայռաձեղքերում աճում են ճոճուկ Շովիցի (*Cerastium szowitsii*) և ծվծվուկ սեղմված (*Silene depressa*) տեսակները: Նուրբ ցողունով և բազմաթիվ սպիտակ ծաղիկներով այս տեսակները Անդրկովկասի էնդեմներ են: Դրանց խիտ փնջերը ծածկում են ժայռերը և շատ գեղազարդ տեսք ունեն:

Այստեղ է գտնվում խլոպուզ Մանիսաջյանի (*Merendera manissadjianii*) տեսակի Հայաստանում երեք պոպուլյացիաներից մեկը. այս շատ գեղազարդային սոխուկավոր բույսը աճում է միջին և բարձր լեռնային գոտում, այն ծաղկում է ապրիլ-մայիսին և ունի մուգ մանուշակագույն, համարյա կլորավուն ծաղիկներ: Այս տեսակը տարածված է միայն Հարավային Անդրկովկասում և Փոքր Ասիայում:

Միայն այստեղ է հանդիպում Հայաստանի էնդեմ գազ Աղասու (*Astragalus agasii*) (CR) տեսակը, որը համարյա անցողուն բազմամյա բույս է մազմզոտ տերևներով և դեղին ծաղիկներով՝ խիտ ծաղկաբույլերում:

Գազ Ջանգեզուրի (*Astragalus sangezuricus*) (EN) տեսակը, որը կապտա-մանուշակագույն ծաղիկներով փշոտ թփիկ է, Հայաստանում աճում է միայն «Ջանգեզուր» արգելավայրի և «Արևիկ» ազգային պարկի տարածքներում:

Այստեղ է գտնվում շատ գրավիչ վավիլովիա նրբագեղ (*Vavilovia formosa*) (EN) տեսակի երեք պոպուլյացիաներից մեկը: Մեկ զույգ տերևիկներով և վառ վարդագույն ծաղիկներով այս տեսակը աճում է ալպյան գոտու հրաբխային խարամների և քարաթափվածքների վրա:

Հայաստանում է գտնվում Հայկական Բարձրավանդակի էնդեմ սրոհունդ հայկական (*Hypericum armenum*) (CR) տեսակի տարածման արևելյան սահմանը: Դեղին ծաղիկներով այս փոքրիկ նրբագեղ բույսը Հայաստանում աճում է միայն 2 պոպուլյացիաներով «Դիլիջան» ԱՊ-ում և «Ջանգեզուր» արգելավայրում:

Հարավային Անդրկովկասի էնդեմ ոջլախոտ գարշահոտը (*Delphinium foetidum*) (VU) աճում է միայն բարձր լեռների ժայռերի և քարաթափվածքների վրա 2500 մետրից ավելի բարձրությունների վրա: «Ջանգեզուր» արգելավայրի տարածքում հանդիպում է խոշոր մանուշակագույն զիգոմորֆ ծաղիկներով այս շատ գեղեցիկ տեսակի Հայաստանում երեք պոպուլյացիաներից մեկը:

Այստեղ աճում է նրբագեղ բաց նարնջագույն ծաղիկներով փոքր կակաչ Ջանգեզուրի (*Papaver zangezuricum*) տեսակը:

Ենթալպյան մարգագետիններում և խոնավ տարածքներում հանդիպում են բազմաթիվ վայրի խլոբձներ: Այստեղ աճում է սպիտակ ծաղիկների գնդաձև ծաղկաբույլերով տրաունշտայներա գնդաձև (*Traunsteineria sphaerica*) տեսակը, յուրահատուկ կանաչավուն-դարչնագույն ծաղիկներով բշտաթերթիկ կանաչ (*Coeloglossum viride*) տեսակը, մուգ մանուշակագույն երկարավուն ծաղկաբույլերով խլոբձ փայտոջիլակիր (*Orchis coriophora*) տեսակը և բազմաթիվ այլ տեսակներ:

3.1.3. «Խուստուփ» արգելավայր

«Խուստուփ» արգելավայրի տարածքում աճում են բարձրակարգ բույսերի 420 տեսակ, որոնք պատկանում են 202 ցեղերի և 53 ընտանիքների: «Խուստուփ» ԱՊ-ի ֆլորայում ներկայացված են Հայաստանի 3 էնդեմ տեսակներ, Հարավային Անդրկովկասի 9 էնդեմ տեսակներ և Անդրկովկասի 9 էնդեմ տեսակներ: 14 տեսակ Կովկասի էնդեմներ են:

21 ցեղերին և 19 ընտանիքներին պատկանող 23 տեսակ գրանցվել են Հայաստանի Կարմիր գրքում՝ 6-ը որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» տեսակ/ CR, 12-ը՝ «Վտանգված տեսակ»/ EN և 5-ը՝ «Խոցելի տեսակ»/ VU:

Խուստուփ լեռան կլիման շատ ավելի խոնավ է, քան շրջապատող տարածքներին: Ենթալայան բուսականությունը տեսակային կազմով շատ հարուստ է: Ենթալայան մարգագետինները ավելի խոնավ են շրջապատող տարածքների մարգագետինների համեմատ: Այստեղ աճում են Հարավային Հայաստանում համար շատ հազվագյուտ ձղկի գորտնուկային (*Trollius ranunculinus*) և հողմածաղիկ գծավոր (*Anemone fasciculata*) տեսակները: Անտառներում հանդիպում են մի շարք հիբկանական տարրեր, որոնցից են թխկի հիբկանյան (*Acer hyrcanum*), տանձենի հիբկանյան (*Pyrus hyrcana*) (EN), լերդախոտ հիբկանիական (*Teucrium hyrcanum*) (VU):

Խուստուփ լեռան առանձնահատկություններից է պտերների առատությունը (13 տեսակ), որոնք աճում են ալպյան և ենթալպյան գոտում՝ հիմնականում լեռան հյուսիս-արևելյան լանջերին: Տեսակների մեծամասնությունը արկտո-ալպյան բուսականության ներկայացուցիչներ են և ռելիկտային տեսակներ են, որոնք պահպանվել են Խուստուփում նպաստավոր խոնավ պայմանների շնորհիվ: Այստեղ աճում են Հայաստանի համար շատ հազվագյուտ պտերներ՝ ողկուզապտեր լուսնանման (*Botrychium lunaria*) (VU), և բանպոտ նիզականման (*Polystichum lonchitis*) (EN):

Խուստուփ լեռից նկարագրվել են երեք տեսակներ. սրոհունդ Էլեոնորայի (*Hypericum eleonora*) (CR) Հայաստանի էնդեմ, որը Հայաստանում հանդիպում է միայն Խուստուփ լեռան վրա և Աղայա սարի վրա՝ Իջևանի ֆլորիստիկական շրջանում, ծվծվուկ Խուստուփի (*Silene chustupica*, CR), Հայաստանի էնդեմ տեսակ)՝ ցրված բույս է երկարավուն-նշտարաձև տերևներով և շատ գեղազարդային վարդագույն ծաղիկներով, հանդիպում է միայն Խուստուփ լեռան հիմնական գագաթի տակ, քարաթափվածքների վրա, և մեխակ Զանգեզուրի (*Dianthus zangezurus*) տեսակը, Հարավային Անդրկովկասի էնդեմ՝ սպիտակ ծաղիկներով մեխակ, որն աճում է ենթալպյան և ալպյան լեռնային գոտու խոտածածկ լանջերին:

Խուստուփ լեռը միակ վայրն է Հայաստանում, որտեղ աճում են քիմոն Կոմարովի (*Carum komarovii*, Հարավային և Արևելյան Անդրկովկասի էնդեմ, CR), շուշանաբանջար ցածր (*Chaerophyllum humile*, Կովկասի էնդեմ), մանուշակ կովկասյան (*Viola caucasica*, Կովկասի էնդեմ, CR)՝ դեղին ծաղիկներով շատ գեղազարդային բույս և փայլուկ Ֆորսթերի (*Luzula forsteri*) տեսակները:

Ենթալպյան լեռնային գոտու ժայռերի վրա աճում է սապնաբմատ նեղատերև (*Gypsophila tenuifolia*) տեսակը՝ նուրբ վարդագույն ծաղիկներով: Այս տեսակը հազվագյուտ է Հարավային Հայաստանում:

Խուստուփ լեռը զանգակ զանգեզուրի (*Campanula zangezura*, EN) տեսակի տարածման հյուսիսային սահմանն է: Խոշոր մուգ վարդագույն ծաղիկներով այս բույսը աճում է Հարավային Անդրկովկասում և Հյուսիս-Արևմտյան Իրանում:

Հարավային Անդրկովկասի էնդեմ վարդակակաչ խճճվածը (*Tulipa confusa*, EN) չափազանց գեղազարդային վայրի վարդակակաչ է մեծ կարմիր կամ դեղին ծաղիկներով. ծաղկում է ապրիլ-մայիսին Շիշկերտ գյուղից վերև գտնվող լանջերի վրա:

Հայկական Բարձրավանդակի էնդեմ գորտնուկ մագոտը (*Ranunculus villosus*, CR) աճում է միայն Խուստուփ լեռան վրա և Ճակատեն գյուղի մոտ՝ Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում:

3.1.4. «Սոսու պուրակ» արգելավայր

Արգելավայրի տարածքում հատուկ պահպանության օբյեկտ է հանդիսանում հնագույն ժամանակներից պահպանվող ռելիկտային տեսակ սոսին արևելյան */Platanus orientalis/*: Սոսու պուրակը Հայաստանի տարածքում ձգվում է Ծավ գետի հովտով 10 կմ երկարությամբ և 50-200 մ լայնությամբ նեղ շերտով և մոտավորապես այդքան էլ շարունակվում է Ծավ գետի ներքին

հոսանքով: Ներկայումս այստեղ աճում են 1000-ից ավելի 200-250 տարեկան սոսու ծառեր, որոնց բարձրությունը 30-35 մ է, իսկ բնի տրամագիծը հասնում է 3 մետրի: Հանդիպում են նաև հսկա փչակներ ունեցող, ծերություն ապրող դարավոր ծառեր: Արգելավայրի տարածքում 17 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր Գրքում. արժվապտեր տավրիական (*Pteridium tauricum*) (CR), ձնծաղիկ Արտյշենկոյի (*Galanthus artjuschenkoae*) (VU, Անդրկովկասի էնդեմիկ), վաղենակ պարսկական (*Calendula persica*) (EN), արաբախոտ փխրուն (*Arabis laxa*) (CR), շնկոտեմ հովանոցավոր (*Thlaspi umbellatum*) (CR), կորոնարիա կաշվեկերպ (*Coronaria coriacea*) (EN), իլենի թավշային (*Euonymus velutina*) (CR), ճապկի վրացական (*Swida iberica*) (CR), թանթոնիկ ընձուղակի (*Sedum stoloniferum*) (VU), բոշխ աղքատացած (*Carex depauperata*) (EN), բոշխ կախված (*Carex pendula*) (EN), խորդենի արևելակովկասյան (*Geranium albanum*) (EN), լեդախոտ հիրկանիական (*Teucrium hyrcanum*) (VU), սոսի արևելյան (*Platanus orientalis*) (EN), գորտնուկ ցիկուտային (*Ranunculus cicutarius*) (EN), սզնի փոքրատերև (*Crataegus microphylla*) (EN), սզնի զանգեզուրյան (*Crataegus zangezura*) (EN, Հայաստանի էնդեմիկ):

Հայաստանի էնդեմիկ է. սզնի զանգեզուրյան (*Crataegus zangezura*) (EN):

3.2. Կենդանական աշխարհը

3.2.1. «Շիկահողե» արգելոց

Անողնաշար կենդանիներ

Արգելոցի անողնաշարները հիմնականում անտառային տեսակներ են: Բավական շատ են գնայուկ բզեզները (Carabidae), հատկապես կապված անտառային թաղիքի հետ՝ ընդհանուր 64 տեսակ. բազմաթիվ են երկարաբեղիկ բզեզները (Cerambycidae)՝ հայտնաբերվել է 62 տեսակ, որոնց մեծամասնությունը կապված է ծառաթփային բուսականության հետ, ինչպես նաև ոսկերբեզները (Buprestidae)՝ 40 տեսակ: Գրանցվել է ցերեկային թիթեռների (Lepidoptera-Rhopalocera) մոտ 100 և մրջյունների (Formicidae)՝ 18 տեսակ:

Արգելոցում հանդիպում է Հայաստանի Կարմիր գրքում գրանցված 11 տեսակ: ԲՀՊՏ-ներում միայն այստեղ է պահպանվում մեծաչք ճպուռը (*Lestes macrostigma*) (VU): Արգելոցում սովորական է Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկը (*Procerus scabrosus fallettianus*) (VU, Անդրկովկասի էնդեմիկ): Արգելոցում հայտնաբերվել է նաև Սյունիքի և Նախիջևանի էնդեմ սևամարմին աքսորվածը (*Entomogonus amandanus*) (EN): Այստեղից նկարագրվել է անտառի վերին սահմանի մոտ տերեփուկների վրա հանդիպող Խուստուփի և Կապուտջուղի լեռնային զանգվածների էնդեմ կապանյան երկարաբեղիկը (*Cortodera kaphanica*) (EN, Հայաստանի էնդեմիկ): Արգելոցում հայտնաբերվել է ալպյան ռոզալիան (*Rosalia alpina*) (VU), որը Հայաստանում գտնվել է նաև միայն հյուսիս-արևելյան անտառային շրջաններում. այս տեսակը հիմնականում զարգանում է հաճարենու վրա, սակայն «Շիկահողե» արգելոցում հավանաբար կապված է կաղնու հետ: Կաղնու վրա է բնակվում նաև խոշոռ կաղնու մեծ երկարաբեղիկը (*Cerambyx cerdo acuminatus*) (VU):

Բաց տարածքներում և անտառի վերին սահմանի մոտ հանդիպում են ապոլոնների 2 հայկական տեսակները՝ մենմոզինան կամ սև ապոլոնը (*Parnassius mnemosyne rjabovi*) (VU) և ապոլոնը (*Parnassius apollo kashtshenkoi*) (VU): Տափաստանացված տարածքներում հանդիպում է գազերի վրա զարգացող ավրորինա դեղնաթիթեռը (*Colias aurorina*) (VU):

Լույսի վրա են գալիս Կարմիր գրքում գրանցված իլիկաթիթեռների 2 տեսակները՝ կաչուկի (*Hyles hippophaes caucasica*) (VU) և պրոզերպինան (*Proserpinus proserpina*) (VU): Այստեղ բավական սովորական է նաև մանուշակագույն մեղու-ատաղձագործը (*Xylocopa violacea*) (VU):

Արգելոցում ներկայացված են նաև այլ հազվագյուտ և նեղ տեղային տարածում ունեցող տեսակներ: Այսպես, արգելոցի տարածքից նկարագրվել են՝ փայտափորիկ բզեզների 2 տեսակ (*Gastrallus phloeophagus* և *Oligomerus fraxini*), արարատյան (*Scymnus araraticus*) և հայկական

(*Pharoscymnus armenus*) գատիկները, զնաբգեգուրյան փղիկը (*Apion zangezuricus*): Այստեղից հայտնի են նաև Հայաստանի և Նախիջևանի էնդեմներ սևամարմին *Eledonoprius serrifrons*, կարմրակուրծք մանրաբզեզը (*Dasytiscus ruficollis*), արաքսյան (*Pronomaea araxicola*) և ճարպիկ (*Callicerus velox*) սրամարմիններ և այլն:

Ձկներ

«Շիկահող» արգելոցում մշտապես հանդիպում է 5 ձկնատեսակ, կարող են հանդիպել ևս 5-ը: Կարմիր գրքում՝ 1 ձկնատեսակ: Էնդեմիկ՝ 1 ձկնատեսակ:

Արգելոցի հոսող ջրակալներում՝ Ծավ և Շիկահող գետերում ու նրանց մեջ թափվող մանր վտակներում հիմնական ձկնատեսակներ են հանդիսանում կարմրախայտը (*Salmo trutta fario*) (սովորական է գետերի վերին և միջին հոսանքներում, ավելի հազվադեպ՝ ստորին հոսանքներում), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*) (բազմաքանակ է ստորին հոսանքներում, հազվադեպ՝ միջին և վերին հոսանքներում), կողակը (*Capoeta* sp.) (սովորական է ստորին հոսանքներում, ավելի հազվադեպ՝ միջին հոսանքներում), Քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*) (սովորական է գետերի միջին և ստորին հոսանքներում, հազվադեպ՝ վերին հոսանքներում): Բացի վերոգրյալ ձկնատեսակներից, արգելոցի գետերում ֆորելային տնտեսություններից պարբերաբար ներթափանցում է նաև ծիածանախայտը (*Parasalmo mykiss*): Ներկայում լիարժեք պարզաբանված չէ «Շիկահող» պետական արգելոցում բնակվող կողակի կարգաբանական վիճակը: Ամենայն հավանականությամբ այստեղ հանդիպում է նաև Սևանի կողակը (*Capoeta sevangi*) (VU):

Կարմրախայտը հիմնականում բնակեցնում է Ծավ և Շիկահող գետերի միջին և վերին, երբեմն ստորին հոսանքները, հանդիպելով 700-ից մինչև 2100 /երբեմն՝ ավելի բարձր/, սովորաբար 1200-1900 մ ծ.մ.բ.: Կողակը բնակվում է Ծավ և Շիկահող գետերի ստորին հոսանքներում, երբեմն բարձրանալով միջին հոսանքներ՝ մինչև 1400-1500 մ ծ.մ.բ, երբեմն ավելի: Քուռի բեղուն բնակվում է Ծավ և Շիկահող գետերի միջին և ստորին, երբեմն վերին հոսանքներում, ուր նախընտրում է ստորջրյա քարերով հարուստ արագահոս տեղանքները: Հազվադեպ կարող է հանդիպել մինչև 2100 մ ծ.մ.բ.: Ծիածանախայտը պարբերաբար հայտնվում է Ծավ գետում, այստեղ ներթափանցելով ֆորելային տնտեսություններից:

«Շիկահող» պետական արգելոցի ջրակալներում, բացի վերոագրյալ տեսակներից, զարնան և ամռան առաջին կեսին՝ գետերի զարնանային հորդացումների և ձկների բազմացման ժամանակաշրջանում, Ծավ և Շիկահող գետերի ստորին հոսանքում կարող են հանդիպել նաև հետևյալ ձկնատեսակները՝ մուրծին (*Luciobarbus mursa*), անգորական լերկաձուկը (*Oxyemacheilus angorae*), Քուռի լերկաձուկը (*Oxyemacheilus brandti*), Քուռի սպիտակաձուկը (*Alburnus filippii*), ենթաբերանը (*Chondrostoma oxyrhynchum*) և այլ ձկնատեսակներ:

Երկենցաղներ

Արգելոցի տարածքում ապրում են 4 տեսակի երկկենցաղներ: Ջրաճահճային էկոհամակարգերում լայնորեն տարածված և բավական հաճախ հանդիպող տեսակներից են լճագորտը (*Pelophilax ridibundus*) և կանաչ դոդոշը (*Bufo viridis*): Բարձր լեռնային գոտում հոսող որոշ գետակներում սովորական է փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*): Համեմատաբար հազվադեպ հանդիպող տեսակներից է փոքրասիական ծառագորտը (*Hyla savignyi*):

Սողուններ

Սողունների ֆաունան ներկայացված է 27 տեսակներով (11 տեսակի մողեսներ, 13 տեսակի օձեր և 3 տեսակի կրիաներ): Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակներից հանդիպում են 6 տեսակներ՝ երկարաոտ սցինկը (*Eumeces schneideri*) (VU), առաջավորասիական մաբույան (*Trachylepis septemtaeniata*) (VU), Կովկասյան կատվաօձը (*Telescopus fallax*) (VU), անդրկովկասյան

«Շիկահողե արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

սահնօձը (*Zamenis hohenackeri*)(VU), հայկական իծը (*Vipera (Montivipera) raddei*) (VU) և միջերկրածովային կրիան (*Testudo graeca*) (VU):

ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում գրանցված տեսակներից են լեռնային քսերոֆիտ անտառներում և լեռնային տափաստանների քարքարոտ լանջերին (1700-2200 մ) հանդիպող հայկական իծը (*Vipera (Montivipera) raddei*) (NT) և նախալեռնային գոտում հանդիպող՝ միջերկրածովային կրիան (*Testudo graeca*) (VU):

Նախալեռնային և լեռնային գոտու քսերոֆիլ քարքարոտ բիոտոպներում բավական հաճախ հանդիպող տեսակներից են կովկասյան ագաման (*Laudakia caucasia*), ադրբեջանական մողեսը (*Darevskia raddei*), զոլավոր մողեսը (*Lacerta strigata*), լեռնատափաստանային գոտում՝ միջին մողեսը (*Lacerta media*), չոր տափաստաններում, թփուտային մացառուտներում, նոսրանտառներում՝ դեղնափորիկը (*Pseudopus apodus*), օձերից՝ որդանման կույր օձը (*Typhlops vermicularis*), վզնոցավոր էիրենիսը (*Eirenis collaris*), հայկական էիրենիսը (*Eirenis punctatolineatus*), կարմրափոր սահնօձը (*Hidrophis schmidtii*), արևմտյան վիշապիկը (*Eryx jaculus*): Զրաճահճային և գետերի ափամերձ տեղամասերում հազվադեպ չեն սովորական լորտուն (*Natrix natrix*) և ջրային լորտուն (*Natrix tessellata*): Սողուններից արգելոցի նախալեռնային քարքարոտ կամ կավային տեղամասերում, քսերոֆիտներով ծածկված քարքարոտ լանջերին հանդիպում են նաև շերտավոր մերկաչքը (*Ablepharus bivittatus*), լայնատերև, խառը անտառներում, անտառեզրին, բացատներում՝ ջարդվող իլիկամողեսը (*Anguis fragilis*): Անտառի վերին և լեռնատափաստանային գոտու քարքարոտ գաղիվայրերի վրա հանդիպում են բազմագույն (*Hemorrhois ravergeri*) և քառաշերտ (*Elaphe sauromates*) սահնօձերը: Արգելոցում գրեթե ամենուր լայն տարածված է Հայաստանի ամենաթունավոր օձը՝ գյուրգան (*Macrovipera (Vibera) lebetina*):

Արգելոցի վերին լեռնատափաստանային գոտու որոշ տեղամասերում 2100-2300 մ ծ.մ. բարձրության վրա համատեղ հանդիպում են տարբեր լանդշաֆտային գոտիներին բնորոշ այնպիսի տեսակներ, ինչպիսին հայկական իծը, գյուրգան, քառաշերտ և կարմրափոր սահնօձերը, մողեսաօձը և այլն: Այս հանգամանքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում էկոլոգիական հարմարողականության հարցերը պարզաբանելու տեսանկյունից:

Թռչուններ

Որպես Հայաստանի ամենամեծ անտառային արգելոցներից մեկը «Շիկահող» արգելոցը կարևոր դեր ունի երկրի անտառային թռչնաֆաունայի պահպանության համար: Մինչև այժմ արգելոցում գրանցվել է թռչունների 130 տեսակ, որոնցից ավելի քան 110 բնադրում են արգելոցում:

Ընդհանուր առմամբ «Շիկահող» արգելոցի թռչուններից 20 տեսակ գրանցված է Հայաստանի կարմիր գրքում, որոնցից 4-ն ընդգրկված են նաև վտանգված տեսակների միջազգային կարմիր ցուցակում:

Արգելոցի ցերեկային գիշատիչ թռչուններն են փոքր ենթաարծիվը (*Aquila pomarina*) (VU), օձակեր արծիվը (*Circaetus gallicus*) (VU) և գաճաճ արծիվը (*Hieraetus pennatus*) (VU), ցախաքլորատրսը (*Accipiter gentilis*) (VU) և լորաճուռակը (A. nissus), կրետակերը (*Pernis apivorus*), արտույտաբազեն (*Falco subbuteo*) և սովորական հողմավար բազեն (*F. tinnunculus*): Գորբալ վտանգված գիշանգողը (*Neophron percnopterus*) (EN) բնադրում է արգելոցում: Մի շարք տեսակներ այցելում են արգելոցի բաց ապրելավայրերը սնունդ հայթայթելու համար. դրանցից են գառնանգողը (*Gypaetus barbatus*) (VU), սպիտակագլուխ անգողը (*Gyps fulvus*) (VU), քարարծիվը (*Aquila chrysaetos*) և երբեմն գորբալ վտանգված գեռեզմանաարծիվը (*A. heliaca*) (VU):

Արգելոցի անտառներում հանդիպում են անտառային բուն (*Strix aluco*), փայտփորների մի քանի տեսակներ, կեռնեխների, երաշտահավերի և ճանճորսերի տարբեր տեսակներ, այդ թվում սև փայտփորը (*Dryocopus martius*) (VU) և միջին փայտփորը (*Dendrocopos medius*), արշալուսիկը (*Erithacus rubecula*), ծնկլտան գեղգեղիկը (*Phylloscopus collybita*) և դեղնափոր գեղգեղիկը (*Ph.*

trochiloides), սովորական սիտեղը (*Sitta europaea*) և գլոբալ վտանգված կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*) (DD): «Շիկահող» արգելոցի անտառներում բնակվում են սերինոսների տարբեր տեսակներ՝ կանաչ սերինոսը (*Carduelis chloris*), սովորական խածկտիկը (*Pyrrhula pyrrhula*) և հատրեկիչը (*Coccothraustes coccothraustes*): Ցածրադիր վայրերի անտառի եզրերում և թփոտ բացատներում բնակվում են այծկիթը (*Caprimulgus europaeus*), հուպպը (*Upupa epops*), ժուլանը (*Lanius collurio*) և սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala*): Ցածրադիր վայրերի մարգագետիններում հաճախ հանդիպում է լորը (*Coturnix coturnix*), որտեղ երբեմն հանդիպում է նաև հազվագյուտ անդրկովկասյան փասիանը (*Phasianus colchicus*) (DD): Ծավ գետի երկայնքով աճող անտառները բնակավայր են կրոպական բվիկի (*Otus scops*), սևաճակատ շամփրուկի (*Lanius minor*), երկարագի երաշտահավի (*Aegithalos caudatus*), պիրոլի (*Oriolus oriolus*) և ճոճահավի (*Remiz pendulinus*) համար: Չորասեր բուսականությամբ և թփուտներով ծածկված չոր լանջերին բնորոշ են մորու շահրիկը (*Sylvia curruca*), երգող շահրիկը (*S. crassirostris*), սևախայտ քարաթռչնակը (*Oenanthe hispanica*), կանեփնուկը (*Carduelis cannabina*) և կարմրակատար շամփրուկը (*Lanius senator*) (VU):

Արգելոցի գետերի վրա հանդիպում են սպիտակավիզ կոցարը (*Actitis hypoleucos*), ջրաճնճուկը (*Cinclus cinclus*) և լեռնային խաղտոնիկը (*Motacilla cinerea*):

Արգելոցի լեռնային մարգագետիններում բնակվում են մարգագետնային չքչանը (*Saxicola rubetra*), սովորական ոսպնուկը (*Carpodacus erythrinus*), լեռնային ձիաթռչնակը (*Anthus spinoletta*) և լեռնային վշասարեկը (*Carduelis flavirostris*): Ժայռային քարաթափվածքների վրա և գիհու թփուտներում այստեղ հանդիպում են կարմրաճակատ սերինոսը (*Serinus pusillus*), սպիտակախածի կեռնեխը (*Turdus torquatus*), այգու դրախտապանը (*Emberiza hortulana*) և խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*): Անտառի վերին սահմանից վերև մարգագետիններում հանդիպում են մոխրագույն կաքավը (*Perdix perdix*) և Կովկասյան մայրեհավի (*Tetrao mlokosiewiczi*) (VU) փոքր պոպուլյացիան:

Արգելոցում շատ են Ժայռային քարաթափվածքները և ժայռերը: Ցածր բարձրությունների վրա այստեղ բնակվում են Ժայռային փոքր սիտեղը (*Sitta neumayer*), լեռնային դրախտապանը (*Emberiza cia*), ժայռային ճնճողուկը (*Petronia petronia*), կապույտ քարակեռնեխը (*Monticola solitarius*), ժայռային ծիծեռնակը (*Ptyonoprogne rupestris*): Ավելի բարձր լեռնային մարգագետիններում հանդիպում են սևուկ կարմրատուտը (*Phoenicurus ochruros*), եղջրավոր արտույտը (*Eremophila alpestris*) և կարմրակտուց ճայը (*Pyrrhocorax pyrrhocorax*): Արգելոցի ամենաբարձր վայրերում հանդիպում է հազվագյուտ վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) (VU):

Կաթնասուններ

Արգելոցում բնակվող կաթնասունների մեծ մասը սերտորեն կապված են լայնատերև անտառների հետ: Այսպիսի տեսակներն են անտառային քնամուլը (*Dryomys nitedula*), պոլչոկը (*Glis glis*), հնդկական մացառախոզը (*Hystrix indica*), դեղնակուրծք մուկը (*Apodemus ponticus*), փոքր անտառային մուկը (*Apodemus uralensis*), տափաստանային կատուն (*Felis silvestris ornata*), անտառակատուն (*Felis silvestris silvestris*), լուսանը (*Lynx lynx*), գորշ արջը (*Ursus arctos*) և այծյամը (*Capreolus capreolus*): Այս կենդանիները հիմնականում նախընտրում է ոչ թե խիտ անտառը, այլ անտառային բացատներն ու անտառների ու մարգագետինների միջև ընկած բաց տարածքները: Գրանցվել են երեք անտառաբնակ չղջիկներ. փոքր իրիկնաչղջիկը (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*) և անտառային կամ Նատուզիուսի փոքրաչղջիկը (*Pipistrellus nathusii*):

Շատ հազվադեպ հարակից տարածքներից արգելոց մտնում են ազնվացեղ եղջերուները (*Cervus elaphus maral*):

Ջրամերձ և խոնավ տարածքներում ապրում են ջրային դաշտամուկը (*Arvicola amphibius* = *A. terrestris*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys teres* = *N. schelkovnikovi*), բեղավոր գիշերաչղջիկը (*Myotis mystacinus*), Նատերերի գիշերաչղջիկը (*Myotis nattereri*) և, շատ սահմանափակ քանակությամբ և վայրերում՝ ջրասամույրը (*Lutra lutra*):

Բարձր գոտիներում, քարքարոտ գագաթներին ու մերձալպյան մարգագետիններում գրանցվում են ձնային դաշտամուկը (*Chionomys nivalis*), անդրկովկասյան կուրամկնիկը (*Ellobius lutescens*), Դադստանի դաշտամուկը (*Microtus daghestanicus*), կովկասյան ընձառյուծը (*Panthera pardus ciscaucasica* = *P.p. saxicolor*) և բեզուարյան այծը (*Capra aegagrus*): Ժայռոտ տեղամասերում ապրում են ասիական լայնական չղջիկը (*Barbastellus leucomelas*), սովորական երկարաթև չղջիկը (*Miniopterus schreibersi*), հարավային պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus euryale*), սրականջ գիշերաչղջիկը (*Myotis blythii*) և եռագույն գիշերաչղջիկը (*Myotis emarginatus*):

Մարդու կողքը և նույնիսկ շինություններում հարմարվել են ապրել մոխրագույն համստերիկը (*Cricetulus migratorius*), տնային մուկը (*Mus musculus*), մոխրագույն առնետը (*Rattus norvegicus*), սև առնետը (*Rattus rattus*), ուշաթոփք մաշկեղ չղջիկը (*Eptesicus serotinus*), Կուլի փոքրաչղջիկը (*Pipistrellus kuhli*), թզուկ փոքրաչղջիկը (*Pipistrellus pipistrellus*), մաշկեղակերպ փոքրաչղջիկը (*Pipistrellus* (= *Hypsugo*) *savii*) և երկգույն մաշկեղ չղջիկը (*Vespertilio murinus*): Արագ տարածվում է շնագայլը (*Canis aureus*):

Սովորական և ամենուրեք տարածված տեսակներն են կրոպական նապաստակը (*Lepus europaeus*), սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), սպիտակափոր ոզնին (*Erinaceus concolor*), սպիտակափոր սպիտակատամը (*Crocidura leucodon* = *C. persica*), փոքր սպիտակատամը (*Crocidura suaveolens* = *C. gueldenstaedtii* = *C. dinniki*), Վոլնուխինի գորշատամը (*Sorex volnuchini*), գաճաճ փոքրաչղջիկը (*Pipistrellus pygmaeus*), մեծ պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus ferrumequinum*), փոքր պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus hipposideros*), գայլը (*Canis lupus*), աղվեսը (*Vulpes vulpes*), քարակզաքիսը (*Martes foina*), գորշուկը (*Meles canescens*), աքիսը (*Mustela nivalis*) և վայրի խոզը (*Sus scrofa*):

ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված են «Շիկահող» արգելոցի 5 տեսակը. կովկասյան ընձառյուծը (EN), բեզուարյան այծը (VU), հարավային պայտաքիթ չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը և ջրասամույրը (NT): ՀՀ Կարմիր գրքում նշված տեսակները 11 են. կովկասյան ընձառյուծը, ազնվացեղ եղջերուն (CR), Շելկովնիկովի կուտորան, ջրասամույրը (EN), հնդկական մացառախոզը, ասիական լայնական չղջիկը, հարավային պայտաքիթ չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը, անտառակատուն, գորշ արջը և բեզուարյան այծը (VU):

Արգելոցի տեսակներից 5-ը էնդեմիկ են. Անդրկովկասի (անդրկովկասյան կուրամկնիկ) և Կովկասի (Դադստանի դաշտամուկ, դեղնակուրծք մուկ, Շելկովնիկովի կուտորան, Վոլնուխինի գորշատամ):

Հիմնական վտանգներն են որսագողությունը, անտառահատումները, ենթակառուցվածքի զարգացումը և հրդեհները:

3.2.2. «Ջանգեզուր» արգելավայր

Անողնաշար կենդանիներ

Արգելավայրում հայտնաբերվել է գնայուկ բզեզների (Carabidae) 40, երկարաբեղիկների (Cerambycidae) 22, ոսկերգեզների (Buprestidae) ընդամենը 12 տեսակ: Տարածքում գրանցվել է ցերեկային թիթեռների մոտ 30 տեսակ:

Արգելավայրում հայտնաբերվել է Հայաստանի Կարմիր գրքում գրանցված անողնաշարների 11 տեսակ: Այդ տեսակներից Հայաստանում միայն այստեղ՝ մարգագետնային բուսականության մեջ, հանդիպում է սյունաձև խխունջը (*Columella columella*): Տափաստանային և ենթալպյան գոտիներում բավական հաճախ հանդիպում է մորեխ հայկականը (*Gomphocerus armeniacus*) (VU): Թփուտներում

և անտառածածկ տարածքներում հանդիպում է գեղեցիկ և Հայաստանի ֆաունայում ամենախաշոր գնայուկբզեզ Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկը (*Procerus scabrosus fallettianus*) (VU, Անդրկովկասի էնդեմի): Ամռան սկզբին տերեփուկների վրա բավական շատ է Կապուտջուղի և Խուստուփի էնդեմ Կապանյան երկարաբեղիկը (*Cortodera kaphanica*) (EN, Հայաստանի էնդեմիկ): Հազվադեպ կաղնու վրա հանդիպում է կաղնու մեծ երկարաբեղիկը (*Cerambyx cerdo acuminatus*) (VU): Արգելավայրում բավական շատ է հանդիպում մենմոզինա կամ սև ապոլոնը (*Parnassius mnemosyne rjabovi*) (VU), իսկ ապոլոնի (*Parnassius apollo kashtshenkoi*) (VU) պուպույացիան Հայաստանում ամենալավ վիճակում գտնվողներից է: Ծաղիկների վրա և խոնավ տարածքներում հանդիպում են նաև Կարմիր գրքում գրանցված այլ թիթեռներ՝ բրենթիս Ինո (*Brenthis ino schmitzi*), կապտաթիթեռներից ալկոնի (*Maculinea alcon monticola*) (VU) և արիոնի (*Maculinea arion zara*) (VU): Լույսի վրա հազվադեպ գալիս է պորգերպինա իլիկաթիթեռը (*Proserpinus proserpina*) (VU):

Արգելավայրի տարածքից հայտնի են նաև այլ հազվագյուտ և նեղ տեղային տեսակներ: Այսպես, այստեղից նկարագրվել է Միշենկոյի ձիուկ (*Chorthippus mistshenkoi*), հայտնաբերվել են խոշոր և գեղեցիկ անթև մորեխներ՝ Ջնոյկոյի (*Znojkiiana znojko*) և կապտառու (*Nocaracris cyanipes*), Կապուտջուղի էնդեմ Իլյինսկու ծղրիղ (*Platycleis iljinskii*), մի շարք բարձրլեռնային բզեզներ և թիթեռներ, որոնցից են գնայուկ բզեզներ՝ Անգելիկայի (*Trechus angelicae*), (*Trechus magniceps*) և մեծազլուխ (*Pterostichus capitatus*), ինչպես նաև կիսամերկ երկարաբեղիկը (*Dorcadion seminudum*), որոնք Հայաստանի և Նախիջևանի լեռների էնդեմներ են, բարձրլեռնային թիթեռներ՝ կովկասյան երեբիան (*Erebia graucasica*), և լոշտակի ճերմակաթիթեռը (*Pieris bryoniae*) և այլն:

Ձկներ

Արգելավայրի տարածքում գտնվող ջրակալների ձկնաշխարհը ներկայացված է 4 ձկնատեսակով, որոնք են կարմրախայտը (*Salmo trutta fario*), Քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*), Սևանի կողակը (*Capoeta sevangi*) (VU): Արգելավայրի սահմաններից դուրս, Ողջի գետի և նրա ավազանին պատկանող մանր գետակների միջին հոսանքում, վերոգրյալ ձկնատեսակներից բացի, հանդիպում են նաև արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio*), անգորական լերկաձուկը (*Oxyrinchus angora*): Այստեղ հնարավոր է նաև մանրաթեփուկի (*Acanthalburnus microlepis*), Քուռի սպիտակաձկան (*Alburnus filippii*), մուրձայի (*Luciobarbus mursa*), ենթաբերանի (*Chondrostoma oxyrinchum*), Քուռի կողակի (*Capoeta capoeta*), կովկասյան թեփուկի (*Squalius cephalus orientalis*), ծիածանախայտի (*Parasalmo mykiss*) հետ հանդիպումները, որոնք բնակվում են Ողջիի ստորին հոսանքում և զարնան ու ամռան սկզբին կարող են բարձրանալ գետի հոսանքն ի վեր:

Կարմրախայտը արգելավայրի տարածքում կարող է բարձրանալ գետերի վերին հոսանքները, հանդիպելով մինչև 2200 մ ծ.մ.բ.: Ընդհանուր գլխաքանակը նվազման միտում ունի: Հանդիսանում է ձկնորոշության ցանկալի օբյեկտ:

Կարմրախայտի զբաղեցրած տարածքների ստորին հատվածում և նրանից ներքև սովորաբար հանդիպում է Քուռի բեղուն, իսկ նրանից էլ ավելի ներքև՝ արևելյան տառեխիկը: Երկուսն էլ կարող են բարձրանալ գետերի հոսանքն ի վեր մինչև 2100 մ ծ. մ.բ., սակայն նախընտրում են ավելի ցածր բարձրությունները՝ 1500-1800 մ ծ.մ.բ. և ավելի ցածր: Սրանք սովորական տեսակներ են: Բեղուն համարվում է ցանկալի որս ձկնորսների համար:

Սևանի կողակը հանդիպում է արգելավայրի գետերի միջին և ստորին հոսանքներում: Բազմաքանակ չէ, բացառությամբ բազմացման շրջանից /զարնան վերջ-ամռան սկիզբ/, երբ սկսվում է նրանց միգրացիաները գետի հոսանքն ի վեր: Հանդիսանում է ձկնորոշության օբյեկտ:

Արգելավայրի տարածքում գտնվող բարձրլեռնային /3000 մ և ավելի ծ.մ.բ./ լճերում ձկներ առայժմ հայտնաբերված չեն:

Երկենցաղներ

Երկկենցաղներից հանդիպում են լճագորտը (*Pelophilax ridibundus*), փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կանաչ դոդոշը (*Bufo viridis*) և փոքրասիական ծառագորտը (*Hyla savignyi*):

Սողուններ

Համեմատաբար հարուստ է սողունների ֆաունան, որը ներկայացված է 23 տեսակներով: Սողուններից սովորական են դեղնափորիկը (*Pseudopus apodus*), իլիկամոդետը (*Anguis fragilis*), Ռադդեի ժայռային մոդետը (*Darevskia raddei*), միջին մոդետը (*Lacerta media*), բարեկազմ օձագլուխը (*Ophisops elegans*): Հազվագյուտ տեսակներից հանդիպում է շերտավոր մերկաչքը (*Ablepharus bivittatus*): Օձերից հանդիպում են որդանման կույր օձը (*Typhlops vermicularis*), արևմտյան վիշապիկը- (*Eryx jaculus*), կարմրափոր սահնօձը (*Hierophis schmidtii*), քառաշերտ սահնօձը- (*Elaphe sauromates*): Լայն տարածված է գյուրզան (*Macrovipera lebetina*): ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներից են հայկական իժը (*Vipera (Montivipera) raddei*) (VU), Երևանյան լեռնատափաստանային իժը (*Pelias (Vipera) eriwanensis*) (VU), անդրկովկասյան սահնօձը (*Zamenis hohenackeri*) (VU), և կովկասյան կատվաօձը (*Telescopus fallax*) (VU):

Թռչուններ

Հայաստանում գրանցված թռչունների 345 տեսակներից 134-ին կարելի է հանդիպել Զանգեզուրի արգելավայրում, որոնցից 59-ն այստեղ են բնակվում միայն ամռանը, մոտ 67-ը՝ մշտապես, 10-ը՝ չվող են կամ այստեղ են գալիս ձմռանը:

Արգելավայրում հանդիպող թռչուններից 23 տեսակ ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում իսկ 6 – ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Թռչունների բազմաթիվ տեսակների կարելի է հանդիպել անտառապատ տարածքներում, ինչպես նաև քարքարոտ վայրերում, մարգագետիններում և մշակված տարածքներում:

Անտառապատ տեղանքներում հիմնականում հանդիպում է անտառաբուն (*Strix aluco*) և ցերեկային գիշատիչների մի քանի տեսակներ, այդ թվում՝ կրետակերը (*Pernis apivorus*), օձակեր արծիվը (*Circaetus gallicus*) (VU), ցախաքլորաորսը (*Accipiter gentilis*) (VU), փոքր ենթարծիվը (*Aquila pomarina*) (VU) և գաճաճ արծիվը (*Hieraetus pennatus*) (VU): Առավել բարձր գոտիներում՝ գլխու թփուտներում, կարելի է հանդիպել խայտաբղետ նրբագեղիկին (*Prunella ocularis*), իսկ ահա տեղ-տեղ աճող թփերում, որտեղ հանդիպում են նաև կեչին և արոսենին, բնակվում է Կովկասյան մայրեհավը (*Tetrao mlokosiewiczi*) (VU):

Տեղական փայտփորիկների 6 տեսակներից են վիզգուկը (*Jynx torquilla*) և սև փայտփորը (*Dryocopus martius*) (VU): Ճնձղազգիների բազմաթիվ տեսակներից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ճուռականման շահրիկը (*Sylvia nisoria*) և կիսասպիտակավիզ ճանձորսը (*Ficedula semitorquata*) (DD):

Առավել հարուստ են Զանգեզուրի ժայռոտ և քարքարոտ տեղանքները: Այստեղ, առավել քան Հայաստանի այլ տարածքներում, ներկայացված են վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) (VU), ալպիական ճայր (*Pyrrhocorax graculus*) (EN) և կարմրաթև մագլցողը (*Tichodroma muraria*) (DD), ինչպես նաև մորուքավոր անգղը (*Gypaetus barbatus*) (VU), քարարծիվը (*Aquila chrysaetos*) (VU), սապսանը (*Falco peregrinus*) (VU), բվեճը (*Bubo bubo*) (VU), ալպիական նրբագեղիկը (*Prunella collaris*), խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*) և ձյան ճնձղուկը (*Montifringilla nivalis*):

Չորասեր բուսականության զարգացման գոտիներում հիմնականում բնակվում են ճնձղազգիների ներկայացուցիչներ, այդ թվում՝ կարմրաթև ոսպնուկը (*Rhodopechis sanguineus*), իսկ ավելի ցածր գոտիներում նկատվող սողունների առատությունը գրավում է օձակեր արծիվին (*Circaetus gallicus*) (VU), Եվրոպական ճնձղաճուռակին (*Accipiter brevipes*) (VU) և այլ ցերեկային գիշատիչներին:

Թռչունների որոշ տեսակներ հանդիպում են Զանգեզուրի մարգագետիններում. նրանց թվում են մոխրագույն կաքավը (*Perdix perdix*), եղջրավոր արտույտը (*Eremophila alpestris*),

մարգագետնային չքչախն (*Saxicola rubetra*), մարգագետնային (*Anthus pratensis*) և լեռնային (*A. spinoletta*) ձիաթռչնակները, իսկ խոտածածկ վայրերում հանդիպող ժայռերը գրավում են սպիտակախածի կեռնեխին (*Turdus torquatus*), կապտափող սոխակին (*Luscinia svecica*), կարմրաձակատ սերինոսին (*Serinus pusillus*) և լեռնային վշասարեկին (*Carduelis flavirostris*): Անտառային վայրերում բնակվող որոշ գիշատիչներ, այնուամենայնիվ, սնվում են մարգագետիններում, որոնք հարուստ են կրծողներով:

Զանգեզուրի արգելավայրում համեմատաբար սակավաթիվ են բնակավայրերն ու մշակվող հողերը, սակայն սննդի պաշարների առատությունն այստեղ էլ է գրավում տարբեր թռչուններին: Այս վայրերի համար տիպիկ են թռչունների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են տնային բվիկը (*Athene noctua*), հոպուպը (*Upupa epops*), ներկարարը (*Coracias garrulus*) (VU), ժայռային ճնճողուկը (*Petronia petronia*) և փոքր ժայռային սիտեղը (*Sitta neumayer*), ինչպես նաև արտույտաբազեն (*Falco subbuteo*), կրոպական բվիկը (*Otus scops*), հարավային սոխակը (*Luscinia megarhynchos*): Յորենի արտերում երբեմն հանդիպում են սովորական ճոխկահավը (*Locustella naevia*): Ինչ վերաբերում է անտառեզրերին և թփուտներին, ապա այստեղ հաճախ հանդիպում են ժուլանը (*Lanius collurio*), սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala*) և մոխրագույն շահրիկը (*Sylvia communis*):

Կաթնասուններ

Կաթնասուններից այս արգելավայրում ապրում են հետևյալ հիմնական տեսակները. եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*), ձնային դաշտամուկը (*Chionomys nivalis*), անդրկովկասյան կուրամկնիկը (*Ellobius lutescens*), սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), Դաղստանի դաշտամուկը (*Microtus daghestanicus*), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), աղվեսը (*Vulpes vulpes*), տափաստանային կատուն (*Felis silvestris ornata*), անտառային կատուն (*Felis silvestris silvestris*), քարակզաքիսը (*Martes foina*), գորշուկը (*Meles canescens*) և աքիսը (*Mustela nivalis*): Բավականին հաճախ գրանցվում է գայլը (*Canis lupus*):

Արգելավայրում հիմնական պահպանվող տեսակը հայկական մուֆլոնն է (*Ovis orientalis gmelinii*) որի ոչ մեծ խմբակները կարելի է նկատել լեռնային հարթավայրերում, հատկապես՝ չհավվող ձյան կողքը:

Միջատակերներից մարգագետիններում տարածված են սպիտակափոր ոզնին (*Erinaceus concolor*), սպիտակափոր սպիտակատամը (*Crocidura leucodon* = *C. persica*) և փոքր սպիտակատամը (*Crocidura suaveolens* = *C. gueldenstaedtii* = *C. dinniki*):

Ցածրադիր անտառածածկ տարածքներում գրանցվում են անտառային քնամուկը (*Dryomys nitedula*), դեղնակուրծք մուկը (*Apodemus ponticus*), փոքր անտառային մուկը (*Apodemus uralensis*), Ռադդեի գորշատամը (*Sorex raddei*), Սատունինի գորշատամը (*Sorex satunini* = *S. caucasica stavropolica*), Վոլնուխինի գորշատամը (*Sorex volnuchini*), լուսանը (*Lynx lynx*), գորշ արջը (*Ursus arctos*), այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Անտառամերձ ժայռոտ տեղամասերում ապրում են բեզուրայան այծերը (*Capra aegagrus*), իսկ կովկասյան ընձառյուծը (*Panthera pardus ciscaucasica* = *P.p. saxicolor*) օգտագործում է այս տարածքները որպես Մեղրու, Զանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաներ կապող միջանցք:

Գետերի վերին և միջին հոսանքներում ապրում են ջրային դաշտամուկը (*Arvicola amphibius* = *A. terrestris*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys teres* = *N. schelkovnikovi*) և ջրասամույրը (*Lutra lutra*): Մարդու կողքը հարմարվել են մոխրագույն համստերիկը (*Cricetulus migratorius*), տնային մուկը (*Mus musculus*) և մոխրագույն առնետը (*Rattus norvegicus*):

Չղջիկներից ամենատարածվածն են մեծ պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus ferrumequinum*), փոքր պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus hipposideros*) և գաճաճ փոքրաչղջիկը (*Pipistrellus pygmaeus*): Քարքարոտ վայրերում նկատվում են սովորական երկարաթև չղջիկը (*Miniopterus schreibersi*), սրականջ գիշերաչղջիկը (*Myotis blythii*) և եռագույն գիշերաչղջիկը (*Myotis emarginatus*): Զրամերձ տարածքներում գրանցվում են բեղավոր գիշերաչղջիկը (*Myotis mystacinus*) և Նատերերի

գիշերաչղջիկը (*Myotis nattereri*): Շինություններում ապաստարան են գտնում ուշաթռիչք մաշկեղ չղջիկը (*Eptesicus serotinus*), Կուլի փոքրաչղջիկը (*Pipistrellus kuhli*), մաշկեղակերպ փոքրաչղջիկը (*Pipistrellus (=Hypsugo) savii*) և եռագույն մաշկեղ չղջիկը (*Vespertilio murinus*): Անտառներում հանդիպում են փոքր իրիկնաչղջիկը (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*) և անտառային կամ Նատուզիուսի փոքրաչղջիկը (*Pipistrellus nathusii*):

ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված են կովկասյան ընձառյուծը (EN), բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը (VU), սովորական երկարաթև չղջիկը և ջրասամույրը (NT): ՀՀ Կարմիր գրքում նշված են կովկասյան ընձառյուծը (CR), Շելկովնիկովի կուտորան, ջրասամույրը, հայկական մուֆլոնը (EN), սովորական երկարաթև չղջիկը, անտառակատուն, գորշ արջը և բեզոարյան այծը (VU): Էնդեմներն են անդրկովկասյան կուրամկնիկը (Անդրկովկասի էնդեմ), Դադստանի դաշտամուկը, դեղնակուրծք մուկը, Շելկովնիկովի կուտորան, Ռադդեի, Սատունիի և Վոլնուխիի գորշատամները (Կովկասի էնդեմներ) և հայկական մուֆլոնը (Հայկական բարձրավանդակի էնդեմ):

Արգելոցին սպառնացող հիմնական վտանգը լեռնագործությունն է: Պատահում են նաև որսագողության դեպքեր:

3.2.3. «Խուստուփ» արգելավայր

Անողնաշար կենդանիներ

Արգելավայրի տարածքում բնակվում է Հայաստանի հարավի բաց լեռնային լանդշաֆտներին բնորոշ ֆաունա: Ֆաունան ուսումնասիրված է մասամբ, սակայն այստեղից արդեն հայտնի են բզեզների մոտ 300 տեսակ՝ գնայուկ բզեզների (*Carabidae*), թերթիկաբեղավորների (*Scarabaeidae*), չրխկանների (*Elateridae*), սևամարմինների (*Tenebrionidae*) և երկարաբեղիկների (*Cerambycidae*) ընտանիքներից: Ցերեկային թիթեռների (*Lepidoptera-Rhopalocera*) տեսակները մոտ 40-ն են, որոնցից մոտ 10 տեսակ կապված են մարգագետնային՝ ենթալպյան և ալպյան էկոհամակարգերի հետ, որոնք համարյա չեն ներկայացված կից գտնվող «Շիկահող» արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

Պլանավորված արգելավայրի տարածքում ներկայացված է Հայաստանի Կարմիր գրքում գրանցված անողնաշարավորների 7 տեսակ: Դրանք են բաց լանդշաֆտների բնորոշ բնակիչ հայկական մորեխը (*Gomphocerus armeniacus*) (VU, Անդրկովկասի էնդեմի), մասամբ մարգագետնային էկոհամակարգեր մտնող բզեզներ՝ Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկը (*Procerus scabrosus fallettianus*) (VU, Անդրկովկասի էնդեմի), աքսորված սևամարմինը (*Entomogonus amandanus*) (EN, Արաքսի հովտի էնդեմիկ): Անտառի վերին սահմանի մոտ հանդիպում են *Parnassius* ցեղի երկու հայկական տեսակները՝ մնեմոզինա կամ սև ապոլոնը (*Parnassius mnemosyne rjabovi*) (VU) և ապոլոնը (*Parnassius apollo kashtshenkoi*) (VU): Տարածքի արժեքն ավելանում է նրանով, որ այստեղ են գտնվում անտառի վերին սահմանի մոտ բնակվող տեսակների պոպուլյացիաների մեծ մասը, որոնք կից ԲՀՊՏ-ներում ընդամենը մասամբ են ներկայացված: Դրանցից են, օրինակ՝ կապանյան երկարաբեղիկը (*Cortodera kaphanica*) (EN, Հայաստանի էնդեմիկ), հավանաբար նաև անտեսված կապտաթիթեռը (*Agrodiaetus neglectus*) (EN, Հայաստանի էնդեմիկ):

Այստեղ հանդիպում են նաև մի շարք հազվագյուտ տեղային տեսակներ, մասնավորապես՝ արդեն «Ջանգեզուր» արգելավայրի բաժնում նշված Զոյկոյի (*Znojckiana znojkoii*) և կապտառոտ (*Nocaracris cyanipes*) անթև մորեխներ, Անգելիկայի (*Trechus angelicae*), և մեծագլուխ (*Pterostichus capitatus*) գնայուկ բզեզներ, կիսամերկ երկարաբեղիկը (*Dorcadion seminudum*) և այլն: Ինչքան հայտնի է, Խուստուփ լեռան զանգվածի էնդեմներ են այստեղից վերջերս նկարագրված երկարաբեղիկներ՝ Քալաշյանի (*Cortodera colchica kalashiani*) և Մեիրիի (*Dorcadion megriense*):

Ձկներ

«Խուստուփ» պլանավորված պահպանվող տարածքում հանդիպում է 3 ձկնատեսակ, որոնք էնդեմիկներ չեն և ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված չեն: Արգելավայրի տարածքի ձկնաշխարհի

հիմնական ներկայացուցիչը կարմրախայտն (*Salmo trutta fario*) է, որի գլխաքանակը խիստ սակավաթիվ է: Այլ ձկնատեսակներից հանդիպում են Քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*):

Երկկենցաղներ

Երկկենցաղներից հանդիպում են լճագորտը (*Pelophilax ridibundus*), փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կանաչ դոդոշը (*Bufo viridis*) և փոքրասիական ծառագորտը (*Hyla savignyi*):

Սողուններ

Համեմատաբար հարուստ է սողունների ֆաունան, որը ներկայացված է 17 տեսակներով: Սողուններից սովորական են դեղնափորիկը (*Pseudopus apodus*), իլիկամողեսը (*Anguis fragilis*), Ռադդեի ժայռային մողեսը (*Darevskia raddei*), միջին մողեսը (*Lacerta media*): Օձերից հանդիպում են որդանման կույր օձը (*Typhlops vermicularis*), կարմրափոր սահնօձը (*Hierophis schmidtii*), քառաշերտ սահնօձը- (*Elaphe sauromates*): Լայն տարածված է գյուրզան (*Vipera (Macrovipera) lebetina*): ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներից են հայկական իծը (*Vipera (Montivipera) raddei*) (VU), անդրկովկասյան սահնօձը (*Zamenis hohenackeri*) (VU), և կովկասյան կատվաօձը (*Telescopus fallax*) (VU):

Թռչուններ

«Խուստուփ» արգելավայրի թռչնաֆաունան ներառում է ավելի քան 130 տեսակ: Արգելավայրում ներկայացված է ցերեկային գիշատիչ թռչունների և բվերի մեծ բազմազանություն, ինչպես նաև բարձր լեռնային և անտառային թռչունների համակենցություններ:

Խուստուփի թռչունների 23 տեսակ գրանցվել են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ դրանցից 6-ը ընդգրկվել են նաև Վտանգված տեսակների միջազգային կարմիր ցուցակում:

Սաղարթավոր անտառներում բնակվում են կրետակերը (*Pernis apivorus*), ցախաքլորաորսը (*Accipiter gentilis*) (VU), գաճաճ արծիվը (*Hieraaetus pennatus*) (VU) և անտառաբուն (*Strix aluco*): Այստեղ հանդիպում են փայտփորների մի քանի տեսակ, ներառյալ կանաչ փայտփորը (*Picus viridis*), սև փայտփորը (*Dryocopus martius*) (VU), միջին փայտփորը (*Dendrocopos medius*) և փոքր փայտփորը (*D. minor*): Անտառային ճնճղուկազգիները հատկապես բազմազան են և ներառում են տարբեր կենսախանձաններ, շահրիկներ և սերինոսներ, որոնցից են արշալուսիկը (*Erithacus rubecula*), սովորական կարմրատուտը (*Phoenicurus phoenicurus*), երգող կեռնեխը (*Turdus philomelos*), սևագլուխ շահրիկը (*Sylvia atricapilla*), դեղնափոր գեղգեղիկը (*Phylloscopus trochiloides*), սովորական խածկտիկը (*Pyrrhula pyrrhula*) և հատրեկիչը (*Coccothraustes coccothraustes*): Գլոբալ վտանգված կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*) (DD) հանդիպում է Խուստուփի հասուն անտառներում, իսկ Կովկասյան մայրեհավը (*Tetrao mlokosiewiczi*) (VU) դեռ հաճախ է հանդիպում լեռնային մարգագետիններում՝ անտառի վերին սահմանի մոտ: Նոսր և մասնատված անտառներով և գիհու թփուտներով ավելի չոր լանջերը մոխրագույն կաքավի (*Perdix perdix*), սովորական տատրակի (*Streptopelia turtur*), սովորական այծկիթի (*Caprimulgus europaeus*), սոսնձակեռնեխի (*Turdus viscivorus*), կանեփնուկի (*Carduelis cannabina*) և ժուլանի (*Lanius collurio*) բնորոշ ապրելավայրեր են:

Արգելավայրի մարգագետիններում բնակվում են եղջրավոր արտույտը (*Eremophyla alpestris*), դաշտային արտույտը (*Alauda arvensis*), լեռնային վշասարեկը (*Carduelis flavirostris*) և լեռնային ձիաթռչնակը (*Anthus spinoletta*): Մարգագետիններ հաճախ այցելում են որս հայթայթող գիշատիչ թռչունները, ինչպիսիք են անգղները, արծիվները, բազենները: «Խուստուփ» արգելավայրում շատ են տարբեր ժայռային գոյացությունները, որոնք առկա են բոլոր լանդշաֆտային գոտիներում: Անտառներում ժայռերը նպաստավոր բնադրման պայմաններ են ստեղծում մեծ ճուռակի (*Buteo buteo*), գիշանգղի (*Neophron percnopterus*) (VU) և սապսանի (*Falco peregrinus*) (VU) համար: Ավելի

մեծ բարձրություններում լեռնային մարգագետինների ժայռերի և քարափների վրա բնակվում են վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) (VU), մորուքավոր անգղը (*Gypaetus barbatus*) (VU), խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*), սպիտակափոր մանգաղաթևը (*Apus melba*), ալպիական ճայը (*Pyrrhocorax graculus*) (EN), կարմրաթև մագլցողը (*Tichodroma muraria*) (DD) և ձյան ճնճղուկը (*Montifringilla nivalis*): «Խուստուփ» արգելավայրը Հարավային Հայաստանում կարող է ամենահետաքրքիր տարածքներից հանդիսանալ՝ այցելող թռչնադիտորդների համար: Ապրելավայրերի և բարձրությունների բազմազանությունը հարուստ թռչնաֆաունայի հետ միասին ստեղծում են յուրահատուկ հնարավորություն մի շարք հետաքրքիր կովկասյան տեսակների դիտարկման համար, որոնցից են Կովկասյան մայրեհավը (*Tetrao mlokosiewiczi*) (VU), վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) (VU), կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*) (DD), նրոպական ճնճղաճուռակը (*Accipiter brevipes*) (VU):

Կաթնասուններ

Սովորական տեսակներից են նրոպական նապաստակը (*Lepus europaeus*), ձնային դաշտամուկը (*Chionomys nivalis*), անդրկովկասյան կուրամկնիկը (*Ellobius lutescens*), փոքրասիական համստերը (*Mesocricetus brandti*), սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), աղվեսը (*Vulpes vulpes*), քարակզաքիսը (*Martes foina*), գորշուկը (*Meles canescens*) և աքիսը (*Mustela nivalis*): Միջատակերներից տարածված են սպիտակափոր ոզնին (*Erinaceus concolor*), սպիտակափոր սպիտակատամը (*Crocidura leucodon* = *C. persica*), փոքր սպիտակատամը (*Crocidura suaveolens* = *C. gueldenstaedtii* = *C. dinniki*), Ռադդեի սպիտակատամը (*Sorex raddei*), Սատունինի սպիտակատամը (*Sorex satunini* = *S. caucasica stavropolica*) և Վոլնուխինի սպիտակատամը (*S. volnuchini*):

Անտառային զանգվածներում տարածված են անտառային քնամուկը (*Dryomys nitedula*), պոլշոկը (*Glis glis*), հնդկական մացառախոզը (*Hystrix indica*), դեղնակուրծք մուկը (*Apodemus ponticus*), փոքր անտառային մուկը (*Apodemus uralensis*), տափաստանային կատուն (*Felis silvestris ornata*), անտառակատուն (*Felis silvestris silvestris*), լուսանը (*Lynx lynx*), գորշ արջը (*Ursus arctos*), այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Անտառներին կից ժայռերում և քարքարոտ վայրերում պահպանվել են կովկասյան ընձառյուծը (*Panthera pardus ciscaucasica* = *P.p. saxicolor*) և բեզուարյան այծը (*Capra aegagrus*): Բոլոր լանդշաֆտներում հանդիպում է գայլը (*Canis lupus*):

Ցածրադիր չորասեր տարածքներին բնորոշ են շնագայլը (*Canis aureus*) և եղեգնակատուն (*Felis chaus*): Տափաստաններում գրանցվում են Դաղստանի դաշտամուկը (*Microtus daghestanicus*) և խայտաքիսը (*Vormela peregusna*): Ջրի մոտ բնակվում են ջրային դաշտամուկը (*Arvicola amphibius* = *A. terrestris*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys teres* = *N. schelkovnikovi*) և ջրասամույրը (*Lutra lutra*):

Չղջիկները հիմնականում կապված են առատ ապաստարան պարունակող ժայռոտ զանգվածների, անտառների և շինությունների հետ: Ժայռերում և քարանձավներում գրանցվում են հարավային պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus euryale*), մեծ պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus ferrumequinum*), փոքր պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus hipposideros*), սրականջ գիշերաչղջիկը (*Myotis blythii*) և եռագույն գիշերաչղջիկը (*Myotis emarginatus*): Շինություններում թաքնվում են ուշաթոփյա մաշկեղ չղջիկը (*Eptesicus serotinus*), Կուլի փոքրաչղջիկը (*Pipistrellus kuhli*), թզուկ փոքրաչղջիկը (*Pipistrellus pipistrellus*), գաճաճ փոքրաչղջիկը (*Pipistrellus pygmaeus*), մաշկեղակերպ փոքրաչղջիկը (*Pipistrellus* (= *Hypsugo*) *savii*) և երկգույն մաշկեղ չղջիկը (*Vespertilio murinus*): Անտառներում կարելի է գրանցել բեղավոր փոքրաչղջիկին (*Myotis mystacinus*), փոքր իրիկնաչղջիկին (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաչղջիկին (*Nyctalus noctula*), ասիական լայնականջ չղջիկին (*Barbastella leucomelas*), սովորական երկարաթև չղջիկին (*Miniopterus schreibersi*) և անտառային կամ Նատուզիուսի փոքրաչղջիկին (*Pipistrellus nathusii*):

ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված են կովկասյան ընձառյուծը (EN), խայտաքիսը, բեզուարյան այծը (VU), փոքրասիական համստերը, հարավային պայտաքիթ չղջիկը և ջրասամույրը

(NT): ՀՀ Կարմիր գրքում նշված են կովկասյան ընձառյուծը (CR), Շելկովնիկովի կուտորան, ջրասամույրը (EN), հնդկական մացառախոզը, հարավային պայտաքիթ չղջիկը, ասիական լայնական չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը, անտառակատուն, խայտաքիսը, գորշ արջը և բեզուարյան այծը (VU): Էնդեմներն են անդրկովկասյան կուրամկնիկը (Անդրկովկասի էնդեմ), Դադստանի դաշտամուկը, դեղնակուրծք մուկը, Շելկովնիկովի կուտորան, Ռադդեի, Սատունինի և Վոլնուխինի գորշատամները (Կովկասի էնդեմներ):

Արգելավայրին սպառնացող վտանգներն են որսագողությունը, անկայուն գյուղատնտեսությունը, լեռնագործությունը ու կլիմայի փոփոխականությունը:

3.2.4. «Սոսու պուրակ» արգելավայր

Անողնաշար կենդանիներ

Անողնաշարների որևէ խմբի ֆաունան արգելավայրում սիստեմատիկաբար չի ուսումնասիրվել: Կան միայն սահմանափակ տեղեկություններ բզեզների վերաբերյալ, որոնցից այստեղ հայտնաբերվել է մոտ 120 տեսակ: Դրանցից արգելավայրում համեմատաբար հազվագյուտ է Կարմիր գրքում գրանցված Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկը (*Procerus scabrosus fallettianus*) (VU, Անդրկովկասի էնդեմ), Էկոտարածաշրջանի հարավային հատվածի էնդեմ առվակային գնայուկ (*Trechus liopleurus*) և թխկու բնդեռ (*Melolontha aceris*) և այլն: Արգելավայրում հանդիպում են ցերեկային թիթեռների մոտ 30 տեսակ, դրանց շարքում է մենեռոզինա կամ սև ապոլոնը (*Parnassius mnemosyne rjabovi*) (VU): Լույսի վրա թռչում է պրոզերպինա իլիկաթիթեռը (*Proserpinus proserpina*) (VU):

Ձկներ

Ձկներից հանդիպում են կարմրախայտը (*Salmo trutta fario*), Քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*), կողակը (*Capoeta* sp.):

Երկկենցաղներ

Երկկենցաղներից հանդիպում են լճագորտը (*Rana ridibunda*), փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կանաչ դոդոշը (*Bufo viridis*), փոքրասիական ծառագորտը (*Hyla savignyi*):

Սողուններ

Համեմատաբար հարուստ է սողունների ֆաունան, որը ներկայացված է 21 տեսակներով (7 տեսակի մողեսներ, 12 տեսակի օձեր և 2 տեսակի կրիաներ): Մողեսներից սովորական են դեղնափորիկը (*Pseudopus apodus*), իլիկամողեսը (*Anguis fragilis*), Ռադդեի ժայռային մողեսը (*Darevskia raddei*), միջին մողեսը (*Lacerta media*), բարեկազմ օձագլուխը (*Ophisops elegans*): Հազվագյուտ տեսակներից հանդիպում է շերտավոր մերկաչքը (*Ablepharus bivittatus*): Օձերից հանդիպում են որդանման կույր օձը (*Typhlops vermicularis*), արևմտյան վիշապիկը (*Eryx jaculus*), կարմրափոր սահնօձը (*Hidrophis schmidtii*), քառաշերտ սահնօձը (*Elaphe sauromates*): Լայն տարածված է գյուրզան (*Macrovipera lebetina*): ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներից են անդրկովկասյան սահնօձը (*Zamenis hohenackeri*) (VU) և Կովկասյան կատվաօձը (*Telescopus fallax*) (VU):

Թռչուններ

Արգելավայրի թռչունների ֆաունան հիմնականում նման է «Շիկահող» արգելոցի թռչունների ֆաունային և բնորոշվում է անտառային տեսակներով:

Կաթնասուններ

Այս արգելավայրի կաթնասունների ֆաունան շատ նման է «Շիկահող» արգելոցին, բայց այստեղ բնակվում են միայն սովորական, տիպիկ անտառաբնակ կենդանատեսակները: Այդպիսիք են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), անտառային քնամուկը (*Dryomys nitedula*), պոլշոկը (*Glis glis*), դեղնակուրծք մուկը (*Apodemus ponticus*), փոքր անտառային մուկը (*Apodemus uralensis*), Ռադդեի գորշատամը (*Sorex raddei*), Վոլնուխինի գորշատամը (*Sorex volnuchini*), այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Խիտ մացառուտներում և քարքարոտ վայրերում ապրում է հնդկական մացառախոզը (*Hystrix indica*): Անտառներին բնորոշ են փոքր իրիկնաչղջիկը (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*) և անտառային կամ Նատուգիուսի փոքրաչղջիկը (*Pipistrellus nathusii*):

Շատ հազվադեպ անտառներ կարող են ներթափանցել շնագայլը (*Canis aureus*), գայլը (*Canis lupus*), տափաստանային կատուն (*Felis silvestris ornata*), անտառակատուն (*Felis silvestris silvestris*), լուսանը (*Lynx lynx*) և գորշ արջը (*Ursus arctos*):

Ամենուրեք տարածված են կրոպական նապաստակը (*Lepus europaeus*), սպիտակափոր ոզնին (*Erinaceus concolor*), սպիտակափոր սպիտակատամը (*Crociodura leucodon* = *C. persica*), փոքր սպիտակատամը (*Crociodura suaveolens* = *C. gueldenstaedtii* = *C. dinniki*), աղվեսը (*Vulpes vulpes*), քարակզաքիսը (*Martes foina*), գորշուկը (*Meles canescens*) և աքիսը (*Mustela nivalis*): Ջրհոսքերում և հատկապես Ծավ գետի հովտի սահմաններում նկատվում են ջրային դաշտամուկը (*Apodemus amphibius* = *A. terrestris*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys teres* = *N. schelkovnikovi*) և ջրասամույրը (*Lutra lutra*): Սովորական են մեծ պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus ferrumequinum*), փոքր պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus hipposideros*) և գաճաճ փոքրաչղջիկը (*Pipistrellus pygmaeus*):

Ինչպես և Հայաստանի այլ պահպանվող տարածքներում, մարդաբնակ վայրերին բնորոշ են մոխրագույն համստերիկը (*Cricetulus migratorius*), տնային մուկը (*Mus musculus*) և մոխրագույն առնետը (*Rattus norvegicus*): Հարակից համայնքների շինություններում կարող են գրանցվել ուշաթոփք մաշկեղ չղջիկը (*Eptesicus serotinus*), բեղավոր գիշերաչղջիկը (*Myotis mystacinus*), Կուլի փոքրաչղջիկը (*Pipistrellus kuhli*), թզուկ փոքրաչղջիկը (*Pipistrellus pipistrellus*), մաշկեղակերպ փոքրաչղջիկը (*Pipistrellus* (= *Hypsugo*) *savii*) և երկգույն մաշկեղ չղջիկը (*Vespertilio murinus*):

ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված է միայն ջրասամույրը (NT): ՀՀ Կարմիր գրքում նշված են Շելկովնիկովի կուտորան, ջրասամույրը (EN), հնդկական մացառախոզը, անտառակատուն և գորշ արջը (VU): Կովկասի էնդեմներն են դեղնակուրծք մուկը, Շելկովնիկովի կուտորան, Ռադդեի և Վոլնուխինի գորշատամները:

Հիմնական վտանգներն են անկայուն գյուղատնտեսական գործունեությունը, Ծավ գետի հոսքի, ջրի որակի վատթարացում և անտառի չորացում կլիմայի փոփոխության պատճառով:

ԳԼՈՒԽ 4. «ՇԻԿԱՀՈԼ» ԱՐԳԵԼՈՑԻ, «ԶԱՆԳԵԶՈՒՐ», «ԽՈՒՍՏՈՒՓ» և «ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

4.1. Ժողովրդագրություն

«Շիկահող» արգելոցին, «Զանգեզուր», «Խուստուփ» և «Սոսու պուրակ» արգելավայրերին հարակից տարածքների սոցիալ-տնտեսական հիմնարար հետազոտությունն իրականացվել է 8 համայնքներում՝ Վարդանիձոր, Ծավ, Սրաշեն, Շիկահող, Ներքին Հանդ, Լեռնաձոր, Գեղանուշ և Ճակատեն: Իրականում որոշ համայնքներ բաղկացած են մի քանի համեմատաբար փոքր գյուղերից: Այսպիսով՝ Վարդանիձոր համայնքը ներառում է Վարդանիձոր, Թխկուտ, Այգեձոր, Վանք և Կալեր

«Շիկահողե արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

ցյուղերը, Ծավը՝ Ծավ և Շիշկերտ ցյուղերը, Լեռնաձորը՝ Լեռնաձոր, Ձագեձոր, Թավշուտ, Կաթնառատ, Փխրուտ, Անդոկավան, Բաբիկավան, Վերին Գիրաթաղ և Ներքին Գիրաթաղ ցյուղերը, իսկ Գեղանուշը՝ Գեղանուշ և Գոմավան ցյուղերը: Այսինքն՝ հետազոտությունն իրականում վերաբերել է 22 ցյուղական բնակավայրերի:

Խորհրդատվական թիմն այցելել է բոլոր համայնքները և առանձին-առանձին աշխատել բոլոր համայնքապետերի և համայնքային աշխատանքային խմբերի հետ: Նրանք հանդիսացել են համայնքների վերաբերյալ տեղեկությունների առաջնային և հիմնական աղբյուրը: Ստորև ներկայացված են ընդհանուր տեղեկություններ հետազոտված համայնքների վերաբերյալ:

Համայնքների տեղական ընթացիկ ծախսերի ֆինանսավորման հիմնական աղբյուրը համայնքների բյուջեներն են: Ի սկզբանե պետք է նշել, որ դրանք մեծ չեն, և չեն կարող բավարար լինել առկա խնդիրների նույնիսկ փոքր մասի լուծման համար, որոնց թվում կարելի է նշել համայնքներում ապրելու վատ կենսապայմանները, հնացած ենթակառուցվածքները, և այլն: Այս խնդիրները որոշակիորեն արժարժված են նաև հետազոտված համայնքների 4-ամյա սոցիալ տնտեսական զարգացման ծրագրերում և Սյունիքի մարզի ռազմավարական զարգացման ծրագրում:

Համայնքային բյուջեների եկամտային մասը բաղկացած է երկու հիմնական բաժիններից՝ վարչական և ֆոնդային բյուջեներից: Վարչական բյուջեն սովորաբար հատկացվում է ընթացիկ ծախսերը հոգալու նպատակով, այն է՝ աշխատավարձերի վճարման և պահպանման ոչ մեծ աշխատանքների իրականացման նպատակով: Ֆոնդային բյուջեն սովորաբար օգտագործվում է կապիտալ ներդրումների ֆինանսավորման նպատակով: Հետազոտված համայնքների ագրեգացված բյուջետային ցուցանիշները ներկայացված են ստորև.

Աղյուսակ 2 - 2010թ. պլանավորված և փաստացի բյուջեները հետազոտված համայնքներում, ՀՀ դրամ

Պլանավորված բյուջե	Վարդանի ձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Վարչական բյուջե	6,293,000	19,711,000	5,275,000	9,777,000	4,856,000	14,056,000	8,140,000	6,073,000
Որից՝ պետ. դրամաշնորհներ	3,500,000	4,406,000	3,500,000	3,500,000	3,500,000	3,781,000	3,500,000	3,500,000
Ֆոնդային բյուջե	0	0	0	0	0	0	533,000	0
Փաստացի բյուջե	Վարդանի ձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Վարչական բյուջե	99%	52%	100%	88%	89%	105%	118%	96%
Ֆոնդային բյուջե							100%	

Հետազոտված համայնքներում բյուջեների պլանավորված մեծությունը տատանվում է 5-20 մլն դրամի սահմաններում: Ֆինանսական միջոցների փաստացի ներհոսքն ապահովվում է արտաքին (հիմնականում Պետական Բյուջեից) և ներքին (համայնքում հարկերի և վճարների հավաքագրումից) մուտքերի հաշվին: Պետական բյուջեի պարագայում հատկացումների մակարդակը գրեթե բոլոր դեպքերում կազմել է պլանավորված գումարի 100 %-ը: Պլանավորված և փաստացի բյուջեների տարբերությունը հիմնականում պայմանավորվում է տեղական հարկերի և վարձավճարների ցածր հավաքագրելիությամբ: Ծավ, Շիկահող և Ներքին Հանդ համայնքներում բյուջետային գումարների հավաքագրելիությունը գտնվում է ցածր մակարդակի վրա, մինչդեռ Լեռնաձոր և Գեղանուշ համայնքները եկամտի լրացուցիչ աղբյուրներ են ունեցել և գերակատարել են իրենց բյուջեները:

Տեղական հարկերի և հավասարեցված վճարների փաստացի հավաքագրելիության մակարդակը հետազոտված համայնքներում 2010 թ. տատանվել է 87%-144% սահմաններում՝

Լեռնաձոր համայնքի բացարձակ առաջատարության պայմաններում: Հետաքրքիր է նշել, որ ակտիվային հարկերի հավաքագրելիության մակարդակը մոտ է առավելագույնին և բացարձակ մեծությամբ դրանք բավականին մեծ գումարներ են կազմում: Սա վկայում է, որ շրջանառության մեջ գտնվող ակտիվների մեծ քանակության մասին: Այս առումով խնդիրներ ունեն միայն Շիկահող և Ներքին Հանդ համայնքները. հողի վարձակալության վճարների հավաքագրելիության տոկոսը կազմում է 31%-101%, որտեղ վատագույն դիքերը զբաղեցնում են Ծավ և Ներքին Հանդ համայնքները:

Համայնքային բյուջեների մուտքերի զգալի մասը հատկացվում է Պետական Բյուջեից՝ պաշտոնական համահարթեցման դրամաշնորհների տրամադրման միջոցով: Այս դրամաշնորհների գումարը տատանվում է 3,500,000 ՀՀ դրամի սահմաններում մեկ համայնքի հաշվով, բացառությամբ Ծավի, որտեղ այդ գումարը 2010թ. կազմել է 4,400,000 դրամ: Համահարթեցման դրամաշնորհներ մասնաբաժինը համայնքների վարչական բյուջեներում 2010թ. տատանվել է 27%-72% սահմաններում:

Համայնքային վարչական բյուջեների մի զգալի մասն էլ ապահովվում է համայնքապետարանների կողմից հիմնականում կենտրոնական իշխանությունների անունից ծառայությունների մատուցման դիմաց: Հաշվետվության մեջ դեռևս անդրադարձ կարվի այն հանգամանքին, որ հետագույնում համայնքները լուրջ խնդիրներ ունեն հատկապես՝ ենթակառուցվածքների վատ վիճակի պատճառով: Համայնքային ենթակառուցվածքների մեծ մասը՝ ջնջերը, ճանապարհները, խմելու և ոռոգման ջրի ցանցերը, էլեկտրականության մատակարարման համակարգը և այլն հնացած են, և անհապաղ վերանորոգման կարիք ունեն: Այս պահանջներն իրենց մեծությամբ գերազանցում են համայնքային բյուջեները բազմաթիվ անգամ և մոտ ապագայում իրավիճակի փոփոխության որևէ նախադրյալ դեռևս չի նկատվում:

Հետևությունն այն է, որ ԲՀՊՏ ստեղծման և մասնավորապես էկոտուրիզմի զարգացման առումներով անհրաժեշտ է սերտ համագործակցություն ծավալել պետական կառույցների և զարգացման ֆինանսավորում իրականացնող միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ միտված համայնքների ընդհանուր և ենթակառուցվածքային զարգացման ծրագրերի իրականացմանը: Մեփական ռեսուրսներով համայնքներն այս աշխատանքներն իրականացնել չեն կարող:

Հետագույնում համայնքների ժողովրդագրական տվյալները հավաքագրվել են համայնքապետարաններից և ճշգրտվել են տարածքային վիճակագրական ծառայության միջոցով: Ստացված տեղեկությունների մեջ որոշ անճշտություններ են հայտնաբերվել, որոնք հարթվել են հետագա քննարկումների ընթացքում: Ժողովրդագրական իրավիճակի ուսումնասիրությունը մեծապես կարևորվում է, քանի որ այն կարող է պայմանավորել համայնքներում սոցիալ-տնտեսական կայուն զարգացման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծավալը և բնույթը:

Հետագույնում համայնքներում առկա բնակչության ընդհանուր թիվը 2011թ. սկզբի դրությամբ կազմել է 2801 մարդ: Մեռային բաշխվածքը մոտավորապես հավասարաչափ է. արական բնակչությունը միջին հաշվով կազմել է 47.5%: Իգական բնակչության թեթևակի գերակշռությունը կարող է պայմանավորված լինել տղամարդկանց աշխատանքային միգրացիայի երևույթով: Իրավիճակը լավ չէ հատկապես Վարդանիձոր, Գեղանուշ և Ճակատեն համայնքներում, որտեղ արական և իգական բնակչության տարբերությունը հասնում է 8%-ի: Ներքին Հանդ և Սրաշեն համայնքներում բնակչության թիվն ամենափոքրն է, ինչը կարող է որոշ խնդիրներ առաջացնել զարգացման ծրագրերի իրականացման տեսանկյունից: Նույնը վերաբերվում է նաև Լեռնաձոր համայնքին: Այստեղ բնակչությունը ամենամեծն է, սակայն այն բաշխված է 9 գյուղերի մեջ և կոնկրետ գյուղերի բնակչության թվաքանակն իսկապես փոքր է:

Հետաքրքիր է անդրադառնալ նաև ժամանակավոր առկա բնակչությանը, որոնց ընդհանուր թիվը կազմում է 443 մարդ, կամ ընդհանուր բնակչության 16%-ը: Այս փաստը կարող է բացատրվել մի քանի պատճառներով, որոնցից են փախստականների առկայությունը (որոնք չեն ցանկանում կորցնել իրենց կարգավիճակը և դրանից բխող առավելությունները), հանգստացողների առկայությունը, որոնք երկար ժամանակ են անցկացնում համայնքներում և այլն:

Համայնքների բնակչության որոշակի մասը ժամանակավոր կամ երկարաժամկետ բացակայողներ են: Չնայած դրան՝ բնակչության այս հատվածը չի կարելի մոռացության մատնել, քանի որ հենց նրանք են հանդիսանում համայնքներում առկա բնակչության թվաքանակի ավելացման առաջին աղբյուրը. այս մարդիկ ավելի շատ հակված կլինեն վերադառնալ իրենց համայնքներ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության պարագայում: Բացակայողների ընդհանուր թիվը կազմում է 354 մարդ և նրանց մոտ 57%-ը տղամարդիկ են:

Սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից ժողովրդագրական ցուցանիշներից առավել կարևորվում է հետազոտված համայնքներում զբաղված բնակչության ցուցանիշը: Արձանագրվել է, որ զբաղված բնակչության մոտ 60%-ը ներգրավված է բացառապես գյուղատնտեսության մեջ: 40%-ը՝ իրականացնում է նաև ոչ գյուղատնտեսական գործունեություն՝ հիմնականում աշխատելով պետական կառույցներում՝ համայնքապետարաններում, կրթական և մշակութային հաստատություններում, մասնավոր ձեռնարկություններում և այլն:

Արձանագրվել է, որ բնակչության ընդհանուր առկա բնակչության 47.1%-ն է ներգրավված եկամուտ հետապնդող գործողություններում: Սա բարձր ցուցանիշ չի կարող համարվել, նույնիսկ եթե հաշվի առնենք ծերերի և երեխաների առկայությունը: Հնարավոր բացատրություններից մեկը Սյունիքի գյուղական համայնքներում նկատվող բնակչության ընդհանուր ծերացման միտումն է: Երիտասարդ ընտանիքների շրջանում վերջերս նկատվում է իրենց գյուղական համայնքները լքելու, Կապանում, Երևանում կամ նույնիսկ արտերկրում հիմնավորվելու միտում՝ պայմանավորված ավելի լավ ապրելակերպի ապահովման ձգտումով: Սա առաջնային կարևորության խնդիր է հանդիսանում հետազոտված համայնքներում և անհրաժեշտ է անհապաղ միջոցառումներ ձեռնարկել այս միտումը կասեցնելու համար՝ նաև սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնելու միջոցով:

Հետազոտված համայնքներում բնակչության սեռատարիքային բաշխվածքը զարգացման ծրագրերի իրականացման տեսանկյունից հաջորդ կարևոր գործոնն է հանդիսանում: 16-62 տարեկան առկա բնակչությունը սովորաբար դիտարկվում է որպես ցանկացած զարգացման ծրագիր իրականացնելու համար անհրաժեշտ մարդկային ռեսուրս: Հետազոտված համայնքներում բնակչության այս հատվածի մասնաբաժինը կազմում է 61.5%: Անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ կան, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել բնակչության ծերացման ակնհայտ միտումները:

Հետաքրքրական է նաև, որ տարեց բնակչության մի մասը ևս զբաղված է: Տարեցների քիչ մասն է տնտեսապես ոչ ակտիվ: Այս մարդիկ սովորաբար զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ չնայած հիմնականում սեփական սպառմանը միտված ապրանքներ արտադրելով: Ընդհանրապես այս երևույթը հատկանշական է գյուղական տարածքների բնակչության համար:

Աշխատանքային միգրացիա

Աշխատանքային միգրացիայի վերաբերյալ տվյալների բացակայությունը, ցավոք, հայկական իրականության անբաժանելի մասն է հանդիսանում արդեն մոտ երկու տասնամյակ, և հետազոտված համայնքներն այս առումով բացառություն չեն: Յուրաքանչյուր տարի բոլոր համայնքների որոշակի քանակությամբ բնակիչներ մեկնում են արտագնա աշխատանքի՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնություն: Շատ կարևոր է այս հարցին անդրադառնալ, քանի որ այս միգրանտների գերակշիռ մեծամասնությունը երիտասարդ արական բնակչությունն է, որոնք շատ կարևոր դերակատարություն կարող են ունենալ հետազոտված համայնքների

«Շիկահողե արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

գյուղատնտեսական զարգացման գործում: Աշխատանքային միգրացիայի միտումները վերջին տարիներին քիչ թե շատ կայուն են եղել: Բաշխվածքը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 3 - Աշխատանքային միգրացիան համայնքներում, մարդ

Համայնքներ՝ Տարի →	2008	2009	2010		Ընդամենը
			Քանակ	%	
Վարդանիձոր	2	2	2	0.55%	6
Ծավ	4	5	7	1.57%	16
Սրաշեն	6	6	6	5.55%	18
Շիկահող	4	3	3	1.58%	10
Ներքին Հանդ	4	14	14	19.44%	32
Լեռնաձոր	0	0	0	0%	0
Գեղանուշ	0	0	0	0%	0
Ճակատեն	0	0	0	0%	0
Ընդամենը	20	30	32	1.14%	82

Աշխատանքային միգրացիան զգալի չափեր ունի միայն Ներքին Հանդ համայնքում, ինչը կարող է պայմանավորված լինել համայնքի կտրվածությամբ և փոքր չափսերով, եկամուտների ունենալու սահմանափակ հնարավորություններով, վատ ապրելակերպով և այլն: Որոշ համայնքներում աշխատանքային միգրացիայի ծավալները խիստ սահմանափակ են կամ չկա ընդհանրապես: Դա չի նշանակում, որ այն երբեք չի եղել այս համայնքներում: Պարզապես հեռացել են բոլոր նրանք ովքեր հակված էին հեռանալու, իսկ մնացողները գերադասում են չաշխատել դրսում: Ընդհանուր առմամբ, հետագոյված համայնքներում աշխատանքային միգրացիայի քանակը շատ ավելի քիչ է, քան Հայաստանի այլ գյուղական տարածքներում:

Սոցիալական ենթակառուցվածքների՝ կրթական և առողջապահական հաստատությունների, սպորտային և արվեստի խմբակների և կառույցների, զվարճանքի վայրերի առկայությունը համայնքներում շատ կարևոր է համայնքային զարգացման տեսանկյունից: Ավելին, շատ հաճախ այս ենթակառուցվածքների բացակայությունը դառնում է բնակչության դժգոհության, ինքնադրսևորման սահմանափակման, և նույնիսկ համայնքը լքելու հիմնական պատճառներից մեկը: Պահպանվող տարածքների հիմնման տեսանկյունից գործող ենթակառուցվածքների առկայությունը պարզապես անհրաժեշտություն է: Մեր օրերում, պահպանվող տարածքի հիմնումը նշանակում է ոչ միայն բնապահպանական բարձր մակարդակ, այլև հարակից բնակավայրերի կայուն և օրինակելի զարգացում, ինչի դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել մարդու և բնության հավասարակշռված գոյակցությունը:

Հայաստանում սոցիալական ենթակառուցվածքների գործունեությունը սովորաբար ֆինանսավորվում և կարգավորվում է պետության կողմից: Ցավոք այս կառույցներն իրենց մեծամասնության մեջ (հատկապես գյուղական բնակավայրերում) գտնվում են վատ վիճակում և պետությունը սովորաբար ի վիճակի չի լինում բավարար ֆինանսական միջոցներ հատկացնել դրանց պատշաճ պահպանման համար: Իրավիճակը նույնն է նաև գործող «Ջանգեգուր» և նախատեսվող «Խուստուփ» պահպանվող տարածքներին հարակից գյուղական համայնքներում: Հատկապես հեռավոր գյուղերը սովորաբար լուրջ խնդիրներ են արձանագրում նման հարցերում:

Հետազոտված համայնքներում սոցիալական ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Դպրոցներ աշխատում են հետազոտված ԲՀՊՏ-ների բոլոր համայնքներում՝ չնայած որոշներում (Սրաշեն, Ներքին Հանդ, Ճակատեն) աշակերտների թիվը շատ քիչ է, ինչը հետագայում կարող է լուրջ խնդիրներ առաջացնել այդ դպրոցների համար կապված բյուջեից ստացվող գումարների հետ: Որոշ դեպքերում (ինչպես օրինակ Լեռնաձորում) ներկայումս դիտարկվում է տարբեր գյուղերի դպրոցների միավորում: Իրավիճակը դպրոցների մեծամասնությունում ծայրահեղ վատ է: Անհապաղ վերանորոգման կարիք ունեն բազմաթիվ դպրոցներ, կահույքի, սպորտային և դիդակտիկ նյութերի, որակավորված ուսուցիչների պակասն այլևս որևէ մեկին չի զարմացնում: Կրթության որակը անհապաղ բարելավման կարիք ունի. ներկայումս բազմաթիվ դպրոցներում մեկ ուսուցչի կողմից դասավանդվում են մի քանի առարկաներ: *Գործող մանկապարտեզ* կա միայն Լեռնաձոր համայնքում: Մյուս համայնքները կամ պարզապես չունեն մանկապարտեզ, կամ այն դադարեցրել է իր աշխատանքը անբավարար պայմանների, ֆինանսավորման բացակայության, կամ էլ երեխաների փոքր թվի պատճառով:

Սպորտային իրավիճակը հետազոտված համայնքներում նույնքան վատ է: Որոշ կիսաքանդ հնարավորություններ առկա են միայն դպրոցական դահլիճներում, սակայն սպորտային պարագաներ չկան գրեթե ոչ մի տեղ: *Սպորտային ակումբներ* գործում են միայն Սրաշեն և Լեռնաձոր համայնքներում: Նույնիսկ դրանցում պարապմունքներն անցկացվում են անկանոն և ոչ միշտ արդյունավետ ձևով:

Առողջապահական ենթակառուցվածքների վիճակը հետազոտված համայնքներում շատ վատ չէ. բոլոր համայնքներն ունեն բուժկետեր, որտեղ հատուկ վերապատրաստված բուժաշխատողների կողմից առաջին օգնության ծառայություններ են մատուցվում բնակչությանը: Ցավոք համայնքներում չկան բժիշկներ և բարձրակարգ ու կլինիկական բժշկական ծառայություններն հասանելի են միայն Կապան և Քաջարան քաղաքներում: Համայնքներում չկան *դեղատներ*: Որոշ համայնքներում գործում է դեղերի բաշխման ծրագիր, որի շրջանակներում համախմբված բնակիչներն ամեն եռամսյակ վճարում են 2,000 դրամ և օգտվում ամսեկան երկու անգամ ծրագրի կողմից իրենց համայնք առաքվող դեղերից: Համայնքներում չկան *շտապ օգնության մեքենաներ*. անհրաժեշտության դեպքում այս մեքենաները կանչվում են հարակից քաղաքներից՝ ընդ որում բոլոր ծախսերը հոգում են հենց իրենք՝ բնակիչները:

Համայնքների մշակութային կյանքը բարելավման լուրջ կարիք ունի. մշակութային իրադարձությունները եզակի են (դրանց մասին ասվել է միայն Լեռնաձորում): Որոշ փոքրամասշտաբ համերգներ և միջոցառումներ են իրականացվում համայնքների դպրոցներում՝ հիմնականում կրթական ծրագրերի շրջանակներում: Համայնքներում բնակվում են շատ քիչ արվեստագետներ. դրանք գերադասում են հեռանալ Կապան և այլ վայրեր: Մարդիկ պատմում էին, որ իրենք պարզապես ձանձրանում են համայնքներում, որտեղ ոչինչ չկա անելու, չկան զվարճանքի հնարավորություններ, ինքնադրսևորման հնարավորությունները խիստ սահմանափակ են: Այս ամենը երիտասարդ ընտանիքների համայնքներից հեռանալու լուրջ պայման է հանդիսանում:

Բոլոր համայնքներն էլ տեղակայված են պատմական վայրերում և հարուստ են բնական և պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով, խաչքարերով: Այդ ամենի առկայությունը տուրիզմի զարգացման կարևոր նախապայման է հանդիսանում՝ չնայած մյուս պայմանները լուրջ բարեկարգման կարիք են զգում: Լուրջ ջանքեր պետք է ներդրվեն տուրիստական լուրջ ծառայություններ մշակելու և ներկայացնելու համար, և այդ ծառայությունները պետք է լայնորեն ներկայացվեն ինչպես տեղական, այնպես էլ արտերկրյա շուկաներում:

Աղյուսակ 4 - Համայնքների ենթակառուցվածքները, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ

Ենթակառուցվածքներ և ծառայություններ	Վարդանիձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Դպրոց	Միջն. դպրոց, 30 աշակերտ	Միջն. դպրոց, 50 աշակերտ	Միջն. դպրոց, 15 աշակերտ	Միջն. դպրոց, 29 աշակերտ	Միջն. դպրոց, 9 աշակերտ	2 դպր. (9-ամյա) 90 աշակ., և 2 միջն. դպր. (11-ամյա) 127 աշակ.	Միջն. դպրոց, 38 աշակերտ	Միջն. դպրոց, 7 աշակերտ
Ուսուցիչ	13-ը՝ համայնքից, 2-ը՝ Մեղրիից և 4-ը՝ օժանդակ կազմ	14-ը՝ համայնքից, 5-ը՝ Կապանից, 1-ը՝ Երևանից	10-ը՝ համայնքից	9-ը՝ համայնքից, 3-ը՝ այլ գյուղերից, 4-ը՝ Կապանից	5-ը՝ համայնքից, 1-ը՝ այլ գյուղերից, 1-ը՝ Կապանից	31-ը համայնքից, 13-ը՝ Կապանից, 8-ը՝ Քաջարանից, և 16-ը՝ օժանդակ կազմ: Միավորման միտում:	3-ը՝ համայնքից, 14-ը՝ Կապանից և 5-ը՝ օժանդակ կազմ	4-ը՝ համայնքից, 1-ը՝ Կապանից
Մանկապարտեզ	Ժամանակավորապես դադարեցրել է գործուն.-ը՝ ֆինանսավորման պակասի և վատ շենքային պայմանների պատճառով	18 երեխաներ են այցելում	Չկա	Չի գործում երեխաների պակասի պատճառով	Չկա	24 երեխաներ են այցելում: Աճման միտում կա	Չի գործում երեխաների պակասի, ծնունդների քիչ քանակի և վատ պայմանների պատճառով	Չկա
Սպորտային ակումբ	Չկա	Չկա	Պինգ-պոնգի խմբակ դպրոցում	Չկա	Չկա	Բասկետբոլի և շախմատի խմբակներ	Չկա	Չկա
Սպորտային կառույց (բացի դպրոցներից)	Չկա	Չկա	Չկա	Չկա	Չկա	Չկա	Չկա	Չկա
Առողջապահական հաստատություն	2 բուժկետ, 1 քույր	1 բուժկետ, 2 քույր	1 բուժկետ, 1 քույր	1 բուժկետ, 1 քույր	1 բուժկետ, 1 քույր	2 բուժկետ, 2 քույր	1 բուժկետ, 1 քույր	1 բուժկետ, 1 բուժակ
Մոտակա բժիշկը	Մեղրիում, 10 կմ	Կապանում, 36 կմ	Կապանում, 27 կմ	Կապանում, 22 կմ	Կապանում, 37 կմ	Քաջարանում, 500մ	Կապանում, 5 կմ	Կապանում, 9 կմ
Դեղատուն	Մեղրիում, 10 կմ	Կապանում, 36 կմ	Կապանում, 27 կմ	Կապանում, 22 կմ	Կապանում, 37 կմ	Քաջարանում, 1 կմ	Կապանում, 5 կմ	Կապանում, 9 կմ
Շտապ օգնության մեք.	Մեղրիում, 10 կմ	Կապանում, 36 կմ	Կապանում, 27 կմ	Կապանում, 22 կմ	Կապանում, 37 կմ	Քաջարանում, 300մ	Կապանում, 5 կմ	Կապանում, 9 կմ

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

Գրադարան	2 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող
Մշակույթի տուն	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող	1 գործող, վաստ վիճ	1 գործող
Մշակութային իրադարձություններ	Չկա	Չկա	Չկա	Չկա	Չկա	Հազվադեպ համերգներ և ներկայացումներ	Չկա	Չկա
Եկեղեցիներ և հուշարձաններ	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
Արվեստագետներ	Չկա	Չկա	Չկա	Չկա	Չկա	Առկա է	Չկա	Չկա

Հեռահաղորդակցություն

Ներկայիս իրականության մեջ հեռահաղորդակցության ծառայությունները գնալով ավելի հանապազօրյա անհրաժեշտություն են դառնում: Մարդիկ կանոնավոր հաղորդակցության կարիք ունեն և հակված են ավելի ու ավելի բարդ ծառայություններ սպառել: Եթե մի քանի տարի առաջ գծային հեռախոսակապը և փոստային ծառայությունները հաղորդակցման միակ միջոցներն էին գյուղական համայնքներում, ապա ներկայիս բնակչությունը ավելի ժամանակակից և բարդ ծառայությունների պահանջարկ է ներկայացնում: Մոբիլ հեռախոսները դարձել են առաջին անհրաժեշտության գործիքներ, համացանցային ծառայությունները լայնորեն ներդրվում և սպառվում են:

Գործող «Զանգեզուր» և նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերի համայնքներում հեռահաղորդակցության ծառայությունները մատուցման ամենաբարձր մակարդակի վրա չեն գտնվում: Որոշ համայնքներում դրանք պարզապես չեն գործում պատշաճ մակարդակով: Հեռահաղորդակցության ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունն ու դրանց մատուցման որակը հետազոտված համայնքներում ներկայացված է ստորև.

Աղյուսակ 5 - Հաղորդակցության ենթակառուցվածքները և ծառայությունները 2011թ. հունվարի 1-ի դրությամբ

	Վարդանիձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Գծային հեռախոսակապ	Որոշ տներում	Տների 60%-ում	Որոշ տներում	Տների 90%-ում	20 տներում	Բոլոր տներում	Բոլոր տներում	Տների 70%-ում
Շարժական հեռախոսակապ	VivaCell, Beeline, Orange	VivaCell, Beeline	VivaCell, Beeline	VivaCell, Beeline	VivaCell, Beeline	VivaCell, Beeline, Orange	VivaCell, Beeline, Orange	VivaCell, Beeline
Փոստային ծառայություններ	Չկա	Գործում է	Չկա	Գործում է	Չկա	3 posts operating	Չկա	Չկա
Ինտերնետ (համացանց)	Շարժական հեռախոսակապի մոդեմներով	Շարժական հեռախոսակապի մոդեմներով	Շարժական հեռախոսակապի մոդեմներով	Չկա	Չկա	Շարժական հեռախոսակապի մոդեմներով: Դպրոցում և համայնքապետարանում	Չկա	Միայն դպրոցում
Հեռուստատեսություն	2 ալիք	3 ալիք	2 ալիք	4 ալիք	2 ալիք	5 ալիք	2 ալիք	2 ալիք
Ռադիո	Չկա	1 ալիք	1 ալիք	2 ալիք	1 ալիք	Չկա	4 ալիք	1 ալիք

SS-ների մեծամասնությունն ապահովված են մշտական *գծային հեռախոսակապով*, ինչը հեշտացնում և էժանացնում է հաղորդակցությունը համայնքների ներսում: Շարժական հեռախոսակապի ծառայություններն, ընդհանուր առմամբ, հասանելի են, սակայն կապի որակը վատն է հիմնականում լեռնային մակերևույթի պատճառով: *Շարժական հեռախոսակապի* օգտագործվող հիմնական օպերատորը Vivacell-ն է, որի կապը հասանելի է գրեթե բոլոր համայնքներում: Համացանցի օգտագործումը լայնորեն տարածված չէ, տեղական մատակարարներ չկան: Համացանցի այնպիսի կարևոր ռեսուրսների, ինչպիսիք են Էլեկտրոնային փոստը, Skype-ը և այլն քիչ հասանելի են: *Համացանցի* սակավաթիվ օգտագործողները միանալու համար հիմնականում օգտագործում են շարժական կապի մոդեմներ: Կարևոր է նաև նշել, որ համացանցը հիմնականում հասանելի է բոլոր համայնքների դպրոցներում և համայնքապետարաններում:

Հեռուստատեսային և ռադիո հեռարձակումը խիստ սահմանափակ է. հասանելի են միայն մի քանի ալիքներ, այն էլ՝ ոչ շատ բարձր որակով: Հեռուստատեսային ալիքները հիմնականում

ազգային են և դրանց օգտագործումը տեղեկացվածության բարձրացման և ԲՀՊՏ-ների վերաբերյալ տեղեկատվության տարածման գործողությունների նպատակով խիստ թանկ կարող է արժենալ: Հեռարձակվում է ռադիոյի ընդամենը մեկ ալիք, սակայն այն մեծ լսարան չունի և նպատակահարմար չէ օգտագործել տեղեկատվության տարածման նպատակով:

Ճանապարհներ և տրանսպորտային ծառայություններ

Հետազոտված համայնքների զարգացման պոտենցիալը բնութագրող հաջորդ գործոնները ճանապարհների վիճակն ու հասարակական տրանսպորտի առկայությունն է: Այլ պայմանների շարքում, սրանք ևս պայմանավորում են համայնքների համար շուկաների հասանելիությունը, սոցիալական ծառայությունների (կրթական, առողջապահական և այլն) որակը, ինչպես նաև որոշակիորեն բնութագրում են կոնկրետ վայրերի տուրիստական գրավչությունը: Հետազոտված համայնքներում ճանապարհների վիճակի և տրանսպորտի առկայության վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 6 - Ճանապարհներ և տրանսպորտ

	Վարդանի ձոր	Ծավ	Մրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատեն
Դեպի մոտակա քաղաք կամ մարզկենտրոն տանող հասարակական տրանսպորտ	Օրական 2 անգամ, շաբաթական 7 օր	Օրական 1 անգամ, շաբաթական 5-6 օր	Օրական 1 անգամ, շաբաթական 5 օր	Օրական 1 անգամ, շաբաթական 5-6 օր	Չկա, օգտվում են Ծավի տրանսպորտից	Օրական 11 անգամ, շաբաթական 7 օր	Օրական 3 անգամ, շաբաթական 6 օր	Չկա, օգտվում են Ծավի տրանսպորտից
Դեպի հարևան համայնք տանող հասարակական տրանսպորտ	Չկա	Տես վերևի վանդակը	Տես վերևի վանդակը	Տես վերևի վանդակը	Տես վերևի վանդակը	Չկա	Չկա	Տես վերևի վանդակը
Դեպի մարզկենտրոն ճանապարհի վիճակը, որից՝								
առֆալտապատ	64 կմ շատ լավ ճանապարհ	36 կմ շատ լավ ճանապարհ	30 կմ շատ լավ ճանապարհ	22 կմ շատ լավ ճանապարհ	32 կմ շատ լավ ճանապարհ	24 կմ շատ լավ ճանապարհ	5 կմ վատ ճանապարհ	9 կմ շատ լավ ճանապարհ
ոչ-առֆալտապատ	-	-	-	-	5 կմ նորմալ ճանապարհ	-	-	-
Դեպի մարզկենտրոն ճանապարհի վիճակը ձմռանը, որից՝	Անանցանելի է տարեկան մի քանի օր	Լիովին անցանելի է	Անանցանելի է տարեկան մի քանի օր	Լիովին անցանելի է	Լիովին անցանելի է	Անանցանելի է տարեկան մի քանի օր	Անանցանելի է տարեկան 10 օր	Լիովին անցանելի է
Համայնքային ճանապարհների վիճակը, որից՝								
առֆալտապատ	-	-	-	-	-	-	10 կմ վատ ճանապարհ	1.5 կմ շատ լավ ճանապարհ
ոչ-առֆալտապատ	32 կմ նորմալ ճանապարհ , 8 վատ ճանապարհ	5 կմ նորմալ ճանապարհ , 1 վատ ճանապարհ	2.7 կմ նորմալ ճանապարհ , 1 վատ ճանապարհ	3.5 վատ ճանապարհ	2 վատ ճանապարհ	16 կմ նորմալ ճանապարհ	-	1.9 կմ նորմալ ճանապարհ , 0.6 վատ ճանապարհ

Մարզկենտրոն Կապանից (այսինքն՝ նաև մայրաքաղաք Երևանից) դեպի գործող «Զանգեզուր» և նախատեսվող «Խուստուփ» արգելավայրերին հարակից համայնքներ տանող ճանապարհների որակն, ընդհանուր առմամբ, կամ շատ լավն է, կամ էլ՝ նորմալ է: Ճանապարհներն անցանելի են գրեթե ամբողջ տարվա ընթացքում: Այս դրական իրավիճակն ապահովվել է

պետական բյուջեից և տարբեր դոնոր կազմակերպությունների աջակցությամբ իրականացված մեծածավալ ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով: Խնդրահարույց է միայն դեպի Ներքին Հանդ տանող ճանապարհի մի հատվածը, որի որակն այնքան էլ բարձր չէ: Սա կարող է որոշակի խոչընդոտ հանդիսանալ հանրահայտ «Սոսիների Պուրակ» արգելավայրի տուրիստական լուրջ պոտենցիալի իրացման համար:

Հետազոտված համայնքներում սոցիալական ծառայությունների և ենթակառուցվածքների զարգացումն անհրաժեշտ է նախ և առաջ համայնքների կայուն զարգացման նպատակով: Սա իրականում ԲՀՊՏ հիմնման և կայացման նախապայման է հանդիսանում: Ավելի կոնկրետ մոտեցման դեպքում ենթակառուցվածքների զարգացումը ԲՀՊՏ-ներում տուրիզմի զարգացման կարևորագույն նախապայման է: Ներկայիս իրավիճակում նման զարգացման նախադրյալները դեռևս կատարյալ չեն. համայնքային և միջհամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատված չէ և կան անանցանելի հատվածներ, հեռահաղորդակցության հասանելիությունը սահմանափակ է, մշակութային և էթնոտուրիզմի ենթակառուցվածքներն անհապաղ վերականգնման կարիք են զգում, կանոնավոր միջոցառումներ գրեթե չկան և այլն:

4.2. Հողերի և բնական ռեսուրսների օգտագործումը

Հետազոտված համայնքների ընդհանուր մակերեսը կազմում է 26,400 հա, որտեղ Լեռնաձոր համայնքն ունի ամենամեծ մասնաբաժինը (ինչը նորմալ է, քանի որ համայնքը բաղկացած է 9 գյուղերից): Համայնքների տարածքները պաշտոնապես բաժանվում են 9 տեսակների, որոնք ներկայացված են Աղյուսակ 7-ում: Սոցիալ-տնտեսական վերլուծության տեսանկյունից առավել կարևորվում են գյուղատնտեսական նշանակության հողերը:

Ի տարբերություն Հայաստանի այլ գյուղական վայրերի՝ վարելահողերը հետազոտված համայնքներում համեմատաբար փոքր են. բոլոր համայնքները միասին ունեն 1,000 հա պակաս մակերես: Սա պայմանավորված է այդ համայնքների բնական լանդշաֆտով. տարածքները լեռնային են, անտառածածկ, վարելահողերը՝ կտրտված և դժվար մատչելի: Բացի այդ, համայնքների բնակչությունը շատ աղքատ է և սովորաբար վարելահողերի ինտենսիվ մշակության համար բավարար միջոցներ չի տնօրինում: Բացասական պատկերն ամբողջանում է որոշ համայնքներում ոռոգման բացակայությամբ: Արդյունքում վարելահողերը դեգրադացվում են և ծածկվում անտառներով՝ էլ ավելի խորացնելով գյուղատնտեսության ծանր վիճակը հետազոտված համայնքներում: Մյուս կողմից՝ համայնքներն իսկապես պարտավոր են մշակել այդ հողերը, քանի որ գյուղատնտեսությունը փաստորեն հանդիսանում է բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը:


Բազմամյա տնկարկների ծավալները փոքր են՝ մոտ 22 հա 9 համայնքներում: Դրանց մեծ մասը պտղատու այգիներ են (առկա են նաև ոչ մեծ խաղողի այգիներ) միայն մեկ համայնքում: Սա բացասական բացահայտում է հանդիսանում, քանի որ այգեգործությունը բարձրարժեք մշակության եղանակ է և կարող է եկամուտների զգալի մակարդակ ապահովել տեղական ՏՏ-ների համար: Միննույն ժամանակ՝ ներկայացված ցուցանիշները ենթակա են որոշակի քննադատության, թեև դրանք ներկայացվել են պաշտոնական աղբյուրներից (Պետական կադաստրի մարզային մասնաճյուղից): Փաստացի այցելությունների և տեղական բնակչության հետ շփումների արդյունքում պարզվել է, որ իրականում այգիների մակերեսն ավելի մեծ է: Բազմաթիվ ֆերմերներ (օրինակ՝ Ներքին Հանդում) հիմնել են պտղատու այգիներ (արքայանարինջի, նռան և այլն), որոնք հիմնականում նոր են, սակայն շատ շուտով կդառնան բերքատու:

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

Աղյուսակ 7 - Համայնքային հողերի բաշխվածքն ըստ օգտագործման նպատակների, հա (2011թ. սկզբի դրությամբ)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսքերն ըստ նշանակության	Վարդանի ձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնաձոր	Գեղանուշ	Ճակատե ն
1.1	1. Գյուղատնտեսական հողեր	Վարելահողեր	124.69	113.64	171.78	153.27	121.23	66.31	133.34	107.04
1.2		Բազմ. տնկարկներ	4.07			11.74				6.21
1.2.1		ա.թ.պտղատու այգի	3.31			11.74				6.21
1.2.2		ա.թ. խաղողի այգի	0.76							
1.3		Խոտհարք	12.21	222.08	15.98	3.21	8.59	293.66	12.32	80.58
1.4		Արոտ	445.48	3089.58	187.25	207.92	77.63	2828.39	657.63	129.54
1.5		Այլ հողատեսքեր	1165.28	359.60	28.93	298.00	33.52	4164.04	81.76	103.26
1		Ընդամենը	1751.73	3784.90	403.94	674.15	240.97	7349.40	885.05	426.63
2.1	2. Բնակավայրերի հողեր	Բնակելի կառուցապ.	20.97	29.56	15.09	38.45	15.87	96.24	44.80	25.53
2.1.1		ա.թ.տնամերձ հողեր	20.97	29.56	15.09	38.45	15.87	96.23	44.80	25.53
2.2		Հաս. կառուցապատ.	2.11	1.64	0.25	1.50	1.06	4.86	1.18	0.60
2.3		Խառը կառուցապատ.						3.83		
2.4		Հնդհ. օգտագործման	4.97	6.57	2.43	5.33	4.28	24.51	8.48	5.25
2.5		Այլ հողեր	9.33	24.39	9.70	21.35	11.44	78.71	33.86	9.36
2			Ընդամենը	37.38	62.16	27.47	66.63	32.65	208.15	88.32
3.1	3. Արդյունաբեր., ընդերքօգտ. և այլ արտադ. նշ. օբյեկտների հողեր	Արդյունաբերության	1.37			0.37		6.79	21.00	
3.2		Գյուղտնտ., արտադր.	3.16	4.29	1.11	0.89	0.90	22.76	3.55	1.28
3.3		Պահեստարանների	0.06	0.05				0.07		
3.4		Հնդերք օգտագործ.	15.85					15.17		
3		Ընդամենը	20.44	4.34	1.11	1.26	0.90	44.79	24.55	1.28
4.1	4. Էներգետ., տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուց. օբյեկտների հողեր	Էներգետիկայի	3.31	1.31		0.06	0.02	25.46		0.1
4.2		Կապի			0.01		0.08			
4.3		Տրանսպորտի	5.51	2.55	4.27	3.60	4.99	11.17	5.31	2.94
4.4		Կոմուն. ենթակառուց.		0.06	0.04	0.03	0.59	3.55		
4		Ընդամենը	8.82	3.92	4.32	3.69	5.68	40.18	5.31	2.95
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր	Բնապահպանական		227.54			127.99			
5.1.1		ա.թ. արգելոցներ		227.54			63.79			
5.1.2		արգելավայրեր					64.20			
5.4		Պատմ., մշակութ.	0.48	10.22	6.82	19.26	8.98	35.52	13.78	5.79
5		Ընդամենը	0.48	237.76	6.82	19.26	136.97	35.52	13.78	5.79
6	6. Հատուկ նշանակության հողեր									
7.1	7. Անտառային հողեր	Անտառ	210.46	1847.42	140.56	729.84	361.35	1976.54	971.39	535.85
7.2		Թփուտ	236.84	170.06	264.60	103.37	8.33	1535.32	218.85	164.21
7.3		Վարելահող								
7.4		Խոտհարք								
7.5		Արոտ								
7.6		Այլ հողեր								
7		Ընդամենը	447.30	2017.48	405.16	833.21	369.68	3511.86	1190.24	700.06
8.1	8. Ջրային տարածքներ	Գետեր	5.36	14.29	1.36	2.65	7.22	142.18	14.29	22.81
8.2		Ջրամբարներ								0.01
8.3		Լճեր								
8.4		Ջրանցքներ	1.95					2.46	1.89	
8.5		Հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	0.03	0.01			0.36	0.47		0.07
8		Ընդամենը	7.34	14.30	1.36	2.65	7.58	145.11	16.18	22.89
9.1	9	Աղուտներ								
9.3		Ավազուտներ								
9		Ընդամենը								
ԸՆԴԱՄԵՆԸ 1+2+3+4+5+6+7+8+9			2273.49	6124.86	850.18	1600.85	794.43	11335.01	2223.43	1,200.34

Վարելահողերի և բազմամյա տարածքների մակերեսների փոքրությունը մեծապես փոխհատուցվում է արոտավայրերի և խոտհարքների առատությամբ: Որոշ համայնքներ, օրինակ՝



Բնակավայրերի ընդհանուր տարածքը կազմում է 560 հա և Լեռնաձոր համայնքը կրկին առաջինն է: Այս նպատակով հատկացված հողատարածքներում ընդգրկված են նաև ՏՏ-ների տները և տնամերձ հողատարածքները, որոնք կազմում են ընդհանուր մակերեսի մոտ կեսը: Տնամերձերը մշակվում են հիմնականում սեփական կարիքների բավարարման նպատակով: Բնակավայրերի տարածքի մոտ 14%-ն օգտագործվում է հասարակական կառուցապատման և ընդհանուր օգտագործման կառույցների շահագործման նպատակներով: Դրանց մեջ մտնում են համայնքապետարանների, սկուլների և մշակույթի տների, կրթական հաստատությունների շենքերը և այլն:

Հատուկ ուշադրության են արժանի *արդյունաբերական և հատկապես ընդերքօգտագործման* նպատակներով հատկացված տարածքները, քանի որ դրանց առկայությունը սովորաբար մեծապես վտանգում է բնապահպանական վիճակը՝ չնայած զգալիորեն նպաստում է տնտեսական կայունությանը և եկամուտների գեներացմանը: Նմանատիպ մեծ տարածքներ առկա են Լեռնաձոր և Գեղանուշ համայնքներում, սակայն պետական կադաստրի տվյալներով որոշ մակերեսներ կան նաև Վարդանիձորում և Ծավում: Այս պարագայում ևս ավելի մանրամասն դիտարկում պետք է կատարվի: Ներկայացված տվյալներում կրկին որոշակի անհամապատասխանություն կա: Օրինակ Ծավում կա առնվազն մեկ քարհանք, որն արտացոլված չէ հաշվետվություններում: Միակ բացատրությունը կարող է լինել այն, որ նման միավորները օրինական գործունեություն չեն իրականացնում և պաշտոնական կառույցները «տեղյակ» չեն դրանց մասին: Բացի այդ, հետազոտված գրեթե բոլոր համայնքներում կան տարածքներ, որոնք հատկացվել են լեռնահանքային հետազոտություններ իրականացնելու համար: Առնվազն մեկ ընկերություն ունի պետական լիցենզիա հետազոտվող տարածքում մի քանի հարյուր հա ընդհանուր տարածքի վրա հետախուզություն իրականացնելու համար: Մոտ ապագայում այս ընկերությունը կարող է պաշտոնապես դիմել ՀՀ Կառավարությանը տարածքների լայնածավալ հանքային շահագործման

համայնքների գետային տարածքների ավելի քան 65%-ը: 5 համայնքներում կառուցվել և շահագործվում են հիդրոտեխնիկական կառույցներ, որոնք սակայն մեծ մակերեսներ չեն զբաղեցնում: Այս կառույցների ազդեցությունը համայնքների բնապահպանական վիճակի վրա երկակի է. մի կողմից դրանք այլընտրանքային վերականգնվող էներգիայի աղբյուր են հանդիսանում (ինչը շատ պահանջված է Հայաստանում), մյուս կողմից՝ այս կառույցները սովորաբար չեն բավարարում բոլոր բնապահպանական ստանդարտներին: Չնայած նմանատիպ կառույցների հիմնումը ենթարկվում է բնապահպանական փորձաքննության՝ դրանց ինտենսիվ շահագործումը զգալի բացասական ազդեցություն է ունենում ջրային ավազանի վրա՝ հատկապես ձկնատեսակների և դրանց քանակի:

ԲՀՊՏ հիմնման և ընդլայնման տեսանկյունից վերը ներկայացված վերլուծությունից կարելի է առանձնացնել հողերի գյուղատնտեսական օգտագործման հանգամանքը: ԲՀՊՏ-ները ըստ սահմանման պետք է հանդիսանան կայուն զարգացման տարածքներ և համայնքներում պետք է ապահովեն եկամուտների գեներացման արդյունավետ հիմքեր: Տվյալ պարագայում լավագույն այլընտրանքը գյուղատնտեսության զարգացումն է: Այս նպատակով ոչ բոլոր նախադրյալներն են առկա. հողագործության վարման պայմանները և եղանակները համայնքներում շատ արդյունավետ չեն: ԲՀՊՏ հիմնման և ընդլայնման տեսանկյունից լուրջ միջոցառումներ պետք է իրականացվեն հողերի պլանավորման, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման, բերքատվության բարձրացման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ռոտզման համակարգերի վերականգնման և այլ առումներով:

Արդեն նշվել է, որ համայնքներում մշակված հողերի բաշխվածքի վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացվել են ասիմետրիկ տվյալներ: Սա հիմնականում տեղի է ունեցել տարբեր տնտեսվարողների (հողատերերի) կողմից լայնորեն կիրառվող և հարկերի նվազեցմանը միտված գործողությունների իրականացման պատճառով: Բազմաթիվ հողատերերի կողմից մրգի և խաղողի այգիները ներկայացվում են որպես վարելահողեր (երբեմն նույնիսկ խոտհարքներ), որոնց հողի հարկի մեծությունն անհամեմատ ավելի փոքր է: Այս երևույթի մասին տեղեկացված են նաև վիճակագրական մարմինները և ՏԻՄ-երը, սակայն առ այսօր իրավիճակը շտկելու համար միջոցառումներ չեն իրականացվել:

Տվյալներ հավաքելու և դրանք պահելու վիճակը Հայաստանի գյուղական վայրերում հեռու է բավարար լինելուց: Իրականում վիճակագրական ծառայություններին ներկայացվում են զգալիորեն մոտավորեցված տեղեկություններ՝ չնայած դրանք հիմնականում արտացոլում են ընդհանուր միտումները: Միտումների տեսանկյունից, սակայն հնարավոր չէ ընդհանրացումներ կատարել բերքի ցուցանիշների վերաբերյալ՝ հիմնականում հաճախակի ցրտահարությունների, երաշտների և բնական այլ աղետների պատճառով: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հետազոտված համայնքներում հողագործության հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 8 - Հողագործության մակերեսները և բերքի քանակները, 2010 թ.

Կուլտուրաներ		Հացահատիկ	Ընդեղեն	Կարտոֆիլ	Բանջարեղեն	Կերային
Վարդանի ձոր	Տարածք, հա	0.5	3.0	8.0	15.2	22.1
	Բերք, կգ	500	3,300	9,600	78,600	25,000
Ծավ	Տարածք, հա	0.0	3.0	25.0	4.2	75.0
	Բերք, կգ	0	6,000	375,000	50,600	150,000
Սրաշեն	Տարածք, հա	77.5	1.0	1.5	2.0	30.3
	Բերք, կգ	58,100	2,000	18,000	24,000	60,000
Շիկահող	Տարածք, հա	37.6	1.5	6.0	4.5	125.0

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

	Բերք, կգ	17,500	4,500	90,000	54,000	250,000
Ներքին Հանդ	Տարածք, հա	39.0	0.5	4.0	2.0	80.0
	Բերք, կգ	45,800	1,500	6,000	24,000	150,000
Լեռնաձոր	Տարածք, հա	5.0	13.0	26.0	4.2	112.0
	Բերք, կգ	3,000	26,000	315,000	42,000	250,000
Գեղանուշ	Տարածք, հա	0.0	3.0	6.0	5.0	101.0
	Բերք, կգ	0	6,000	98,000	58,000	200,000
Ճակատեն	Տարածք, հա	15.0	8.0	7.0	13.0	169.0
	Բերք, կգ	6,000	24,000	105,000	156,000	410,000
Ընդամենը	Տարածք, հա	174.6	33.0	83.5	50.1	714.4
	Բերք, կգ	130,900	73,300	1,016,600	487,200	1,495,000

Յորենի մշակությունը հետազոտված համայնքներում կազմում է հացահատիկի արտադրության երկու երրորդը հեշտ մշակության պատճառով: Հացահատիկը մշակվում է հիմնականում կենսապահովման նպատակով, բերքատվության մակարդակը շատ ցածր է իրագործելի և շահութաբեր առևտրային մշակություն կազմակերպելու համար: Յորենի մշակությունը հիմնականում կենտրոնացած է Շիկահող, Սրաշեն և Ներքին Հանդ համայնքներում: Մյուսները կամ համապատասխան հողեր չունեն, կամ էլ մյուս ռեսուրսները չեն բավարարում՝ ֆինանսները, սերմերը, պարարտանյութերը, մեխանիզացիան և այլն:

Ընդեղենի մշակությունը ևս կենսապահովման բնույթի է. շատ քիչ քանակություն է իրականում իրացվում: Աղյուսակում ներկայացված ընդեղենի ցուցանիշներն իրականում վերաբերվում են լոբուն: Հետազոտված համայնքներից որոշները հայտնի են այդտեղ արտադրվող կարտոֆիլով. քանակները բավականին մեծ են, առևտրայնության մակարդակը՝ բարձր: Զգալի քանակությամբ կարտոֆիլ է վաճառվում Կապանի և Քաջարանի շուկաներում: Մասնավորապես Շիշկերտ գյուղում աճեցված կարտոֆիլը շատ բարձր որակի է, հատուկ պահանջված է և իրացվում է համեմատաբար բարձր գներով: Մա մրցակցային առավելություն է, որը պետք է զարգացվի:

Բանջարեղենի արտադրության ծավալները ևս մեծ են: Հիմնական տեսակներից են կաղամբը, վարունգը, պոմիդորը, գազարը, սոխը և այլն: Մշակությունն հիմնականում կատարվում է տնամերձ հողամասերում և նախատեսվում է կենսապահովման համար: Իրավիճակն այլ է կերային կուլտուրաների պարագայում: Օգտագործման քանակները բավականին մեծ են, քանի որ ինտենսիվ մշակության ջանքեր և ծախսեր չեն պահանջվում: Սովորաբար ֆերմերները պարզապես քաղում են դրանք խոտհարքներում և օգտագործում անասունների կերակրման նպատակով:

Հետազոտված ցածրադիր համայնքների բնակլիմայական պայմանները լավ նախադրյալներ են ստեղծում բարձրարժեք գյուղատնտեսության, այն է՝ մրգերի, ընկույզի և նույնիսկ խաղողի արտադրության համար: Որոշ ապրանքատեսակների արտադրության գծով՝ օրինակ՝ մերձարևադարձային մրգերի, Մյունիքի մարզի այս հատվածներն անվիճելի առաջատար են հանդիսանում: Աղյուսակ 9-ում ներկայացված է այգետարածքների բաշխվածքն ըստ տարբեր մրգատեսակների: Բերված տվյալների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հիշել մի կարևոր հանգամանք. աղյուսակում ներկայացված են 2010թ. ցուցանիշները, երբ գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը տուժել է ցրտահարությունների և կարկտահարության պատճառով: Նման ցրտահարությունները Հայաստանում պատահում են կանոնավոր ձևով՝ 3-4 տարին մեկ անգամ:

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

Աղյուսակ 9 - Մրգի մշակության տարածքները և բերքը, 2010թ.

Կուլտուրաներ		Հնդավորներ	Կորիզապտու լներ	Ընկույզ	Մերձարևադ արձային	Հատապտուղ ներ	Խաղող (տեխն. սորտ)	Ամբողջը
Վարդինաձոր	Տարածք, հա	5.0	13.4	4.9	0.5	3.1	0.6	27.5
	Բերքատու, հա	2.5	5.0	2.8	0.5	1.6	0.5	12.9
	Բերք, կգ	50	80	1,700	1,500	250	160	3,740
Ծավ	Տարածք, հա	5.5	2.1	0.6	0.4	0.4	0.1	9.1
	Բերքատու, հա	4.4	2.1	0.5	0.4	0.4	0.1	7.9
	Բերք, կգ	0	300	900	400	2,000	3,000	6,600
Սրաշեն	Տարածք, հա	4.5	0.4	0.9	0.3	0.4	0.2	6.7
	Բերքատու, հա	4.4	0.4	0.9	0.3	0.3	0.2	6.5
	Բերք, կգ	700	600	13	100	1,000	800	3,213
Շիկահող	Տարածք, հա	5.2	3.5	3.3	0.3	0.3	0.3	12.9
	Բերքատու, հա	5.2	3.5	3.3	0.3	0.3	0.3	12.9
	Բերք, կգ	2,000	100	700	200	6,000	300	9,300
Ներքին Հանդ	Տարածք, հա	0.4	0.2	1.1	0.4	0.2	0.2	2.5
	Բերքատու, հա	0.3	0.2	1.1	0.2	0.2	0.2	2.2
	Բերք, կգ	1,000	1,500	700	1,600	3,000	3,000	10,800
Լեռնաձոր	Տարածք, հա	3.9	2.5	1.0	0.0	0.7	0.0	8.1
	Բերքատու, հա	3.9	2.5	1.0	0.0	0.7	0.0	8.1
	Բերք, կգ	0	0	0	0	1,100	0	1,100
Գեղանուշ	Տարածք, հա	7.5	1.4	5.1	0.7	0.5	0.5	15.7
	Բերքատու, հա	3.4	0.8	4.8	0.6	0.5	0.4	10.5
	Բերք, կգ	200	500	1,100	100	1,900	1,200	5,000
Ճակատեն	Տարածք, հա	4.8	2.5	2.0	0.0	2.0	0.7	12
	Բերքատու, հա	4.8	2.5	2.0	0.0	2.0	0.7	12
	Բերք, կգ	800	800	1,300	0	5,100	500	8,500
Ընդհանուր	Տարածք, հա	36.8	26.0	18.9	2.6	7.6	2.5	94.4
	Բերքատու, հա	28.9	17.0	16.4	2.4	6.0	2.4	73.1
	Բերք, կգ	4,750	3,880	6,413	3,900	20,350	8,960	48,253

Այս դեպքում ևս կիրառվել է որոշ ցուցանիշների ընդհանրացում և մոտավորեցում: Տարբերություններն այս անգամ պայմանավորված են այգիների ընդհանուր մակերեսների և դրանցում արտադրական տարիքի այգիների (այսինքն՝ բերքատու) անհամապատասխանությամբ՝ չնայած ոչ մեծ:

Այգետարածքների որոշակի կենտրոնացում է նկատվում Վարդանիձոր և Գեղանուշ համայնքներում՝ չնայած դրանց մի մասը վերջերս տնկված երիտասարդ և ոչ բերքատու այգիներ են: Ընդհանուր առմամբ՝ այգետարածքների ընդամենը 77 %-ն են բերքատու, ինչը սակայն նշանակում է այգիներ հիմնելու միտում է արձանագրվել վերջին մի քանի տարիներում: Այսինքն՝ ֆերմերները այգեգործությունը դիտարկում են որպես խոստումնալից և եկամտաբեր գործունեություն:

Հետազոտված համայնքներում *հնդավոր* մրգերը ներկայացված են խնձորով, տանձով և որակի քանակությամբ սերկեվիլով: Այս մրգերն աճեցվում են ինչպես կենսապահովման, այնպես էլ առևտրային նպատակներով: Իրավիճակը գրեթե նույնն է նաև կորիզապտուղների պարագայում: Կորիզապտուղներից ներկայացված են կեռասը, սալորը, հոնը, ինչպես նաև որոշակի քանակներով ծիրանը և դեղձը:

Ընկույզի մշակությունը մեծ պոտենցիալ ունի հետազոտված համայնքներում: Առաջատարներն են Գեղանուշը, Շիկահողը և Վարդանիձորը: Կրկին նկատվում է նոր այգիների հիմնման միտում: Չնայած հայկական ընկույզը մրցունակ չի համարվում արտերկրում, այն մեծապես պահանջված է ներքին շուկայում: Ամեն տարի Ամանորի տոնակատարության շեմին հսկայական քանակությամբ ընկույզ է իրացվում՝ առաջացնելով իրացումների ծավալների բազմապատիկ աճ և գների թանկացում: Ընկույզի մշակությունը կարող է դիտարկվել որպես լուրջ պոտենցիալ ունեցող գյուղատնտեսական գործունեություն:

Մերձարևադարձային պտուղների մշակության ծավալները մեծ չեն, քանի որ համայնքների մեծ մասը բարձրադիր են: Լավագույն պայմաններն այս պտղատեսակների՝ հատկապես արքայանարինջի և նռան աճեցման համար ունեն Ներքին Հանդեսի Վարդանիձորը: Այս երկու մրգատեսակները խիստ պահանջված են և վաճառվում են բավականին բարձր գներով: Այս կուլտուրաների աճեցումը նշված համայնքներում՝ առկա պահանջարկի և իրացման լուրջ խնդիրների բացակայությամբ պայմանավորված, կարող է համարվել զարգացման լրջագույն պոտենցիալ ունեցող գյուղատնտեսական գործունեություն:

Հատապտուղների արտադրության ծավալները վերաբերվում են միայն թթին: Այն հիմնականում աճեցվում է տնամերձ հողամասերում և օգտագործվում է կենսապահովման, ինչպես նաև թթի օդու արտադրության նպատակներով: Թթի օդին Հայաստանում համարվում է բարձրարժեք արտադրանք և բարձր որակի պարագայում մեծապես պահանջված է: Իրականում օդու արտադրությունը թթի օգտագործման լավագույն եղանակն է, քանի որ այս հատապտղի պիտանիության ժամկետը շատ կարճ է՝ ընդամենը մի քանի ժամ: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ հատապտուղների ցանկը սխալ է սահմանափակել բացառապես թթով: Այլ տեսակների զգալի քանակություններ հավաքվում են անտառային հատվածներում ինչպես կենսապահովման, այնպես էլ առևտրային նպատակներով: Յավոք վայրի հավաքվող հատապտուղների ծավալների վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ չկան և նույնիսկ մոտավորապես գնահատում հնարավոր չէ իրականացնել՝ չնայած այս հատապտուղները որոշ ընտանիքների համար եկամուտների զգալի մասնաբաժին են ապահովում:

Անասնապահություն

Հետազոտված համայնքներում բնակչության հետազոտության արդյունքում կարելի է եզրակացնել, որ հիմնականում կենսապահովման բնույթ ունեցող գյուղատնտեսական գործողությունները հանդիսանում են տեղական ՏՏ-ների եկամուտների հիմնական աղբյուրը: Բացառություն է հանդիսանում թերևս միայն Լեռնաձոր համայնքը, որտեղ բնակչության մի ստվար մասն աշխատում է լեռնահանքային արդյունաբերության մեջ: Անասնապահությունը հիշատակված գյուղատնտեսական գործունեության կարևոր բաղադրիչներից է: Անասնապահության զարգացման կարևորագույն նախապայմանը անասնազվաքանակի առկայությունն է, որը հետազոտված համայնքների մասով ներկայացված է Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10 - Անասնազվաքանակը, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ

Կենդանիներ	Վարդանի ձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնա-ձոր	Գեղա-նուշ	Ճակա-տեն	Ընդա-մենը
ԽՆԱ, այդ թվում՝	142	177	64	123	103	425	287	215	1,536
Կով	47	89	32	59	55	234	124	87	727

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

Արտադրող ցուլ	6	6	2	16	12	19	5	2	68
Երինջ, 1-2 տարեկան	25	60	5	28	25	110	20	69	342
Երինջ, 2 տար. բարձր	1	22	4	20	20	62	7	35	171
Այլ (հորթեր)	20	0	1	0	0	0	0	11	32
Խոզ, այդ թվում՝	31	0	16	31	15	35	58	22	208
Մայր խոզ	6	0	2	23	6	6	10	4	57
Շրիշակ՝ 4-12 ամսական	24	0	5	8	9	29	48	18	141
Ոչխար, այդ թվում՝	418	257	58	201	115	915	75	0	2,039
Մաքի	337	227	43	166	80	590	51	0	1,494
Գառ	30	30	15	35	35	325	24	0	494
Այծ, այդ թվում՝	68	110	37	96	57	105	30	0	503
Մար այծ	61	110	29	88	20	70	20	0	398
Այլ	9	9	2	2	2	17	38	6	85
Ձի	4	5	0	9	0	28	12	8	66
Ջորի	0	0	0	0	0	0	3	0	3
Ճագար	0	0	0	50	4	0	0	0	54
Մեղվաբնուսանիք	209	573	70	211	216	889	236	179	2,583
Թռչուն, այդ թվում՝	465	561	262	383	357	1,302	456	685	4,471
Հավեր և աքլորներ, ա.թ.	465	561	262	358	357	1,302	456	685	4,446
<i>Արտադրող հավեր</i>	<i>453</i>	<i>557</i>	<i>199</i>	<i>326</i>	<i>257</i>	<i>1,138</i>	<i>250</i>	<i>570</i>	<i>3,750</i>

Մինչև հետազոտված համայնքներում անասնապահության վիճակը քննարկելը անհրաժեշտ է կրկին անդրադառնալ անասնազրկաքանակի վերաբերյալ տվյալների որակին: Տեղեկությունները հավաքվել են համայնքապետարաններից և համեմատվել են վիճակագրական տվյալների հետ: Ընդհանուր առմամբ դրանք համընկնում են, բայց որոշ հարցեր պետք է նկատի ունենալ: Բազմաթիվ ՏՏ-ներ մասնակցում են աղբատների միտված և պետության կողմից ֆինանսավորվող սոցիալական աջակցության ծրագրերի: Նույնիսկ 1 կենդանի ունենալը այդ տնտեսություններին կարող է դուրս մղել այդ ծրագրերից, և ՏՏ-ները երբեմն գերադասում են չգրանցել իրենց անասունները: Այլ կերպ ասած՝ ներկայացված թվերը կարող են դիտարկվել որպես նվազագույն գլխաքանակ, իսկ իրականում գլխաքանակը կարող է մի փոքր ավելի շատ լինել:

Անասնապահության ծավալներով ակնհայտ առաջատարը Լեռնաձոր համայնքն է, ինչը կարող է պայմանավորված լինել համայնքի համեմատաբար մեծ ծավալներով: Գրեթե բոլոր կենդանիների մասով անասնազրկաքանակն այս համայնքում ամենամեծն է: Չնայած դրան՝ մեկ ՏՏ հաշվով անասնազրկաքանակի մեծության տեսանկյունից այս համայնքն առաջատար դիրքեր չունի: Այս տեսանկյունից ԽԵԱ գլխաքանակով առաջատարը Գեղանուշն ու Ճակատեն համայնքներն են: Դրա պատճառը կարող է լինել այս համայնքների ավելի մոտ տեղակայվածությունը իրացման շուկային՝ Կապանին: Ընդհանուր առմամբ ԽԵԱ գլխաքանակում կովերը կազմում են մոտ 50%:

Խոզաբուծությունը հետազոտված համայնքներում շատ զարգացած չէ, ինչը հաստատվում է խոզերի փոքր գլխաքանակով: Միննույն ժամանակ, այս իրավիճակը կարող է պայմանավորված լինել վերջին ժամանակահատվածում այս կենդանիների հիվանդությունների տարածմամբ և գլխաքանակի կտրուկ նվազմամբ: Զուգահեռաբար, բացառված չէ նաև գլխաքանակի վերաբերյալ ոչ ամբողջական տվյալների հաղորդումը համայնքների ներկայացուցիչների կողմից: Ոչխարաբուծությունն ավելի զարգացած է, և ամենամեծ գլխաքանակը կրկին Լեռնաձոր

համայնքում է: Մեկ SS հաշվով ամենամեծ միջին գլխաքանակը Ներքին Հանդում է արձանագրվել: Ոչխարաբուծության հիմնական արդյունքները բուրդը և գառներն են հանդիսանում: Ոչխարի կաթի արտադրության ծավալները բավականին փոքր են և առևտրային նշանակություն ունեն միայն Վարդանիձորում: Այծաբուծության ծավալները բավականին փոքր են և կրկին կենտրոնացած են Վարդանիձորում: Մյուս համայնքները տեղեկացրել են, որ այծաբուծության արտադրանքը (հիմնականում կաթը) սպառվում է SS-ների ներսում:

Զարգացման լուրջ պոտենցիալ և մեծ տարածում ունեցող գյուղատնտեսական գործունեության հաջորդ տեսակը մեղվապահությունն է: Հետազոտված համայնքներում մեղվաբնտանիքների քանակը բավականին մեծ է մյուս անասունների գլխաքանակի համեմատությամբ: Մեղրը Հայաստանում (մասնավորապես Սյունիքում) յուրօրինակ ապրանք է համարվում, որն անմնացորդ վաճառվում է բավականին մեծ քանակությամբ և առանց մեծ ջանքերի: Հարավային Սյունիքում հաջող գործունեություն է իրականացնում մեղվաբույծների միությունը, որը մեծապես նպաստում է մեղվաբուծության զարգացմանը մարզում:

Աղյուսակ 11- Անասնապահական արտադրանքը, 2010 թ.

Արտադրանք	Միավոր	Վարդանի ձոր	Ծավ	Սրաշեն	Շիկահող	Ներքին Հանդ	Լեռնա- ձոր	Գեղա- նուշ	Ճակա- տեն	Ընդամեն ը
Կովի կաթ	լիտր	100,000	200,000	30,000	120,000	4,800	280,000	120,000	34,000	888,800
Ոչխարի կաթ	լիտր	91,000	0	0	0	0	0	0	0	91,000
Այծի կաթ	լիտր	22,000	0	0	0	0	0	0	0	22,000
Տավարի միս	կգ	3,000	5,000	1,100	4,000	6,400	10,000	15,000	6,000	50,500
Խոզի միս	կգ	960	0	0	0	0	1,000	1,000	1,000	3,960
Ոչխարի միս	կգ	180	3,000	600	1,000	500	22,000	240	0	27,520
Այծի միս	կգ	180	250	500	400	100	400	100	0	1,930
Հավի միս	կգ	300	150	100	200	120	600	100	150	1,720
Զոր	հատ	45,300	38,000	13,000	45,000	3,500	125,000	25,000	3,000	297,800
Մեղր	կգ	1,500	7,000	420	1,000	3,000	8,000	700	800	22,420

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ համայնքները անասնապահական արտադրանքի վերաբերյալ վիճակագրություն հիմնականում չեն հավաքում: Պաշտոնական վիճակագրությունը սովորաբար որդեգրում է հետևյալ մոտեցումը. կենդանիների գլխաքանակը բազմապատկվում է տվյալ տարածաշրջանի համար արտադրողականության միջին ցուցանիշներով: Սա շատ կոպիտ մոտեցում է և չի արտացոլում իրականությունը: Որոշում է ընդունվել հիմնվել համայնքներից ստացված գնահատականների վրա ինչպես արտադրանքի քանակի, այնպես էլ դրա առևտրայինության մակարդակների պարագայում:

Հետազոտված համայնքներում կովի կաթի արտադրության ծավալները գնահատվում են 900 տոննայի սահմաններում, ինչն այնքան էլ բարձր ցուցանիշ չէ: Համեմատության համար նշենք, որ տարբեր կոռպերատիվների կողմից հիմնվող կաթի մթերման կետերի նվազագույն հզորությունը հենց այսքան է: Հետազոտված համայնքներում հիմնվել են կաթի մթերման և վերամշակման մի քանի միավորներ, որոնք սակայն ներկա պահին դադարեցրել են իրենց գործունեությունը: Կաթի առևտրայինության առումով որևէ ընդհանրական միտում չի արձանագրվել. համայնքից համայնք այն տատանվում է 20%-70%-ի սահմաններում: Սովորաբար SS-ներն արտադրված կաթը վերամշակում են պանրի, մածունի, թթվասերի և իրացնում քաղաքային համայնքներում այցելելով քաղաքների գրեթե բոլոր բնակելի շենքերը: Որոշ տնտեսություններ նույնիսկ պատվերների հստակ և անխափան աշխատող համակարգ են ձևավորել: Արդեն նշվել է, որ ոչխարի և այծի կաթի

առևտրային արտադրություն արձանագրվել է միայն Վարդանիձորում և առևտրայնության գործակիցը կազմել է 50%:

Մսի առևտրայնության մակարդակը տատանվում է 80%-90%-ի սահմաններում: Բոլոր տեսակների մսի իրացումների ամենամեծ ծավալներն արձանագրվում են բացօթյա միջոցառումների մասսայական իրականացման (հիմնականում ամռանը) և Ամանորի տոների սեզոններին: Հավի մսի սպառման ծավալները քիչ թե շատ կայուն են ամբողջ տարվա ընթացքում: Մսի արտադրության ծավալներով առաջատարներ են Ծավ, Լեռնաձոր և Գեղանուշ համայնքները:

Վերջին գյուղատնտեսական արտադրանքը, որին ցանկանում ենք անդրադառնալ, մեղրն է: Առևտրայնության մակարդակը տատանվում է 50%-80%-ի սահմաններում, ինչը բավականին բարձր ցուցանիշ է: Իրականում զգալի քանակությամբ մեղր գնելը հնարավոր չէ հետազոտված համայնքներում սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից հետո: Հետազոտական թիմի կողմից փորձական գնում իրականացնելու փորձերը Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ համայնքներում պսակվեցին գրեթե ամբողջական անհաջողությամբ. 3,000 դրամ/կգ գնով հնարավոր եղավ երեք համայնքներում գնել երեք կգ մեղր: Մեղրի գները Հայաստանում անհիմն բարձր են, սակայն այս ապրանքի պահանջարկը միևնույն է շատ մեծ է: Իրացման ուղիները թույլ են զարգացած՝ չկա մակնիշում, փաթեթավորումը թույլ է, համային և որակական վերահսկողություն և փորձարկում չի իրականացվում, փաթեթավորումը սահմանափակվում է ապակյա հասարակ տարաներով: Չնայած այս ամենին՝ այս ապրանքը միևնույն է իրացվում է շատ բարձր գներով: Այսպիսով՝ մեղվապահությունը և մեղրի արտադրությունը հետազոտված համայնքներում զարգացման լուրջ պոտենցիալ ունեն:

Արդեն նշվել է, որ գյուղատնտեսության զարգացումը հանդիսանում է հետազոտված համայնքներում բնակչության եկամուտների բարձրացման հիմնական հնարավորություններից մեկը: Արդեն իսկ կարելի է առանձնացնել գյուղատնտեսական գործունեության որոշ տեսակներ, որոնք ապահովում են բարձրարժեք և առևտրայնության բարձր մակարդակ ունեցող մթերքների արտադրություն: Նման ապրանքների շարքում կարելի է թվարկել կարտոֆիլը, մերձարևադարձային մրգատեսակները, ընկույզը, հատապտուղները, միսը և մեղրը: Համապատասխան մասնագիտական և ֆինանսական աջակցության պարագայում տեղական բնակչությունն ի վիճակի է բազմապատկել գյուղատնտեսական գործունեության ծավալները: Առևտրայնության բարձր մակարդակը այս արտադրանքի իրացման երաշխիք է հանդիսանում, ինչն ուղղակիորեն կնպաստի բնակչության եկամուտների աճին:

Գյուղատնտեսության զարգացումը լուրջ ներդրում կարող է ունենալ նաև տուրիզմի զարգացման տեսանկյունից: Նախ և առաջ, այն թույլ կտա տուրիստներին առաջարկել թարմ և էկոլոգիապես մաքուր սնունդ: Միևնույն ժամանակ գյուղատնտեսության հիմքի վրա կարելի է մշակել հատուկ ագրոտուրիստական ծառայություններ, որոնք ներկայումս բավականին պահանջված են հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկների շրջանում:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինտենսիվ գյուղատնտեսության վարումը որոշակի առումով հակասում է ԲՀՊՏ-ների զարգացման դրույթներին: Սա նշանակում է, որ գործընթացում ներգրավված կառույցները պետք է որոշակի վերահսկողություն իրականացնեն հատկապես հողերի մեխանիզացված մշակման, թունաքիմիկատների և պարարտանյութերի օգտագործման, տնային կենդանիների արածեցման և այլ գործողությունների նկատմամբ:

ԳԼՈՒԽ 5. «ՇԻԿԱՀՈՂ» ԱՐԳԵԼՈՑ ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. «Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման վարչական ծրագիր

«Շիկահող» արգելոցի, «Զանգեզուր» և «Սոսու պուրակ» արգելավայրերի, ինչպես նաև նախատեսվող «Խուստուփ» արգելավայրի կառավարումը անհրաժեշտ է իրականացնել «Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կողմից: «Շիկահող» ՊՈԱԿ-ի կառավարումը իրականացվում է «Շիկահող» ՊՈԱԿ-ի տնօրինության և կառավարման խորհրդի կողմից, որի մեջ լիարժեք ներկայացված կլինի «Շիկահող» ՊՈԱԿ-ի կարևոր շահագրգիռ կողմը՝ պահպանման գոտու համայնքները: Դա պատշաճ ձևով դիտարկվում է կիրառելի ՊՈԱԿ-ի բոլոր տարածքների համար, բացի արգելոցից:

«Շիկահող» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմի մեջ մտնելու են «Շիկահող» ՊՈԱԿ-ի տնօրենը, «Շիկահող» ՊՈԱԿ-ի երկու փոխտնօրենները, «Զանգեզուր», «Խուստուփ» և «Սոսու պուրակ» արգելավայրերի պետերը, ներկայացուցիչներ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունից, մեկական ներկայացուցիչներ Սյունիքի մարզի մարզպետարանից, տեղական հասարակական կազմակերպությունների ֆորումից և պահպանման գոտու համայնքներից: «Շիկահող» ՊՈԱԿ-ի անձնակազմի, Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության, մարզպետարանի ներկայացուցիչները լինելու են խորհրդի մշտական անդամներ, իսկ մնացած մասնակիցները՝ ընտրովի: Համայնքների ներկայացուցիչները կառաջադրվեն համապատասխան համայնքների կողմից:

«Շիկահող» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի հիմնական պարտականությունները հետևյալն են.

- 1) աջակցել և հետադարձ կապ ապահովել ՊՈԱԿ-ի և պահպանման գոտու համայնքների միջև,
- 2) քննարկել և հնարավորությունների չափով լուծել պահպանման գոտում և ՊՈԱԿ-ի պահպանման գոտում առկա խնդիրները
- 3) քննարկել պահպանման գոտու զարգացման առկա և հեռանկարային պլանները և աշխատանքները,
- 4) որոշել «Շիկահող» ՊՈԱԿ-ի և հասարակական կազմակերպությունների միջև պոտենցիալ համագործակցության ոլորտները

Նախագահը խորհրդին նախապես հայտնում է խորհրդի անդամների վերընտրման օրվա մասին: Նախագահի պարտականությունները իրենց մեջ ներառում են.

- 1) խորհրդի ամենամյա նիստերի կազմակերպումն ու անցկացումը
- 2) նիստերի օրակարգի մշակումը, պատրաստումն և բաժանումը խորհրդի անդամների մեջ նիստի օրվանից մեկ շաբաթ առաջ
- 3) խորհրդի նիստերի ղեկավարումը

Զնախատեսված իրավիճակների դեպքում նախագահը կամ նրա ներկայացուցիչը կարող են կազմակերպել լրացուցիչ նիստեր:

Պահպանման գոտու ներկայացուցիչների կամ «Շիկահող» ՊՈԱԿ-ի այլ շահագրգիռ կողմերի բոլոր բողոքները պահանջում են խնդրի գրավոր նկարագրությունն ու ներկայացումը կառավարման խորհրդի նիստի ժամանակ: Խորհուրդը վերջնական պատասխանատվություն է կրում տարաձայնությունների կարգավորման համար և կարող է օգնություն խնդրել Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարությունից:

Նիստերին իրար ետևից 3 անգամ բացակայելու դեպքում խորհրդի ընտրված անդամները մեխանիկորեն հեռացվելու են: Ցանկացած այլ դեպքերում (օրինակ՝ անվայել պահվածք) խորհուրդը կարող է բարձրացնել հեռացման հարցը ընդհանուր քվեարկությամբ և որոշումը կայացնել ձայների մեծամասնությամբ: Եթե «Շիկահող» ՊՈԱԿ-ի տնօրենը չի կատարում իր պարտականությունները, խորհուրդը դրա մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարությանը:

«Շիկահող» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը պահպանում է կապը «Արևիկ» ազգային պարկի և նրա կառավարման խորհուրդի հետ:

«Շիկահող» ՊՈԱԿ-ը գլխավորում է տնօրենը, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության կողմից, մրցույթի արդյունքների հիման վրա:

Վարչական ծրագիրը գտնվում է տնօրենի ենթակայության տակ: Պահպանության ծրագիրը գտնվում է պահպանության գծով փոխտնօրենի ենթակայության տակ: Գիտություն և մոնիթորինգի բաժինը գտնվում է գիտական գծով փոխտնօրենի ենթակայության տակ: Տուրիզմ/Էկոլոգիական իրազեկություն, հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվում է բաժնի վարիչի կողմից: Արգելավայրերի ռեսուրսների օգտագործման ծրագրերը գտնվում են մարկետինգի ծրագրի/բաժնի ղեկավարի ենթակայության տակ: Այսպիսով, «Շիկահող» ՊՈԱԿ-ի անձնակազմի մեջ մտնում են 5 ծրագիր/բաժին:

Տնօրենի անմիջական ենթակայության տակ գտնվում են՝ փոխտնօրենները, հաշվապահը, գանձապահը, կադրերի պատասխանատուն, ինժեներ մեխանիկը, պահեստապետ-պարետը:

Պահպանության ծրագրի ղեկավարը պատասխանատու է «Շիկահող» ՊՈԱԿ-ի բոլոր տեղամասերի և արգելավայրերի պետերի, տեսուչների գործունեությունը համակարգելու համար:

«Շիկահող» ՊՈԱԿ-ի տնօրինությունը աշխատելու է «Շիկահող» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի և Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության ենթակայության տակ: Այն պատասխանատու է լինելու ենթակայության տակ գտնվող պահպանվող տարածքներում անցկացվող ամենօրյա աշխատանքների համար և ընդհանուր բնապահպանական և կառավարման գործունեության համար՝ ըստ կառավարման պլանի, բիզնես պլանի և տարեկան աշխատանքային պլանների: Առավել մանրամասն, «Շիկահող» ՊՈԱԿ-ի տնօրենի գործառույթները հետևյալն են.

- 1) մշակել տարեկան աշխատանքային պլաններ և բյուջեներ՝ ամեն կառավարման ծրագրի համար, ներկայացնել կառավարման խորհուրդ և ՀՀ Բնապահպանության նախարարություն հաստատման,
- 2) պատասխանատվություն կրել աշխատանքային պլանի, ծրագրային աշխատանքների, դրանց կանոնավոր համապատասխանեցման և ազդեցության մոնիթորինգի իրականացման համար,
- 3) «Շիկահող» ՊՈԱԿ-ի կողմից վաստակած բոլոր եկամուտները պահել «Շիկահող» ՊՈԱԿ-ի ֆոնդում և օգտագործել արգելոցի և արգելավայրերի կանոնադրական խնդիրները լուծելու համար:

5.1.2. «Շիկահող» ՊՈԱԿ-ի անձնակազմի որակավորման բարձրացում

Հայտնի է, որ անձնակազմի շահագրգռվածության հիմնական տարրերն են համարվում.

- ա) յուրաքանչյուր պաշտոնի համար պարտականությունների և աշխատանքի հստակ ներկայացում,
- բ) մասնագիտական աճի հնարավորություն,
- գ) աշխատավարձի գրավիչ չափ և ֆինանսական խթանման մեխանիզմներ:

«Շիկահող» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների մեջ է մտնում անձնակազմի հետ միասին հստակ աշխատանքային գործառույթների մշակումն և մասնագիտական աճի հնարավորության քննարկումը: Պետք է մշակվի աշխատակիցների արդյունավետ աշխատանքի հիման վրա խրախուսման համակարգ, որը աշխատելու է այնքան ժամանակ, մինչև աշխատավարձերը պաշտոնապես չդառնան բավականաչափ բարձր:

Որպես մասնագիտական աճի մի մաս յուրաքանչյուր աշխատակցին որակավորման բարձրացման հնարավորություն է տրվում: Նախապատվությունը տրվելու է աշխատատեղում իրականացվող դասընթացներին: Այն առանձին հիմնությունները, որոնք հնարավոր չի լինի տեղում սովորել, ձեռք կբերվեն ուսուցման տեսքով «Շիկահող» ՊՈԱԿ-ի շրջանակներից դուրս: Աշխատատեղում իրականացվող դասընթացները առաջարկվելու են «Շիկահող» ՊՈԱԿ-ի

անձնակազմի բոլոր անդամներին: Ավագ անձնակազմը հնարավորություն կունենա պարբերաբար մասնակցելու սեմինարների՝ կարիերայի աճի և աշխատանքի որակը բարձրացնելու նպատակով: Ուսուցման ծրագիրը կազմակերպվելու է ֆինանսական միջոցների մատչելիությունից ելնելով: Նման ուսուցման արդյունավետությունը ամեն տարի ենթարկվելու է մոնիթորինգի և գնահատմանը: «Շիկահող» ՊՈԱԿ-ի տնօրենի և ավագ անձնակազմի պարտականությունների մեջ մտնում է նաև ամենամյա ուսուցման դասընթացներին «Շիկահող» ՊՈԱԿ-ի ողջ անձնակազմի գրանցումը: Նման ուսուցման բյուջեն մտնելու է պարկի տարեկան բյուջեի մեջ: Ուսուցման կուրսերի գրանցումը պետք է հաստատվի «Շիկահող» ՊՈԱԿ-ի կառավարման խարհրդի կողմից: Արգելոցի և արգելավայրերի տեսուչները անցնելու են բազային 14 օրվա ուսուցողական դասընթացներ՝ Շիկահողի ՊՈԱԿ-ի գլխավոր տեսուչի ղեկավարությամբ:

5.1.3. Վարչական ծրագրով նախատեսվող ենթակառուցվածք

«Շիկահող» ՊՈԱԿ-ի ենթակառուցվածքին վերաբերվող ընդհանուր մարտավարությունն ու ուղեցույցն հետևյալն են.

- 1) «Շիկահող» ՊՈԱԿ-ի կառույցների (շենք/շինություններ), տեղեկատվական վահանակների, սահմանակետերի նշանաձողերի, մուտքի դարպասների և այլ ենթակառուցվածքների տեսքը պետք է համահունչ լինի շրջակա միջավայրի հետ,
- 2) կառույցները պետք է լինեն գործնական տեսանկյունից հարմար և գեղագիտական տեսանկյունից հաճելի,
- 3) տեղեկատվական վահանակներն և ճանապարհային ցուցանակները պետք է ունենան հստակ բովանդակություն՝ «Շիկահող» ՊՈԱԿ-ի տարբերանշանով և պատրաստած լինեն ամուր նյութերից՝ սպասարկման ծախսերը նվազեցնելու համար,
- 4) շինարարության համար հնարավորության սահմաններում պետք է օգտագործվեն տեղական հումքը և աշխատուժը,
- 5) բոլոր կառույցները պետք է լինեն ամուր և երկրաշարժերին դիմացկուն /սեյսմոկայուն/:

5.1.4. «Շիկահող» ՊՈԱԿ-ի վարչական շենք, այցելուների կենտրոն, ավտոտնակներ և առանձին տեղամասեր տանող ճանապարհներ

«Շիկահող» ՊՈԱԿ-ի վարչական շենքը գտնվում է Շիկահող գյուղում, որը վերանորոգվել էր պետական և Բնության համաշխարհային հիմնադրամի բյուջեի միջոցներով 2007-2008թթ.: Վարչական շենքում գտնվում է ՊՈԱԿ-ի վարչական, պահպանության, գիտության և մոնիթորինգի, այցելուների կառավարման բաժինները: Շենքում ստեղծված են պայմաններ այցելուների ու ռիզորգի զիջերակացի համար: Շենքում կազմակերպված է հանդիպումների համար նախատեսված սենյակ, ինչպես նաև խոհանոց, ճաշարան և լոգարան: Առանձնացված սենյակում նախատեսվում է ստեղծել նաև բնության թանգարան:

Ավտոտնակները գտնվում են վարչական շենքի առաջին հարկում:

«Զանգեզուր» արգելավայրի գրասենյակը գտնվում է Կապան քաղաքում և բաղկացած է 3 սենյակներից: Արգելավայրի գրասենյակը ստեղծվել էր 2009 թ. CEPF-ի և Բնության համաշխարհային հիմնադրամի ծրագրերի շրջանակներում:

«Շիկահող» ՊՈԱԿ-ը չունի այցելուների կենտրոն, որի ստեղծումը կխթանի տուրիզմի զարգացումը արգելոցի և արգելավայրերի տարածքներում, ինչպես նաև պահպանման գոտու համայնքներում, ստեղծելով այնտեղ այլընտրանքային եկամուտի աղբյուրներ:

Անհրաժեշտ է ստեղծել նաև տեղամասային գրասենյակներ, «Զանգեզուր» արգելավայրի Տաթևի ու Սիսիանի տեղամասերում, ինչպես նաև «Խուստուլի» և «Սոսու պուրակ» արգելավայրերի համար: Արգելոցի պահպանության նպատակներով օգտագործվող ներքին դաշտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 80 կմ: Ծավ և Ներքին Հանդ գյուղերից անտառային գոտով անցնող, յուրաքանչյուրը շուրջ 10 կմ երկարությամբ դաշտային

ճանապարհները երթևեկելի են, սակայն ճանապարհները դժվարանցանելի են գարնանը և վատ եղանակային պայմաններում: Մթնածորի տեղամասում կա նաև դեպի մերձալպյան գոտի տանող դժվարանցանելի արահետ, որի երկարությունը կազմում է շուրջ 8 կմ: Այն օգտագործվում է շատ հազվադեպ, արգելոցի աշխատակիցների կողմից: Տրանսպորտային միջոցների երթևեկության համար պիտանի դաշտային ճանապարհներ կան նաև Շիկահողի տեղամասում, որոնք նույնպես բարեկարգված չեն և դժվարանցանելի են վատ եղանակային պայմաններում:

«Զանգեզուր» արգելավայր տանող ճանապարհները մի քանիսն են և հիմնականում համընկնում են միջհամայնքային ճանապարհներին: Արգելավայրի Քաջարանի տեղամաս տանող ճանապարհ ընկած է Քաջարան գյուղի միջով, Գեղի տեղամաս՝ Գեղի և Նոր Աստղաբերդ ճանապարհին, Տաթևի տեղամաս՝ Տաթև գյուղի ճանապարհին, իսկ Սիսիան տեղամաս՝ Շենաթաղ, Բնունիս, Դատակերտ և Նժդեհ համայնքներ տանող ճանապարհին: Տեղամասերի դաշտային ճանապարհները բարեկարգված չեն և դժվարանցանելի են վատ եղանակային պայմաններում և կարիք ունեն ամեն տարի վերանորոգման:

«Խուստուփ» արգելավայր տանող դաշտային ճանապարհը անցնում է Շիշկերտ գյուղի միջով, ընդհանուր երկարությունը «Շիկահող» ՊՈԱԿ-ի վարչական շենքից կազմում է շուրջ 20 կմ: Ճանապարհը դժվարանցանելի է և կարիք ունի տարեկան վերանորոգման:

«Մոսու պուրակ» արգելավայր տանող ճանապարհը նույնն է ինչ Ներքին Հանդ գյուղի ճանապարհը և գտնվում է բարվոք վիճակում, վարչական շենքից մոտ 10 կմ հեռավորության վրա:

Պետական արգելոցի և արգելավայրերի ենթակառուցվածքների վերլուծության ընթացքում վեր են հանվել հետևյալ խնդիրները.

- ճանապարհների, գետային անցումների և արահետների ոչ բարվոք վիճակ,
- տեղամասային գրասենյակների և պահակետերի բացակայություն,
- էկոտուրիզմի կազմակերպման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների համալրումը,
- ժամանակակից կապի և պարեկության միջոցների բարելավումը
- մոնիտորինգի ենթակառուցվածքի /դիտարկման ցանցի/ բացակայություն:

Հաշվի առնելով ճանապարհային ցանցի վերանորոգման ծախսատարությունը, ինչպես նաև արգելոցի և արգելավայրերի բարդ, կտրտված և խիտ անտառներով ծածկված տարածքը, պարեկության և մոնիտորինգի համար կիրառելի կարող են լինել թեթև ավիապարեկային միջոցները՝ արգելոցում միայն ձիեր, իսկ արգելավայրերում նաև կվադրոցիկներ:

5.2. Արգելոցի և արգելավայրերի պահպանության խնդիրները

Համաձայն «Շիկահող» պետական արգելոց պետական ոչ առևտրային կազմակերպության 22-րդ կետի արգելոցի և արգելավայրերի պահպանությունն իրականացվում է կազմակերպության պահպանության ծառայության՝ պահպանության բաժնի և տեղամասային և արգելավայրերի տեսուչների միջոցով: Պահպանության բաժնի ղեկավարն ի պաշտոնե նաև տնօրենի տեղակալն է:

Պահպանության ծառայության աշխատողները՝

ա) ապահովում են արգելոցի և արգելավայրերի կանոնադրություններով սահմանված բնապահպանական նորմերի ու կանոնների կատարումը դրանց տարածքներում.

բ) ստուգում են արգելոցի և արգելավայրերի տարածք մուտք գործող անձանց անցագրերը.

գ) կանխում են արգելոցի և արգելավայրերի ռեժիմները խախտող ցանկացած գործողություն.

դ) կազմում են արգելոցի և արգելավայրերի ռեժիմների խախտումների մասին արձանագրություններ, դրանք ներկայացնում տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ընթացք տալու համար.


ե) իրավախախտողի անձը խախտման վայրում պարզելու անհնարինության դեպքում կարող են նրան բերել մոտակա ներքին գործերի մարմին.

զ) օրենքով սահմանված դեպքերում վերցնում են արգելոցի և արգելավայրերի ռեժիմները խախտող անձանց իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող իրերն ու փաստաթղթերը.

Քարտեզ 6 «Շիկահող» պետական արգելոցի ենթակառուցվածքը

Քարտեզ-սխեմա
«Շիկահող» Պետական արգելոցի
ենթակառուցվածքը

- Պ ա յ մ ա կ ա ն ն շ ա ն ն ե ռ
- ՀՀ պետական սահման
 - «Շիկահող» պետական արգելոցի սահմաններ
 - բնակավայրեր
 - ավտոճանապարհներ
 - գետեր
 - վտակներ
 - «Շիկահող» Պետական արգելոց
 - «Սոսու պուրակ» պետական արգելոց
 - արգելոցի գրասենյակ և հյուրատուն
 - ավտոկայանատեղիներ
 - ցուցավահանակ
 - ուղեփակոցներ



է) ապահովում են արգելոցի և արգելավայրերի պահպանման գոտիների տարածքներում գտնվող ֆիզիկական անձանց ու կազմակերպությունների կողմից արգելոցի և արգելավայրերի կանոնադրություններով սահմանված պահանջների կատարումը:

Պահպանության ծառայության աշխատողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի կրելու համազգեստ և օգտագործելու քաղաքացիական ու ծառայողական զենք:

Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ պահպանության ծառայության աշխատողների առողջությանը և գույքին պատճառած վնասի հատուցումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

Համաձայն ՀՀ ԲՀՊՏ-ների 2006թ. օրենքի Հոդված 29-ի.

1. Պահպանություն իրականացնող աշխատողն իրավունք ունի.

1) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահել, կրել, օգտագործել ծառայողական զենք և զինամթերք, ինքնապաշտպանության միջոցներ՝ արցունքաբեր գազ, զրահաթիկնոց և այլն.

7) անտառահատումները, անասունների արածեցումը, խոտհունձը և բուսական ծածկույթի այլ խախտումներ.

8) թունաքիմիկատների օգտագործումը բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.

9) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը և տարանցիկ տեղափոխումը.

10) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, որոնք առաջացնում են հողային ծածկույթի խախտում.

11) օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների, լցակայանների, պոչամբարների և հանքարդյունաբերության հետ առնչվող ցանկացած այլ օբյեկտների տեղաբաշխումը.

12) ընդհանուր օգտագործման ճանապարհներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կայանելը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.

13) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է բնական համակարգերը և օբյեկտները կամ սպառնում է դրանց պահպանությանը:

2. Արգելոցի տարածքում թույլատրվում է՝

1) բնական էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գիտական ուսումնասիրությունը, հաշվառումը, գույքագրումը, մոնիթորինգը.

2) արգելոցի կառավարման պլանով սահմանված երթուղիներով էկոլոգիական զբոսաշրջության կազմակերպումը.

3) կառավարումն իրականացնող կազմակերպության տրանսպորտային միջոցների օգտագործումը.

4) հրդեհային անվտանգության աշխատանքների իրականացումը.

5) ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական միջոցառումների (դպրոցականների համար բաց դասերի, էքսկուրսիաների, ցուցահանդեսների, բնապահպանական օրերի նշումների կազմակերպում) և ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացումը.

6) իրազեկման նպատակով բնապահպանական միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

Համաձայն ՀՀ ԲՀՊՏ-ների օրենքի Հոդված 26-ի

1. Արգելավայրի տարածքում արգելվում է՝

1) ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.

2) պահպանության ենթակա բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.

3) որսորդությունը, բացառությամբ սիրողական ձկնորսության.

4) բույսերի և կենդանիների օտարածին տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները.

5) անտառահատումները, բացառությամբ սանիտարական և խնամքի հատումների.

6) թունաքիմիկատների օգտագործումը բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.

7) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը.

8) ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում:

9) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները (հողային ծածկույթի խախտումով), օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների, լցակայանների, պոչամբարների և հանքարդյունաբերության հետ առնչվող ցանկացած այլ օբյեկտների տեղաբաշխումը:

10) տնտեսական և բնակելի օբյեկտների, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների շինարարությունն ու շահագործումը:

11) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է բնական համակարգերը և օբյեկտները կամ սպառնում է դրանց պահպանությանը:

2. Արգելավայրի տարածքում թույլատրվում է.

1) բնական էկոհամակարգերի, կենսաբազմազանության, լանդշաֆտների, բնության ժառանգության գիտական ուսումնասիրությունները, հաշվառումը, գույքագրումը, մոնիթորինգը:

2) կառավարման պլանով սահմանված երթուղիներով էկոլոգիական զբոսաշրջության կազմակերպումը, այդ թվում՝ տեղանքին համահունչ հանգստի տաղավարների և դիտակետերի տեղադրումը:

3) էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները կանխարգելող, ինչպես նաև խախտված էկոհամակարգերի վերականգնման, այդ թվում՝ անտառվերականգնման միջոցառումները:

4) պահպանության ենթակա բուսական և կենդանական տեսակների վերարտադրությունը, դրանց պոպուլյացիաների վերականգնմանը նպաստող միջոցառումները:

5) սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության աշխատանքների իրականացումը:

6) ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական և ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացումը:

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված թույլտվության առկայության դեպքում ջրային ռեսուրսների և բուսական պաշարների օգտագործումը:

ԳԼՈՒԽ 6. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

6.1. Գիտական հետազոտություններ

Համաձայն ՀՀ ԲՀՊՏ-ների օրենքի Հոդված 14-ի.

1. Բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվող գիտական ուսումնասիրությունների նպատակն է էկոհամակարգերի ու դրանց բաղադրիչների, այդ թվում՝ բուսական և կենդանական տեսակների և պաշարների պահպանության, պաշտպանության, վերարտադրության միջոցառումների և օգտագործման մեխանիզմների գիտական հիմնավորումը, մասնավորապես՝

1) կենսաբանական բազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակի, բնակության վայրերի, կենդանիների միգրացիայի ուղիների ուսումնասիրումը:

2) կենսաբանական պաշարների օգտագործման ենթակա թույլատրելի չափաքանակների նախադրյալների սահմանումը և դրանց ողջամիտ օգտագործման մեխանիզմների մշակումը:

3) պահպանության տարբեր ռեժիմների պայմաններում բուսական և կենդանական տեսակների էկոլոգիական առանձնահատկությունների բացահայտումը.

4) կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության և վերարտադրության արդյունավետ մեթոդների ու միջոցառումների վերաբերյալ առաջարկների մշակումը.

5) տարածքների գործառնական գոտիավորման վերաբերյալ առաջարկների մշակումը.

6) տարածքի կենսաբանական բազմազանության մասին տվյալների բազայի ստեղծումը:

2. Բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվող գիտական ուսումնասիրությունների թեմատիկ ուղղվածությունները սահմանվում են կառավարման պլանով և իրականացվում են հիմնարար կամ կիրառական ուղղություններով՝ պետական բյուջեի, սույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով և 21-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 8-րդ մասերով նախատեսված միջոցների, համայնքային բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ֆինանսական այլ միջոցների հաշվին:

3. Բնության հատուկ պահպանվող տարածքներում գիտական ուսումնասիրություններ կարող են իրականացվել նաև այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից՝ պայմանագրային հիմունքներով, եթե դրանց իրականացմամբ չեն խախտվի սույն օրենքի կամ տվյալ տարածքի կառավարման պլանի պահանջները:

Համաձայն «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի կանոնադրության 26-րդ կետի՝ կազմակերպության կողմից իրականացվող գիտական հետազոտություններն ուղղվում են արգելոցի և արգելավայրերի տարածքների էկոհամակարգերի ուսումնասիրմանը, գործընթացների և երևույթների դիտանցին, դրանց կանխատեսմանն ու գնահատմանը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանը, էկոլոգիական վիճակի գնահատմանն ու կանխատեսմանը:

Գիտահետազոտական աշխատանքները կազմակերպում է կազմակերպության գիտության բաժինը, որի ղեկավարն ի պաշտոնե նաև տնօրենի տեղակալն է գիտության գծով:

Կազմակերպության գիտության բաժինը՝

ա) կազմակերպում և իրականացնում է արգելոցի և արգելավայրերի էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների ուսումնասիրությունը.

բ) արգելոցի և արգելավայրերի տարածքներում կազմակերպում և իրականացնում է շրջակա միջավայրի դիտանցը.

գ) պատրաստում և հրատարակում է գիտահետազոտական ու գիտաճանաչողական նյութեր:

դ) մշակում և կատարելագործում է բնապահպանական ու բնօգտագործման մեթոդները.

ե) վայրի կենդանիների և բույսերի հազվագյուտ ու անհետացող տեսակների վերարտադրության նպատակով կազմակերպում է փորձարարական և այլ գիտահետազոտական աշխատանքներ:

Վերջին 20-25 տարիների ընթացքում համակողմանի գիտական հետազոտություններ «Շիկահող» պետական արգելոցի տարածքում գրեթե չեն իրականացվել, ինչը հիմնականում պայմանավորված է արգելոցում բարձր որակավորում ունեցող կադրերի բացակայությամբ: «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի 2012թ. հաստիքային ցուցակով նախատեսված 38 հաստիքներից գիտական բաժնում գոյություն ունի 4 հաստիք՝ գիտության բաժնի պետ և 3 գիտաշխատող:

Գիտական ուսումնասիրությունները, հաշվառումը, գույքագրումը և մոնիթորինգը համակարգված բնույթ չեն կրում:

Արգելավայրերի տարածքում բուսակենդանական աշխարհի գիտական ուսումնասիրությունները չեն կրում համակարգված և համապարփակ բնույթ: 2010 թվականից հիմնական ուսումնասիրությունները իրականացվում են կովկասյան ընձայռուծի, բեզոարյան այծի և հայկական մուֆլոնի արեալի ճշգրտման և կերային բազայի գնահատման նպատակով:

Արգելոցում գիտահետազոտական աշխատանքները 2002-2012 թթ.-ի ընթացքում իրականացվել են ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և բուսաբանության ինստիտուտների հետ համատեղ և Բնության համաշխարհային հիմնադրամի ծրագրերի շրջանակներում՝ արգելոցի գիտական բաժնի կենդանաբանի և բուսաբանի միջոցով, պետարգելոցի ղեկավարության և պահպանության բաժնի աշխատակիցների աջակցությամբ ու անմիջական մասնակցությամբ:

Կատարվել են մի շարք հետազոտություններ, այդ թվում՝ շարունակվել են միջատների մի շարք խմբերի (բզեզների և թիթեռների որոշ ընտանիքներ) գույքագրման աշխատանքները: Արգելոցի և արգելավայրերի տարածքում կատարվել են ողնաշարավոր կենդանիների (սողուններ, սմբակավորներ և գիշատիչ կաթնասուններ) գույքագրման, հաշվառման և էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրման աշխատանքներ:

«Առաջավորասիական հովազի ուսումնասիրությունը» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում էր «Անհետացող տեսակների ազգային հիմնադրամի» (Անգլիա) կողմից 2005թ. մայիս և նոյեմբեր ամիսներին պետարգելոցի ջրբաժանը հանդիսացող Մեղրու լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջերին Երիտասարդական էկոլոգիական խմբի կողմից իրականացվել են մոնիթորինգային հետազոտություններ: Հովազի ներկայության նշանների (արգասիքները, հետքերը, քերուքները) հայտնաբերման բոլոր վայրերի աշխարհագրական կորդինատները և ծովի մակերևույթից բարձրությունը սահմանված կարգով գրանցվել են GPS սարքի միջոցով: Հետազոտում այդ տեղեկությունները անց են կացվել հետազոտվող տարածքի համակարգչային ԳԻՍ քարտեզների վրա և վերլուծության են ենթարկվել: Հաջողվել է ֆոտոթոնիչ սարքի միջոցով նկարահանել առաջավորասիական հովազ, բեզուարյան այծ, գայլ, գորշ արջ, հնդկական մացառախոզ, անտառային կատու և այլ կենդանիներ:

Ստացված տվյալների հիման վրա հովազը բնակվում է արգելոցի արևելքում, որի նպաստավոր բիոտոպները սահմանակից են Ադրբեջանի սահմանին: Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) Կովկասի տարածաշրջանում իրականացվող «Հովազի պահպանություն» ծրագրի շրջանակներում 2003թ.-ից իրականացվում է նաև առաջավորասիական հովազի, բեզուարյան այծի և հայկական մուֆլոնի մոնիթորինգ՝ արգելոցում և արգելավայրում դրանց պոպուլյացիաների վիճակի գնահատման նպատակով: Այդ կազմակերպության կողմից ֆինանսավորվում է նաև հակաորսագողության դեմ ստեղծված խմբի աշխատանքները, որում ընդգրկված են Բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի, «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի աշխատակիցները:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտը, ԱՄՆ-ի Սենթ Լուիսի կենդանաբանական այգու և Ռուսաստանի Դաշնության ԳԱ կենդանաբանության ինստիտուտի հետ կնքած պայմանագրի շրջանակներում 2004թ.-ից սողունաբանական հետազոտություններ են իրականացվում Հայաստանում: Այդ հետազոտությունների շրջանակներում 2005-2011թ. ընթացքում այցելություններ են կատարվել արգելոցի տարածք, որի արդյունքում ճշգրտվել են արգելոցում հանդիպող սողունների տեսակային կազմի ցանկը, որոշ տեսակների արեալները, իրականացվել են էկոլոգիայի որոշ հարցերի ուսումնասիրություններ: 2200-2300 մ ծ.մ. բարձրության վրա հայտնաբերվել են հայկական իժի, գյուրգայի և մի քանի այլ սողունների տեսակների սիմպատրիկ պոպուլյացիաներ: 2008 թվականից սկսվել են հայկական իժի տեղաշարժման և տեղաբաշխման ուսումնասիրությունները ռադիոտեղեկատվական մեթոդների օգնությամբ:

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել «Շիկահող» պետարգելոցի և արգելավայրերի սողունների

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ 2003-2011թթ. պետարգելոցում և արգելավայրերում շարունակվել են գիտական հետազոտությունները, չնայած այն հանգամանքին, որ գիտական բաժինը բարձր որակավորում ունեցող գիտաշխատողների կարիք ունի: ՀՀ ԳԱԱ համապատասխան ինստիտուտների մասնագետների օգնությամբ նախատեսվում է շարունակել մի շարք խոշոր ողնաշարավոր կենդանիների և բուսական ռեսուրսների գույքագրման և հաշվառման աշխատանքները: Որոշ աշխատանքներ են կատարվում պետարգելոցի ֆլորայի տեսակային կազմի դասակարգման ուղղությամբ:

Չնայած վերը նշված աշխատանքների իրականացմանը, ՊՈԱԿ-ի գիտական աշխատանքների վերլուծության ընթացքում վեր են հանվել հետևյալ խնդիրները.

- Կենսաբազմազանության վերաբերյալ գիտական նորացված տեղեկատվության բացակայություն,
- Չհամակարգված գիտական գործունեություն,
- Մասնագիտական թույլ կարողություններ,
- Ուսումնական ծրագրերի, կադրերի ուսուցման և վերապատրաստման հնարավորությունների բացակայություն,
- Ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական և ուսումնաարտադրական պրակտիկաների բացակայություն,
- Միջազգային համագործակցության և փորձի փոխանակման անբավարարություն:

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքի մասին» ՀՀ օրենքի (հոդված 13) Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքների ուսումնասիրությունն իրականացվում է պետական և (կամ) համայնքային բյուջեի, ինչպես նաև տեղական ու միջազգային դոնոր կազմակերպությունների և օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին:

Գիտահետազոտական աշխատանքները ԲՀՊՏ-ում հանդիսանում են դրանց գործունեության անհրաժեշտ բաղադրիչ, որոնք ապահովում են այդ տարածքներում իրենց հիմնական գործառնությունների՝ կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության և պատմամշակութային ժառանգության պահպանության արդյունավետ իրականացումը:

Ըստ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի, ԲՀՊՏ-ում գիտական ուսումնասիրությունները պետք է նպաստեն՝

- Էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պետական հաշվառման իրականացմանը, համակարգված տեղեկատվական բազայի ստեղծմանը և պետական կադաստրի վարմանը.
- Էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության և օգտագործման ձևերի ու մեթոդների մշակմանը.
- Էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների մոնիթորինգի չափորոշիչների մշակմանը.
- Բնության հատուկ պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման պլանավորմանը:

Գիտահետազոտական աշխատանքների /ԳՀԱ/ ընթացքում ստացված տեղեկատվությունը կիրառվում է բնապահպանական միջոցառումների պլանավորման, այդ թվում էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության ու վերականգնման, և դրանց արդյունավետության գնահատման համար, պահպանվող համակարգերի և օբյեկտների վիճակի գնահատման և կանխատեսման, էկոլոգիական մոնիթորինգի իրականացման, էկոլոգիական հարցերի լուսաբանման, տուրիզմի և ռեկրեացիայի, ինչպես նաև ՊՏ-ում ու դրանց պահպանման գոտիներում իրականացվող տնտեսական գործունեության ազդեցության գնահատման համար:

ԲՀՊՏ-ում ԳՀԱ իրականացման համար հիմք պետք է հանդիսանա տվյալ պահպանվող տարածքի առկա խնդիրների առաջնահերթումը, որը պետք է կատարվի հաշվի առնելով ԲՀՊՏ-ի բնական յուրահատկությունները և իրական պահանջները, ինչպես նաև պետական իշխանության և կառավարումը իրականացնող մարմինների պահանջները: ԲՀՊՏ-ի գիտահետազոտական գործունեությունը պետք է ընթանա երեք հիմնական ուղղություններով՝ բուսակենդանական

աշխարհի գույքագրում, մոնիթորինգի կազմակերպման համար տվյալների տրամադրում, կոնկրետ խնդրի լուծմանն ուղղված/կողմնորոշված հետազոտություններ:

Առաջնահերթ գույքագրման աշխատանքներին պետք է դասել

- անոթավոր բույսերի, ողնաշարավոր կենդանիների տեսակների, անողնաշարավոր կենդանիների գերակշռող կարգերի ֆոնային ընտանիքների անոտացված /համառոտ/ ցուցակների կազմումը,
- հազվագյուտ, յուրօրինակ և հատուկ ուշադրություն պահանջող կենդանի և անկենդան բնության օբյեկտների, կենդանիների ու բույսերի էնդեմիկ և հազվագյուտ տեսակների ապրելավայրերի կադաստրների կազմում,
- երկրաբուսաբանական և հողային քարտեզագրում:
- Բնական գործընթացների մոնիթորինգի կազմակերպման համար առաջնահերթ է ստանալ գիտական տվյալներ.կենսաբազմազանության հարստության և բիոտայի /ֆլորա և ֆաունա/ որակական կազմի փոփոխության մասին՝ առաջին հերթին ողնաշարավոր կենդանիների և անոթավոր բույսերի դիտարկումներ
- պոպուլյացիաների վիճակի մասին.
 - բույսերի և կենդանիների էնդեմիկ ու հազվագյուտ տեսակների,
 - արժեքավոր որսորդական-արդյունագործական տեսակի կենդանիների,
 - էպիդեմիոլոգիական տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող կենդանիների,
 - առանձնահատուկ արժեքավոր դեղաբույսերի,
 - այլ տեսակների, որոնք ունեն էական տնտեսական և սոցիալական նշանակություն.
 - բնական համակեցությունների էդիֆիկատորային տեսակների և էկոհամակարգերի վիճակի ինդիկատոր- տեսակների,
- էկոհամակարգերի վիճակի մասին, հատկապես՝
 - կոնկրետ ֆիզիկա-աշխարհագրական տարածաշրջանի համար ցուցանմուշային/ետալոն/ հանդիսացող,
 - հազվագյուտ և յուրօրինակ՝ այդ թվում ռելիկտային,
 - հազվագյուտ և էնդեմիկ տեսակների բնակության միջավայր հանդիսացող և պահպանության համար կարևոր դեր խաղացող,

Արգելոցում և արգելավայրերում առաջնահերթ պետք է համարել կոնկրետ խնդրի լուծմանը կողմնորոշված հետազոտությունները, որոնք նպատակաուղղվում են՝

- էկոլոգիական մոնիթորինգի մեթոդների մշակմանն ու կատարելագործմանը,
- բնական համակարգերի և օբյեկտների վրա թույլատրելի ազդեցությունների նորմավորմանը,
- բնօգտագործման թույլատրելի չափաբանակների որոշմանը,
- բնական համակարգերի դինամիկայի անբարենպաստ տենդենցների և դրանց պատճառների բացահայտմանը և գնահատմանը, ինչպես նաև հետևանքների կանխատեսմանը
- բնական համակարգերի և օբյեկտների պահպանության և վերականգնման տեխնոլոգիաների մշակմանը և կատարելագործմանը,
- հազվագյուտ և անհետացող տեսակների, համակեցությունների և էկոհամակարգերի էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրմանը,
- էկոլոգիական հարցերի լուսաբանման և ճանաչողական զբոսաշրջության կազմակերպման գիտական հիմնավորմանը,
- պահպանվող էկոհամակարգերի և լանդշաֆտների ինքնավերականգնման և ինքնակարգավորման ունակության բարձրացմանը:

Արգելոցում և արգելավայրերում գիտահետազոտական աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների կազմակերպման ծրագրերը հիմնականում ներառում են.

1. իրականացված գիտական հետազոտությունների ներկա վիճակի վերլուծությունը,

2. տարածքի պահպանության, մոնիթորինգի, էկոլոգիական կրթության, էկոտուրիզմի և հանգստի կազմակերպման ոլորտներում իրականացվող գործունեության գիտական հիմնավորվածությունը,
3. գիտական հետազոտությունների հեռանկարային պլանը ըստ առաջնահերթությունների՝
 - գիտական հետազոտությունների կազմակերպման ուղղությունները, ժամկետները, միջոցները, իրականացնողները,
 - երկրատեղեկատվական և այլ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման/զարգացման ծրագիրը,
 - հրատարակված մենագրությունների և այլ գիտական աշխատանքների ցանկը,
 - գիտական հետազոտությունների նյութա-տեխնիկական բազայի զարգացման միջոցառումները,
 - դաշտային գիտական հենակետերի կառուցման /բարեկարգման ծրագիրը,
 - անձնակազմի գիտական աճին նպատակամղված ուսուցման և վերապատրաստման միջոցառումները:

6.2. Կենսաբազմազանության մոնիթորինգի նպատակը և խնդիրները

Կենսաբազմազանության մոնիթորինգը (ԿԲՄ) բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ բուսական և կենդանական օրգանիզմների, դրանց ապրելավայրերի, էկոհամակարգերի, բնության հուշարձանների, բնական պաշարների վիճակի ու զարգացման ընթացքի գնահատման և ազդեցությունների կանխատեսման համակարգ է:

Հանաձայն ՀՀ ԲՀՊՏ-ների մասին օրենքի Հոդված 15-ի.

1. Բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի նպատակն է՝
 - 1) կենսաբանական բազմազանության տարածվածության, տեսակային կազմի, քանակի, բնակության վայրերի, կենդանիների միգրացիայի ուղիների առկա վիճակի բացահայտումը.
 - 2) էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների քանակական և որակական փոփոխությունների գնահատումն ու կանխատեսումը և դրանց վրա բնական ու մարդածին գործոնների ազդեցության բացահայտումը.
 - 3) էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների վրա բացասական ազդեցությունների կանխարգելման ու վերացման կամ մեղմացման միջոցառումների մշակումը:

2. Բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, սույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով և 21-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 8-րդ մասերով նախատեսված միջոցների, համայնքային բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին:

6.3. Արգելոցի և արգելավայրերի կենսաբազմազանության մոնիթորինգի օբյեկտները

Արգելոցի և արգելավայրերի տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգը (ԿԲՄ) պետք է իրականացվի հաշվի առնելով տվյալ տարածքի ֆիզիկա-աշխարհագրական, լանդշաֆտային, ֆլորայի, ֆաունայի, ենթակառուցվածքների և այլ առանձնահատկությունները: Անհրաժեշտ է իրականացնել գույքագրման և հաշվառման աշխատանքներ, որոնք հնարավորություն կտան ճշգրտել և առանձնացնել մոնիթորինգի ենթակա տարածքները և ընտրել դրանց համապատասխան ինդիկատորները:

6.4. ԿԲՄ հիմնական ինդիկատորների ընտրությունը

Համաձայն Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական խորհրդատվության Օժանդակ մարմնի կողմից մշակված հավանական (պոտենցիալ) ինդիկատորների համակարգի կենսաբազմազանության ինդիկատորները բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի.

- ա) Ընդհանուր կիրառության,
- բ) Անտառային կենսաբազմազանության,
- գ) Ագրոկենսաբազմազանության,
- դ) Ներքին ջրերի կենսաբազմազանության,
- ե) Ծովային և առափնյա կենսաբազմազանության:

Ընդհանուր կիրառություն ունեցող ինդիկատորներից որպես կենսաբազմազանության վիճակի և մարդածին ճնշման մոնիթորինգի ինդիկատորներ ընտրվել են հետևյալները.

«Շիկահող» պետական արգելոցի տարածքում.

1. Հարաբերական «բացարձակ հանգստի գոտու» տոկոսը ընդհանուր արգելոցի տարածքում,
2. Անտառային տարածքի տոկոսը ԲՀՊՏ-ի ընդհանուր տարածքում,
3. Տարբեր անտառային տիպերի տոկոսը (առաջնային, երկրորդային կամ տնկարկներ) անտառային տարածքների ընդհանուր տոկոսից,
4. Անտառազրկման չափը (անտառային հողերի փոխակերպում այլ հողերի),
5. Մարդածին ազդեցության (հատումներ, արածեցում, խոտհունձ և այլն) ենթարկված անտառային տարածքների չափը և տոկոսը,
6. Ինվազիոն տեսակների քանակը և դրանց տարածվածությունը,
7. Տուրիզմի համար օգտագործվող հողատարածքների տոկոսը ԲՀՊՏ-ի ընդհանուր տարածքում,
8. Մոցիալական նպատակներով բնակչության կողմից ապօրինի օգտագործվող տեսակներ: Պահպանման գոտում.
1. Գյուղատնտեսական տարածքները ըստ մշակաբույսերի (հացահատիկ, յուղատու բույսեր, կերային և այլն),
2. Գյուղատնտեսական հողերի փոփոխություններ (գյուղատնտեսական հողերի փոխակերպում այլ հողերի կամ հակառակը),
3. Գյուղատնտեսական գործունեության (անասնապահություն, դաշտավարություն, այգեգործություն և այլն) հետևանքով վտանգված տեսակների թիվը:

Նշված ընդհանուր կիրառություն ունեցող ինդիկատորների ցուցակը ենթակա է փոփոխման՝ արգելոցում մոնիթորինգի համակարգի ներդրման և իրականացման, կենսաբազմազանության և սպառնացող վտանգների ու գործոնների ճշգրտման ընթացքում, ինչպես նաև շահագրգիռ կողմերի առաջարկությունների հիման վրա:

6.5. Տեսակի և պոպուլյացիայի մակարդակով առաջարկվող ինդիկատորները

Արգելոցի և արգելավայրերի համար ԿԲՄ ինդիկատորները ընտրվել են տարածա-ժամանակային կտրվածքով կենսաբազմազանության ու կենսառեսուրսների դինամիկան պարզաբանելու համար՝ հաշվի առնելով դրանց նկատմամբ հիմնական պահանջները:

Ընտրված տեսակների մեծամասնությունը համարվում են «թիրախային» տեսակներ, որոնք մոնիթորինգի են ենթարկվում ԲՀՊՏ-ի համար կարևորության պատճառով և իրենցից ներկայացնում են նաև բնակմիջավայրի վիճակը բնորոշող և/կամ մարդածին ազդեցությունը բացահայտող չափորոշիչներ: Սովորական հանդիպող (ֆոնային) տեսակներից որպես ինդիկատոր ընտրվել են

այն տեսակները, որոնց միջոցով ստացված համապատասխան տեղեկատվությունը կարևոր նշանակություն ունի էկոհամակարգի վիճակը բնորոշելու համար: Տեսակ/պոպուլյացիա մակարդակում անհրաժեշտ է յուրաքանչյուր տեսակի համար ճշտել տաքսոնոմիական պատկանելիությունը (տեսակ, ցեղ, ընտանիք), գտնվելու վայրը, զբաղեցրած տարածքի սահմանները:

Տեսակ/պոպուլյացիա մակարդակում ընտրված ինդիկատորների համար որպես ամենատարածված և ինֆորմատիվ ցուցանիշներ օգտագործվում են.

- Առկա կամ բացակա լինելը,
- Յուրաքանչյուր պոպուլյացիայում առանձնյակների թիվը,
- Տարածվածությունը (արեալը),
- Բացարձակ և հարաբերական հարստությունը,
- Պոպուլյացիայի առանձնյակների խտությունը,
- Պոպուլյացիաների թիվը,
- Տարիքային կազմը,
- Սեռական կազմը,
- Ֆենոլոգիական ցուցանիշները,
- Արտադրողականությունը և այլ ինֆորմատիվ ցուցանիշներ:

Նշված ցուցանիշների ճիշտ ընտրությունը ապահովում է կենսաբազմազանության մոնիթորինգի հաջողության զգալի մասը: Ներկայացված ցուցանիշների ցանկը պետք է լրացվի և ճշգրտվի մոնիթորինգի համակարգի ձևավորման փորձնական փուլում, կենսաբազմազանության հաշվառման և գույքագրման աշխատանքների ավարտից հետո:

Աղյուսակ 12- Արգելոցի և արգելավայրերի կենսաբազմազանության մոնիթորինգի պոտենցիալ ինդիկատորների բնութագիրը:

Ինդիկատոր (տեսակ կամ օբյեկտ)		Կատեգորիա	Գոտիներ			Ցուցանիշ	Էկոհամակարգ	Առաջնություն
			Արգելոցային	Էկոտուրիզմի	Պահպանական			
կաթնասուններ	Գայլ (<i>Canis lupus</i>)	սովորական	+	+	+	Ֆենոլոգիական ցուցանիշներ՝ ակտիվությունը ոռնոցով, կտղուցը	բոլոր էկոհամակարգերը	2
	Գորշ արջ (<i>Ursus arctos</i>)	ՀՀ կարմիր գիրք	+	+	+	Ֆենոլոգիական ցուցանիշներ՝ առաջին հանդիպումը, բուս. մտնելը	բոլոր էկոհամակարգերը	1
	Բեզուարյան այծ (<i>Capra aegagrus</i>)	ՀՀ կարմիր գիրք				առանձնյակների թիվը, տարիքային կազմը՝ ֆենոլոգիական ցուցանիշներ՝ ակտիվությունը՝ կտղուցը	լեռնատափաստանային, անտառային և լեռնամարգագետնային	1
	Հնդկական մացառախոզ (<i>Hystrix indica</i>)	ՀՀ կարմիր գիրք	+	+	+	առկա կամ բացակա լինելը	լեռնատափաստանային, անտառային	1
թռչուններ	Կովկասյան մարեհավ (<i>Tetrao mlakosiewiczi</i>)	ՀՀ կարմիր գիրք	+			առկա կամ բացակա լինելը՝ ֆենոլոգիական ցուցանիշներ՝ կտղուցականչը սկսելու և ավարտելու ամսաթիվը	բարձրադիր մարգագետնային	1
	Կասպիական ուլար (<i>Tetraogallus caspius</i>)	ՀՀ կարմիր գիրք	+			առկա կամ բացակա լինելը	բարձրադիր մարգագետնային	1
սողուններ	Նաիրյան մողես (<i>Darevskia armeniaca</i>)	սովորական	+	+	+	առանձնյակների թիվը, տարիքային կազմը՝ ֆենոլոգիական ցուցանիշներ՝ ակտիվությունը՝ առաջին հանդիպումը, ձմեռման անցնելը	լեռնատափաստանային, անտառային և լեռնամարգագետնային	1
	Արևմտյան վիշապիկ (<i>Eryx jaculus</i>)	սովորական	+	+	+	առանձնյակների թիվը, տարիքային կազմը՝ ֆենոլոգիական ցուցանիշներ՝ ակտիվությունը՝ առաջին հանդիպումը, ձմեռման անցնելը	լեռնատափաստանային, կիսաանապատային	2
երկենցաղներ	Փոքրասիական ծառագորտ (<i>Hyla savignyi</i>)	ոչ հաճախ հանդիպող	+	+	+	առանձնյակների թիվը	Անտառային Գետեր Ծավ, Շիկահող, Մազրա	2
	Փոքրասիական գորտ (<i>Rana macrocnemis</i>)	սովորական	+	+	+	առանձնյակների թիվը՝ ձվադրավայրերում հաշվառվում է գորտընկիթների կույտերի քանակը	լեռնատափաստանային, անտառային և լեռնամարգագետնային, Գետեր՝ Ծավ, Շիկահող, Մազրա	1
ձկներ	Կոդակ (<i>Varicorhinus capoeta</i>)	սովորական	+	+	+	առանձնյակների թիվը	գետեր՝ Ծավ, Շիկահող	2
	Կարմրախալտ (<i>Salmo trutta fario</i>)	սովորական	+	+	+	առանձնյակների թիվը	գետեր՝ Ծավ, Շիկահող	1
անոթավոր բույսեր	Կաղնի խոշորաառեջ (<i>Quercus macranthera</i>)	ոելիկտ	+			տարածվածությունը, անհատների թիվը, խտությունը		1
	Կաղնի վրացական (<i>Quercus iberica</i>)	ոելիկտ	+			տարածվածությունը, անհատների թիվը, խտությունը		1
	Միզախոտ մարգագետնայինը (<i>Phleum pretense</i>)	սովորական				տարածվածությունը	մարգագետնային տափաստանները,	
	Ուռենիներ (<i>Salix spp.</i>)	սովորական				տարածվածությունը	գետերի երկայնքներով տուգայանման բուսականության տեղամասեր,	

6.6. Խոշոր կաթնասունների մոնիթորինգի մեթոդներ և դրանց ստանդարտացում

6.6.1. Մոնիթորինգի մեթոդներ

Կենդանիների մոնիթորինգը անհրաժեշտ է նրանց հետազոտման, պահպանության և կառավարման համար: Մոնիթորինգի արդյունքները հատկապես կարևոր են հազվագյուտ և անհետացող տեսակների քանակն ու արեալը պահպանելու և վերականգնելու գործում: Երբեմն որևէ վնասակար կամ կլիմայավարժեցված տեսակի քանակությունը դառնում է անթույլատրելի բարձր և խնդիր է դրվում այն նվազեցնելու ուղղությամբ: Երկու դեպքում էլ, ծրագրերի հաջող իրականացումը ուղղակիորեն կապված է տեսակի կամ տեսակների մոնիթորինգի արդյունավետ իրականացման հետ:

Մոնիթորինգից պահանջվում է, որպեսզի այն կարողանա ճշգրիտ տեղեկություն տալ տվյալ տեսակի քանակի ու արեալի միտումների վերաբերյալ: Պոպուլյացիայի չափը (այսինքն՝ քանակը) շատ դեպքերում քիչ տեղեկություն է պարունակում, քանի որ անգամ փոքրաքանակ կենդանիները կարող են երկարատև գոյատևել՝ պահպանելով հավասարակշռությունը ծնելիության, ներգաղթի, մահացության և արտագաղթի միջև: Եվ ընդհակառակը, անգամ խոշոր պոպուլյացիան կարող է խիստ տուժել որևէ ներքին կամ արտաքին գործոնների ազդեցության տակ: Այսպիսով, ավելի կարևոր է իմանալ ոչ այնքան տեսակի քանակը կամ արեալը, որքան դրանց փոփոխման բնույթն ու միտումները (Long and Zielinski, 2008):

Փորձը ցույց է տալիս, որ սովորական տեսակների մոտ ավելի նպատակահարմար է իրականացնել թվաքանակի և դրա միտումների մոնիթորինգը, իսկ հազվագյուտ կամ զգույշ կյանք վարող տեսակների մոտ՝ տարածվածության և դրա միտումների մոնիթորինգը (Joseph et al., 2006):

Կենդանիների պոպուլյացիաների միտումների մոնիթորինգը կարելի է իրականացնել անուղղակի և ուղղակի մեթոդների օգնությամբ: **Անուղղակի մեթոդները** չունեն անմիջական կապ կենդանիների հետ և իրենցից ներկայացնում են կենդանիների գոյության նշանների (հետքեր, կղկղանք, որսի մնացորդներ, բույսերի կոճոնք, ճանկավածքներ, փորվածքներ) գրանցում կամ տեղացի բնակչության հարցումներ: **Ուղղակի մեթոդները** իրենց մեջ ներառում են կենդանիների հաշվառումը նրանց դիտարկումների կամ թաքնված ֆոտոխցիկների օգտագործման միջոցով: Համակարգչային քարտեզավորումը (գեոտեղեկատվական համակարգ, GIS) և մոդելավորումը չեն պատկանում որևէ կատեգորիային, քանի որ դրանք մշակում են արդեն ունեցած տվյալները, որոնք կարելի է ստանալ և՛ անուղղակի, և՛ ուղղակի մեթոդներով (Gese, 2001):

Ինչպես վերևում նշվել է, մոնիթորինգի գործունեությունը և համապատասխան մեթոդները չպետք է լինեն վնասակար կամ մահացու կենդանիների համար: Խոշոր կաթնասունների պիտակավորումը գունավոր վզնոցների, ականջողների կամ բիոմարկերների (ռադիոակտիվ ցինկ կամ այլ իզոտոպներ, քլորբենզոլ) միջոցով անթույլատրելի է, քանի որ դրանք կարող են նպաստել կենդանիների էկոլոգիայի սովորական ընթացքի շեղմանը կամ նույնիսկ մահվան պատճառ դառնան: Նույնիսկ եթե պիտակավորման կիրառվող մեթոդը ապահով է և տեսակի բավարար թվաքանակը թույլ է տալիս կենդանիներին բռնել ու պիտակավորել (օրինակ՝ գայլերին), ապա այն մնում է թանկ երկարաժամկետ օգտագործման համար:

Մոնիթորինգի իրականացումը չի նշանակում արդյունքների միանշանակ հուսալիություն: Դրա համար էլ մոնիթորինգի հիմնական հատկությունը զգայունակությունն է տեսակի քանակի և տարածվածության փոփոխության հանդեպ: Մոնիթորինգի ոչ ճիշտ իրականացումը կամ էլ սխալ մեթոդի ընտրությունը հանգեցնում են խաբուսիկ տեղեկության ստացմանը: Այսպես, եթե շարժուն տեսակի (ասենք՝ վայրի խոզի) մոնիթորինգը անց է կացվում ապրելավայրի սահմանափակ տարածքում և նկատվել է հետքերի քանակի նվազում, ապա սխալ կլինի միանշանակ եզրակացնել, որ կենդանու քանակությունը պակասել է, քանի որ կենդանիները կարող են տեղաշարժվել դեպի հարևան տարածքներ, որտեղ մոնիթորինգը չի իրականացվում:

Թե մոնիթորինգի որ եղանակն է առավել նպատակահարմար իրականացման համար կախված է տեսակի էկոլոգիայից, վարքից, տարածվածության հատկություններից, ինչպես նաև ֆինանսական, տեխնիկական և մարդկային ռեսուրսների հասանելիությունից:

Մոնիթորինգի պլանավորման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ երկու գործոն, որոնք անմիջականորեն ազդում են ստացվող տվյալների որակի վրա: Դրանք են.

1. Կենդանիներին կամ նրանց նշաններին **հայտնաբերելու հավանականությունը**, որը համարյա միշտ 1-ից ցածր է: Բնականաբար, այն նվազագույն է հազվագյուտ և անհետացող տեսակների, հատկապես՝ խոշոր գիշատիչների մոտ որոնց համարյա հնարավոր չէ տեսնել բնության մեջ իրենց գաղտնի և գիշերային կյանք վարելու պատճառով: Դրա փոխարեն, նրանց մոնիթորինգը պետք է իրականացնել այն մեթոդներով որոնք ապահովում են նրանց հայտնաբերելու բարձր հավանականությունը, օրինակ՝ հետքերի կամ կղկղանքի գրանցումով, բնակչության հարցումներով կամ թաքնված ֆոտոխցիկներով: Դիտարկումները կարելի է իրականացնել միայն հեշտ տեսանելի տեսակների (բեզոարյան այծ և հայկական մուֆլոն) մոնիթորինգի ժամանակ:
2. **Տարածքի մակերեսը**, որի վրա անց է կացվում մոնիթորինգը: Քանի որ խոշոր կաթնասունները պահանջում են ապրելավայրերի լայն տարածքներ, անհրաժեշտ է հնարավորին չափ մեծացնել մոնիթորինգի տարածքը՝ ելնելով ունեցած ֆինանսական, տեխնիկական և մարդկային ռեսուրսներից, կամ որպես նվազագույն տարբերակ ընտրել այն տարածքը, որտեղ առկա են ամբողջ տարածքին բնորոշ առանձնահատկությունները: Տարածքի մակերեսի կողմնորոշման ժամանակ պետք է հաշվի առնել տեսակի տարածվածության էկոլոգիան և նրա փոխհարաբերությունները ապրելավայրերի հետ (Gese, 2001; Long and Zielinski, 2008):

Գիշատիչների և այլ խոշոր կաթնասունների մոնիթորինգը ունի 10 սկզբունքներ (Long and Zielinski, 2008).

1. Հստակ որոշել մոնիթորինգի նպատակը և տեսակները
2. Մոնիթորինգը միշտ իրականացնել տարբեր տարածքներում և վայրերում
3. Մաքսիմումի հասցնել տեսակները հայտնաբերելու հավանականությունը
4. Ամեն մի տարածքը կամ վայրը ուսումնասիրել մի քանի անգամ
5. Նվազեցնել մոնիթորինգի հնարավոր շեղումները: Օրինակ՝ բեզոարյան այծի կամ հայկական մուֆլոնի դիտարկումների ժամանակ պետք է հավասար կերպով ուսումնասիրել արուների և էգերին բնորոշ ապրելավայրերը, այլապես մոնիթորինգի տվյալները կլինեն շեղված դեպի արուների կամ էգերի կողմ ու ոչ հուսալի
6. Ընտրել իրարից բավական հեռու գտնվող տարածքները ու վայրերը որտեղ տեսակի գրանցվող խմբավորումները կամ առանձնյակները իրարից անկախ են համարվում
7. Գնահատել գործակիցների ու պոպուլյացիայի իրական ցուցանիշների մեջ հարաբերությունները, օրինակ՝ հետքերի գրանցման գործակցի (հետքերի քանակը ըստ արահետների 10 կմ-ի) ու տեսակի թվաքանակի միջև
8. Եթե գործակիցների կիրառումը անխուսափելի է, ապա օգտագործել տարբեր, իրարից անկախ մեթոդներով ստացված գործակիցները: Եթե բոլոր գործակիցները նմանատիպ ձևով են գրանցում պոպուլյացիայի միտումները, դրանք իրար հետ պետք է վիճակագրական տեսակետից կապված (կորելացված) լինեն
9. Նախընտրություն տալ հեշտ կիրառվող մեթոդներին, եթե դրանք հուսալի արդյունքներն են տալիս
10. Իրատեսականորեն գնահատել մոնիթորինգի հասանելի տեղեկությունը՝ ելնելով առձեռն ֆինանսական, տեխնիկական, մարդկային ռեսուրսներից և ժամանակից:

Այս աղյուսակում տրված են մեթոդները, որոնց օգնությամբ կարելի է իրականացնել արգելոցում ու արգելավայրերում բնակվող խոշոր կաթնասունների մոնիթորինգը:

Աղյուսակ 13 – Մոնիթորինգի մեթոդներ

Տեսակ	Մոնիթորինգի մեթոդներ								
	Դիտարկումներ	Հետքերի գրանցում	Կոկորանքի գրանցում	Որսի մնացորդների, բույսերի կոճոնքի գրանցում	Ճանկավաճքների և փորվածքների գրանցում	Տեղացի բնակչության հարցումներ	Գեոտեղեկատվական համակարգի (GIS) կիրառում	Թաքնված ֆոտոխցիկների օգտագործում	Համակարգչային մոդելավորում
Ընձառյուծ		+	+		+		+	+	+
Լուսան		+	+		+		+	+	+
Արջ		+	+	+	+	+	+	+	+
Գայլ		+	+	+		+	+	+	+
Վայրի խոզ		+			+		+	+	+
Այծյամ		+					+	+	+
Եղջերու		+				+	+	+	+
Բեզոարյան այծ	+						+	+	+
Մուֆլոն	+						+		+

Աղյուսակ 14 - Արգելոցի և արգելավայրերի տարածքներում ԿԲՄ ենթակա խոշոր կաթնասունները:

Տեսակ	Շիկահող	Զանգեզուր	Խուստուփ	Սոսու պուրակ
Ընձառյուծ	+	+	+	
Լուսան	+	+	+	+
Արջ	+	+	+	+
Գայլ	+	+	+	+
Վայրի խոզ	+	+	+	+
Այծյամ	+	+	+	+
Եղջերու	+	-	-	-
Բեզոարյան այծ	+	+	+	-
Մուֆլոն	-	+	-	-

Դիտարկումներ

Ցերեկային կյանք վարող կենդանիներին, հատկապես սմբակավորներին, ավելի հարմար է ուսումնասիրել անմիջական դիտարկումների միջոցով: Այն վերաբերվում է նաև բեզոարյան այծին ու հայկական մուֆլոնին որոնք խորը և երկար ժամանակ ուսումնասիրվում են Հայաստանում և Կովկասի էկոտարածաշրջանի այլ երկրներում (Даль, 1951; Гаспарян, 1964, 1974; Айрумян, Гаспарян, 1976; Закариев, 1982; Батхиев, 1989; Ахмедов, 1999; Вейнберг, 1999; Насрулаев, 2007; Akhmedov et al., 2009; Diker et al., 2009; Khorozyan et al., 2009; Özdirek, 2009; Talibov et al., 2009): Հարթավայրերում կենդանիներին դիտարկում են և գրանցում անցնող գծային երթուղիների երկայնքով, իսկ լեռներում դիտարկումները անց են կացվում տիրապետող բարձրությունների (լեռնաշղթաներ կամ գագաթներ) վրա գտնվող դիտակետերից: Հետազոտողները առաջին հերթին նշում են տեսած կենդանիների խմբերի տեղը, ժամանակը, կազմը (սեռը, տարիքը և քանակը), մինչ կենդանիները ունեցած հեռավորությունը և առանձնյակների բնութագրական գծերը (օրինակ՝ ծեր արուի մոտ կոտրված եղջուրը)՝ դրանով իսկ խուսափելով նույն կենդանուն կրկնակի հաշվառումից: Բացի դրանից, գրանցվում են նաև եղանակային պայմանները, բուսականությունը և այլ գործոններ, որոնք կարող են ազդել կենդանու տեսանելիության վրա: Ստացված ողջ տեղեկությունը գրանցվում է համապատասխան արձանագրություններում (տես՝ Հավելված 7): Այս մեթոդի անվանումը կարելի է

թարգմանել որպես «հեռակա դիտարկումներ» (distance sampling) (Lannoy et al., 2003; Thoisy et al., 2008): Լեռնային պայմաններում այն դառնում է «կետային հաշվառում» (point counts), քանի որ մոնիթորինգը իրականացվում է դիտակետերից (Sutherland, 2000):

Բացի հետիոտն երթուղուց, օգտագործում են նաև ձիերով, մեքենաներից, ինքնաթիռներից կամ ուղղաթիռներից դիտարկումները: Մեքենաները և ուղղաթիռները օգտագործվում են միայն այնտեղ, որտեղ հսկայական հարթավայրային տարածքներ կան՝ լայն տեսահորիզոնով: Լեռներում օդահաշվառումը պրակտիկ չէ, քանի որ այն թանկ է և ուղղաթիռների հայտնվելուց կենդանիները անակնկալի են գալիս ու թաքնվում բուսականության և ժայռերի մեջ: Ամենահուսալի մեթոդներն են հետիոտն երթուղիներն և ձիերով շրջելը, եթե կան համապատասխան արահետներ և ձիերը գտնվում են լավ ֆիզիկական վիճակում:

Ամեն օր մոնիթորինգ անցկացնող անձիք պետք է անցնեն մի երթուղի, և այդ երթուղիները պետք է գտնվեն տարբեր տեղերում ու ձգվեն տարբեր ուղղություններով: Դա անհրաժեշտ պայման է հանդիսանում մոնիթորինգի գործընթացով լայն տարածքը ընդգրկելու համար: Տարածքի մակերեսը և մոնիթորինգի ինտենսիվությունը երևում են կենդանիների քարտեզագրված գրանցման կետերի բաշխվածությունից, արշավների (երթուղիների) քանակից և երթուղիների երկարությունից (Edge and Olson-Edge, 1990; Liu et al., 2008; Özdirek, 2009): Արշավների հաճախականությունը և տևողությունը կախված են ֆինանսական, տեխնիկական և մարդկային ռեսուրսներից, բայց ամեն դեպքում ամեն մի տարածքի բոլոր երթուղիները պետք է հետազոտվեն տարվա մեջ մի քանի անգամ՝ մի քանի տարվա ընթացքում:

Բեզոարյան այծը և հայկական մուֆլոնը Հայաստանում բնակվող խոշոր կաթնասուններից միակ ներկայացուցիչներն են, որոնց մոնիթորինգը պետք է իրականացնել ուղղակի դիտարկումների հիման վրա: Հետագայում, դիտարկումներից ստացված տվյալները ենթարկվում են վերլուծության համակարգչային քարտեզավորման և մոդելավորման միջոցով: Բնության մեջ կարելի է տեսնել նաև այլ տեսակների (վայրի խոզ, այծյամ, արջ, գայլ, լուսան, անգամ՝ ընձառյուծ), բայց այդ հանդիպումները միշտ էլ անկանխատեսելի են ու ոչ պիտանի մոնիթորինգի համար: Այծերի և մուֆլոնների հետքերը, կղկղանքը և կերված բույսերի կոճոնքը շատ հազվադեպ են գրանցվում: Նշված տեսակները փորվածքներ չեն առաջացնում: Տեղացի բնակչության հարցումները առանձնապես կարևոր տեղեկություն չեն տալիս, քանի որ մարդիկ սովորաբար չեն ընդգծում այս տեսակների հետ կապված մանրամասները, օրինակ՝ ասելով «մուֆլոնները բնակվում են Քաջարանի վերևը» կամ «այծերը հասնում են այս սարերին», ինչը մոնիթորինգի համար անօգտակար է:

Դիտարկումների հիման վրա մոնիթորինգը իրականացվում է հետևյալ կերպով: Ընտրվում է բարձր դիտակետը և հեռաչափով չափվում է հեռավորությունը դիտակետից մինչև շրջակա լեռները, որոնց վրա դիտարկվում են կենդանիները: Ըստ հեռաչափի տվյալների, ընտրվում է հեռավորության մի ցուցանիշ r (ասենք՝ 500 մ) այն ենթադրությամբ, որ մինչև r և r -ից հեռու հաշվարկված կենդանիների քանակը լինի մոտավորապես նույնը: Նշանակենք m որպես կենդանիների թվաքանակը մինչև r և m ՝ որպես թվաքանակը r -ից հեռու: Դիտարկումների քանակը նշանակենք m , իսկ կենդանիների խտությունը՝ D (Sutherland, 2000):

$$D = \log_e \left(\frac{n_1 + n_2}{n_2} \right) \frac{n_1 + n_2}{\pi r^2 m}$$

Այս բանաձևով ստացած D -ն նշանակում է կենդանիների քանակը մի մ² վրա: Խտությունը մի հեկտարի վրա ստանալու համար D -ն պետք է բազմապատկել 10,000-ով, իսկ մի կմ² վրա ստանալու համար՝ 1,000,000-ով:

Բանաձևի հիման վրա արված է այն ենթադրությունը, որ կենդանիների տեսանելիությունը ըստ հեռավորության նվազում է: Նվազման կառուցվածքը կարող է լինել ուղղաձիգ, էքսպոնենցիալ կամ այլ ձևի, բայց այն կարևոր չէ եթե m_1 ու m_2 իրար մոտ են:

Դիտարկումներից ստացած տվյալների մանրամասն վերլուծությունը սովորաբար արվում է DISTANCE համակարգչային մոդելավորման ծրագրի միջոցով: Բացի դիտարկումներից, այծերի մոնիթորինգը կարելի է իրականացնել թաքնված ֆոտոխցիկների օգնությամբ (Khorozyan et al., 2008): Այս երկու մեթոդների կիրառման մասին գրված է ստորև:

Բեզոարյան այծերը և հայկական մուֆլոնները հիմնականում ցերեկային կյանք են վարում, բացառությամբ հասուն արուների, որոնք կարող են ակտիվ լինել մթնշաղին և անգամ՝ գիշերը: Այծերը բնակվում են ժայռոտ տարածքներում, իսկ մուֆլոնները՝ բարձրլեռնային մարգագետիններում: Երկդիտակն (бинокуляр) անհրաժեշտ է կենդանիներին փնտրելու համար: Կենդանիներին հայտնաբերելուց հետո, նրանց վրա ուղղվում է հեռադիտակը (подзорная труба), որը թույլ է տալիս հաշվել կենդանիներին և որոշել նրանց սեռն ու տարիքը: Պահպանվող տարածքների աշխատակիցները ազատ օգտագործում են երկդիտակը կենդանիների հայտնաբերման և հաշվարկման համար (Liu et al., 2008):

Որպեսզի մոնիթորինգը լինի առավել արդյունավետ, այն պետք է իրականացվի ստանդարտ մեթոդով (տես՝ Մոնիթորինգի ստանդարտացում): Մոնիթորինգը իրականացնելուց առաջ պետք է տպել արձանագրությունները (տես՝ Հավելված 7) և դրանք վերցնել դաշտ դուրս գալուց:

Այծերի կամ մուֆլոնների խումբը գտնելուց անմիջապես հետո արձանագրության մեջ պետք է անցկացնել հետևյալ տեղեկությունը.

1. Կենդանիների քանակը խմբում և դրանց տեսակը
2. Խմբի սեռատարիքային կազմը
3. Դիտակետի և խմբի միջև եղած հեռավորությունը (մ)
4. Եղանակը
5. Ժամը
6. Տեղավայրի անվանումը
7. Կենդանիների վարքի նկարագրությունը
8. Կենդանիների գտնվելու վայրի նկարագրությունը
9. Դիտակետի կոորդինատները (աստիճան/րոպե/վայրկյան)
10. Դիտակետի բարձրությունը (մ)

Եվ այդպես պետք է նշել յուրաքանչյուր հանդիպած խմբի համար: Խումբ է համարվում կենդանիների այն քանակությունը, որը հայտնաբերվել է տվյալ վայրում տվյալ ժամին, օրինակ՝ ժամը 10:30 լեռան լանջի վրա հայտնաբերվել են այծերի 3 ոչ մեծ խմբեր, յուրաքանչյուրում համապատասխանաբար 5, 3 և 4 առանձնյակ: Այս խմբերից յուրաքանչյուրը պետք է դիտարկվի ու գրանցվի արձանագրության մեջ առանձին-առանձին:

Կենդանիների հետքերի գրանցում

Կենդանիների հետքերի հիման վրա մոնիթորինգը կարելի է անցկացնել հատուկ պատրաստված հարթատեղերի վրա կամ բնության մեջ: Հարթատեղերի գաղափարը պարզ է: Խայծի կողքը, գետնի վրա տեղադրվում է փխրուն նյութ՝ ավազ, կավիճ և այլն, որի վրա լավ են տպվում կենդանու հետքերը: Հետազոտողը ստուգում է հետքերը, որոշում է կենդանու տեսակը և թարմացում է նյութը նոր հետքերը ստանալու համար, և այդպես շարունակ: Հետքերի հարթատեղերը դժվար է կիրառել հետևյալ պատճառներից ելնելով.

1. Հաճախ հետքերով դժվար է որոշել տեսակը, հատկապես եթե հետքը հին է կամ պարզորոշ չէ
2. Կենդանուն դժվար է «համոզել» կանգնել այդ հարթատեղի վրա և թողնել հետքը
3. Դաշտային պայմաններում դժվար է տեղափոխել ավազով կամ կավիճով լեցուն պարկերը

4. Հետքերի հարթատեղերը եղանակային պայմանների ազդեցության տակ շատ արագ շարքից դուրս են գալիս, իսկ նրանց վերականգնումը բավականին ժամանակ ու ջանքեր է պահանջում (Gese, 2001):

Այս պատճառով ստորև ներկայացվելու է միայն բնության մեջ հետքերի գրանցման մոնիթորինգը: Հետքերի հիման վրա իրականացվող մոնիթորինգը հատկապես մատչելի և արդյունավետ է այն մեծ տարածքներում որտեղ մշտապես կան խոնավ հող (ջրամերձ տարածքներ, ճահիճներ), ավազ, կավ կամ ձյուն, որոնց վրա հետքերը լավ են տպվում (Hayward et al., 2002; Johnsingh and Negi, 2003; Barlow et al., 2008, 2009; Thorn et al., 2010): Միաժամանակ, հետքերը շատ փոփոխական են՝ կախված հողից, լանջի թեքությունից, եղանակից կամ այլ կենդանիների առկայությունից (կրծողներ, կաքավներ), որոնք կարող են խախտել հետքերի ձևը: Այս պատճառով, եթե նույն առանձնյակին պատկանող հետքերը տպվել են տարբեր հողերի վրա, դրանց չափերը տարբերվում են և նույնիսկ կարելի է համարել, որ դրանք պատկանում են տարբեր առանձնյակների: Դա տալիս է տեսակի թվաքանակի գերազնահատում, այսինքն կենդանիների քանակի գնահատականը ավելի բարձր է, քան իրականում կա, ինչը անընդունելի է մոնիթորինգի համար (Karanth et al., 2003):

Հետքերի հիման վրա մոնիթորինգ իրականացնելուց պարտադիր է գրանցել հողի տեսակը, վայրը, եղանակը, ռելիեֆը և բոլոր այլ հետքի կառուցվածքի վրա ազդող գործոնները, և ըստ դրանց համեմատել տեսակի հետքերի նույն ցուցանիշը: Հետքերի ամենահուսալի ցուցանիշներն այն են, որոնց չափերը տարբեր պայմաններում նվազագույն կերպով են փոփոխվում: Դրանք են հետքի ընդհանուր երկարությունը, հետքի դրսի մատերի միջև լայնությունը, կրունկի լայնությունը (գիշատիչների մոտ) և սմբակների ծայրերի միջև տարածությունը (սմբակավորների մոտ) (Grigione et al., 1999; Sharma et al., 2005):

Նույնիսկ միևնույն տարածքում հետքերի հայտնաբերման հավանականությունը տարբեր սեզոններին փոփոխվում է եղանակային պայմանների կամ այլ գործոնների ազդեցության տակ: Այսպիսով, Հայաստանում հետքերը ավելի հեշտ է տեսնել ձմռանը ձյան վրա, բավականին դժվար է տեսնել գարնանն ու աշնանը՝ խոնավ հողի վրա, և առավել ևս դժվար է նկատել ամռանը, երբ բնահողը արևի տակ կարծրանում է: Մեկ այլ օրինակ. գարնանը գյուղացին անասուններին քշում է գյուղից դեպի բարձրլեռնային մարգագետիններ, իսկ աշնանը՝ ետ դեպի գյուղ, որի արդյունքում էլ անցանելի արահետների և ճանապարհների վրայից վերանում են բոլոր հետքերը: Դրա համար էլ նպատակահարմար է համեմատել նույն սեզոնի ժամանակ հավաքված հետքերի քանակը:

Քանի որ տարբեր թաթերը թողնում են տարբեր կառուցվածքի հետքեր, ուստի մոնիթորինգի ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հետքերը և համեմատել միայն ավելի հաճախակի հանդիպող հետքերը (օրինակ՝ ետևի ձախը կամ առջևի աջը): Նույն տեսակի հետքերը հեշտ տարբերվում են արուների և էգերի միջև ոչ միայն չափերով, այլ նաև ընդհանուր տեսքով: Օրինակ, արու գիշատիչների մոտ հետքերը ավելի մեծ են ու ավելի բացված, քան էգերի մոտ ու հետքերը ավելի փոքր են ու կոմպակտ (Лыкаревский, 2001; Garcia et al., 2010):

Կարևոր է նաև հաշվի առնել տարածքի ռելիեֆը: Լանջն ի վեր բարձրանալով, կենդանին հենվում է մատերի վրա, իսկ իջնելուց՝ կրունկի վրա, որն էլ աղավաղում է հետքի ձևն ու չափերը: Միևնույն կենդանու հետքերը, գտնված լեռան լանջի և հարթ տարածքի վրա, իրարից կարող են այնքան տարբերվել, որ առաջին հայացքից կթվա, թե դրանք ուրիշ կենդանու են պատկանում: Շատ կենդանիներ քայլելուց ետևի թաթը դնում են առջևի թաթի վրա և դրա համար էլ ավելի հաճախակի կարելի է հանդիպել հենց ետևի թաթի հետքերը:

Հայաստանի խոշոր կաթնասուններից հետքերի գրանցման մոնիթորինգը լավագույն ձևով աշխատում է խոնավ տարածքներում (հիմնականում՝ լայնատերև խիտ անտառներում) բնակվող տեսակների մոտ, որոնք են **արջը, լուսանը, գայլը, վայրի խոզը, այծյամը և ագնվացեղ եղջերուն:** Այս տեսակները հաճախակի ներգաղթում են չորասեր նոսրանտառներ, բայց այնտեղ հողերը չոր ու քարքարոտ են, ինչի պատճառով հետքերը դժվար է հայտնաբերել: **Ընձառյուծը** բնակվում է շատ զառիթափ ու քարքարոտ վայրերում որտեղ հետքերը համարյա չեն գրանցվում, բայց այս տեսակի

հետքերը կարելի է գտնել աղբյուրների կամ գետերի կողքը գտնվող խոնավ հողերի վրա: Արդյունավետ կլինի նաև **բորենու** հետքերի գրանցման մոնիթորինգը, քանի որ այս տեսակը նախընտրում է կիսաանապատային հարթավայրեր ու նախալեռներ որտեղի ավազահողերի վրա հետքերը շատ լավ են տպվում, բայց շուտ ջնջվում:

Բացի հետքերի կառուցվածքից, մոնիթորինգի ժամանակ գրանցում են հետքերի քանակը և հաշվարկում են հետքերի հաճախականության գործակիցը, օրինակ՝ հետքերի քանակը երթուղու մեկ կմ-ի վրա, հազվագյուտ տեսակների մոտ՝ 10 կմ-ի վրա (Hayward et al., 2002; Gusset and Burgener, 2005): Հետքերի մեծ քանակության դեպքում այս գործակցի աճը կամ նվազումը տարիների մեջ կարող է հանդիսանալ կենդանիների թվաքանակի աճի կամ ընկման ցուցանիշ: Այն չի աշխատում սեզոնների մեջ, քանի որ այս դեպքում գործակցի տատանումները առաջանալու են կենդանիների սեզոնային տեղաշարժերից (աշնանը՝ ներքև դեպի ձնագուրկ նախալեռներ, գարնանը՝ վերև) և ոչ թե՛ թվաքանակից:

Գրանցվող հետքերը կարող են լինել միայնակ կամ գտնվել շարքի մեջ: Դա անպայման պետք է գրանցվի և հետո համեմատվի գործակցի հաշվառման ժամանակ, քանի որ նույն կենդանու հետքերի շարքը կարող է անցնել տարբեր հողերով (օրինակ՝ առաջանալ խոնավ հողի վրա, հետո անցնել ավազի ու կավի վրա և անհետանալ թփուտների մեջ) և դրա հետքերը իրարից զգալիորեն տարբերվեն:

Միևնույն ժամանակ, հետքերի քանակը պետք է համեմատվի միայն կոնկրետ տարածքի սահմաններում և ոչ թե տարբեր տարածքների միջև, քանի որ տարբեր վայրերում կենդանու գոյության այդ նշանների հայտնաբերման հավանականությունը կարող է խիստ տարբերվել: Օրինակ՝ եթե հետքերի քանակը հարթավայրերում ավելին է, քան ժայռերում, դա դեռ չի նշանակում, որ հարթավայրերում կենդանիներն ավելի շատ են, քան ժայռերում, քանի որ հարթավայրերում մարդիկ ավելի հեշտ են քայլում ու հետքեր գտնում:

Հետքերի հաճախականության գործակիցը տալիս է որոշ տեղեկություն պոպուլյացիայի տարածվածության, բայց ոչ թե՛ կենդանիների քանակության միտումների մասին: Դա մի քանի պատճառներ ունի.

1. Նույն առանձնյակը տարբեր տեղերում և տարբեր սեզոնների ժամանակ թողնում է տարբեր քանակությամբ հետքեր (ինչպես նաև կղկղանք, ճանկավածքներ կամ փորվածքներ): Դա հատկապես լավ է երևում զուգավորման շրջանում, երբ կենդանիները ավելի շարժուն են և իրենց տարածքը որոշակի տեղերում ակտիվորեն նշում են:
2. Հետքերը վատ են տպվում պինդ հողերի վրա, ինչի համար հաշվարկված գործակիցը կարող է թերագնահատել իրական թվաքանակը:
3. Գարնանը փարթամորեն աճող բուսականության մեջ հետքեր դժվար է գտնել, ինչը բերում է նմանատիպ թերագնահատմանը:
4. Մեծ մասամբ, հետքերի քանակը ուղղակի կապ չունի կենդանիների թվաքանակի հետ, բայց լինում են բացառություններ: Դա ստուգելու համար անհրաժեշտ է անկախ գիտական մեթոդների (օրինակ՝ թաքնված ֆոտոխցիկների) օգնությամբ որոշել տեսակի թվաքանակը ու հետքերի քանակը նույն տարածքում, նույն ժամանակահատվածներում և համեմատել դրանք (Barlow et al., 2009):

Որպեսզի մոնիթորինգը լինի առավել արդյունավետ, այն պետք է իրականացվի ստանդարտ մեթոդով (տես՝ Մոնիթորինգի ստանդարտացում): Մոնիթորինգը իրականացնելուց առաջ պետք է տպել արձանագրությունները (տես՝ Հավելված 7) և վերցնել դաշտ դուրս գալուց:

Հետքը գտնելուց անմիջապես հետո արձանագրության մեջ պետք է անցկացնել հետևյալ տեղեկությունը.

1. Հետքերի շարքի համարը, կենդանու տեսակը
2. Ժամը

3. Հողի տեսակը
4. Ռելիեֆի տեսակը և լանջի դիրքադրությունը (հյուսիս/հարավ/ արևելք/արևմուտք)
5. Վայրի անվանումը
6. Այլ նշանները, որոնք գտնվել են հետքի կողքը (կղկղանք, ճանկովածք և այլն)
7. Եղանակը
8. Հետքի նկարագրությունը
9. Հետքի կոորդինատները (աստիճան/րոպե/վայրկյան)
10. Հետքի բարձրությունը (մ)
11. Հետքի տարիքը (թարմ, հին, միջանկյալ վիճակում)
12. Թաթը (առջևի աջը, առջևի ձախը, ետևի աջը կամ ետևի ձախը)
13. Հետքի ընդհանուր երկարությունը (մմ)
14. Հետքի դրսի մատերի միջև լայնությունը (մմ)
15. Կրունկի լայնությունը (մմ)
16. Սմբակների ծայրերի միջև տարածությունը (մմ)

Եվ այդպես՝ գտնված յուրաքանչյուր հետքի համար:

Կենդանիների կղկղանքի գրանցում

Կղկղանքը հեշտ է գտնել այնտեղ, ուր փափուկ հողը հազվադեպ է հանդիպում, իսկ կլիման չոր է ու տաք (օրինակ՝ Հայաստանում), քանի որ խոնավ պայմաններում և խոնավության մեջ ապրող անողնաշար կենդանիների և բակտերիաների ազդեցության տակ կղկղանքը շուտ է քայքայվում: Սակայն, անհրաժեշտ է ճշգրիտ իմանալ, թե որ տեսակին է այն պատկանում: Կղկղանքի պատկանելիության ճիշտ որոշումը կախված է մոնիթորինգ իրականացնող մարդկանց փորձից և դիտողականությունից: Հիմնականում, պահպանվող տարածքների աշխատակիցների համար կղկղանքի տարբերակումը մեծ խնդիր չէ (Barea-Azcon et al., 2007):

Վերջին տարիներին առավել մեծ տարածում է ստանում կղկղանքի գենետիկական (ԴՆԹ) հետազոտման մեթոդը, որը թույլ է տալիս ավելի հստակ որոշել կենդանու տեսակը, ինչպես նաև նրա սեռը, անհատականությունը, գենետիկ բազմազանությունը և ազգակցական կապերը նույն տեսակի այլ առանձնյակների հետ: Ամեն մի առանձնյակի մասին ստացված գենետիկական տեղեկության համեմատումը հաշվառված կղկղանքի գրանցումների հետ հնարավորություն է տալիս իմանալ, թե կոնկրետ կենդանին ինչպես է տեղաշարժվում և որտեղ է այն բնակվում (Janecka, 2008):

Կղկղանքի տեսողական պատկանելիությունը այս կամ այն տեսակին ավելի հեշտ ու հուսալի է որոշել խոշոր գիշատիչների կամ այլ կենդանիների դեպքում: Այդ պատճառով այստեղ առաջարկվում է կիրառել կղկղանքի գրանցումը **ընձառյուծի, լուսանի, արջի, գայլի և բորենու** մոնիթորինգի ընթացքում: Փորձը ցույց է տվել, որ կղկղանքի հիման վրա իրականացվող մոնիթորինգը հատկապես նպատակահարմար է ընձառյուծի դեպքում, քանի որ նրա թվաքանակը շատ չնչին է, իսկ հետքերը և գոյության մասին վկայող այլ նշանները ընձառյուծի քարքարոտ ապրելավայրերում շատ քիչ են հանդիպում (Khorozyan et al., 2010):

Սմբակավորների կղկղանքը շուտ է վերանում խոնավ տարածքներում: Բացի այդ, այն դժվար է գտնել բարձր խոտածածկի մեջ, կամ էլ (բեզոարյան այծերի և մուֆլոնների դեպքում) հանդիպում է պատահական կերպով: Միակ սմբակավոր տեսակը, որի մոնիթորինգը կարելի է իրականացնել կղկղանքի գրանցման միջոցով, ազնվացեղ եղջերուն է, բայց այն Հայաստանում համարվում է պատահական ներգաղթող տեսակ ու նրա կղկղանք գտնելու հավանականությունը չնչին է:

Որոշ կենդանիների կարելի է գրավել ցեղակիցների ձայնագրված ձայներով (հիմնականում՝ գայլերին կամ բորենիներին) կամ էլ կենդանի, սատկացված ու հոտավետ խայծերով (արջ, գայլ, բորենի, հնարավոր է լուսան): Խայծի կողքը կարելի է տեղադրել հարմարանքներ կենդանու մազերը հավաքելու համար կամ թաքնված ֆոտոխցիկները: Հետագայում, հավաքված մազերը և կղկղանքը

կարելի է օգտագործել գենետիկական վերլուծության միջոցով կենդանու սեռը, անհատականությունը, ցեղակցական կապերը և գենետիկական վիճակը որոշելու համար: Ֆոտոխցիկների լուսասնկարներից հնարավոր է որոշել կենդանիների քանակը և տարածվածությունը: Բացի դրանից, կոկոնները հանդիսանում է կենդանու սննդի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը (Gese, 2001):

Կոկոնների պատկանելիությունը կարելի է պարզել վիզուալ (դրա համար մեծ փորձ է պետք), բիոքիմիական և գենետիկական մեթոդների օգնությամբ: Մազի պատկանելիությունը կարելի է պարզել լուսային մանրադիտակի կամ գենետիկական մեթոդի օգնությամբ: Լուսային մանրադիտակի օգտագործումը անհամեմատ պարզ է, բայց պահանջում է մազերի հավաքածուի (որը հիմնականում հավաքվում է կենդանաբանական այգուց) առկայությունը: Տեսակը որոշվում է հավաքված մազերի և հավաքածուի մազերի մանրադիտակային համեմատության ճանապարհով: Այդպիսի հավաքածուն նաև օգնում է պարզել գիշատիչների կերային բազան՝ հիմք ընդունելով որսի մազերը կոկոնների կազմում:

Կոկոնների հաշվառումը իրականացվում է հետևյալ ձևով: Արահետով անցնելու ժամանակ հանդիպած կոկոնները հավաքվում է և արձանագրվում: Որոշ ժամանակ անց նոր հետազոտություն կատարելիս հավաքվում և արձանագրվում են նորերը, որոնք հայտնվել են առաջին հավաքագրումից հետո: Զուգահեռ չափվում է մեկ օրվա ընթացքում անցած երթուղու երկարությունը (կմ) և հաշվարկվում է տեսակի կոկոնների հաճախականության գործակիցը (կոկոնների քանակը 1 կմ-ի կամ 10 կմ-ի վրա): Առավել սովորական տեսակների համար օգտագործվում է քանակը 1 կմ-ի վրա, իսկ հազվագյուտ տեսակների համար՝ քանակը 10 կմ-ի վրա: Քանի որ կոկոնների հայտնաբերման հավանականությունը տարբեր տարածքներում կարող է տարբերվել, գործակիցները պետք է համեմատվեն նույն տարածքի սահմաններում (Webbon et al., 2004):

Կոկոնների քանակից հնարավոր չէ նախապես ասել, թե տեսակի քանի առանձնյակ են բնակվում տարածքում (Barea-Azcon et al., 2007): Պատճառները երեքն են.

1. Հետքերի նման, կոկոնները բնության մեջ ենթակա է փոփոխության՝ կախված կլիմայական և այլ գործոններից: Ինչպես արդեն նշվել է, կոկոնները շուտ է քայքայվում խոնավության և խոնավ պայմաններում ապրող անողնաշար կենդանիների ազդեցության տակ և երկար է մնում միայն չոր և տաք պայմաններում: Բացի դրանից, կոկոնների քանակությունը կախված է ընդունած սննդի կազմից, օրինակ՝ չմարսվող նյութերի (օրինակ՝ մորթու) առատությունը սննդի մեջ ստիպում են կենդանուն ավելի հաճախակի կղել:
2. Հայտնի չէ, կոկոնների քանի նմուշ է արտադրվում ժամանակի մի միավորի վրա ըստ կերված որսի տեսակի և քանակի: Համապատասխան հետազոտությունները կարելի է իրականացնել կենդանաբանական այգում, բայց անազատ պայմաններում կղելու հաճախականությունը կարող է տարբերվել բնական պայմաններից, քանի որ այնտեղ կենդանին ավելի լավ որակի կեր է ուտում և ավելի քիչ է շարժվում:
3. Հայտնի չէ, թե արտադրվող կոկոնների նմուշներից քանիսն են պահպանվում մինչև դրանց գրանցվելը մոնիթորինգի ժամանակ: Այն իմանալու համար փորձնական հետազոտություններ են իրականացնում կենդանաբանական այգուց վերցված կոկոնների հիման վրա (Godbois et al., 2005):

Ընձառյուծի կոկոնների գրանցման հիման վրա մշակվել և տպագրվել է Հայաստանում բնակվող ընձառյուծի պոպուլյացիայի մոնիթորինգի սխեման (Khorozyan et al., 2010): Այս սխեմայի համաձայն, մի տարվա հաշվարկով տեսակի արեալի 17 տարածքներից յուրաքանչյուրը պետք է հետազոտվի 9 արշավների միջոցով. 3՝ գարնանը, 3՝ ամռանը և 3՝ աշնանը: Դրանց միջև ժա-

մանակաշրջանը տևում է 3-4 ամիս, որի ընթացքում ենթադրվում է, որ ընձառյուծը կմտնի տարածք ու կթողնի կղկղանքը ու այն կմնա ճանաչելի մոնիթորինգ անցկացնող մարդկանց համար: Յուրաքանչյուր երթուղին պետք է հետազոտվի տարբեր սեզոններին. մի արշավ՝ զարնանը, մի՝ ամռանը և մի՝ աշնանը: Այդպիսով, ամեն մի արշավը ներառում է մի երթուղի և տևում է մի օր: Նման մոնիթորինգի տվյալները ցույց են տալիս ընձառյուծի ներկայությունը այս կամ այն տարածքում, եթե գրանցվել է առնվազն մի կղկղանք և հստակ բացակայություն՝ եթե կղկղանքը չի գրանցվել: Հստակ բացակայությունը նշանակում է, որ այն բացառում է այն տարբերակը, որ ընձառյուծը ներկա է, բայց չի բացահայտվել:

Որպեսզի մոնիթորինգը լինի առավել արդյունավետ, այն պետք է իրականացվի ստանդարտ մեթոդով (տես՝ Մոնիթորինգի ստանդարտացում): Մոնիթորինգը իրականացնելուց առաջ պետք է տպել արձանագրությունները (տես՝ Հավելված 7) և դրանք վերցնել դաշտ դուրս գալուց:

Կղկղանքը գտնելուց անմիջապես հետո արձանագրության մեջ պետք է անցկացնել հետևյալ տեղեկությունը.

1. Կենդանու տեսակը
2. Ժամը
3. Վայրի անվանումը
4. Այլ նշանները, որոնք գտնվել են կղկղանքի կողքը (հետքեր և այլն)
5. Եղանակը
6. Կղկղանքի տարիքը (թարմ, հին, միջանկյալ վիճակում)
7. Կղկղանքի նկարագրությունը
8. Կղկղանքի գտնվելու վայրի նկարագրությունը
9. Կղկղանքի կոորդինատները (աստիճան/րոպե/վայրկյան)
10. Կղկղանքի բարձրությունը (մ)

Եվ այդպես գտնված յուրաքանչյուր կղկղանքի համար:

Որսի մնացորդների և բույսերի կոճոնքի գրանցում

Բույսերի կոճոնքը (поедъ) ու որսի մնացորդները հազվադեպ են հանդիպում, հատկապես գիշատիչների մոտ, որոնք նախընտրում են սնվել թաքուն վայրերում: Այդ մնացորդները կարելի է հանդիպել պատահական, ուստի դրանց հաշվառումը անցկացվում է հետքերի ու կղկղանքի հաշվառմանը զուգահեռ: Համապատասխանաբար, հետքերի ու կղկղանքի առկայությամբ որոշում են, թե որսի մնացորդներն ու բույսերի կոճոնքը որ տեսակին են պատկանում:

Հայաստանի պայմաններում, որսի մնացորդների գրանցումը նպատակահարմար է ընդգրկել միայն **գայլի** ու **արջի** մոնիթորինգի մեջ: Այն հիմնականում պետք է ուղղված լինի սպանված ընտանի կենդանիների մնացորդների գրանցման վրա, քանի որ այս երկու տեսակները մեծ վնաս են հասցնում հանրապետության անասնապահությանը: Որսի մնացորդներից հնարավոր չէ հաշվարկել սնվող գիշատիչների քանակը, բայց դա կարելի է գնահատել լեշի մոտակայքում գտնվող հետքերից կամ կղկղանքից: Շատ արդյունավետ կարող է լինել մնացորդների մոտ թաքնված ֆոտոխցիկների տեղադրումը, քանի որ գիշատիչները սովորաբար վերադառնում են իրենց (հազվադեպ՝ այլ գիշատիչների) կողմից սպանված որսին, մինչև լրիվ չկլանեն դրա ուտելի բոլոր մասերը:

Հայաստանում բնակվող արջերը հիմնականում բուսակեր են և նրանց կողմից կերած բույսերի կոճոնքը բավականին հեշտ է հայտնաբերել ու գրանցել, հատկապես՝ զարնանը, երբ արջը եռանդով սնվում է թարմ բուսականությամբ ձմեռային քնից ելնելուց հետո, ինչպես նաև աշնանը՝ երբ արջը, մինչ քուն մտնելը, սնվում է պտուղներով, հատապտուղներով և ընկույզերով: Աշնանը արջերը հաճախ մտնում են ու ավերում պտղատու այգիներ ու բանջարանոցները: Ծառերի բերքը

ուտելուց, արջերը հաճախ կոտորում են դրանց ճյուղերը, ինչը դժվար է չնկատել: Արջի ճանկերի հետքերը լավ երևում են ծառի վրա, իսկ ոտնահետքերը՝ ծառի շուրջը: Մնվելու վայրերում արջերը թողնում են մեծ քանակությամբ հետքեր ու կղկղանք, ինչի շնորհիվ կարելի է գնահատել կենդանու քվաքանակը (Ambarli, 2006):

Որպեսզի մոնիթորինգը լինի առավել արդյունավետ, այն պետք է իրականացվի ստանդարտ մեթոդով (տես՝ Մոնիթորինգի ստանդարտացում): Մոնիթորինգը իրականացնելուց առաջ պետք է տպել արձանագրությունները (տես՝ Հավելված 7) և վերցնել դաշտ դուրս գալուց:

Որսի մնացորդներն ու բույսերի կոճոնքը գտնելուց անմիջապես հետո արձանագրության մեջ պետք է անցկացնել հետևյալ տեղեկությունը.

1. Կենդանու տեսակը
2. Կերված կենդանու կամ բույսի տեսակը
3. Կերված կենդանու սեռն ու տարիքը
4. Ժամը
5. Վայրի անվանումը
6. Գոյության այլ նշանները (կղկղանք, հետքեր և այլն)
7. Եղանակը
8. Հայտնաբերվածի տարիքը (թարմ, հին, միջանկյալ վիճակում)
9. Կերվածության աստիճանը (ամբողջական, մասամբ, մի փոքր)
10. Հայտնաբերվածի կոորդինատները (աստիճան/րոպե/վայրկյան)
11. Հայտնաբերվածի բարձրությունը (մ)

Եվ այդպես յուրաքանչյուր հայտնաբերվածի համար:

Ճանկովածքների և փորվածքների գրանցում

Ճանկովածքները (поскреб) իրենցից ներկայացնում են հողի վրա ոչ մեծ խորությամբ (1-2 սմ) **ընձառյուծի** կամ **լուսանի** կողմից փորված տարածքներ, որոնցով կենդանին մյուս առանձնյակներին տեղեկացնում է իր գոյության մասին: Հայաստանում բնակվող ընձառյուծները իրենց քիչ լինելու պատճառով ճանկովածքները օգտագործում են միայն բազմացման շրջանում՝ ձմռանը ու գարնան սկզբում, որպեսզի գրավեն հակառակ սեռի ուշադրությունը: Լուսանը կարող է ճանկովածքները օգտագործել ամբողջ տարին, որպեսզի տարածքի հետ կապված մյուս արուների հետ վեճեր չունենա: Այս պատճառով ճանկովածքների օգտագործումը քիչ արդյունավետ է ընձառյուծի ու շատ՝ **լուսանի** մոնիթորինգը իրականացնելու համար:

Ինչպես և հետքերը, ճանկովածքները վատ են տպվում պինդ հողերի վրա: Հետքերի ու կղկղանքի նման, ճանկովածքները գրանցվում են գործակցի տեսքով՝ որպես դրանց քանակը 1 կմ-ի կամ 10 կմ-ի վրա: Կենդանիների քանակը կարելի է գնահատել ճանկովածքների կողքը գտնվող հետքերից կամ կղկղանքից:

Փորվածքները այն տարածքներն են, որոնք կենդանին փորում է սնունդ հայթհայթելու համար: Դրանք առավել բնորոշ են **վայրի խոզերի** և **արջերի** կերակրատեղերին, հատկապես՝ գարնանը ու աշնանը: Արջերը հաճախ հողը փորում են արմատներ, միջատների թրթուրներ և մրջյուններ գտնելու համար: Վայրի խոզերը հաճախակի օգտվում են ցեխալոգանքներից, որոնք նկատելի են և երկար ժամանակ են պահպանվում: Դրանք կարելի է համարել փորվածք, բայց անպայման պետք է նշել թե որն է փորվածքը և որը՝ ցեխալոգարանը, քանի որ դրանք կարող են պատկանել միևնույն խմբի խոզերին:

Փորվածքների հաճախականության գործակիցը նման է հետքերի, կղկղանքի կամ ճանկովածքների գործակիցներին:

Որպեսզի մոնիթորինգը լինի առավել արդյունավետ, այն պետք է իրականացվի ստանդարտ մեթոդով (տես՝ Մոնիթորինգի ստանդարտացում): Մոնիթորինգը իրականացնելուց առաջ պետք է տպել արձանագրությունները և վերցնել դաշտ դուրս գալուց:

Ճանկովածք ու փորվածք գտնելուց անմիջապես հետո արձանագրության մեջ պետք է անցկացնել հետևյալ տեղեկությունը.

1. Կենդանու տեսակը
2. Խմբում ճանկովածքների կամ փորվածքների քանակը
3. Ժամը
4. Հողը
5. Ռելիեֆը, լանջի դիրքադրությունը
6. Վայրի անվանումը
7. Գոյության այլ նշանները (հետքեր, կղկղանք և այլն)
8. Եղանակը
9. Ճանկովածքի կամ փորվածքի նկարագրությունը
10. Կոորդինատները (աստիճան/րոպե/վայրկյան)
11. Բարձրությունը (մ)
12. Տարիքը (թարմ, հին, միջանկյալ վիճակում)
13. Խորությունը (սմ)
14. Լայնությունը (սմ)
15. Երկարությունը (սմ)

Եվ այդպես յուրաքանչյուր ճանկովածքի կամ փորվածքի համար:

Տեղացի բնակչության հարցումներ

Կենդանիների տարածման, իսկ երբեմն՝ նաև մոտավոր քանակության մասին տեղեկություն ստանալու ամենապարզագույն մեթոդներից է տեղացիների և բնությունը ճանաչող այլ մարդկանց (որսորդներ, հովիվներ, տարեց մարդիկ, անտառապահներ, ԲՀՊՏ-ների աշխատակիցներ, տուրիստներ կամ գիդեր) հետ հարցումներ անցկացնելը: Վայրի բնության գրկում երկար ժամանակ անցկացնող մարդկանց հետ առավել սերտ շփումները լրացուցիչ սուբյեկտիվ տեղեկություն են տալիս տեսակի քանակության, տարածման և կարգավիճակի մասին: Այս մեթոդը լայն կիրառություն ունի կենդանիների ուսումնասիրության, պահպանման և մոնիթորինգի սկզբնական շրջաններում, հատկապես՝ սահմանափակ ռեսուրսներ ունեցող զարգացող երկրներում (Karanth et al., 2002; White et al., 2005; Capt, 2007):

Հարցումները հիմնականում կազմակերպվում են մոնիթորինգի հետևյալ գործընթացների մեջ.

1. Տեսակի տարածվածության ու կարգավիճակի լայնածավալ գնահատում, օրինակ՝ աղվեսի մոնիթորինգը Մեծ Բրիտանիայում
2. Գիշատիչների կամ այլ կենդանիների կողմից գյուղատնտեսությանը հասցվող վնասի գնահատում
3. Որսի կամ որսագողության ծավալների գնահատում ըստ մորթիների կամ այլ ավարների (օրինակ՝ պոզերի) քանակության
4. Ավտոմեքենաների հետ բախման հետևանքով կենդանիների մահացության գնահատում:

Տեղացի բնակչության հարցումները հատկապես անհրաժեշտ են հազվագյուտ տեսակների և ընդարձակ տարածքներում մոնիթորինգի իրականացման ժամանակ (Capt, 2007): Սակայն, այն ունի մի շարք սկզբունքային թերություններ.

1. Կենդանու տեսակների սխալ իմացությունը
2. Շատ որսորդներ կամ այլ մարդիկ խուսափում են վայրի կենդանիների մասին տեղեկություն տալուց, հատկապես եթե խոսքը գնում է հազվագյուտ կամ պահպանվող կենդանու մասին, որը հետագայում սպանվել է
3. Տվյալների զգալի մասը հավաքվում է ճանապարհների և բնակավայրերի մոտ ընկած տարածքներում, և հեռավոր վայրերում կենդանիների մասին տվյալները հաճախ բացակայում են:

Կենդանատեսակների մեջ ոչ ճիշտ կողմնորոշվելը շատ արդիական է Հայաստանի համար: Տեղացի բնակչության գերակշռող մասը տեղյակ չի ընձառյուծի և նույնիսկ լուսանի գոյության մասին, ինչի հետևանքով մարդիկ կամ սխալ տեղեկություն են տալիս, կամ էլ շփոթում են այս տեսակները: Տեղաբնակները լավ են ճանաչում վայրի խոզին, այծյամին, բեզուարյան այծին և մուֆլոնին, բայց շատ դեպքերում չեն կարող տալ նրանց մասին մանրամասն տեղեկություն: Հետևաբար, հարցումները հուսալի չեն այս տեսակների մոնիթորինգը իրականացնելու համար:

Միաժամանակ, հարցումները կարող են կարևոր տեղեկություն տալ **գայլերի** և **արջերի** տարածվածության, էկոլոգիայի ու նույնիսկ թվաքանակի մասին, հատկապես՝ գյուղական համայնքներին պատկանող հողատարածքների սահմաններում, որտեղ այս գիշատիչները վնաս են կարող հասցնել գյուղատնտեսությանը (Ambarli, 2006): Բացի դրանից, գյուղացիները կամ ԲՀՊՏ-ների աշխատակիցները կարող են Հայաստանի ֆաունայի երկու պատահական ներգաղթող տեսակների (ազնվացեղ եղջերու և գոլավոր բորենի) ականատես լինել, ինչը առավել կարևոր է եղջերուի ու բորենու կարգավիճակը գնահատելու համար:

Կենդանիների կողմից գյուղատնտեսությանը հասցվող վնասի մասին տեղաբնակների բողոքների միտումները կարող են տրամաբանական մեթոդ հանդիսանալ տեսակի թվաքանակի և տարածման փոփոխության գնահատման համար: Սակայն, մինչ օրս դեռ հստակ ապացուցված չէ, որ ինչքան շատ են կենդանիները, այնքան մեծ է վնասը: Դրա պատճառները երկուսն են.

1. Մարդիկ սխալմամբ կարող են վնասը վերագրեն մի որևէ տեսակի, չնայած մեղավորը մեկ այլն է
2. Վնասի պատճառման հարցում հիմնական մեղավորը հենց ինքն է՝ մարդը և ոչ թե՝ վայրի կենդանին: Դրա օրինակները շատ են. հովիվը արածող նախիրը թողնում է առանց ուշադրության, նախիրը մտնում է անտառ ուր կենդանիների վրա հարձակվում են գայլերը, կամ էլ՝ անուշադրության արդյունքում կովը ժայռից ցած է ընկնում, բայց մեղավորը արջն է համարվում: Եվ այդպես շարունակ: Երբեմն, որոշ առանձնյակների (օրինակ՝ ծեր արու արջի) մոտ սովորություն է կարող դառնալ ընտանի կենդանիներին որսալը, բայց արդյունքում մարդիկ մեղադրում են բոլոր արջերին և սկսում նրանց վրա կրակել: Կենդանիների կողմից հասցված վնասը իրականում այնքան էլ մեծ չէ և այն կարելի է նվազագույնի հասցնել ուշադիր հովիվների, պահակների և հատկապես շների օգնությամբ:

Հարցումները կարելի է կատարել փոստով, հեռախոսով, անձնական շփման միջոցով և նույնիսկ ինտերնետով (White et al., 2005): Հայաստանի պայմաններից ելնելով, ամենահուսալի մեթոդը, անկասկած, անձնական շփումն է գյուղացիների, ԲՀՊՏ-ների անձնակազմի և այլ մարդկանց հետ: Միևնույն ժամանակ, հարցումները պետք է կատարվեն միայն բանիմաց մարդկանց հետ, այլապես ստացված տեղեկությունը կլինի սխալ և շեղված:

Որպեսզի մոնիթորինգը լինի առավել արդյունավետ, այն պետք է իրականացվի ստանդարտ մեթոդով (տես՝ Մոնիթորինգի ստանդարտացում): Մոնիթորինգը իրականացնելուց առաջ պետք է տպել արձանագրությունները (տես՝ Հավելված 7) և վերցնել դաշտ դուրս գալուց:

Հարցումներ իրականացնելու ժամանակ արձանագրության մեջ պետք է անցկացնել հետևյալ տեղեկությունը (Karanth et al., 2002).

1. Տեսակի պոպուլյացիայի կարգավիճակը և թվաքանակի միտումները. կայուն, նվազող, ավելացող, տեղեկություն չկա, տեսակը չի բնակվում
2. Տեղեկության աղբյուր. անձամբ տեսել եմ կենդանուն, անձամբ տեսել եմ կենդանու նշանները, ուրիշներից եմ լսել, տեղեկություն չունեմ: Նշվում է գրանցման վայրը, կոորդինատները:
3. Տեղեկություն ձագերի մասին. տեսել եմ ձագերին, տեսել եմ ձագերի նշանները, ուրիշներից եմ լսել, չգիտեմ: Նշել ձագերի հանդիպման վայրը, կոորդինատները:
4. Գիշատիչների որսի հիմնական տեսակները՝ ներառյալ ընտանի կենդանիներին
5. Ընտանի կենդանիներին, փեթակներին կամ այգիներին հասցված վնասի մասին տեղեկություն. տեսակը, վնաս տալու օրը ու ժամը, վայրի անվանումը ու կոորդինատները, վնասի տեսակը (անասուն, փեթակներ, այլն), վնասի քանակը կամ մակերեսը, մարդկանց վերաբերմունքը, առաջարկվող լուծման ձևերը
6. Որսագողության դեպքերը. պատահական դեպքեր կամ կազմակերպված որս
7. Մարդու գործունեության ինտենսիվությունը. բարձր, միջին, չկա
8. Այլ վտանգներ և դրանց ինտենսիվությունը

Եվ այդպես յուրաքանչյուր հարցման համար:

Գեոտեղեկատվական համակարգի (GIS) կիրառում

Մոնիթորինգի համար պարտադիր չի ամենուրեք փնտրել կենդանիներին կամ էլ նրանց գոյության նշանները: Ամեն մի տեսակը ունի իր նախընտրելի ապրելավայրերը, որոնց քարտեզավորումը բավականին տեղեկություն է տալիս տեսակի իրական ու հնարավոր բնակության վայրերի մասին: Լանդշաֆտների և ռելիեֆի քարտեզների վրա անց են կացվում կենդանիների դիտարկման, կոկղանքի կամ այլ նշանների գրանցման վայրերը, ինչի հիման վրա որոշվում է, թե ապրելավայրերից որոնք է ուսումնասիրվող տեսակը նախընտրում կամ անտեսում կամ որոնցից է խուսափում: Այդ աշխատանքում լայնորեն կիրառվում են գնալով մատչելի դարձող և համատարած օգտագործվող գեոտեղեկատվական համակարգը (GIS), համակարգչային քարտեզները (GIS քարտեզները) և գեոնավիգացիոն սարքերը (GPS):

GIS քարտեզների հիման վրա դրված են տեղեկատվական նյութերը որոնք գալիս են երկու տարբեր աղբյուրներից.

1. Բազային քարտեզներ
2. Մոնիթորինգի արդյունքներ

Բազային քարտեզների (արբանյական պատկերներ, տոպոգրաֆիկ քարտեզներ, պետական կադաստրային և հողօգտագործման տվյալներ) հիման վրա՝ թվայնացման միջոցով ստեղծվում են բազմաշերտ GIS քարտեզները: Դրանց շերտերը պարունակում են տարբեր տեղեկատվություն, օրինակ՝ մի շերտը կարող է լինել տարածքի ռելիեֆը, մյուսը՝ անտառածածկը, իսկ երրորդը՝ գետեր ու լճերը: Շերտը կարող է լինել կետային (ասենք, կենդանու գրանցման վայր) ու գծային (սահման, գետ): Ամեն մի շերտը կարելի է միացնել (ակտիվացնել) ու այդպիսով այն ցույց տալ քարտեզի վրա, կամ էլ անջատել, եթե այն աշխատանքի համար պետք չէ: Ակտիվացված շերտերը վերածածկվում են, ինչի շնորհիվ կարելի է գնահատել քարտեզավորված գործոնների ազդեցությունը միմյանց վրա, օրինակ՝ կենդանու գրանցման վայրերի բաշխվածությունը ըստ բարձրությունների կամ լանջերի թեքության աստիճանների (Stith and Kumar, 2002):

Մինչև GIS քարտեզներ ստեղծելը, շատ արդյունավետ է տվյալները մուտքագրել Google Earth տիեզերական քարտեզների վրա, որոնք կարելի է անվճար բեռնել ինտերնետից: Բացի այս ծրագրից, կան մի շարք այլ անվճար համակարգչային ծրագրեր, որոնք մշակվել են հատուկ կենդանիների տարածվածության հետազոտությունների և մոնիթորինգի համար (Beyer et al., 2010):

Միայն մուտքագրվող տեղեկատվությունը տալիս է սխալ քարտեզներ, դրա համար քարտեզագրման համար նախատեսվող բոլոր տվյալները պետք է վերցվեն հուսալի աղբյուրներից:

Ինչպես երևում է մոնիթորինգի արձանագրություններից (տես՝ Հավելված 7), կենդանու գոյության մասին փաստող բոլոր կետերը, երթուղիների դիրքը ու երկարությունը պետք է չափվեն ըստ դրանց աշխարհագրական լայնության և երկայնության: Այս նպատակով օգտագործում են GPS սարքը: Այն հետագայում միացնում են համակարգչին և դրա տվյալները մուտքագրում են GIS քարտեզների վրա (Cushman and McKelvey, 2010):

Կենդանիների մոնիթորինգը և դաշտային աշխատանքները հիմնականում իրականացվում են «ցանցային» (grid cells) մեթոդով: Քարտեզի վրա որոշվում են այն ապրելավայրերը, որտեղ նախատեսվում է կատարել մոնիթորինգը: Այնուհետև քարտեզագրված ապրելավայրերը ծածկվում են ստանդարտ չափ և սովորաբար քառակուսի ձև ունեցող տարածքների (պոլիգոնների, օրինակ՝ 3x3 կմ կամ 5x5 կմ) ցանցի շերտով: Մոնիթորինգը անցկացվում է այդպիսի կերպով, որ երթուղիները և արշավները մտնեն ամեն մի պոլիգոնի մեջ:

Բացի քարտեզներ ստեղծելուց, GIS համակարգը ունի այն առավելությունը, որ բոլոր մուտքագրվող տվյալները կարելի է գրանցել աղյուսակային տվյալների բազաների մեջ և դրանց հիման վրա կատարել տվյալների վիճակագրական վերլուծություն: Այսինքն, բացի քարտեզներ պատրաստելուց GIS-ը կարող է տալ շատ հարցերի պատասխաններ կենդանիների մոնիթորինգի տարբեր բնագավառներում:

Ասում են, որ լավ քարտեզը հազար բառ արժե: Որպեսզի այն լինի առավել հուսալի և տեղեկատվությամբ հարուստ, մոնիթորինգի տվյալների քարտեզագրումը պետք է իրականացնել կանոնավոր կերպով, և ոչ թե միայն մոնիթորինգի վերջում, երբ ամբողջ տեղեկատվությունն արդեն հավաքված է: Դա արվում է նրա համար, որ քարտեզի վրա երևան սխալ տվյալները (օրինակ՝ գրանցման վայրի կոորդինատները սխալ են և քարտեզի վրա այն ընկնում է լրիվ ուրիշ տեղ) և ցանցի չհետագոտված տարածքները, որտեղ մոնիթորինգը անպայման պետք է կատարվի (Stith and Kumar, 2002; Cushman and McKelvey, 2010):

Թաքնված ֆոտոխցիկների օգտագործում

Թաքնված ֆոտոխցիկները լուսանկարչական սարքեր են, որոնք միացված են շարժման և ջերմության ընդունիչների կամ էլ ինֆրակարմիր ճառագայթի աղբյուրի հետ: Անցնելով թաքնված ֆոտոխցիկի կողքով՝ կենդանին իր մարմնով ծածկում է ինֆրակարմիր ճառագայթը կամ ընդունիչները անդրադառնում են տաք օբյեկտի շարժմանը՝ փոխանցելով ազդանշան լուսանկարչական սարքին, որն էլ նկարում է կենդանուն:

Վերջին մի քանի տարվա մեջ թվային թաքնված ֆոտոխցիկները բուռն զարգացում են ապրում, իսկ ժապավենային սարքավորումները շրջանառությունից հանվել են՝ չնայած շատ դեպքերում դրանք ավելի լավ են աշխատում, քան թվայինները: Թվային մոդելները դեռ ունեն հիմնական թերություններ, որոնցից կարելի է խուսափել միայն մի քանի մոդելների ձեռք բերման և պրակտիկ կիրառման միջոցով (Kays and Slauson, 2008):

Այդ թերությունները բնորոշ են ոչ բոլոր մոդելներին, բայց հատուկ ուշադրություն են պահանջում նախնական ընտրություն կատարելուց և ձեռք բերված սարքավորումներ օգտագործելուց: Դրանք են.

1. Երկար ազդանշան, այսինքն՝ ֆոտոխցիկի դիմացով անցնելուց կենդանին հասցնում է հեռանալ՝ դեռ չնկարված
2. Մարտկոցների արագ սպառումը, հատկապես՝ ձմռանը: Դրա համար պետք է օգտագործել բարձրորակ մարտկոցներ՝ Duracell, Energizer կամ նմանատիպ լիցքավորվող մոդելներ
3. Սարքավորումները կարող են լինել ջրանցիկ և անձրևի կամ ձյան պայմաններում շարքից դուրս գալ
4. Գողության կամ մարդկանց կողմից ջարդելու բարձր ռիսկ, հատկապես՝ ոչ պահպանվող տարածքներում

5. Կողմնակի օբյեկտների (արևածագ, արևամուտ, տերևների շարժ) լուսանկարվելու բազմաթիվ դեպքերը: Դա մեծ խնդիր չէ, եթե ֆոտոխցիկի հիշողության քարտը ունի բավարար ծավալ (առնվազն՝ 2 GB)
6. Լուսանկարները կարող են լինել վատ որակի և ունենալ ցածր ռեզոլուցիա (2-5 Mpx)
7. Լուսանկարները կարող են լինել գունավոր ցերեկային ժամերին և սև ու սպիտակ՝ գիշերային ժամերին:

Թաքնված ֆոտոխցիկների գները դրանց զարգացման ընթացքում նվազում են՝ տատանվելով 70-80 մինչև 500-600 ԱՄՆ դոլար: Դրանք կարելի է ձեռք բերել ԱՄՆ-ից ինտերնետի միջոցով, օրինակ՝ «www.cabelas.com» վեբ-կայքից: Ոչ բոլոր կազմակերպություններն են կարող ուղարկել այս ապրանքը Հայաստան, իսկ նույնիսկ եթե ուղարկում են, ապա համապատասխան փոխադրման և մաքսագերծման ծախսերը բավականին մեծ են, ինչի պատճառով ամեն մի թաքնված ֆոտոխցիկի գինը մոտավորապես կրկնակի է դառնում:

Այնուամենայնիվ, այս սարքավորումները անփոխարինելի են կենդանիների հետազոտման և մոնիթորինգի իրականացման գործում, քանի որ թույլ են տալիս անմիջապես տեսնելու տարածքում բնակվող կենդանիներին: Ավանդապես դրանք կիրառվում են այն զոլավոր կամ բծավոր կենդանիների նկատմամբ (**ընձառյուծ, լուսան, գոլավոր բորենի**) ում մոտ աջ ու ձախ կողքերի բծերը կամ գույները նույն առանձնյակի մոտ իրարից տարբերվում են և, դրանք համեմատելով, հնարավոր է հաշվարկել լուսանկարված կենդանիների թվաքանակը (Kays and Slauson, 2008; Ghoddousi et al., 2010; Singh et al., 2010; O'Connell et al., 2011): Միևնույն ժամանակ, այս մեթոդը զարգանում է այն ուղղությամբ, որ արդեն հնարավոր է հաշվարկել նաև միագույն կենդանիների թվաքանակը (**արջ, գայլ, վայրի խոզ, այծյամ, եղջերու և բեզուարյան այծ**) (Rowcliffe et al., 2008; Rovero and Marshall, 2009):

Հայաստանի պայմաններում ընձառյուծի մոնիթորինգի համար ֆոտոխցիկների օգտագործումը այդքան էլ նպատակահարմար չէ, քանի որ այս տեսակը չափազանց հազվագյուտ է ու տարածված է դժվարհասանելի լեռնային ապրելավայրերում: Փոքր պոպուլյացիաների մոնիթորինգի առավել արդյունավետ մեթոդը գոյության նշանների (հետքեր, կղկղանք և այլն) գրանցում է (Barlow et al., 2008, 2009): Ընձառյուծի մոնիթորինգի համար օպտիմալ նշանը կղկղանքն է (Khorozyan et al., 2010): Երբ ընձառյուծի պոպուլյացիայի խտությունը միջին է կամ բարձր, ֆոտոխցիկները տալիս են գերազանց արդյունքներ (Ghoddousi et al., 2010):

Հայաստանում բնակվող խոշոր կաթնասուններից միայն **հայկական մուֆլոնն** է, ում հնարավոր չէ հետազոտել թաքնված ֆոտոխցիկների միջոցով, քանի որ այդ սմբակավորները ապրում են բարձրլեռնային մարգագետիններում, որտեղ չկան արահետներ որոնց վրա հնարավոր կլիներ տեղադրել սարքավորումներ և լուսանկարել տեղաշարժվող առանձնյակներին:

Դաշտային պայմաններում ֆոտոխցիկները տեղադրում են կենդանիների կողմից մշտապես օգտագործվող արահետների երկայնքով գտնվող ծառերի՝ կամ անտառագուրկ տարածքներում՝ մեծ քարերի վրա: Մարքերը լավ ամրացվում են, որպեսզի չնկարեն քամու կամ այլ գործոնների ազդեցության ժամանակ, և տեղադրվում են 30-45 սմ բարձրության վրա՝ արահետից քիչ հեռու այն հաշվարկով, որ լուսանկարվի անցնող կենդանու ձախ կամ աջ կողքը: Մարքի տեղադրման վայրը գրանցվում է GPS սարքով՝ դրա ապագա քարտեզագրման համար: Մարքի օգտագործման ձևերը մանրամասն գրված են լինում մոդելի ձեռնարկի մեջ: Եթե թաքնված ֆոտոխցիկները քիչ են, ապա դրանք տեղադրվում են մեկական եղանակով, բայց հետո համեմատվում են միայն աջ կամ ձախ կողքից ստացված լուսանկարները՝ կախված նրանից, թե որ կողքի պատկերները ավելի շատ են (Kays and Slauson, 2008; O'Connell et al., 2011):

Մինչև սարքի վերջնական տեղադրելը, այն պետք է ներսից համարակալվի (օրինակ՝ Ֆ-1, Ֆ-2 և այլն) անջրանցիկ մարկերով: Նույնն էլ պետք է արվի հիշողության քարտերի հետ: Ամեն մի ֆոտոխցիկը պետք է ունենա 2 քարտ. մեկը հանվում է լուսանկարները ստուգելու համար, մյուսը տեղադրվում է դրա տեղը: Տեղադրելուց հետո, արվում է փորձնական կադրը և գրանցվում է դրա համարը:

Տեղադրված սարքերը հարկավոր է հետևել ամեն ամիս: Կրկնակի այցի ժամանակ փոխվում են մարտկոցները, օգտագործված հիշողության քարտը փոխարինվում է նորով և հետագայում բացվում է համակարգչի վրա, և գրանցվում են բոլոր հետաքրքիր փաստերը (սարքի հետ կապված տեխնիկական խնդիրները, հետքերը կամ կղկղանքը սարքի տեղադրման վայրում և այլն):

Ֆոտոխցիկների միջոցով ստացված լուսանկարներով որոշվում են տեսակները, կենդանիների քանակը, սեռը ու տարիքային խումբը, գրանցման օրը ու ժամը (որը տպվում է կադրի վրա), վայրը: Կենդանու գրանցման վայրերը քարտեզագրվում են ու մշակվում համակարգչային ծրագրերի միջոցով (CAPTURE, DENSITY, ExtractCompare, Camera Base, PRESENCE) (Khorozyan et al., 2008; Ghoddousi et al., 2010):

Ինչպես և հետքերի կամ կղկղանքի գրանցման դեպքում, կարելի է հաշվարկել լուսանկարների հաճախականության գործակիցը՝ որպես լուսանկարների քանակը 100 ֆոտոխցիկ-օրվա վրա: Բայց այս մեթոդի օգտագործումը հաճախ դժվարություններ է ստեղծում, քանի որ տարբեր կադրերի վրա կարող է հանդիպել միևնույն կենդանին: Դա հատկապես տեղի է ունենում խմբերով ապրող դանդաղաշարժ տեսակների (հիմնականում՝ վայրի խոզի) մոտ: Բացի դրանից, կենդանիների թվաքանակի և գործակցի միջև ուղիղ կապ չատ հաճախ չի հայտնաբերվում (O'Connell et al., 2011):

Որպեսզի մոնիթորինգը լինի առավել արդյունավետ, այն պետք է իրականացվի ստանդարտ մեթոդով (տես՝ Մոնիթորինգի ստանդարտացում): Մոնիթորինգը իրականացնելուց առաջ պետք է տպել արձանագրությունները (տես՝ Հավելված 7) և վերցնել դաշտ դուրս գալուց:

Թաքնված ֆոտոխցիկների օգտագործման ժամանակ արձանագրությունների մեջ պետք է անցկացնել հետևյալ տեղեկությունը.

Արձանագրություն #1. Ֆոտոխցիկների տեղադրում և ստուգում

1. Ֆոտոխցիկի համարը
2. Տեղադրման օրը ու ժամը
3. Ստուգման օրը ու ժամը
4. Վայրի անվանումը
5. Կոորդինատները
6. Բարձրությունը (մ)
7. Տեղադրման ժամանակ հիշողության քարտի համարը
8. Ստուգման ժամանակ հիշողության քարտի համարը
9. Տեղադրման ժամանակ առաջին կադրի համարը
10. Ստուգման ժամանակ առաջին կադրի համարը

Արձանագրություն # 2. Լուսանկարված տեսակների գրանցում

1. Ֆոտոխցիկի համարը
2. Կադրի համարը
3. Նկարվելու օրը ու ժամը
4. Տեսակը
5. Սեռը, տարիքը
6. Վայրի անվանումը
7. Կոորդինատները
8. Բարձրությունը (մ)
9. Անհատական առանձնահատկությունները

Համակարգչային մոդելավորում

Համակարգչային մոդելավորումը հանդիսանում է կենդանիների մոնիթորինգի վերջնական փուլ, որի շրջանակներում դաշտային մոնիթորինգի ընթացքում ստացված տվյալները մուտքագրվում են այս կամ այն համակարգչային ծրագրի տվյալների բազայի մեջ, պահպանվում են և ենթարկվում են վիճակագրական վերլուծության:

Քանի որ մոդելավորումը մաթեմատիկական տերմիններով լի գիտակիրառական ասպարեզն է, որը դժվար հասկանալի է դրան անծանոթ մարդկանց համար, այստեղ կներկայացվի միայն կենդանիների մոնիթորինգի համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերի անվանումների և դրանց կիրառելիության կարճ նկարագիրը՝ ըստ վերը նշված մոնիթորինգի մեթոդների:

Ստորև նշված ծրագրերի զգալի մասը կարելի է անվճար բեռնել համապատասխան կայքերից:

Դիտարկումներ

Դիտարկումների միջոցով ստացված տվյալները մշակվում են DISTANCE (<www.ruwpa.st-and.ac.uk/distance>) ծրագրի միջոցով (Thomas et al., 2010): Ըստ դրան, գնահատվում է կենդանիների թվաքանակը և պոպուլյացիայի կառուցվածքը: Բացի դրանից, դիտարկումների վայրերը մուտքագրվում են ArcGIS (<www.esri.com>) կամ MapInfo (<www.mapinfo.com>) GIS քարտեզների վրա՝ առանձին խմբավորումների և ընդհանուր պոպուլյացիայի տարածվածության կառուցվածքը գնահատելու նպատակով (Beyer et al., 2010): Նպատակահարմար է նաև մոդելավորել կենդանիների ներկայության-բացակայության (presence-absence) կառուցվածքը ըստ էկոլոգիական գործոնների PRESENCE (<www.mbr-pwrc.usgs.gov/software/presence.html>) ծրագրի օգնությամբ (MacKenzie et al., 2006; Khorozyan et al., 2008): Հետևաբար, հնարավոր է գնահատել պոպուլյացիայի տարածվածության ներկան ու ապագան RAMAS-ի (<www.ramas.com>) միջոցով (Sezen et al., 2004; Yamada et al., 2004):

Կենդանիների հետքերի, կղկղանքի, որսի մնացորդների, բույսերի կոճոնքի, ճանկովածքների և փորվածքների գրանցում

Այս կենդանիների գոյության մասին փաստող նշանների գրանցման տվյալները մուտքագրվում են վերը նշված GIS քարտեզների վրա և օգտագործվում են PRESENCE և/կամ RAMAS մոդելավորման մեջ (Khorozyan et al., 2010):

Տեղացի բնակչության հարցումներ

Հարցումների տվյալների վերլուծության մեջ մոդելավորումը չի կիրառվում, հիմնականում օգտագործվում են ավանդական վիճակագրական մեթոդները (օրինակ՝ ANOVA), ինչի համար օգտվում են MS Excel, Access կամ SPSS ծրագրերից (Quinn and Keough, 2002):

Թաքնված ֆոտոխցիկների օգտագործում

Ֆոտոխցիկներից ստացված տվյալների վերլուծությունը՝ կենդանիների թվաքանակը գնահատելու նպատակով իրականացվում է հիմնականում CAPTURE (<www.mbr-pwrc.usgs.gov/software>) և/կամ DENSITY (<www.otago.ac.nz/density>) ծրագրերի միջոցով: Յուրահատուկ բնական տարբերիչ պատկերներ ունեցող տեսակների մոտ (ընձառյուծի ու լուսանի բծերը, բորենու գույրը) առանձնյակներին կարելի է ճանաչել լուսանկարների 3D ծավալուն պատկերներից՝ կիրառելով ExtractCompare (<www.conservationresearch.co.uk>) ծրագիրը (Hiby et al., 2009): Camera Base (<www.atrium-biodiversity.org/tools/camerabase>) ծրագիրը օգնում է կարգավորել և մշակել ֆոտոխցիկներից ստացված բազմաթիվ լուսանկարները: Ֆոտոխցիկների տեղադրման վայ-

րերը մուտքագրում են վերը նշված GIS քարտեզների վրա և օգտագործում են PRESENCE և/կամ RAMAS մոդելավորման մեջ (Linkie et al., 2006):

6.6.2. Մոնիթորինգի ստանդարտացում

Շատ կարևոր է հիշել այն մասին, որ կենդանիների մոնիթորինգը միշտ պետք է իրականացնել ստանդարտ սխեմայով: Դա նշանակում է, որ ստորև նշված բոլոր պայմանները ճշտությամբ պետք է կատարվեն: Այդ պայմանների կատարումը ամեննին էլ կապ չունի, թե ինչ ձևով և որ կենդանու համար է մոնիթորինգը իրականացվում:

Մինչ երթուղի դուրս գալը, ճամբարում յուրաքանչյուր մոնիթորինգի արձանագրության մեջ անցկացվում է հետևյալ տեղեկությունը.

1. Ամիս-ամսաթիվը
2. Երթուղու համարը
3. Տվյալ երթուղում մոնիթորինգ իրականացնող երկու մարդկանց անունները
4. Տեղաշարժման տեսակը (հետիոտն, հեծած և այլն)
5. Երթուղին սկսելու վայրի անվանումը
6. Երթուղին սկսելու վայրի կոորդինատները (աստիճան/րոպե/վայրկյան)
7. Երթուղին սկսելու վայրի բարձրությունը (մ)
8. Երթուղին սկսելու ժամը

Երթուղու վերջում արձանագրության մեջ մտցվում է հետևյալ տեղեկությունը.

9. Երթուղին ավարտելու վայրի անվանումը
10. Երթուղին ավարտելու վայրի կոորդինատները (աստիճան/րոպե/վայրկյան)
11. Երթուղին ավարտելու վայրի բարձրությունը (մ)
12. Երթուղին ավարտելու ժամը
13. Երթուղու երկարությունը (կմ)
14. Երթուղու տևողությունը (երթուղին սկսելու ժամից [կետ 8] հանած երթուղին ավարտելու ժամը [կետ 12])

Երթուղին կարող է լինել գծային, երբ մարդիկ առավոտյան դուրս են գալիս Ա կետից և երեկոյան հասնում են Բ կետը: Այս դեպքում, վայրը ուր ավարտվում է երթուղին դա Բ կետն է: Եթե երթուղին օղակաձև է, ապա մարդիկ առավոտյան դուրս գալով Ա կետից հասնում են Բ կետը և նույն երթուղով երեկոյան վերադառնում են Ա կետը: Այդ դեպքում, վայրը ուր ավարտվում է երթուղին, կլինի Բ կետը, քանի որ վերադառնալուց մարդիկ այլևս չեն հետազոտում տարածքը, որն արդեն անցել են: Դրա համար էլ GPS սարքը պետք է միացնել Ա կետում և միացրած պահել մինչև Բ կետ հասնելը: Դա անհրաժեշտ է անցած երթուղու երկարության, կոորդինատների և ծովի մակարդակից ունեցած բարձրության որոշման համար: Այդ ռեժիմով աշխատելու դեպքում GPS-ը մեկ գույգ մարտկոցներով աշխատում է մոտ 2 ամբողջական օր, հետո մարտկոցները պետք է փոխել նորերով: Միշտ պետք է լրացուցիչ նոր մարտկոցներ ունենալ:

Հեռաչափը հազվադեպ է օգտագործվում, միայն դիտակետերում, դրա համար էլ դրա մարտկոցները առավել երկար են ծառայում:

Կոորդինատները, ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, երթուղու երկարությունը և ժամը չափվում են ձեռքի GPS սարքով: Դիտակետի ու բեզոարյան այծերի կամ հայկական մուֆլոնների միջև եղած հեռավորությունը չափվում է ինֆրակարմիր հեռաչափի օգնությամբ:

Տվյալ արահետների վրա մոնիթորինգը պետք է իրականացնեն միևնույն մարդիկ: Առաջարկվում է մոնիթորինգի ստանդարտացման հետևյալ սխեման.

1. Ընտրվում են 4 մարդ, որոնք հետագայում պատասխանատու կլինեն մոնիթորինգի իրականացման համար
2. Այդ մարդիկ բաժանվում են 2 խմբի, յուրաքանչյուրում՝ 2 մարդ
3. Ամեն խմբում մեկը հետագոտում է, իսկ մյուսը տվյալները մուտքագրում է արձանագրության մեջ (տես՝ Հավելված 7)
4. Ամեն մի խումբը որոշում է այն երթուղիները (յուրաքանչյուրը՝ 10-15 երթուղի, ձմռանը՝ 5-10), որոնցով ինքը անցնելու է կանոնավոր ձևով
5. Երկու խմբերն էլ պետք է երթուղիներն անցնեն ընտրված տարածքի տարբեր հատվածներում
6. Երկու խմբերի բոլոր 20-30 երթուղիները (ձմռանը՝ 10-20) պետք է ընդգրկեն ամբողջ տարածքը
7. Ամեն մի խումբը պետք է անցնի իրեն համար մշակված երթուղիները
8. Ամեն մի երթուղին պետք է անցնել մեկ օրում
9. Ամեն մի երթուղին պետք է անցնել ամիսը մեկ անգամ
10. Այսպիսով, ամեն մի օր տարածքի տարբեր հատվածներում երկու խմբերի կողմից իրականացվում են երկու տարբեր երթուղիներ
11. Բոլոր տվյալները զգուշորեն անցկացվում են արձանագրության աղյուսակների մեջ մատիտով, քանի որ գրիչը շատ հաճախ անձրևներին և ցուրտ եղանակներին չի գրում
12. Ամեն մի հետքը, կղկղանքը և կենդանու գոյության մասին փաստող այլ նշանները կամ էլ դիտարկվող կենդանիները պետք է լուսանկարել թվային ֆոտոխցիկով: Նշանները նկարելուց, դրանց կողքը դնում են չափերիզը: Ամեն մի լուսանկարի կադրի համարը գրանցվում է արձանագրության մեջ: Բոլոր լուսանկարները ֆոտոխցիկներից անցկացվում են համակարգչի մեջ և ձայնագրվում բազմակի վերաձայնագրման կոմպակտ-դիսկերի (CD-RW կամ DVD-RW) վրա: Կարելի է նաև օգտագործել CD-R ու DVD-R դիսկեր, բայց դրանց վրա մի անգամ են ձայնագրում:

Բոլոր լրացված արձանագրությունների տվյալները (տես՝ Հավելված 7) պետք է մուտքագրվեն համակարգչի մեջ և պահպանվեն որպես Excel ծրագրի տվյալների բազաներ:

ԳԼՈՒԽ 7. «Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի այցելությունների կազմակերպման ծրագիր

7.1. Ընդհանուր տեղեկություններ

Սյունիքի տարածքը հարուստ է արժեքավոր էկոհամակարգերով ռեկրեացիոն և պատմամշակութային ռեսուրսներով: Տարածաշրջանն ունի նաև կայուն զարգացման մեծ ներուժ, սակայն առկա են բազմաթիվ բնապահպանական և սոցիալ-տնտեսական հիմնահարցեր, որոնց հաղթահարման համար առաջնահերթ են պահպանվող տարածքների համակարգի և համայնքների զարգացման խնդիրները:

Զարգացման կարևոր ուղղություններից է էկոտուրիզմի և այցելությունների կազմակերպումը «Շիկահող» պետական արգելոցի և նրա հարակից համայնքների տարածքներում, որը պետք է համապատասխանի արգելոցի և նրա ենթակայությամբ գտնվող արգելավայրերի երկարաժամկետ նպատակներին: «Շիկահող» պետական արգելոցի կառավարման խնդիրների ընդհանուր համատեքստում էկոտուրիզմի կազմակերպումից ակնկալվող տնտեսական օգուտները պետք է նպատակամղվեն առկա բնապահպանական խնդիրների լուծմանը:

Հաշվի առնելով էկոտուրիզմի հնարավոր բացասական հետևանքները՝ էկոտուրիզմի և այցելությունների կազմակերպման հիմնարար սկզբունքը էկոհամակարգերի վրա նվազագույն ազդեցության ապահովումն է կամ դրանց բացառումը: Այդ իսկ պատճառով էկոլոգիական սահմանափակումներն ու պահանջները, էկոտուրիզմի մոնիթորինգի և գնահատման մեթոդները հանդիսանում են էկոտուրիզմի կառավարման հիմնական գործիքները:

7.2. Ծրագրի նպատակը և խնդիրները

ԱԿ ծրագրի հիմնական նպատակը էկոտուրիզմի կազմակերպման միջոցով «Շիկահող» պետական արգելոցի (ներառյալ գործող Զանգեզուր և նախատեսվող Խուստուփ արգելավայրերը) բնական էկոհամակարգերի կայուն օգտագործման, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության պահպանության, շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների մակարդակի և իրազեկության բարձրացման, տարածքի պատմամշակութային ժառանգության պահպանության և արգելոցի հարակից տարածքների զարգացման նախադրյալների ստեղծումն է:

Բնական վիճակում գտնվող եզակի էկոհամակարգերի էկոլոգո-գեոագիտական նշանակության պահպանությունը, էկոտուրիզմի և այցելությունների կազմակերպման արդյունքում ստեղծված միջոցներով պահպանության միջոցառումների արդյունավետության բարձրացումը, եկամուտների ստացման մեխանիզմների ձևավորումը, բնապահպանական և սոցիալ-տնտեսական համակարգերի միջև լարվածության թուլացումը հանդիսանում են ծրագրի ռազմավարական խնդիրները:

Էկոտուրիզմն ունի տեղական մակարդակով աշխատատեղերի ստեղծման և եկամտի ձևավորման մեծ ներուժ՝ վճարովի ծառայությունների, սննդի, կացարանի, զբոսավարության և ուղեկցման, տրանսպորտի, սարքավորումների և այլն տրամադրման միջոցով: Այն նպաստում է կենսամակարդակի, զբաղվածության, իրազեկության և մասնակցության աստիճանի բարձրացմանը:

Այս ոլորտում կառավարման հիմնական գործառնությունները ուղղված են այցելությունների սպասարկման հետ կապված որակյալ ծառայությունների կազմակերպմանը, դրանց տնտեսական արդյունավետության, արգելոցի ֆինանսական կայունության աճի և բնապահպանական գործունեության իրականացման համար հավելյալ միջոցների ներհոսքի ապահովմանը:

«Շիկահող» պետական արգելոցի (ներառյալ գործող Զանգեզուր և նախատեսվող Խուստուփ արգելավայրերի) այցելությունների կառավարման ոլորտում ռազմավարական հիմնական մոտեցումը արդյունավետ համակարգի ձևավորումն է՝ ուղղված արգելոցի և նրա հարակից տարածքների բնակչության երկարաժամկետ նպատակներին և կարիքների բավարարմանը, էկոտուրիզմի ինտեգրմանը տուրիզմի տարածաշրջանային և ազգային ոլորտներին, իրազեկության, ճանաչողության և էկոլոգիական գիտակցության բարձրացմանը և հատկապես միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանը:

Բնական միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելումը, էկոտուրիզմի պլանավորման և կառավարման էկոլոգիական ուղղվածությունը, այցելությունների սպասարկումից և ծառայությունների մատուցումից ակնկալվող ֆինանսական մուտքերը պետք է նպաստեն արգելոցի կառավարման հիմնական գործառնությունների՝ կենսաբազմազանության, լանդշաֆտների և գենետիկական պաշարների պահպանությանը, մոնիթորինգի, էկոկրթական, գիտական գործունեության բարելավմանը և կանոնադրական այլ խնդիրների ամբողջական իրականացմանը:

7.3. Հնարավոր խոչընդոտներ

Բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացման և այցելությունների կազմակերպման պետական քաղաքականության բացակայության հետևանքով

կանոնակարգված չեն էկոտուրիզմի ոլորտին առնչվող օրենսդրական դաշտը, ենթաօրենսդրական փաստաթղթերն ու ուղեցույցերը: Վերոհիշյալ խնդրի լուծման սոցիալ-տնտեսական և բնության պահպանության ոլորտների ներդաշնակ զարգացման նպատակով անհրաժեշտ է մշակել նաև համապատասխան հայեցակարգ:

«Շիկահող» պետական արգելոցում էկոտուրիզմի կազմակերպման նպատակով մշակված ծրագիրը հիմնականում հենվում է արգելոցային և արգելավայրային ռեժիմների սահմանափակումների, տարածքի բնապատմական արժեքների օգտագործման հնարավորությունների, էկոտուրիզմի և/կամ այցելությունների արդյունավետության և կայուն եկամուտների ապահովման մոտեցումների վրա:

«Շիկահող» պետական արգելոցում (ներառյալ գործող Զանգեզուր և նախատեսվող Խուստուփ արգելավայրերում) էկոտուրիզմի կազմակերպման հիմնական խնդիրները կապված են տարածքների բնօգտագործման և հարակից համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի, ցածր կենսամակարդակի, կարողությունների, սպասարկման ծառայությունների, ենթակառուցվածքների, տարբեր շահագրգիռ կողմերի համագործակցության անբավարարության, այցելությունների սեզոնային բնույթի և այլ բազմաթիվ հարցերի հետ:

Ցածր կենսամակարդակը և բնական պաշարներից անմիջական կախվածությունը տեղական բնակչության մոտ մի կողմից ձևավորում են էկոլոգիական խնդիրների երկրորդայնության, մյուս կողմից առաջ են բերում արգելոցի և տեղական բնակչության միջև հակասությունների և շահերի բախում, ռեսուրսների դժվարամատչելիության և թույլ համագործակցության, բնական պաշարների գերշահագործման և այլ խնդիրներ:

Էկոտուրիզմի կազմակերպման համար ներկայումս լուրջ խոչընդոտներ են առաջացնում լեռնահանքային արդյունաբերության բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, որոնք պայմանավորված են բնապահպանական պահանջների անտեսման և եկամուտներ ապահովելու գերակայության մոտեցումներով: Տարածաշրջանի լեռնահանքային արդյունաբերական գործարանների թափոնների և պոչամբարների առկայությունը խաթարում է բնական լանդշաֆտները, աղտոտում օդը, գետերը, ստորգետնյա ջրերը, հողերը: Ամառային սեզոնում պոչամբարներից երբեմն տարածվում է տհաճ հոտ, վտանգվում է մարդկանց առողջությունը, ռոտզման նպատակներով օգտագործվող աղտոտված ջրերը սպառնում են էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրությանը:

Էկոտուրիզմի սպասարկման համար արգելոցի հարակից համայնքներում անբավարար են անհրաժեշտ ենթակառուցվածքները (մասնավորապես հյուրատներ, կացարաններ, ինտերնետային կապ, ծառայություններ, տեղեկատվական նյութեր, քարտեզներ, ապահովագրման և փրկարարական ծառայություններ, բուժօգնության, կապի, հաղորդակցության միջոցներ և այլն): Խիստ կարևոր խնդիր է հանդիսանում աղբահանությունը համայնքներում, կենցաղային աղբի և թափոնների կույտերը հաճախ կուտակվում են ճանապարհների մերձակայքում և աղտոտում են շրջակա միջավայրը:

Խնդիրներ է առաջացնում նաև արգելոցի հարակից համայնքներում իրականացվող տարերային տուրիզմը: Համաձայնեցված գործողություններ իրականացնելու համար այս բնագավառում առկա է արգելոցի անձնակազմի, տեղական բնակչության, պետական կառավարման համակարգի, միջազգային կազմակերպությունների և մասնավոր սեկտորի միջև համագործակցության և համատեղ գործողությունների անհրաժեշտություն:

7.4. Բնական ժառանգություն

«Շիկահող» պետական արգելոցի, նրա ենթակայությամբ գործող Զանգեզուր արգելավայրի և նախատեսվող Խուստուփ արգելավայրերի տարածքներն աչքի են ընկնում լանդշաֆտային և կենսաբանական մեծ բազմազանությամբ, բնապատկերների գեղեցկությամբ և ռեկրեացիոն ռեսուրսների հարստությամբ: Տարածքը ներկայացնում է գեղատեսիլ լեռնաշխարհ՝ անտառներով,

կտրտված ռելիեֆով, նեղ և խոր կիրճերով, բարձր, քարքարոտ լեռնաշղթաներով, արագընթաց գետակներով, ջրվեժներով, աղբյուրներով, քարափներով, ժայռերով և բնական այլ հուշարձաններով:

Անխաթար պահպանված անտառային լանդշաֆտներում հանդիպում են բուսականդանական եզակի համակեցություններ: Ուշագրավ են հատկապես Մթնածորի տեղամասը, «Մոսու պուրակ» արգելավայրը, Շիկահողի կենու պուրակը և Սրաշեն համայնքի մերձակա բնական միակ հաճարկուտը: Կենդանատեսակներից հանդիպում են բեզոարյան այծը, մուֆլոնը, կովկասյան հովազը, գորշ արջը, կովկասյան մարեհավը, կասպիական ուլարը և այլ հազվագյուտ կենդանիներ:

Տարածաշրջանը հարուստ է նաև բնության բնապատկերային, երկրաբանական, ջրագրական և բնապատմական բազմաթիվ հուշարձաններով /աղ. 15/, որոնցից շատերը կարող են ներառվել էկոտուրիզմի զարգացման ոլորտում: Առանձնահատուկ են գահավեժ լեռնալանջերը /Նավասար, Կապուտջուղ, Արամազդ/, խոր կիրճերով կտրտված գետահովիտները /Ծավ, Գեղի, Ծաղքար, Քաջարանց, Սվարանց և այլն/, բարձրլեռնային գոտու ռելիեֆի հարթված մակերևույթները, քարափները, առանձին խոշոր ժայռաբեկորներն ու քարակուտակումները, ջրվեժներն (Քսաջուր, Շիկահող, Սվարանց, Կապուտջուղ, Աջիբաջ և այլն) ու աղբյուրները: Տարածաշրջանի ուշագրավ հուշարձաններից են նաև բարձր լեռնային լճերը՝ Գոգի, Ծաղքար, Կապույտ, Գազանա (Զանգեզուրի լեռնաշղթա) և այլն: Բնության բազմաթիվ հուշարձաններ ներկայումս ընդգրկված են ՀՀ կառավարության կողմից հաստատված բնության հուշարձանների ցանկում:

Աղյուսակ 15- Տարածաշրջանի նշանավոր բնության հուշարձանները


N	Անվանումը և տեղադիրքը	Նկարագիրը
1.	<u>Ապլիտային դայկաներ</u> , Ներքին Հանդ գյուղի մոտակայքում:	Խոշոր ինտրուզիվ գանգվածը հատվում է տարբեր հաստության /3-35սմ/ ապլիտային դայկաների ճյուղավորված ցանցով: Տեղ-տեղ դայկաները ժայռապատկերներ հիշեցնող ձևերի են նման:
2.	<u>«Փղի ձտեր»</u> , որմնաքանդակ, Շիկահողի արգելոց տանող ճանապարհին:	Յուրայի հասակի հրաբխածին ապարներում գոյացած գեղատեսիլ որմնաքանդակը ունի ավելի քան 6մ բարձրություն:
3.	<u>Շիշքար /Բողաքար/, դայկա</u> , Վարդանիձոր գյուղ, տեղադրված է Բողաքար գետի աջ և ձախ լանջերին:	Դայկան արտահայտվում է 80մ-ից ավել բարձրություն ունեցող գրեթե ուղղաձիգ պատի տեսքով, պատռում է ինտրուզիվ ապարները /մոնցոնիտներ, կվարց և պրոֆիրային գրանոսիենիտներից/: Դայկան ձեղքավորված է՝ անջատված 0.2-1.0մ հզորությամբ հորիզոնական տեղադրությամբ սալերով:
4.	<u>«Բնական թունել»</u> , Գորիս-Կապան խճուղու վրա:	Բնական թունելի միջով անցնում է Գորիս-Կապան խճուղին, առաջացել է նեոգենի տուֆածին-բեկորային նստվածքների ինտենսիվ հողմնահարման արդյունքում:
5.	<u>«Մնջուր» աղբյուր</u> , Գեղի գյուղի հյուսիսային ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին, ծ.մ-ից 1600մ բարձրության վրա:	Գտնվում է ջրաղացի և կամրջի միջև, ձևավորվում է յուրայի կրաքարային ստվարաշերտում և դուրս է գալիս կրաքարերի ձեղքերից:
6.	<u>«Կաթնաղբյուր» աղբյուր</u> , Տանձավեր գյուղի հվ-արմ ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ 1570մ բարձրության վրա:	Աղբյուրը դուրս է գալիս կրաքարի բարձր քարափի հիմքում, որից 70մ հեռավորության վրա աղբյուրի ջրերը առաջանում են 20մ բարձրության ջրվեժ և թափվում Քաշունի գետը:
7.	<u>«Մայիտակջուր» աղբյուր</u> , Քաշունի գյուղից 1.2կմ հվ-արլ, ծ.մ 1930մ բարձրության վրա:	Աղբյուրը ձևավորվում է յուրայի հրաբխածին-նստվածքային ստվարաշերտում և դուրս է գալիս կրաքարի ձեղքերից:

		Շրջակայքը անտառածածկ է:
8.	Շիբլյակ , Կապան քաղաք, Առաջաձոր տեղամասում 800-900մ բարձրության վրա:	Միջերկրածովյան բուսականության յուրահատուկ տիպ է, գերակշռող տեսակը ցաքին է՝ <i>Paliurus spia-christi</i> :
9.	«Կապուտան»/Գոգի/ լիճ, Քաջարան գետի ակունքներում:	Տեղադրված է սառցադաշտային կառի հատակում:
10.	«Գազանա» լիճ , Գեղի գետի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9կմ հս-արլ, 3111,8մ բարձրության վրա:	Սառցադաշտային ծագման լճի հայելու մակերեսը մոտ 2հա է, ջրի ծավալը մոտ 58000մ ³ , առավելագույն խորությունը 10մ է:
11.	«Կապույտ» լիճ , Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8կմ հս-արմ:	Սառցադաշտա-ամբարտակային լիճ է, որի հայելու մակերեսը մոտ 2.5հա է, միջին խորությունը 6մ: Ջուրը պարզ է, մաքուր: Լիճից սկիզբ է առնում Մեղրի գետը:
12.	«Կապուտջուղ»-ի ջրվեժներ , Քաջարան քաղաքից 3.0կմ արմ, Կապուտջուղ գետակ:	Ջրվեժները տեղադրված են 2500-2600 մ. բարձրությունների սահմաններում:
13.	«Աջիբաջի» ջրվեժ , Գեղի գետի ձախակողմյան Աջիբաջ վտակի վրա, համանուն գյուղից 4կմ հս-արմ:	Ջրվեժը գտնվում է ծովի մակարդակից 2380 մետր բարձրության վրա: Ջրվեժը բաղկացած է երկու կասկադներից:
14.	«Երիցվանքի» բնապատմական համալիր , Արծվանիկ գյուղից 3կմ հվ:	Համալիրն ընդգրկում է Արծվանիկ գյուղի բնական քարանձավները, Երիցվանք եկեղեցին և հարակից անդունդը:

Լուսանկար 1 – Բնական թունել, Գորիս – Կապան մայրուղի



Լուսանկար 2 – Կապուտան լիճ Գոգի/, Ջանգեզուր լեռնաշղթան



7.5. Պատմամշակութային ժառանգություն

Տարածքի պատմության հնագույն ուշագրավ հուշարձաններից են 5000-7000 տարի առաջ ստեղծված ժայռապատկերները /Ուդտասար/, Միսիանի տարածաշրջանի «Զորաց քարեր» /Քարահունջ/ կոչվող մեգալիթյան հուշարձանախումբը, ինչպես նաև բազմաթիվ դամբարանադաշտերը: Հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված նյութերը և պեղված դամբարանադաշտերը թվագրվում են մ.թ.ա. 21-17րդ դարերով /միջին բրոնզեդար/:

Մյունիքը եղել է նաև միջնադարյան Հայաստանի քաղաքական, մշակութային և հոգևոր խոշոր կենտրոն: IX դ. այն ապրել է հզոր մշակութային վերելք, այդ ընթացքում կառուցվել է Տաթևի վանական համալիրը, որը X-XIIդդ դարձել է համահայկական մշակութային կենտրոն: Այստեղ դասավանդվել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, քերականություն,

ճարտարապետություն, տրամաբանություն, աստղաբաշխություն, տոմարագիտություն, երկրաչափություն, թվաբանություն, երաժշտություն:

Տարածաշրջանը հարուստ է պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձաններով: Որպես Մեծ Հայքի սահմանային նահանգ, Սյունիքն ունեցել է բազմաթիվ ամրոցներ ու բերդեր, եկեղեցիներ ու վանական համալիրներ: Այս կառույցներից ամենահայտնիներն են Բաղաբերդը, Երնջակը, Հայրաբերդը, Բաղկուքարը, Գրհամը, Մայրին, Շլորուտը, Կաքավաբերդը, Անդոկաբերդը, Բարկուշատանը, Բդենոն, Բորոտանան, Ձագեձորը, Քաշաթաղին, Վանդաբերդը, Խոժոռաբերդը, Որոտանը, Սյունյացը, Կապույտը, Հալիձորը և այլն: Միջնադարում հայտնի են եղել նաև Մաքենյաց, Ցախաց քարի, Սպիտակավորի, Աստվածածնի, Նորավանքի, Բոլորաբերդի, Եղեգիսի, Վահանավանքի, Շողվազա, Սևանավանքի, Սյունիի, Արատեսի վանական համալիրները և այլ գրչության կենտրոններ ու քարավանատներ /աղ.16/:

Աղյուսակ 16- Տարածաշրջանի նշանավոր պատմամշակութային հուշարձանները

Հուշարձանի անվանումը	Նկարագիրը	Հիմնական նշանակությունը
ԿԱՊԱՆ		
Ամրոց Կատարավանք	10-18 դդ., կիսավեր է, գտնվում է Կապան քաղաքից 5 կմ ամ, Ողջի գետի աջ ափին, նախկին Ջրախոր գյուղի մոտ, «Տանձու լենջ» վայրում	միջնադարյան ճարտարապետության նմուշներից:
Ամրոց Կլոց քար Ամրոց Հալիձոր (Հալիձորի բերդ)	10 դ., գտնվում է Բաղաբերդ ամրոցից աե, ավերված է 10-18 դդ., գտնվում է Ողջի գետի բարձրադիր աջ ափին, ՀԷԿ-ի մոտ: Կառուցվել է որպես կուսանաց անապատ	Բերդի դիմաց եղել են Բեխ գյուղի Մելիք-Փարսադանյան-ների պղնձա-հանքն ու պղնձաձուլարան
Մատուռ Կապանաքար Տիկնունի Վանական համալիր Բեխի անապատ	10-11 դդ., 1019թ, գտնվում է Վահանավանքից մոտ 2 կմ հվ 10-17 դդ., գտնվում է Կապանի բնակելի թաղամասից 4 կմ հվ-աե, բարձր լեռան աե լանջին, անտառի մեջ, վերակառուցվել է 17 դ. 20-ական թթ. Արիստակես վարդապետի կողմից. ավերված է 17-18 դդ.,գտնվում է Վահանավանք տանող կամրջից 500 մ ամ, Ողջի գետի վրա	կարծիք կա, որ Փառարտովանքն է պահպանվել է աջափնյա խելը
Կամուրջ Վանական համալիր Վահանավանք Գյուղատեղի Վաչագան	10-11 դդ., գտնվում է Ողջի գետի աջափնյա անտառապատ սարալանջին, հիմնադրել է Սյունյաց Ձագիկ իշխանի որդի Վահանը միջնադար, 10-11 դդ., գտնվում է քաղաքի հվ-ամ կողմում, բարձրադիր անտառապատ վայրում, Խուստուփ լեռան ստորոտին	Վերականգնվել է Եկեղեցի,քարայր –ուխտատեղի, գյուղատեղի Քոլվան, կանգուն է, մուտքի մոտ կան խաչքարեր պահպանվել է ձախափնյա խելը Սյունիքի նշանավոր ամրոցներից է, կիսավեր է
Կամուրջ Ամրոց Բաղաբերդ (Դավիթ Բեկ)	10-12 դդ., գտնվում է քաղաքատեղիում, Ողջի գետի վրա 4-18 դդ., գտնվում է Կապան քաղաքից ամ, Քաջարան տանող մայրուղուց ձախ, Ողջի գետի և նրա ձախ վտակ Գիրաթաղ գետակի միջև	ավերված է / Ղըզղալա/
ԾԱՎ		
Ամրոց Աղջկա Բերդ	10-13 դդ., միջնա-դար-20 դ.,գտնվում է գյուղից 2 կմ հվ-ամ, սարի գագաթին	ավերված է / Ղըզղալա/
Գյուղատեղի Թարգմանչաց,	10-13 դդ., 10-11 դդ., գտնվում է գյուղից 1 կմ հս, անտառում	կիսավեր է, թաղածածկ: Այլ անվանումներն են՝ Թրջմունանք, Եկեղեցի «Թարգմանչաց» միանավ կիսավեր սրահ է կիսավեր է
Եկեղեցի Գյուղատեղի Նավս	19 դ. 2-րդ կես, գտնվում է գյուղատեղիի հս եզրին միջնադար, գտնվում է գյուղից 3 կմ հվ-ամ, Ծավ գետի աջ ափին, Նավսաքար լեռան լանջին	
Կամուրջ	17 դ., գտնվում է գյուղից 7 կմ հվ-ամ, Սթնաձորում	
ՇԻՇԿԵՐՏ		
Եկեղեցի Սբ. Հովսեփսե Եկեղեցի	17 դ. Մեղրի տանող ճանապարհին 17 դ., գտնվում է գյուղից 2 կմ հս-աե, գետի աջափնյակում, «Նատրի» վայրում գտնվում է Մազրա գետակի վրա	միանավ սրահ
Կամուրջ		
ՃԱԿԱՏԵՆ		
Գյուղատեղի Գլմեշ	ուշ միջնադար, գտնվում է գյուղից 4 կմ ամ, անտառում	ավերված է. պատմական Եղեգիքն է
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ., գտնվում է Կապան-Ճակատեն ճանապարհին, «Ուռած քար» վայրում	ավերված է
Կամուրջ	17 դ., գտնվում է գյուղի մերձակայքում	

ՆԵՐՔԻՆ ՀԱՆՂ		
Եկեղեցի	18-19 դդ., գտնվում է գյուղից հվ-ամ, Ներքին Հանդ լճից արևմուտք	միանավ սրահ
Ամրոց Կոնասար	գյուղից 2 կմ հվ	
Եկեղեցի «Ձորի» (Օրբիգլեցի)	ուշ միջնադար	ավերված է
Գյուղատեղի Վերին Գեղցահանդ	10-18 դդ., գտնվում է գյուղից 3 կմ հվ-ամ, ձորալանջին	ավերված է
Եկեղեցի Կամուրջ	ուշ միջնադար, գտնվում է գյուղի մեջ, բարձունքի վրա	միանավ սրահ
Իրադաց «Տերտերանց»	գյուղի ան եզրին, Շիկահող գետակի վրա	միաթոփչք
	գյուղից 2 կմ ամ, Շիկահող գետակի ձախափնյա ձորալանջին	
ՄՐԱՇԵՆ		
Գյուղատեղի Սղնաշեն	Միջնադար, գտնվում է գյուղից 2 կմ հս-ամ	Սղնախատեղ, ամրոցն ավերված է
Եկեղեցի Սբ. Հովհաննիս	17-18 դդ., գտնվում է գյուղի մեջ	եռանավ բազիլիկ

Լուսանկար 3 – Վահանավանք, 10-11 դդ, վերականգնված մատուռ



Լուսանկար 4 – Բաղարերդ 4-18 դդ, բերդապարիսպ



7.6. Հիմնական ենթակառուցվածքներ

Տարածաշրջանի տրանսպորտային հիմնական զարկերակը Երևան - Կապան - Մեղրի ավտոմայրուղին է, որի երկարությունը կազմում է մոտ 370 կիլոմետր: Ճանապարհը տեղ տեղ անցնում է բարձրադիր գոտիներով, որոնք պարբերաբար դժվարանցանելի են դառնում ձմեռային սեզոնի ժամանակ: Վերջին տարիներին կառուցված Կապան - Մեղրի մայրուղին «Շիկահող» արգելոցի տարածքով անցնում է մոտ 4,5 կմ: Այն որոշ չափով նպաստել է արգելոցի կառավարմանը և էկոտուրիզմի զարգացման համար նույնպես կարող է ունենալ դրական նշանակություն:

Տարածաշրջանի միջհամայնքային և ներքին ճանապարհային ցանցը թույլ է զարգացած, ինչը որոշ չափով նպաստում է տարածքների անխաթարությանը: Օգտագործվող դաշտային ճանապարհները դժվարանցանելի են վատ եղանակային պայմաններում: Ճանապարհների վերանորոգման խնդիր կա հատկապես Գեղանուշից և Շիշկերտից դեպի Խուստուփ անցնող հատվածներում:

Այցելուների քանակի ավելացմանը կարող է նպաստել Կապանի օդանավակայանը, որի վերաբացումը պահանջում է խոշոր ներդրումներ: Հեռահաղորդակցության ծառայությունները հիմնականում հասանելի չեն գյուղերից և մայրուղիներից դուրս՝ լեռնային դժվարամատչելի հատվածներում, ինչպես նաև մայրուղու որոշ մասերում:

Վերջին շրջանում որոշ առաջխաղացում է նկատվում ճանապարհային նշանների և ազդագրերի տեղադրման ոլորտում:

7.7. Համայնքների տուրիզմի ներուժը

7.7.1. Գեղանուշ

Գեղանուշ համայնքը գտնվում է Խուստուփ լեռան արևելքում, մարզային կենտրոն Կապանից 6 կմ հեռավորության վրա: Գեղանուշ տանող ճանապարհն անցնում է «Deno Gold Mining» ընկերության պոչամբարի մոտով, որի տարածքը չի բարեկարգվել:

Համայնքում գիշերակացի հնարավորություններ չկան, սակայն որոշ վերանորոգում կատարելուց հետո 5-7 տներ կարող են որպես հյուրատուն /ՀնԿ/ ծառայել: Հասարակական տրանսպորտը համայնքի և Կապանի միջև աշխատում է օրական 3 անգամ, շաբաթական 6 օր: Ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն և գտնվում են վատ վիճակում: Մենի սպասարկման հնարավորություններ Գեղանուշում չկան: Ամենամոտ ռեստորանը գտնվում է Կապանում, Գեղանուշից 7 կիլոմետր հեռավորության վրա:

Գեղանուշ համայնքի բոլոր տներում կա կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապ և հասանելի են շաբաթական հեռախոսակապի ծառայությունները՝ այդ թվում համացանցը /հասանելի է շաբաթական հեռախոսակապի մոդեմներով/: Փոստային կապ համայնքում չի գործում: Գործում է բուժկետ՝ 1 քույրով, չկա դեղատուն և շտապ օգնության մեքենա:

Գեղանուշ համայնքի հիմնական տեսարժան վայրերն են Խուստուփ լեռ տանող ճանապարհը և լեռան քարանձավները, Սուրբ Հռիփսիմե եկեղեցին և գերեզմանները, եկեղեցու բակում գտնվող IX-X դարի մատուռը, հին գյուղատեղիներն իրենց եկեղեցիներով, դամբարանադաշտերը, XIX դարում կառուցված տները՝ «դափերը»:

7.7.2. Ճակատեն

Ճակատեն համայնքը գտնվում է Կապանից 9 կիլոմետր հեռավորության վրա: Կապանին մոտ լինելու, նորակառույց ճանապարհի լավ վիճակի, ինչպես նաև գեղատեսիլ տեղանքի, մաքուր ջրի բնական աղբյուրների, տաղավարների և վերանորոգված ռեստորանների առկայությունը ապահովում է բազմաթիվ այցելուներ: Ճակատենն ունի նոր վերանորոգված Մշակույթի տուն, որը կարող է օգտագործվել տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար: Համայնքում կա հիմնական մայրուղու վրա կառուցված 70-80 նստատեղով ռեստորան:

Գիշերակացի հնարավորությունները ներկայացված են 3-5 տներով, որոնք ունեն բավարար պայմաններ որպես հյուրատուն աշխատելու համար: Հասարակական տրանսպորտը (դեպի Ծավ գնացող) համայնքի և Կապանի միջև աշխատում է օրական 1-2 անգամ, շաբաթական՝ 5-6 օր: Այս ճանապարհն ասֆալտապատ է, գտնվում է լավ վիճակում և անցանելի է կլոր տարին: Ներհամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատ են (մոտ 1.5 կմ) և լավ վիճակում են գտնվում, իսկ մյուս մասը (մոտ 1.9 կմ)՝ ասֆալտապատ չէ: Համայնքի վերաբերյալ ճանապարհային նշանները տեղադրված են մայրուղու վրա:

Ճակատեն համայնքի տնտեսությունների միայն 70 %-ն է ապահովված կանոնավոր գծային հեռախոսակապով: Հասանելի են շաբաթական հեռախոսակապի օպերատորների կողմից առաջարկվող հեռահաղորդակցության ծառայությունները և համացանցը: Համայնքում գործում է բուժկետ՝ 1 քույրով, չկա դեղատուն և շտապ օգնության մեքենա:

Հիմնական տեսարժան վայրերը ներկայացված են Սուրբ Հռիփսիմե եկեղեցով, գյուղից 4 կմ հեռավորության վրա գտնվող Գիլմեշա բնակավայրով, դեպի հարավ արևելք գտնվող Իրիգիս միջնադարյան բնակավայրով, որն ունի դեռևս չպեղված գերեզմանատուն և դամբարանադաշտ: Գյուղից 6-7 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում մեկ այլ գյուղատեղի, որը բնակեցված է եղել մինչև անցյալ դարի 30-ական թվականները: Կան նաև մի քանի այլ հին գյուղատեղիներ ևս. Ծնդրենը, Ծինատեղը, Եկեղեցու Խուրթը և Քյալան, որն ունի ստորգետնյա նեղ անցումներով մասամբ ավերված եկեղեցի: Առկա է նաև XVII-րդ դարում կառուցված մի կամուրջ:

Գյուղից 6-7 կմ հեռավորության վրա կան հանքային ջրի աղբյուրներ: Տեղացի բնակիչներն այն անվանում են «Թթու ջուր»: Դեպի աղբյուր գնացող կաձանն անցնում է Քյալարտ կոչվող վայրով՝ այստեղ է գտնվում Քյալա կոչվող հին գյուղատեղին, որտեղ դեռևս պահպանվել են որոշ կառույցներ: Քյալարտում կա նաև մի վայր, որտեղ համաձայն տեղաբնիկների, ձմեռում են արջերը:

7.7.3. Շիկահող

Շիկահող համայնքը գտնվում է Կապանից 22 կմ հեռավորության վրա: Հասարակական տրանսպորտը (դեպի Ծավ գնացող) համայնքի և Կապանի միջև աշխատում է օրական 1-2 անգամ, շաբաթական 5-6 օր: Այս ճանապարհին ասֆալտապատ է և գտնվում է լավ վիճակում: Ներհամայնքային ճանապարհները (մոտ 3.5 կմ)՝ ասֆալտապատ չեն և վատ վիճակում են: Շիկահողը տեղեկատվական նշաններ ունեցող միակ համայնքն է, որոնք ցույց են տալիս համայնքի բնության ու պատմական հուշարձանների և արգելոցի ուղղությունները: Համայնքում է գտնվում «Շիկահող» ՊՈԱԿ – ի վարչական շենքը, որը տեղեկատվություն է տրամադրում նաև գործող «Մոսու պուրակ» և «Զանգեզուր» արգելավայրերի էկոտուրիզմի հնարավորությունների մասին:

Համայնքն ունի գիշերակացի հնարավորություններ, կան երկու հյուրատներ («Արփիկի» և «Գեղամի»), որոնք բավարար պայմաններ ունեն այցելուներ ընդունելու համար և պատվերի դեպքում կարող են մատուցել ավանդական ուտեստներ: Մակայն երկու տներն էլ ահնրաժեշտ է բարեկարգել, որպեսզի հյուրերը կարողանան առանձին մուտք, սանհանգույց և ննջարան ունենալ: Խոհանոց կա նաև Շիկահողի ՊԱ հյուրատանը, որը կարող է սպասարկել գիշերող այցելուներին: «Շիկահող» ՊԱ ղեկավարության համաձայնությամբ այցելուները կարող են նաև գիշերել արգելոցի հյուրատանը (առկա են 8 մահճակալներ 2 սենյակներում) ինչպես նաև սննդի ծառայություններ ստանալ այստեղ:

Շիկահող համայնքի տնտեսությունների 90 %-ն է ապահովված կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապով: Հասանելի են շաբաթական հեռախոսակապի ծառայությունները և համացանցը: Գործում է բուժկետ՝ 1 քույրով, չկա դեղատուն և շտապ օգնության մեքենա:

Հնարավորությունները պայմանավորված են պատմամշակութային հուշարձանների առկայությամբ՝ ներառյալ նախաքրիստոնեական շրջանի տեսարժան վայրերով: Գյուղում կան մ.թ.ա. II-I հազարամյակների ժամանակաշրջանի 4 դամբարանադաշտեր: Կա նաև ուշ միջնադարին պատկանող մի կամուրջ (1856թ.) որը գտնվում է հիմնական առևտրային մայրուղիների վրա: Շիկահողում կա նաև XIII դարում կառուցված մի եկեղեցի՝ Սուրբ Ստեփանոս անունով և մի քանի հին գյուղատեղիներ (4 բնակատեղի է հայտնաբերված):

Գյուղում կա նաև հանքային ջրի փոքր աղբյուր, որը գտնվում է գեղատեսիլ վայրում և նույնպես կարող է արշավային երթուղու մաս դառնալ: Շիկահողում կա Կենիների պուրակ, որը բազմազանություն է հաղորդում այստեղի էկոտուրիզմի հնարավորություններին: Շիկահողում կարող են զարգանալ էկոտուրիզմի բազմաթիվ տեսակներ, ներառյալ՝ լեռնամագլցումը, վայրի կենդանիների դիտումը և արշավները: Շիկահողում կարող են զարգանալ նաև պատմամշակութային տուրիզմը և էթնոտուրիզմը, հաշվի առնելով առկա ավանդույթները և բազմատեսակ ավանդական ուտեստները:

2010թ. էքստրեմալ դահուկային սպորտի սիրահարներ են այցելել համայնք և ՊԱ աշխատակիցների օգնությամբ հետազոտել են դահուկավարելու հնարավորությունները Խուստուփ լեռան լանջին: Ձմռանը Շիկահողում ամենագնաց մեքենաների մրցույթ է կազմակերպվում, այն ռալի է կարճ տարածության վրա, մոտ 50 մետր երկարությամբ, թեք լանջի վրա գտնվող մասում: Հաղթողները ստանում են դրամական պարգև:

7.7.4. Ծավ/Շիշկերտ

Ծավ համայնքը գտնվում է Կապանից 36 կմ հեռավորության վրա: Հասարակական տրանսպորտը համայնքի և Կապանի միջև աշխատում է օրական 1-2 անգամ, շաբաթական 5-6 օր: Գնաճանապարհին ասֆալտապատ է և անցանելի է կլոր տարին: Ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն, դրանց մեծ մասը գտնվում են վատ վիճակում: Համայնքում ճանապարհային նշաններ տեղադրված չեն՝ բացառությամբ մայրուղու վրա տեղադրված գյուղի անունը կրող նշանների:

Ծավ համայնքի տնտեսությունների ընդամենը 60 %-ն է ապահովված կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապով: Հասանելի են շարժական հեռախոսակապի ծառայությունները և համացանցը: Համայնքում գործում է փոստային կապ և բուժկետ՝ 2 քույրերով, սակայն չկա դեղատոն և շտապ օգնության մեքենա:

Ծավ համայնքը ներկայացված է երկու բնակավայրերով՝ Ծավով և Շիշկերտով: Վերջինս ունի փոքր բնակչություն, ընդամենը 6 ընտանիք, սակայն համայնքում կան 1988-1990թթ. կառուցված բազմաթիվ անբնակ տներ: Համայնքի վարչական տարածքում գտնվում են մի քանի հին բնակատեղիներ՝ իրենց եկեղեցիներով և գերեզմաններով: Եվս երկու միջնադարյան եկեղեցի կա Շիշկերտում: Տուրիստական հիմնական հնարավորությունն այստեղ արշավն է դեպի Խուստուփ լեռ, գյուղի նախընտրելի դիրքի պատճառով (Շիշկերտից Խուստուփ 10 կիլոմետր է և ճանապարհը մոտենում է 200 մետր մինչև լեռան գագաթը):

Ծավում չկան սննդի սպասարկման ծառայություններ և գործող հյուրատներ, սակայն կան բազմաթիվ տներ, որոնք կարող են որպես հյուրատներ ծառայել: Ծավում և Շիշկերտում կան հին տներ, որոնք կարող են ծառայել և որպես կացարան, և որպես տեսարժան վայրեր, սակայն անհրաժեշտ բարեկարգման աշխատանքներից հետո:

Տուրիզմի զարգացման հնարավորությունները ներառում են գեղեցիկ ջրվեժը, հանքային ջրի աղբյուրը, դրանց մոտ գտնվող վրանային ճամբարի համար հարմար վայրերը, որոնք արշավի հետ միասին դեպի Խուստուփ լեռ կարող են կազմել մեկ երթուղի: Հնարավոր երթուղու մեջ կարող է ընդգրկվել նաև միջնադարյան կամուրջը, որը ժամանակին հայտնի միջնադարյան առևտրային երթուղիները կապող օղակ է եղել: Եվս մեկ հանքային ջրի աղբյուր («Քոսի ջուր») կա դեպի Կեմանց հին գյուղատեղի գնացող մասում՝ անտառի մեջ, որտեղ կան երկու եկեղեցիներ և հին գերեզմանատուն:

Ծավի վարչական տարածքում գտնվում են մի քանի հին բնակատեղիներ, որոնցից ամենահինը՝ Թարգմանչաց գյուղը, հիմնվել է X դարում: Գյուղի կառույցներից պահպանվել են եկեղեցին և գերեզմանատունը: Հին բնակատեղիներից են նաև Կեմանցը, Նավսը և Մագրան, որում մասամբ պահպանվել է մատուռը: Ծավում կա նաև հին կամուրջ, որը եղել է միջնադարյան առևտրային ճանապարհները կապող օղակներից մեկը: Համայնքն ունի տաք հանքային ջուր, որը գտնվում է մայրուղուց 1 կիլոմետր հեռավորության վրա:

Ծավ համայնքի մաս կազմող Շիշկերտ գյուղի մոտ լինելը Խուստուփ լեռանը լավագույն հնարավորություններ է ստեղծում լեռնամագլցման, լեռնային դահուկավարության, վայրի կենդանիների դիտման և թռչնադիտումների համար: Լանդշաֆտի բազմազանությունը, անտառային խիտ ծածկույթը և աղբյուրների առկայությունը լավ հնարավորություններ են ստեղծում արշավներ, այդ թվում՝ վրանային արշավներ կազմակերպելու համար: Էթնոտուրիզմի և մշակութային տուրիզմի համար բարենպաստ պայմաններ են ստեղծում հին տների առկայությունը Շիշկերտում, գյուղական ավանդական կենցաղի լավ պահպանված լինելը, ավանդական դարձած Բերքի Տոնը և այլն: Պատմական հուշարձանների առկայությունը հնարավորություն է ստեղծում պատմամշակութային տուրիզմի զարգացման համար:

Ծավը միակ համայնքն է, որն ունի տպագրված նյութ գյուղի հուշարձանների մասին՝ նկարներով, նկարագրական տեքստով և քարտեզով, որը պատրաստվել է Կապանի թանգարանի տնօրենի ջանքերով: Ամեն աշուն գյուղում կազմակերպվում է Բերքի տոն, կազմակերպվում է մրցույթ, որի հաղթողները փոքր նվերներ են ստանում: Միջոցառումը կազմակերպվում է World Vision կազմակերպության աջակցությամբ: Սակայն այն դեռևս չի կարող հանդիսանալ զբոսաշրջիկներ գրավող լուրջ միջոցառում:

7.7.5. Լեռնաձոր

Լեռնաձոր համայնքը գտնվում է Կապանից 24 կմ հեռավորության վրա: Հասարակական տրանսպորտը համայնքի և Կապանի միջև աշխատում է օրական 11 անգամ, շաբաթական 7 օր: Այս

Ճանապարհին ասֆալտապատ է և գտնվում է լավ վիճակում, ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն, սակայն գտնվում են բավարար վիճակում:

Լեռնաձոր համայնքը տուրիզմի զարգացման եզակի ռեսուրսներ և բարենպաստ դիրք ունի, քանի որ այն գտնվում է հիմնական մայրուղու և Քաջարանից 3 կիլոմետր հեռավորության վրա: Չնայած դրան՝ տուրիզմի զարգացումն այստեղ փտանգված է ուրանի հանքի բացման և շահագործման հնարավորությամբ:

Գյուղում կա ռեստորան՝ մինչև 250 հոգի նստատեղերով: Ռեստորանը մաքուր է, բայց սպասարկման մակարդակը՝ ցածր է: Լեռնաձորում կան բազմաթիվ տներ, որոնք ունեն բարվոք վիճակի ննջարաններ և սանհանգույցներ, սակայն չունեն սպասարկման փորձառություն: Համայնքն ամբողջովին ապահովված է գծային հեռախոսակապով, հասանելի են նաև շարժական հեռախոսակապի ծառայությունները և համացանցը: Գործում են փոստային 3 բաժանմունքներ, բուժկետներ՝ 1-ական քույրերով, սակայն համայնքում չկա դեղատուն և շտապ օգնության մեքենա: Կանոնավոր աշխատում են գրադարանը և մշակույթի տունը, որոնք իրենց նկատելի ներդրումը կարող են ունենալ տուրիզմի զարգացման գործում:

Լեռնաձորի կարևոր տուրիստական ռեսուրսներից է Բաղաբերդ ամրոցը, որը հիմնվել է IV դարում Բաղակ իշխանի կողմից: Կա ևս մեկ ամրոց, Կապանը, որից ավերակներ են մնացել, և որը եղել է Սյունիքի մայրաքաղաքը X-XI-րդ դարերում: Հին Կապանի բնակավայրը դժվար անցանելի վայրում է գտնվում: Կա հին բնակատեղի, որը կոչվում է Քրդիկանց և գտնվում է Լեռնաձորից ընդամենը 1 կմ հեռավորության վրա: Այն ունի եկեղեցի, հին տներից մնացած որոշ ավերակներ և գերեզմանատուն: Ձևու բերդը նույնպես հանդիսանում է Լեռնաձորի տուրիստական կարևոր ռեսուրսներից մեկը, քանի որ կապված է Դավիթ Բեկի կողմից կազմակերպված ազգային-ազատագրական շարժման հետ:

Համայնքի դպրոցն իր թանգարանով (որտեղ ցուցադրված են հարյուրավոր նմուշներ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) և հետաքրքիր արխիվով (որը վերաբերվում է Սյունիքի և Լեռնաձորի պատմությանը) հետաքրքիր վայր է հանդիսանում այցելությունների համար:

Լեռնաձորի լանդշաֆտի կտրտվածությունը, բարձր ժայռերը և խոր ձորերը հնարավորություններ են ստեղծում նաև էքստրեմալ տուրիզմի զարգացման համար:

7.7.6. Վարդանիձոր

Վարդանիձոր համայնքը գտնվում է Կապանից 64 կմ հեռավորության վրա: Հասարակական տրանսպորտը համայնքի և Կապանի միջև աշխատում է օրական 2 անգամ, շաբաթական 7 օր: Այս ճանապարհին ասֆալտապատ է և գտնվում է լավ վիճակում: Ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն, սակայն հիմնականում գտնվում են բավարար վիճակում: Համայնքում քիչ թվով տնտեսություններ են ապահովված կանոնավոր աշխատող գծային հեռախոսակապով: Հասանելի են շարժական հեռախոսակապի ծառայությունները և համացանցը: Գործում է բուժկետ՝ 1 քույրով, չկա դեղատուն և շտապ օգնության մեքենա:

Գիշերակացի հնարավորությունները ներկայացված է Այգեձոր գյուղում գտնվող փոքր հյուրանոցով, որը կարող է սպասարկել մինչև 15 հյուրերի՝ 5 սենյակներում: Մենդի սպասարկումն այս համայնքում տրամադրվում է երկու ռեստորաններում, որոնք գտնվում են Վարդանիձոր և Այգեձոր գյուղերում: Այգեձոր գյուղում գտնվող ռեստորանը կարող է հյուրընկալել մինչև 200 հոգի:

Հնարավորությունները ներկայացված են եզակի պատմամշակութային հուշարձաններով, հին գերեզմանատնով, որտեղ քարերի վրա գրված տեքստը արաբատառ է (ինչը հասկապես հետաքրքիր կարող է լինել իրանցի այցելուների համար) և Վարդանիձորից 2 կմ հեռավորության վրա գտնվող Կուսանաց անապատը, որը տարբերվում է հայտնի կուսանոցներից նրանով, որ այստեղ ապրում և ծառայում էին տղամարդ հավատացյալները:

Հարուստ լանդշաֆտի առկայությունը հնարավորություն է տալիս նաև արշավների և լեռնահեծանվային տուրիզմի կազմակերպման համար:

Տուրիզմի զարգացման հիմնական վտանգը ոսկու կորզման արտադրամասի գործունեությունն է: Նախկին ոսկու հանքը փակ է, սակայն կան վերաբացման նպատակներ:

7.8. Երթուղիների ընտրության չափանիշները

Արգելոցում և նրա հարակից տարածքներում Էկոտուրիզմի կազմակերպման նպատակով ընտրված երթուղիները ունեն սահմանափակ բնույթ և ապահովում են արգելոցի տարածքում կենսաբազմազանության անխաթարությունն ու բացառում դրանց վրա բացասական ազդեցությունները: Այցելությունները թույլատրվում են միայն արգելոցի անձնակազմի ուղեկցությամբ՝ խիստ պահպանելով նախանշված երթուղիներից չշեղվելու, այցելուների քանակի, վարքի, այցելությունների ժամանակահատվածի և ներկայացվող այլ պահանջները:

Հաշվի են առնվել բնապահպանական սահմանափակումներն ու արգելոցային ռեժիմի պահանջները՝ առաջնահերթելով Էկոհամակարգերի պահպանությունը և խուսափելով խոցելի Էկոհամակարգերի լայն ընդգրկումից: Երթուղիները հնարավորինս շրջանցում են տարածքում հանդիպող հայկական մուֆլոնի, բեզուարյան այծի, առաջավորասիական հովազի, գորշ արջի և ՀՀ Կարմիր Գրքում գրանցված այլ հազվագյուտ կենդանիների և բուսատեսակների ապրելավայրերը: Երթուղիները հիմնականում կրում են գեղագիտական, Էկոլոգոճանաչողական և պատմամշակութային համալիր բնույթ և հիմնվում են բնապատմական արժեքավոր տեղամասերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց պահպանության և ռացիոնալ օգտագործման անհրաժեշտության վրա:

Առաջարկվող երթուղիները հնարավորինս ներառում են տարածքների բնապատմական ժառանգությունը, գեղատեսիլ ու բնապատկերներով, բարդ և կտրտված ռելիեֆով հատվածները, նեղ և խոր հովիտները, կիրճերը, լեռնաշղթաները, կենդանիների, թռչունների դիտարկման տեսակետից հարմար տեղամասերը, արագընթաց գետակները, ջրվեժները, աղբյուրներն ու քարափները, ինչպես նաև բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ՝ գյուղատեղեր, բերդեր, եկեղեցիներ, կամուրջներ ու այլ կառույցներ:

Ժամանակի ընթացքում առաջարկվող երթուղիները կարող են փոփոխվել՝ կախված արգելոցի կանոնադրական խնդիրներից, կենսաբազմազանության պահպանության առաջնահերթություններից, տարածաշրջանի ենթակառուցվածքների և սպասարկման ոլորտի զարգացումից և այլ հանգամանքներից:

7.9. Էկոտուրիզմի ձևերը

Պետարգելոցի տարածքում Էկոտուրիզմի ձևերը պետք է բավարարեն արգելոցի բնապահպանական պահանջներին: Դրանք կարող են լինել Էկոլոգիական, պատմամշակութային, ընդհանուր գիտաճանաչողական բնույթի, համալիր կամ նեղ մասնագիտացված արշավներ՝ կախված այցելուների տիպից և հետաքրքրություններից: Համալիր արշավները հիմնականում ներառում են տարածքի գեղատեսիլ վայրերը, բնապատմական հուշարձանները, էթնոմշակութային և այլ առանձնահատկությունները: Էկոտուրիզմի նեղ մասնագիտացված ձևերն են վայրի կենդանական և բուսական աշխարհի և դրանց ապրելավայրերի դիտարկման, գեոէկոլոգիական, հնագիտական, ճարտարապետական, ազգագրական, մշակութային և այլ արշավները:

Ձմեռային սեզոնը օգտագործելու նպատակով կազմակերպվում են նաև կենդանիների հետքերի դիտարկումներ, դահուկային արշավներ և այլն: Էկոտուրիզմի երթուղիները պետք է ապահովեն դիտարկում՝ առանց կենդանիների անհանգստացման: Վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտարկման արշավները կարող են մեծ դեր խաղալ ճանաչողության և

բնապահպանական կրթության գործում, ներգրավելով տեղական բնակչությանը, դպրոցականներին և ուսանողներին:

7.10. Էկոտուրիզմի երթուղիների նկարագրություն

Էկոտուրիզմի և այցելությունների երթուղիները կարող են բավարարել տարբեր տիպի և հետաքրքրություն ունեցող այցելուների: Երթուղիների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն ներկայացված է սույն ծրագրում, սակայն այն ամբողջական տուրիստական փաթեթ կդառնա միայն արգելոցի կառավարման համակարգի, ենթակառուցվածքների և սպասարկման ծառայությունների լիարժեք ձևավորումից հետո՝ ինչը հնարավորություն կտա տրամադրել նաև երթուղիների սպասարկման ծառայությունների ցանկը, ինչպես նաև դրանց հետ կապված վարձավճարներն ու պայմանները:

Վարձավճարները պետք է մշակվեն և հաստատվեն ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, տարբերակելով տեղական և արտասահմանցի այցելուների վճարները: Արգելոցի հարակից համայնքների բնակչության համար պետք է հստակեցվեն անվճար հիմունքներով մուտքի, տեղաշարժի և այցելության տարածքներն ու պայմանները:

Երթուղիներում ընդգրկված տարածքների կտրտվածությունը և դժվարամատչելիությունը պահանջում են այցելուներից ֆիզիկական բավարար պատրաստվածություն, հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ: Այցելությունների լավագույն ժամանակահատվածը մայիս – հոկտեմբեր ամիսներն են: Արգելավայրերի տարածքում երթուղիների մի մասը հնարավոր է անցնել ավտոմեքենաներով /միայն թույլատրված հատվածներում/, հետիոտն կամ ձիերով: Պետարգելոցի տարածքում ցանկացած ավտոտրանսպորտի օգտագործումը արգելվում է, դրանք պետք է սահմանափակվեն մինչև ուղեփակոցներ և ավտոմեքենաների համար նախատեսված կայանատեղեր:

Էկոտուրիզմի հետագա զարգացման համար երթուղիները կարող են համատեղվել նաև Սյունիքի / Կապան- Գորիս-Սիսիան տարածաշրջան/ այլ տարածքների, նշանավոր բնության և պատմամշակութային հուշարձանների այցելությունների հետ: Համայնքներում տուրիստական ենթակառուցվածքի և սպասարկման ծառայությունների բավարար մակարդակի ձևավորումից հետո արգելոցի և արգելավայրերի տարածքների բուն էկոլոգիական զբոսաշրջությունը կարելի է զուգակցել ալպինիզմի, ժայռամագլցման, անձավային, հեծանվային կամ արկածային այլ հատուկ բնույթի արշավների, ինչպես նաև, պատմամշակութային և ազգագրական տուրիզմի հետ:

7.11. Շիկահող» պետական արգելոց

7.11.1. Շիկահող - Կենու պուրակ

Երթուղին սկսվում է Շիկահող գյուղի եկեղեցուց, այնուհետև շարունակվում գյուղի մերձակա պղնձի հնագույն բնակավայր՝ Քարկտոր /քարե տանիք/, որից հետո երթուղին անցնում է Շիկահող գետակի գեղատեսիլ կիրճով, հասնում գետակի վրա գտնվող ջրվեժին և կենու պուրակ /գյուղից մոտ 3,5կմ հվ.արմ/, որը զբաղեցնում է շուրջ 20 հա տարածք /աշխարհագրական կոորդինատներ N39 04 45, E46 26 35/: Այնուհետև երթուղին շարունակվում է դեպի մերձալպյան գոտու մարգագետիններ, որտեղ այն Շիշկերտ լեռան մոտ կարող է միանալ Ծավ – Շիշկերտ – Խուստուփ երթուղուն:


Շիկահող գյուղից դեպի կենու պուրակ և մերձալպյան գոտու մարգագետիններ հատվածը գրունտային /դաշտային/ ճանապարհ է, մոտ 8 կմ երկարությամբ, այցելությունները կարող են իրականացվել հետիոտն կամ հեծյալ, մասամբ ավտոմեքենայով /գյուղից մինչև ուղեփակոց/: Երթուղու տևողությունը կազմում է մոտ 8 ժամ, այն միջին բարդության է, աչքի է ընկնում գեղեցիկ բնապատկերներով, լանդշաֆտը լեռնահովտային է /հիմնականում անտառածածկ/:

Հնարավոր են անհատական և փոքր խմբերով /մինչև 10 հոգի/ արշավներ: Այցելուների սնունդը և գիշերումը նպատակահարմար է Շիկահող գյուղում, որտեղ առկա է նաև էթնոտուրիզմի կազմակերպման ներուժ /գյուղական ավանդական կենցաղավարում, միջնադարյան ճարտարապետության նմուշներ, արհեստներ/, որը կարելի է զուգակցել երթուղու հետ:

Քարտեզ 9. «Շիկահող» պետական արգելոցի այցելուների ծրագրի ենթակառուցվածքը

Քարտեզ-սխեմա
«Շիկահող» Պետական արգելոցի
Այցելուների ծրագրի ենթակառուցվածքը

- Պ ա յ մ ա կ ա ն ն շ ա ն ն ք**
- ՀՀ պետական սահման
 - «Շիկահող» պետական արգելոցի սահմաններ
 - բնակավայրեր
 - ավտոճանապարհներ
 - գետեր
 - վտակներ
 - «Շիկահող» Պետական արգելոց
 - «Սոսու պուրակ» պետական արգելոց
- Երթուղիներ**
- երթուղի N1
 - երթուղի N2
 - երթուղի N3
 - երթուղի N4
 - երթուղի N5
- Նշանակումներ**
- եկեղեցիներ
 - բնակատեղիներ
 - կամուրջ
 - ցուցավահանակ
 - տաղավարներ
 - ուղեփակոցներ
 - դիտակետեր
 - ավտոկայանատեղիներ
 - աղբյուրներ
 - ջրվեժներ
 - հաճարենու պուրակ
 - կենու պուրակ



7.11.2. Սրաշեն -Ներքին Հանդ -Սոսու պուրակ արգելավայր

Երթուղին սկսվում է Շիկահողից, այնուհետև շարունակվում դեպի Սրաշեն գյուղի Սբ. Հովհաննիս եկեղեցի /մեքենայով/ և արևելյան հաճարենու /Fagus orientalis/ միակ բնական պուրակը /հետիոտն/ Հարավային Հայաստանում: Երթուղին շարունակվում է /ավտոմեքենայով/ դեպի Ներքին Հանդ գյուղի եկեղեցի, այնուհետև /հետիոտն/ հասնում Ծավ գետի վրա գտնվող կամուրջը և Սոսու պուրակ արգելավայրը /աշխարհագրական կոորդինատներ N39 03 00, E46 30 38/:

«Սոսու պուրակ» պետական արգելավայրը գտնվում է արգելոցի արևելյան մասում և ստեղծվել է Կովկասում ամենախոշոր բնական արևելյան սոսու /Platanus orientalis/ պուրակի պահպանության նպատակով: Գտնվում է Ծավ գետի ափերին, ծովի մակերևույթից 700-800 մ բարձրության վրա և զբաղեցնում է 64,2 հա տարածք: Սոսու պուրակը ձգվում է մոտ 10 կմ երկարությամբ, 50-200 մ լայնությամբ նեղ շերտով, մոտավորապես այդքան էլ շարունակվում է Ծավ գետի ներքին հոսանքում: Ներկայումս այստեղ աճում են 1000-ից ավելի 200-250 տարեկան սոսու ծառեր, որոնց բարձրությունը 30-35 մ է, բների տրամագիծը հասնում է 3 մետրի, հանդիպում են նաև հսկա փչակներ ունեցող դարավոր ծառեր: Պուրակում աճում են նաև հունական

ընկուզենին, կովկասյան փռնին և ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ:

Երթուղու տևողությունը կազմում է մոտ 8-10 ժամ, երկարությունը՝ շուրջ 15կմ, միջին բարդության է, հնարավոր են անհատական և փոքր խմբերով /մինչև 10 հոգի/ արշավներ: Այցելուների սնունդը և գիշերումը նպատակահարմար է կազմակերպել Ներքին Հանդ գյուղում: Այստեղ առկա է գյուղական տուրիզմի /ագրոտուրիզմ, էթնոտուրիզմ/ զարգացման ներուժ, որը կարելի է զուգակցել երթուղու հետ:

7.11.3. Շիկահող - Ջրվեժ - Կեմանց գյուղատեղի

Երթուղին սկսվում է Շիկահողից դեպի Ծավ գյուղ ավտոմեքենայով, այնուհետև շարունակվում /հետիոտն/ գյուղից մոտ 2 կմ արևմուտք՝ Ծավի աջ վտակի վրա գտնվող Զոռիկ տեղամաս, /1250մ ծ.մ.բարձր./, որտեղ գետակը հոսում է նեղ կիրճով և առաջացնում գեղեցիկ ջրվեժ՝ մոտ 10մ բարձրությամբ /աշխարհագրական կոորդինատներ N39 03 123, E46 24 802/: Այնուհետև երթուղին շարունակվում է դեպի Շիշկերտ գետի ձախափնյա /մոտ 0,5կմ հեռ. վրա/ Կեմանց գյուղատեղի և դեպի գետի կիրճը:

Հնարավոր են հետիոտն կամ ձիերով անհատական և փոքր խմբերով /մինչև 10 հոգի/ արշավներ: Երթուղու տևողությունը կազմում է մոտ 6 ժամ, հեռավորությունը Շիկահող գյուղից 18կմ: Լանդշաֆտը լեռնահովտային է, հիմնականում անտառածածկ: Այցելուների գիշերումը նպատակահարմար է Ծավ գյուղում կամ Կեմանցում /վրանային ժամանակավոր ճամբար/:

Լուսանկար 5 - Ջրվեժ /Զոռիկ/ գետակի վրա



Լուսանկար 6 - Սոսու պուրակ, Ծավ գետ



7.11.4. Շիկահող - Քսաջուր /Քոսաջուր/ - Մազրա գյուղատեղի

Երթուղին սկսվում է Ծավ գյուղից, այնուհետև շարունակվում դեպի 9 կմ արևմուտք՝ Մեղրի տանող մայրուղու ձախ կողմում, Ծավ գետի վրա գտնվող միջնադարյան, միաթոփչ կամարով մոտ 10մ բարձրությամբ կամուրջ /աշխարհագրական կոորդինատներ N39 01 778, E46 24 155/: Կամրջի հարևանությամբ գետի ափին բխում է հորդ աղբյուր, որը հարմար է հանգստի կազմակերպման համար: Կամրջի մոտակա արահետից սկսած երթուղին /հետիոտն/ անցնում է գետակի անտառածածկ հովտով, հասնում շուրջ մեկ կմ հարավ Քսաջուր /Քոսաջուր/ տարածքը՝ միջնադարյան կիսավեր, կոպտատաշ շարվածքով եկեղեցին, որի ներսում կառուցված է փոքրիկ

ջրավազան /1,5x2x1,2մ չափերով/: Եկեղեցու հիմքից բխում է հանքային աղբյուր /ըստ ավանդության ջուրը բուժիչ է քոս հիվանդության համար/: Շրջակայում կան բնակատեղի հետքեր, տապանաքարեր, լանդշաֆտը լեռնահովտային է, անտառածածկ: Վերադարձին երթուղին շարունակվում է կամրջից դեպի հվ. արևմուտք, Մազրա գետակի աջ ափին գտնվող Մազրա հին գյուղատեղի /հնարավոր է ավտոմեքենայով/:

Երթուղին միջին բարդության է, տարածքը գտնվում է մոտ 1700 մ ծ.մ. բարձր, կարող է իրականացվել հետիոտն կամ ձիերով: Երթուղու տևողությունը կազմում է մոտ 8 ժամ, հեռավորությունը Շիկահող գյուղից 25 կմ: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով /մինչև 10 հոգի/ արշավներ: Այցելուների գիշերումը նպատակահարմար է Ծավ գյուղում:

7.11.5. Մեղրիի լեռնաշղթա

Երթուղին սկսվում է Կապան - Շվանիձոր ճանապարհի լեռնանցքից և շարունակվում է դեպի արևելք Մեղրիի լեռնաշղթայի երկայնքով մինչև պետական սահմանի վրա գտնվող Բարթաս լեռը: Երթուղու հյուսիսային մասում գտնվում է Շիկահողի պետական արգելոցը՝ Մթնածորի կիրճում, որտեղ պահպանվել են մարդու միջամտությունից զրեթե զերծ մնացած կաղնու կուսական անտառները: Երթուղու հարավային մասը զբաղեցնում է Արևիկ ազգային պարկը իր յուրահատուկ բնաշխարհով: Երթուղին իր ամբողջ երկայնքով հագեցած է գեղեցիկ բնական տեսարաններով: Այստեղ հանդիպում են Միջազգային և ՀՀ կարմիր գրքերում ընդգրկված կովկասյան ընձառյուծը (*Panthera pardus*), բեզուարյան այծը (*Capra aegagrus*), սև անգղը (*Aegyptius monachus*): Ճանապարհին կարող են հանդիպել գորշ արջը (*Ursus arctos syriacus*), լուսանը (*Felis lynx*), անտառային կատուն (*Felis silvestris caucasica*), այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), գայլը (*Canis lupus*), աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles meles*), եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*) և բազմաթիվ այլ կենդանիներ և թռչուններ: Սողուններից կարող են հանդիպել նաև գյուրզան (*Macrovipera lebetina*) և Միջազգային և ՀՀ կարմիր գրքերում գրանցված հայկական իծը (*Montivipera raddei*):

Երթուղու երկարությունը մոտ 16կմ է, տևողությունը կազմում է մոտ 10 ժամ: Այն հարմար է կենդանիների և թռչունների դիտարկման համար: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, իսկ գիշերումը նպատակահարմար է կազմակերպել Ծավ կամ Շիկահող գյուղերում:

Լուսանկար 7 – Կենու պուրակ, ջրվեժ Շիկահող գետակի վրա



Լուսանկար 8 - Մթնածոր, ընդհանուր տեսարան



7.12. «Խուստուփ» արգելավայր


7.12.1. Ձագեձոր – Ավսարլու – Հաջիլու

Երթուղին սկսվում է Ձագեձոր գյուղից դեպի հարավ արևելք, շարունակվում մինչև Բաղացուր և Ավսարլու գետակների միախառնման տեղից / մոտ 3կմ հարավ (Ավսարլու գետակի հովտով) դեպի 10 – 14 – ըդ դարի հին գյուղատեղի և 11 – 13 ըդ դարերի եկեղեցի՝ Ավսարլու /մոտ 10կմ/: Այնուհետև երթուղին վերադառնում է դեպի Բաղացուր և Ավսարլու գետակների միախառնման տեղ /խաչմերուկ, աշխարհագրական կոորդինատներ N39 09 34, E46 16 07/ , թեքվում արևելք /աջ/ դեպի Հաջիլու ավերակները և Քամբախ լեռան հարավ արևմտյան քարափները:

Գետի ստորին հոսանքը անտառապատ է /հիմնականում կաղնի, բոխի/, հովիտը գեղատեսիլ է, գետակն առաջացնում է փոքրիկ սահանքներ և ջրափոսեր: Ճանապարհին կարող են հանդիպել այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), գայլը (*Canis lupus*), գորշ արջը, աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles meles*), եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*) և այլ կենդանիներ: Անտառային գոտուց վեր, ջրբաժանի բաց և ժայռոտ տեղամասերում կարող են հանդիպել նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզուարյան այծը (*Capra aegagrus*) և այլ կենդանիներ:

Երթուղին հարմար է կենդանիների դիտարկման համար: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով /մինչև 5 հոգի/ արշավներ, գիշերումը կարելի է կազմակերպել Լեռնաձոր գյուղում կամ Կապանում: Երթուղու տևողությունը կազմում է մոտ 10 ժամ, հեռավորությունը Ձագեձորից մինչև եկեղեցի՝ մոտ 10կմ: Երթուղին դժվարանցանելի է, այն բարձրանում է մինչև 3000 ծմբ, կարելի է իրականացնել հետիոտն կամ ձիերով և պահանջում է ֆիզիկական բարձր պատրաստվածություն:

Քարտեզ 10. «Խուստուլի» պետական արգելավայրի այցելուների ծրագրի ենթակառուցվածքը



7.12.2. Շիշկերտ – Խուստուփ լեռնագանգված

Երթուղին սկսվում է Շիշկերտ գյուղից, շարունակվում հյուսիս դեպի Շիշկերտ / Շիշկերտ լեռ՝ 2735մ/, այնուհետև դեպի հյուսիս արևմուտք՝ մինչև Խուստուփ լեռնագագաթ /մոտ 5,5կմ/: Խուստուփ գագաթից այն թեքվում է դեպի հարավ արևմուտք և ճանապարհով իջնում Շիշկերտ գյուղ:

Ճանապարհին հիմնականում անցնում է Խուստուփ լեռնագանգվածի գեղատեսիլ ջրբաժանով, որտեղից երևում են շրջակա լեռներն ու անտառապատ հովիտները: Հանդիպում են բազմաթիվ աղբյուրներ, բաց տեղամասերում կարող են հանդիպել նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզուարյան այծը (*Capra aegagrus*), կովկասյան մաքեհավը (*Tetrao mlokosiewiczzi*), գայլը (*Canis lupus*), վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) և այլ վայրի կենդանիներ: Անտառային գոտում հանդիպում են այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), գորշ արջը, աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles meles*), եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*) և այլ կենդանիներ:

Երթուղին տևում է մոտ 10 ժամ, միջին դժվարության, երկարությունը մոտ 23 կմ: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, հետիոտն կամ ձիերով: Գիշերումը կարելի է կազմակերպել Վերին Վաչագան կամ Շիկահող գյուղերում:

7.12.2. Վերին Վաչագան – Խուստուփ լեռնագանգված

Երթուղին սկսվում է Վերին Վաչագան գյուղից, շարունակվում դեպի արևմուտք /մոտ 4,5կմ/, այնուհետև դեպի հարավ՝ մինչև Խուստուփ լեռնագագաթ /մոտ 6կմ/: Խուստուփ գագաթից այն վերադառնում է Վերին Վաչագան կամ շարունակվում է դեպի հարավ արևմուտք, այնուհետև հարավ և ճանապարհով իջնում Շիշկերտ գյուղ:

Ճանապարհին հիմնականում անցնում է Խուստուփ լեռնագանգվածի գեղատեսիլ ջրբաժանով, որտեղից երևում են շրջակա լեռներն ու անտառապատ հովիտները: Հանդիպում են բազմաթիվ աղբյուրներ, բաց տեղամասերում կարող են հանդիպել նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզուարյան այծը (*Capra aegagrus*), կովկասյան մաքեհավը (*Tetrao mlokosiewiczzi*), գայլը (*Canis lupus*), վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) և այլ վայրի կենդանիներ: Անտառային գոտում հանդիպում են այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), գորշ արջը, աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles meles*), եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*) և այլ կենդանիներ:

Երթուղին տևում է մոտ 10 ժամ, միջին դժվարության, երկարությունը մոտ 24 կմ: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, հետիոտն կամ ձիերով: Գիշերումը կարելի է կազմակերպել Շիկահող գյուղում:

Լուսանկար 10 – Զանգեզուրի լեռնաշղթա



7.13. «Զանգեզուր» արգելավայր

7.13.1. Սվարանց - Արամազդ - Տաթև - Սատանի կամուրջ

Երթուղին սկսվում է Սվարանց գյուղից և Սվարանց գետակի հովտով շարունակվում է հարավ արևմտյան ուղղությամբ՝ դեպի Արամազդ լեռնագագաթը /3399մ/: Հետադարձին ավտոմեքենայով կարելի է այցելել Տաթևի վանական համալիրը /Տաթև գյուղ/ որից հետո շարունակել հյուսիս արևելք դեպի «Սատանի» կամրջը:


«Սատանի» կամուրջը Որոտան գետի վրա՝ երկու ավերի տրավերտինների կուտակումներից գոյացած կամարաձև բնական կամուրջ է, որի տակով գետը շարունակում է հոսել և դուրս է գալիս մակերևույթ մոտ 100մ հեռավորությունից: Բարակ շիթով արտահոսող հանքայնացած ջրերը զառիթափի լանջերին առաջացրել են տրավերտինային քարափ, որը քարե ջրվեժի տպավորություն է թողնում:

Տաթևի վանական համալիրը /Որոտանի կիրճում նաև Հարանց Անապատը/ Հայաստանի միջնադարյան ճարտարապետության ամենանշանավոր կառույցներից է, որը տեղադրված է Որոտանի անդնդախոր կիրճի աջ բարձրադիր քարափին և որտեղից բացվում է գեղեցիկ տեսարան դեպի կիրճը:

Երթուղու տևողությունը կազմում է մոտ 10 ժամ, Սվարանցից մինչև Արամազդ լեռ հեռավորությունը մոտ 10կմ է: Երթուղին միջին բարդության է: Երթուղին անցնելիս կարելի է հանդիպել բազմաթիվ աղբյուրներ և ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ:

Ճանապարհը մինչև Տաթև բարեկարգ է, Սվարանց գյուղից դեպի Արամազդ հատվածը տեղ-տեղ դժվարանցանելի է ավտոտրանսպորտի համար /գետակի հովտում գերադասելի են ամենագնաց մեքենաները/: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ:

Քարտեզ 11. «Զանգեզուր» պետական արգելավայրի այցելուների ծրագրի ենթակառուցվածքը



7.13.2. Գեղի - Քիրս - Արամազդ

Երթուղին սկսվում է Գեղի գյուղից Կարդ գետի հովտով դեպի Քիրս գյուղի եկեղեցի, թեքվում դեպի հյուսիս արևելք, հասնում հանքային աղբյուրին՝ մոտ 2000մ ծմբ /աշխ. կորդինատներ՝ N39° 16' 56'', E 046° 06' 35''/ և շարունակվում դեպի Արամազդ լեռնագագաթ 3399մ ծմբ: Հեռավորությունը Քիրս գյուղից մինչև Արամազդ լեռնագագաթ կազմում է մոտ 20 կմ:

Լանդշաֆտը բարձր լեռնային է,երթուղին հարմար է կենդանիների դիտարկման համար, հանդիպում են ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզուարյան այծը (*Capra aegagrus*), մուֆլոնը, կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczzi*), վայրի խոզը (*Sus scrofa*), գայլը (*Canis lupus*), գորշ արջը (*Ursus arctos*), վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) և այլ վայրի կենդանիներ:

Երթուղու տևողությունը կազմում է մոտ 12 ժամ, հանքային աղբյուրի մոտ կարելի է կազմակերպել վրանային ճամբար և գիշերում: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, հետիոտն կամ ձիերով: Կարելի կազմակերպել երկու օրանոց արշավներ /գիշերումը կարելի է կազմակերպել վրանային ճամբարում/ ընդգրկելով Դարմանաձորի հատվածը:

Լուսանկար 11 – Տաթնի վանական համալիր

Լուսանկար 12 – Խուստունի լեռնազանգված



7.13.4. Վերին Գիրաթաղ – Շղարջիկ

Երթուղին սկսվում է Վերին Գիրաթաղ գյուղից, արահետով անցնում Կատար լեռան /Բարգուշատի լեռնաշղթայի հարավ արևելքում, 3012մ ծմբ/ հարավային մասով, այնուհետև թեքվում դեպի հարավ և անտառային գոտով հասնում դեպի արահետի մերձական հին բերդատեղի /Կալա, 1980մ ծմբ, աշխ. կոորդինատներ՝ N39° 14' 57'', E 046° 18' 50''/ և շարունակվում դեպի Շղարջիկ գյուղ:

Լանդշաֆտը լեռնային է, երթուղին հարմար է կենդանիների դիտարկման համար, հանդիպում են ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզոարյան այծը (*Capra aegagrus*), այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczzi*), և այլ վայրի կենդանիներ:

Երթուղու տևողությունը կազմում է մոտ 10 ժամ, հեռավորությունը մոտ 18կմ: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով /մինչև 5 հոգի/ արշավներ, հետիոտն կամ ձիերով:

7.13.5. Տաշտունի լեռնանցք – Ծաղքարի լիճ

Երթուղին սկսվում է Տաշտունի լեռնանցքից, թեքվում դեպի արևմուտք մոտ 1կմ /պահակակետ/, այնուհետև շարունակվում Ծաղքար գետակի կիրճով դեպի Ծաղքարի լիճ՝ 3277 մ բարձրության վրա (N39° 05' 11.8'', E46° 05' 05''):

Լանդշաֆտը բարձր լեռնային է /ալպյան տիպի/, խոր, կտրտված ձորերով, գահավեժ քարափներով և ատամնավոր գագաթներով: Երթուղին հարմար է կենդանիների դիտարկման համար, հանդիպում են ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզոարյան այծը (*Capra aegagrus*), կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczzi*), գայլը (*Canis lupus*), գորշ արջը և այլ կենդանիներ:

Երթուղու տևողությունը կազմում է 10 ժամ, սակայն կարելի է կազմակերպել երկու օրանոց արշավներ /գիշերումը կարելի է կազմակերպել վրանային ճամբարում, N39° 06' 44,9'', E46° 08' 48,3'', 2508 ծ.մ.բ/: Հեռավորությունը լեռնանցքից մինչև Ծաղքարի լիճ կազմում է մոտ 12կմ: Լիճը սահմանամերձ է, այցելությունները անհրաժեշտ է համաձայնեցնել սահմանապահ ծառայությունների հետ:

Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, մինչև Քաջարանի լեռնանցք և պահակակետ ավտոտրանսպորտով, այնուհետև հետիոտն կամ ձիերով:

7.13.6. Քաջարանցի ձոր - Գոգի լիճ/Կապուտան/

Երթուղին սկսվում է Քաջարան գյուղի արևմտյան ծայրամասից /կիսավեր քարե տնակ, նախկին մետեոկայան, 2610 ծ.մ.բ., N39° 07' 41,6'', E 046° 04' 22''/, շարունակվում դեպի տաղավար /աղբյուր/, այնուհետև այն թեքվում է դեպի հարավ արևմուտք և Քաջարանց գետակի կիրճով հասնում դեպի նրա ակունքները՝ Գոգի /Կապուտան/ լիճ՝ 3218 մ բարձրության վրա /աշխ. կորդինատներ՝ N39° 05' 36'', E 046° 03' 38''/: Լիճը զբաղեցնում է սառցադաշտային կառի հատակը, մոտ 22մ խորությամբ, և հանդիսանում է Զանգեզուրի լեռնաշղթայի ամենամեծ սառցադաշտային ծագման լիճը:

Երթուղու երկայքով լանդշաֆտը բարձր լեռնային է /ալպյան տիպի/, խոր, կտրտված ձորերով, գահավեժ քարափներով և ատամնավոր գագաթներով: Երթուղին հարմար է կենդանիների դիտարկման համար, հանդիպում են ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզոարյան այծը (*Capra aegagrus*), կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczzi*), գայլը (*Canis lupus*), գորշ արջը, գիշատիչ թռչուններ և այլ կենդանիներ:

Երթուղու տևողությունը կազմում է 8 ժամ, հեռավորությունը Քաջարան գյուղից մինչև Գոգի լիճ կազմում է մոտ 10կմ: Կարելի կազմակերպել երկու օրանոց արշավներ՝ ընդգրկելով Կապուտանց գետի հովիտը և ջրվեժները /Քաջարան քաղաքից 3կմ արևմ., 2500-2600 մ. բարձրությունների վրա, գիշերումը կարելի է կազմակերպել վրանային ճամբարում/:

Լիճը սահմանամերձ է, այցելությունները անհրաժեշտ է համաձայնեցնել սահմանապահ ծառայությունների հետ: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, հետիոտն կամ ձիերով:

7.14. Կարողությունների հզորացում

Այցելությունների կառավարման և կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհրաժեշտ է արգելոցի անձնակազմը համալրել համապատասխան մասնագետներով և «Շիկահող» ՊՈԱԿ-ի կառուցվածքում ձևավորել հաստիքներով համալրված այցելությունների և էկոտուրիզմի կառավարման բաժին, որի անձնակազմը ցանկալի է տիրապետի անգլերեն լեզվին և համակարգչային տեխնիկային:

Բաժնի կարևոր գործառնություններն են նոր ֆինանսական մուտքեր ստանալու լրացուցիչ հնարավորությունների գնահատումը, տնտեսվարման նոր մեխանիզմների ներդրումն ու երկարաժամկետ պլանավորումը: Արգելոցի գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուրներին՝ պետական բյուջեից հատկացվող միջոցներին և դրամաշնորհներին անհրաժեշտ է ավելացնել տուրիզմի ներուժի օգտագործման, ճկուն գնային քաղաքականության, շուկայավարման և գովազդային գործունեության արդյունքում ստացվող լրացուցիչ միջոցները: Կարևոր նախապայմաններից է արգելոցի կողմից տրամադրվող ծառայությունների հստակ ցանկի, մատուցման պայմանների և սակագների մշակումը:

Բաժնի հիմնական խնդիրներն են իրականացնել այցելությունների և ռեկրեացիոն ռեսուրսների կառավարում, մատուցել բարձրակարգ ծառայություններ, գնահատել այցելուների կարիքները, ապահովել անվտանգություն, տրամադրել էկոտուրիզմին առնչվող տեղեկատվություն, կազմակերպել համագործակցություն հարակից տարածքներում ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատների հետ:

Պետարգելոցը պետք է ներգրավի համապատասխան կարողություններ ունեցող մասնագետներ, կազմակերպի անձնակազմի վերապատրաստում, հատուկ դասընթացներ և ուսումնական ուղևորություններ մասնագիտացված, բարձր որակավորում ունեցող ուղեկցորդներ պատրաստելու նպատակով, որոնց պետք է ներգրավվեն նաև տեղական տուրօպերատորները:

Այցելությունների և էկոտուրիզմի կառավարման անձնակազմը սպասարկման նպատակով պետք է ունենա տուրիստական սարքավորումներ և հանդերձանք, այդ թվում՝ հեռադիտակներ, ձիեր և թամբեր, վրաններ, քնապարկեր, դաշտային սարքավորումներ և այլն, պետք է ապահովված լինի նաև որոնման, առաջին օգնության և փրկարարական աշխատանքներ կազմակերպելու անհրաժեշտ սարքավորումներով /ռադիոկապի միջոցներ, դեղատուփեր, պարաններ, առաջին օգնության միջոցներ և այլն/:

Աղյուսակ 17-Էկոտուրիզմի կառավարման բաժնի գույքի և հանդերձանքի նախահաշիվ*

Ներդրումների անվանումը	Քանակ	Միավորի արժեքը - դր	Ընդամենը
Բարձր անցողականության ավտոմեքենա	3	4 800 000	14 400 000
Գրասենյակային կահույք /այցելուների կենտրոն, տուրիզմի կառավարման բաժին/	-	-	1000 000
Համակարգչային սարքավորումներ	3	380 000	1 140 000
Գրասենյակային սարքավորումներ	-	-	1 500 000
Ուսապարկեր	10	26 600	266 000
Քնապարկեր	20	30 000	600 000
Հեռադիտակներ	10	65 000	650 000
Թվային ֆոտոապարատներ	5	100 000	500 000
Ձիեր և թամբեր	10	500 000	5 000 000
Ռադիոկապ	-	-	3 000 000
GPS սարքեր	5	250 000	1 125 000
Վառելիքային /քսայուղեր/, տարեկան	-	-	3 350 000
Ընդամենը			32 531 000

* Արժեքները կարող են վերանայվել կապված շուկայական գների փոփոխությունների հետ:

7.15. Անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորում

Պետարգելոցի տարածքում էկոտուրիզմը արդյունավետ կազմակերպելու համար պետք է ձևավորվի սպասարկող ենթակառուցվածք /այցելուների կենտրոններ, կացարաններ, սննդի վաճառակետեր, դիտակետեր, տաղավարներ, ճանապարհներ, տեղեկատվական ցանց, կենցաղային սպասարկման ապահովում և աղբահեռացում, ուղեփակոցներ, կանգառներ, անցման կետեր, ցուցավահանակներ, որոնց սպասարկումը պետք է լինի շարունակական: Արգելոցի տարածքում ենթակառուցվածքների ստեղծմանը պետք է նախորդեն համապատասխան նախագծային աշխատանքներ՝ արգելոցի պահպանության ռեժիմին և լանդշաֆտային պլանավորման պահանջներին համապատասխան:

Այցելուների տեղեկատվական կենտրոններ - առաջարկվում է ստեղծել երկու կենտրոն՝ մեկը «Շիկահող» պետարգելոցի մերձակա տարածքում, մյուսը՝ «Զանգեզուր» արգելավայրի տարածքներում: Կառուցապատման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել

ուսումնասիրություն՝ տեղանքի ընտրության նպատակով: Այցելուների կենտրոն կարելի է կառուցել Շիկահող կամ Ծավ գյուղերում, /կամ գնել և հարմարեցնել/ որոնց տեղադիրքը հարմար է էկոտուրիզմի բոլոր երթուղիների մեկնարկի տեսանկյունից: «Զանգեզուր» արգելավայրի տարածքում այցելուների կենտրոնի համար հարմար է Տաթև համայնքը:

Կենտրոնները պետք է ծառայեն որպես ընդունարան, հագեցած լինեն կապի միջոցներով, տեղեկատվության ներկայացման և տրամադրման անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, ցուցադրական և տեղեկատվական նյութերով: Այցելուների կենտրոններում կարելի է ձևավորել նաև օթևան, գիշերելու և առաջին բուժօգնության հնարավորություններ: Կենտրոնին /ինչպես նաև տեղամասային գրասենյակներին/ կից պետք է տեղադրվեն տոմսերի, տեղեկատվանյութերի և հուշանվերների կրպակներ:

Արգելոցի բուն տարածքում թույլատրվում է միայն արահետների բարեկարգում /հարմարեցում/, վտանգավոր անցումների /կամրջակների, բազրիքների/ և սահմանափակ ցուցավահանակների տեղադրում:

Աղյուսակ 18 - Անհրաժեշտ ենթակառուցվածքները և արժեքը

N	Անվանումը	Քանակ	Արժեքը, €
1.	Շիկահող պետարգելոցի այցելուների կենտրոնի նախագծում և կառուցում	1	175,000
2.	Զանգեզուր արգելավայրի այցելուների կենտրոնի նախագծում և կառուցում	1	175,000
3.	Էկոտուրիստական արահետների, կացարանների և դիտակետերի բարելավում	հայացողական	50,000
4.	Տեղեկատվական նշաններ, ցուցավահանակներ, տպագիր նյութեր, բրոշուրներ և այլ	հայացողական	50,000
	Ընդամենը		450,000

Կացարաններ, վաճառակետեր - Արգելոցի հարակից համայնքներում առկա ենթակառուցվածքը անբավարար է: Դրանց ստեղծման և զարգացման համար անհրաժեշտ են տեղական, տարածքային և հանրապետական կառավարման մարմինների համատեղ գործողություններ, մասնավոր ոլորտի և միջազգային ներդրումների ներգրավում: Կացարանները սննդի և վաճառակետերը պետք է տեղակայվեն լանդշաֆտային պլանավորման էկոլոգիական պահանջներին համապատասխան: Կացարանները կարող են լինել ինչպես վրանային ճամբարների տեսքով /էկոտուրիզմի երթուղիներին մոտ, արգելոցի տարածքից դուրս/, այնպես էլ շրջակա համայնքներում գտնվող հյուրատների /գիշերակաց, B&B/ և օթևանների տեսքով: Դրանք պետք է ապահովեն որակյալ ծառայություններ և սպասարկում, նախագծվեն, կառուցվեն և գործեն բնամշակութային միջավայրին ներդաշնակ, ապահովեն կեղտաջրերի մաքրում և հեռացում, աղբի կուտակում և տեղափոխում, էկոլոգիապես մաքուր ջրի և սննդամթերքի օգտագործում, կիրառեն ջրի, էներգիանայողության և այլընտրանքային էներգիայի օգտագործման քաղաքականություն: Սննդի և վաճառակետերի քանակը, տեղաբաշխումը և ծառայությունները պետք է համապատասխանեն այցելությունների պահանջներին և տեղադրվեն արգելոցի շրջակա համայնքներում: Արգելոցի սահմաններից դուրս հնարավոր է կազմակերպել վրանային ժամանակավոր ճամբարներ կամ հանգրվաններ դեպի Շիկահողի ջրվեժ տանող ճանապարհին /երթուղի N 3/, Մազրա հին գյուղատեղում /երթուղի N 4/, Քաջարանի լեռնանցքից ոչ հեռու և այլն:

Դիտակետեր, տաղավարներ - Դիտակետերը, թաքստոցները, պատսպարանները և տաղավարները պետք է նախատեսվեն երթուղիների վրա՝ լայն տեսադաշտ ունեցող բարձրադիր կամ առավել հետաքրքրություն ունեցող տեղանքներում: Բնական միջավայրը չխախտելու նպատակով դրանք պետք է լինեն փայտե ծածկերի, բազրիքների կամ նստարանների տեսքով՝ անբարենպաստ եղանակից պաշտպանվելու, դիտարկելու, ինչպես նաև տեղեկատվություն

ստանալու հնարավորությամբ: Կենդանիների դիտակետերը և թաքստոցները պետք է տեղադրվեն նրանց տեղաշարժերի վայրերից ոչ հեռու:

Ճանապարհներ, արահետներ - Պետարգելոցում անհրաժեշտ են ճանապարհների և արահետների բարեկարգման աշխատանքներ: Խիստ կտրտված, բարձրությունների մեծ տատանումներ և լեռնային ռելիեֆ ունեցող տարածքում կառուցապատման և բարեկարգման աշխատանքներում պետք է հնարավորինս օգտագործվեն գոյություն ունեցող ճանապարհներն ու արահետները, նվազագույնի հասցվեն կամ բացառվեն բնական լանդշաֆտների վրա բացասական ազդեցությունները: Բարեկարգման կարիք ունեն հատկապես Մթնածորի տեղամասի (25 կմ), Քսաջրի (2կմ) և Կենու պուրակի (8կմ) արահետների առանձին տեղամասերն ու ճանապարհները: Կտրուկ, խիստ թեք, քարափներին մոտ անկայուն գրունտներով տեղամասերում և գետանցումներում արահետները պետք է ամրացվեն փայտե բազրիքներով և կամրջակներով:

Տեղեկատվական ենթակառուցվածք - Այս ենթակառուցվածքները /այցելուների կենտրոններում տրամադրվող տեղեկատվությունը, տեղեկատվական տաղավարներ, թանգարանային նմուշները, կանոնակարգող ցուցանակները, ցուցասրահները, ցուցավահանակները, տպագիր նյութերը, բրոշուրները, կանոնակարգեր/ պետք է նպաստեն այցելուների իրազեկության ապահովմանը շրջակա միջավայրի, պատմության, մշակույթի, կենսաբազմազանության, բնական հուշարձանների վերաբերյալ և ձևավորեն այցելուների և տեղական բնակչության համապատասխան վարքագիծ: Տեղեկատվական համապատասխան նյութեր պետք է տեղակայվեն ուղեփակոցների մոտ, առաջարկվող երթուղիների երկայնքով, ինչպես նաև պատմամշակութային և բնության հուշարձանների մոտակայքում: Դրանք պետք է լինեն ուղղություն ցույց տվող նշաններ, կանոնակարգող ցուցանակներ և ցուցավահանակներ:

Կենցաղային ապահովում - Այս տիպի ենթակառուցվածք անհրաժեշտ է ստեղծել այցելուների կենտրոնին /ներին/ կից, տուրիզմի երթուղիների առաջարկվող կացարանների, տաղավարների, տեղամասային գրասենյակների կամ ուղեփակոցների մոտ: Սրանց թվին են պատկանում հանգստի և սնվելու վայրերը, գուգարանները, աղբյուրները, ինչպես նաև աղբահանման հարմարությունները:

Ուղեփակոցներ, ավտոկանգառներ և անցման կետեր - Ներկայումս ուղեփակոցներ և անցման կետեր կան Սուսու պուրակում, «Շիկահող» տեղամասի կենու պուրակ տանող ճանապարհին, ինչպես նաև Մեղրու լեռնաշղթայի ջրբաժանին: Նոր ուղեփակոցները պետք է տեղադրվեն Էկոտուրիզմի բոլոր երթուղիների մուտքերի մոտ, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից առավել խոցելի և մատչելի տարածքներում: Մեքենաների կանգառներ պետք է նախատեսվեն այցելուների կենտրոնի, նախատեսվող տեղամասային գրասենյակների և հնարավորության դեպքում նաև ուղեփակոցների մոտակայքում:

Ենթակառուցվածքի առաջարկվող տեղակայումը ըստ երթուղիների

Երթուղի N 1 - Անհրաժեշտ է վերանորոգել դեպի կենու տանող ճանապարհի ուղեփակոցը, կառուցել ավտոմեքենաների կանգառ/կայանատեղ, նպատակահարմար է կառուցել տեղեկատվական տաղավար և տեղադրել աղբարկղեր:

Երթուղի N 2 - Սուսու պուրակում՝ տնկարանի հարևանությամբ, Ծավ գետի վրա կառուցել կամուրջ և փայտե գետանցումներ: Պուրակի մոտ՝ գետի ձախ ափին, անհրաժեշտ է կառուցել ավտոմեքենաների կանգառ/կայանատեղ և տեղեկատվական տաղավար, տեղադրել աղբարկղեր:

Երթուղի N 3 - Անհրաժեշտ է դեպի ջրվեժ տանող ճանապարհին տեղադրել ուղեփակոց, բարեկարգել ջրվեժից ոչ հեռու գտնվող տաղավարն ու նրա շրջակայքը, տեղադրել աղբարկղեր:

Երթուղի N 4 - Դեպի Քսաջրի եկեղեցի տանող արահետի ճանապարհին անհրաժեշտ է տեղադրել ուղեփակոց, կառուցել փայտե գետանցումներ, արահետին տեղադրել ցուցավահանակներ: Ծավի կամրջի մոտ՝ աղբյուրի հարևանությամբ, նպատակահարմար է կառուցել տեղեկատվական տաղավար և տեղադրել աղբարկղեր:

Երթուղի N 5 - Նպատակահարմար է կառուցել ուղեփակոց, ավտոմեքենաների կանգառ/կայանատեղ և վրանային ճամբար Սանալուի հին գոմերից ոչ հեռու, կառուցել տեղեկատվական տաղավար և տեղադրել ցուցավահանակներ արահետի վրա: Մթնածոր հին գյուղատեղից սկսած երթուղու երկայնքով, արահետի տարբեր տեղամասերի ազատ տեսադաշտ ունեցող բարձրադիր տեղանքները, ինչպես նաև գետակի հակադիր աջափնյա քարափները հարմար են դիտակետերի կազմակերպման համար:

Երթուղի N 6 – Բաղացջուր և Ավսարլու գետակների միախառնման հատվածում նպատակահարմար է կառուցել ուղեփակոց, տեղեկատվական տաղավար, տեղադրել աղբարկղեր և ցուցավահանակներ: Հնարավոր է տեղադրել վրանային ճամբարատեղ:

Երթուղի N 7, 8 – Շիշկերտի ձորում, դեպի Խուստուփ բարձրացող հատվածում նպատակահարմար է կառուցել ուղեփակոց, տեղադրել ցուցավահանակներ:

Երթուղի N 9 – «Սատանի կամրջի» հարևանությամբ պետք է տեղադրվեն /թարմացվեն/ տեղեկատվական տաղավար, աղբարկղեր և բիոզուգարաններ: Սվարանց գյուղից դեպի Արամազդ տանող հատվածում տեղադրել ուղեփակոց, ավտոմեքենաների կանգառ/կայանատեղ, իսկ ճանապարհին՝ ցուցավահանակներ: Գետի շրջակա աղբյուրների մոտ հնարավոր է տեղադրել վրանային ճամբարատեղ:

Երթուղի N 10 - Քիրս գյուղի եկեղեցու կամ հանքային աղբյուրի մոտ նպատակահարմար է կառուցել տեղեկատվական տաղավար, տեղադրել աղբարկղեր և ցուցավահանակներ:

Երթուղի N 11 - Կալա բերդատեղի մոտ նպատակահարմար է կառուցել տեղեկատվական տաղավար, տեղադրել աղբարկղեր և ցուցավահանակներ:

Երթուղի N 12 - Քաջարանի լեռնանցքից ոչ հեռու դեպի պահակակետ տանող ճանապարհին նպատակահարմար է կառուցել ուղեփակոց, ավտոմեքենաների կանգառ/կայանատեղ, վրանային ճամբար, տեղեկատվական տաղավար, տեղադրել աղբարկղեր, Ծաղքարի կիրճում տեղադրել ցուցավահանակներ:

Երթուղի N 13 - Նպատակահարմար է Քաջարան գյուղի արևմտյան ծայրամասի տաղավարից ոչ հեռու տեղադրել ուղեփակոց, ավտոմեքենաների կանգառ/կայանատեղ, բարեկարգել տաղավարը, տեղադրել աղբարկղեր, վրանային ճամբարատեղ, իսկ Քաջարանց գետի կիրճում տեղադրել ցուցավահանակներ:

7.16. Էկոտուրիզմի շուկայավարում

Պետարգելոցի շուկայավարումը ներառում է տուրիզմի շուկայի ուսումնասիրում, ծառայությունների մատուցում, հարցումների և դիմումների սպասարկում, գովազդային նյութերի ստեղծում և տարածում, տեղական բնակչության ներգրավում, վեբկայքի սպասարկում և մի շարք այլ գործողություններ: Արդյունավետ շուկայավարման ձևերից են նաև հարակից տարածքների տուրիստական հնարավորությունների ուսումնասիրումը, հետաքրքրություն ներկայացնող վայրերի և բնակչության ներգրավումը էկոտուրիզմի երթուղիներում:

Հաշվի առնելով, որ արգելոցը առավել կենտրոնացած է բնապահպանական խնդիրների վրա, գովազդի և շուկայավարման բնագավառում պետք է համագործակցել մասնավոր տուրիստական սեկտորի հետ, որոնք կարող են տրամադրել տարբեր ծառայություններ, նպաստել այցելուների հոսքին և բնապահպանական խնդիրների լուսաբանմանը: Արգելոցի գովազդը պետք է նպաստի բնական և մշակութային արժեքների պահպանության գաղափարախոսությանը: Տպագիր գովազդային նյութերը՝ բրոշուրները, ֆիլմերը, ռեկլամային տեսահոլովակները, ինչպես նաև էլեկտրոնային նյութերը կարելի է տարածել լրատվության և մասնագիտացված տուրօպերատորների միջոցով:

Արգելոցի սահմաններից ներս գտնվող երթուղիների մանրամասն նկարագրությունները և ֆաբրիկաներ պարունակող ուղեցույցերը պետք է տրամադրվեն միայն համապատասխան նպատակային խմբերին, խուսափելով արգելոցային տարածքի լայն և բացահայտ գովազդումից՝

որպես հանրամատչելի զբոսանքի վայր, ինչը կհանգեցնի տարածքի պահպանության ռեժիմի չվերահսկվող խախտումներին: Գովազդման արդյունավետ միջոցներից է ինտերնետային կայքը, որը կարող է պարունակել մանրամասն տեղեկատվություն տարածքի բնական և մշակութային ժառանգության առանձնահատկությունների և տրամադրվող ծառայությունների մասին: Կայքը պետք է սպասարկվի և պարբերաբար թարմացվի տարածքի վերաբերյալ նորություններով, այն պետք է ունենա ներքին ձկուն փախկապակցված կառուցվածք, ինչպես նաև հղումների միջոցով կապված լինի այլ կայքերի հետ:

7.17. Տեղական բնակչության մասնակցություն

Էկոտուրիզմի զարգացման գլխավոր նպատակը բնության պահպանությունն է, որը բնական ռեսուրսների տնտեսական արժևորման միջոցով կարող է նպաստել նաև տեղական բնակչության կայուն եկամուտներ ապահովելուն: Տեղական բնակչության կողմից աջակցություն ստանալու նպատակով անհրաժեշտ է ներգրավել նրանց տարածքների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործընթացներում, ապահովել իրազեկություն տուրիզմի հնարավորությունների և բնապահպանական խնդիրների վերաբերյալ: Էկոտուրիզմից տեղական բնակչության օգտվելու հնարավորությունը անհրաժեշտ է կանխելու նրա կազմակերպման արդյունքում բնության շահագործումը:

Արգելոցի հարակից համայնքներում Էկոտուրիզմի հիմնական շահառուներն են ծառայություններ, կացարաններ, սնունդ, տրանսպորտային միջոցներ տրամադրողները և տեղական տուրօպերատորները: Համայնքները կարող են մատուցել նաև այլ ծառայություններ, ցուցադրել ավանդական ճարտարապետությունը, կենցաղավարումը, արհեստներն ու տնայնագործությունը: Հնարավորության դեպքում պետք է ներգրավել դեռևս պահպանված ավանդույթներ ունեցող ընտանիքները, կազմակերպել հատուկ ազգագրական այցելություններ, փոքրիկ ցուցասրահներ և ընտանեկան թանգարաններ:

Էկոտուրիստական գործունեության մասնակիցները, բնակչության շահագրգռվածությունն ու կարողությունները, ինչպես նաև տրամադրվող միջոցներն ու ծառայությունները պետք է բացահայտվեն հանրային քննարկումների և սոցիոլոգիական հարցումների հիման վրա: Համայնքների հետ պետք է համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերվեն վերը նշված ծառայություններ մատուցող տեղական ազգաբնակչությանը վաղօրոք ընդգրկելու նպատակով: Ծառայությունների ձևավորման, փոքր և միջին բիզնեսի զարգացման նպատակով անհրաժեշտ է ներգրավել մասնավոր ներդրողներին: Անհրաժեշտ է կազմակերպել ուսուցում և սեմինարներ մասնավոր հյուրատներ, սպասարկում և ծառայություններ տրամադրող բնակչության և կազմակերպությունների համար՝ Էկոտուրիզմի զարգացման հնարավորությունների, բիզնեսի կազմակերպման և գործունեության հետագա պլանավորման թեմաներով:

Տեղական բնակչության և արգելոցի համար լրացուցիչ եկամուտների ստեղծումը և դրան զուգահեռ բնապահպանական խնդիրների հաղթահարումը արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ կլինի հետագայում ձևավորել համակարգող խորհուրդ, որի հիմնական գործառնությունները պետք է նպատակամղվեն միջոլորտային համագործակցությանը:

7.18. Ծառայությունների և սպասարկման կազմակերպում

Ծառայությունների մատուցման և սպասարկման նպատակով անհրաժեշտ է.

- տրամադրել տեղեկատվական նյութեր տարածքի, այցելուների վարքագծի և ներկայացվող պահանջների վերաբերյալ,
- կնքել համաձայնագրեր Էկոտուրիզմի ծառայություններ մատուցող անհատների և կազմակերպությունների հետ՝ ներառելով պահանջների և սահմանափակումների վերաբերյալ ուղեցույցները,

- մշակել և կիրառել այցելուների կարիքները բավարարող սպասարկման ձևեր և ստանդարտներ կազմակերպությունների և արգելոցի անձնակազմի համար,
- բավարարել այցելուների կարիքները, միաժամանակ ապահովել շահութաբերություն և հետագա ներդրումների հնարավորություն,
- ընթացիկ խնդիրների լուծման նպատակով կազմակերպել սպասարկման ոլորտի մասնակից կողմերի /տուրիստական կազմակերպություններ, օպերատորներ, տեղական բնակչություն, արգելոցի անձնակազմ և այլն/ պարբերական հանդիպումներ,
- կիրառել «կանաչ գնումների» քաղաքականություն, օգտագործել առանց կոնսերվանտների մթերքներ,
- օգտագործել բազմակի օգտագործման առարկաներ, խուսափել վնասատուների առաջացման օջախներից,
- անխափան վիճակում պահպանել սարքավորումներն ու տեխնիկական ողջ համակարգը,
- անձնակազմի կամ այցելուների տեղափոխման համար ավտոտրանսպորտը կիրառել առավելագույն ծանրաբեռնվածությամբ:

Աղյուսակ 19-Այցելությունների կառավարման պահանջներ

Ռազմավարություն	Իրականացում
1. Ռեսուրսների պահպանում և վերականգնում և օգտագործում	1. Վերացնել ազդեցությունները, վերականգնել վնասված տարածքի կամ օբյեկտի բնական /բնականին մոտ/ վիճակը 2. Տեղեկացնել բնապահպանական տեսակետից խոցելի տարածքների և առկա խնդիրների մասին 3. Խոցելի տարածքները դարձնել դժվարամատչելի 4. Խրախուսել արգելոցից դուրս գտնվող տարածքների օգտագործումը 5. Առաջարկել այցելությունների այլընտրանքային տեղամասեր 6. Օգտագործումը սահմանափակել միայն թույլատրված տեղերում 7. Ծառայությունների մատուցումը տեղափոխել խոցելի տարածքներից դուրս 8. Կիրառել վարձավճարների տարբերակված /խրախուսական/ չափեր
2. խոցելի տարածքների ծանրաբեռնվածության նվազեցում, այցելությունների վերահսկում	1. Արգելել գիշերանցը և օթևանումը, երթուղիներից դուրս այցելությունները 2. Արգելել փոխադրամիջոցների կայանատեղը խոցելի տարածքներում 3. Արգելել բնապահպանական տեսակետից խոցելի տարածքների օգտագործումը 4. Տարածքները մեկուսացնել ազդեցություններից 5. Սահմանափակել խոցելի տարածքներում այցելուների քանակը 6. Խրախուսել այցելությունները ոչ ծանրաբեռնված ժամանակահատվածում 7. Արգելել մեծ ազդեցություն ունեցող այցելությունները 8. Սահմանել բարձր վարձավճարներ այցելությունների լավագույն սեզոնում 9. Սահմանափակել այցելությունների տևողությունը 10. Արգելել վնասակար սարքավորումների և հանդերձանքի կիրառումը 11. Պահանջել սահմանված վարքագիծ, սարքավորումներ և ունակություններ 12. Ուսուցանել «վայրի բնության» էթիկա 13. Այցելուներին տեղեկացնել արգելոցի օգտագործման թույլատրելի տեսակները 14. Տեղեկացնել արգելոցում պահպանության պահանջները:

7.19. Ընդհանուր պահանջներ

Շրջակա միջավայրի վրա տուրիզմի բացասական ազդեցությունները կախված են տարածքի առանձնահատկություններից, տուրիստական նպատակներով օգտագործման ինտենսիվությունից և տուրիզմի կառավարման ունակություններից: Արգելոցի տարածքում էկոտուրիզմի (գիտաճանաչողական համակցված էքսկուրսիաների) կազմակերպման համար ներկայացվում են հետևյալ հիմնական պահանջները՝

- բոլոր տիպի այցելությունները, դրանց քանակը և տևողությունը սահմանվում և վերահսկվում են անձնակազմի կողմից,
- արգելոցի անձնակազմը պատասխանատու է տարածքում էկոտուրիզմի կազմակերպման և բնապահպանական նորմերի ապահովման համար,
- արգելոցի տարածքում թույլատրվում են միայն պետական արգելոցի բնապահպանական և կանոնադրական խնդիրների հետ համատեղելի տուրիզմի ձևերը,
- էկոտուրիզմի երթուղիների սպասարկումը ելնում է բնական լանդշաֆտների վրա բացասական ազդեցությունների բացառման սկզբունքից,
- պետարգելոցի սահմաններից ներս արգելվում է գիշերանցը,

- արգելավայրերի տարածքում գիշերանցը թույլատրվում է միայն նախատեսված վրանատեղերում/ճամբարներում,
- պետարգելոցի սահմաններում թույլատրվում են միայն հետիոտն և հեծյալ արշավներ,
- շարժիչային տրանսպորտի օգտագործումը թույլատրվում է միայն էկոտուրիզմի երթուղիներում այդ նպատակով առանձնացված տեղամասերում՝ անձնակազմի ուղեկցությամբ,
- գովազդի ուղղվածությունը հիմնվում է միայն արգելոցի բնական և մշակութային արժեքների նկարագրության և դրանց պահպանության գաղափարախոսության վրա,
- արգելվում են աղտոտիչների և թափոնների կուտակումները,
- հավաքածուների հավաքը թույլատրվում է միայն գիտական նպատակների համար՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Էկոտուրիզմի երթուղիների մանրամասն նկարագրություններ և քարտեզներ պարունակող նյութերը նախապատրաստվում են միայն ծառայողական օգտագործման /ուղեկցողներ/ և հատուկ տիպի այցելուների համար:

Այցելությունների կառավարման պահանջներն են.

- այցելուների քանակը պետք է համապատասխանի արգելոցի ուղեկցող անձնակազմի սպասարկման հնարավորություններին և չունենա որևէ բացասական ազդեցություն,
- այցելուների խմբերը տարածքում կարող են գտնվել միայն անձնակազմի ուղեկցությամբ կամ թույլտվությամբ,
- տուրիզմի ձևերը պետք է համապատասխանեն պետարգելոցի բնապահպանական և կանոնադրական խնդիրներին,
- երթուղիները պետք է շրջանցեն խոցելի էկոհամակարգերը,
- այցելությունների ընթացքում պետք է օգտագործել միայն նախատեսված արահետները, ճանապարհներն ու տարածքները,
- էկոտուրիզմի երթուղիների հրատարակված ուղեցույցները չպետք է պարունակեն ճշգրիտ քարտեզներ և մանրամասն նկարագրություններ հազվագյուտ տեսակների ապրելավայրերի և խոցելի էկոհամակարգերի վերաբերյալ,
- մուտքավճարները պետք է սահմանվեն կախված երթուղիների տիպից, բարդությունից, հետաքրքրությունից, այցելուների նպատակային խմբերից, սեզոնից, պահանջարկից և այլն,
- արգելոցի անձնակազմը պատասխանատու է այցելուների սպասարկման, անվտանգության և բնապահպանական նորմերի ապահովման համար:

7.20. Ենթակառուցվածքներին ներկայացվող պահանջներ

Արգելոցի տարածքում ենթակառուցվածքը պետք է նախագծվի, կառուցվի և սպասարկվի շրջակա բնական և մշակութային միջավայրին համահունչ /հիմնականում փայտանյութից/, լինի խիստ սահմանափակ, փոքրածավալ և տեղադրվի նրա սահմաններից դուրս /բացառությամբ էկոտուրիզմի երթուղիների վրա նախատեսվածները/: Էկոտուրիզմը սպասարկող ենթակառուցվածքները պետք է նախագծվեն և կառուցվեն շրջանցելով տարածքում հանդիպող հայկական մուֆլոնի, բեզուարյան այծի, առաջավորասիական հովազի, կովկասյան գորշ արջի և ՀՀ Կարմիր Գրքում գրանցված բույսերի և այլ հազվագյուտ կենդանիների ապրելավայրերը: Ենթակառուցվածքների նախագծումը և դիզայնը պետք է ծառայի արգելոցի հիմնական նպատակային նշանակության և նրա առանձնահատկությունների ընդգծմանը և լուսաբանմանը:

Ենթակառուցվածքը պետք է լինի պարզ, հեշտ կառավարելի՝ հնարավորինս խուսափելով նոր ենթակառուցվածքների ստեղծումից.

- կառույցների չափերը պետք է համապատասխանեն տեղագրությանը և բուսածածկին,

- կառույցների նախագծերը պետք է հաշվի առնեն տարածքի պատմությունը, մշակութային առանձնահատկությունները, ավանդույթները, բնապատկերը, լանդշաֆտային, գունային առանձնահատկությունները և այլն,
- կառույցները պետք է նախագծվեն առավելագույն էներգախնայողության սկզբունքներով՝ հնարավորության դեպքում կիրառելով վերականգնվող էներգիայի աղբյուրներ և այլընտրանքային էներգիա /արևային կոլեկտորներ, քամու էներգիա, փոքր Հէկ - եր, ջերմության կրկնակի օգտագործում և այլն/,
- կառույցների նախագծերը և շահագործումը պետք է հիմնված լինեն ջրօգտագործման քանակի, ջրի արտահոսքի, աղմուկի, լույսի, աղտոտման, թափոնների և միջավայրը խախտող այլ գործոնների նվազագույն կիրառման վրա,
- կառույցման նպատակով պետք է օգտագործվեն նվազագույն խնամք պահանջող, տարածքին հարմար, էկոլոգիապես անվտանգ, անթափոն և տեղական նյութեր,
- օգտագործել ավտոնոմ աշխատող սարքավորումներ, մեխանիզմներ և ենթակառուցվածքներ:

7.21. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները

Շրջակա միջավայրի վրա էկոտուրիզմը կարող է թողնել տարբեր բացասական հետևանքներ, որոնք կարող են դրսևորվել տուրիզմի տարբեր փուլերում և պահանջում են այցելուների սպասարկման, քանակի և վարքագծի կառավարում, բնապահպանական տեխնոլոգիաների, տուրիստական գործունեությունը կարգավորող մեթոդականների կիրառում և այլ կանխարգելիչ գործողություններ: Քանի որ արգելոցի կառավարման նպատակը նրա էկոհամակարգերի պահպանությունն է, անհրաժեշտ է տուրիստական գործունեությունից առաջ գնահատել դրա թույլատրելիությունը, հնարավոր հետևանքներն ու էկոլոգիական ռիսկերը, կարգավորել դրա ինտենսիվությունն ու կազմակերպել ազդեցությունների մեղմացման միջոցառումներ:

Շրջակա միջավայրի վրա տուրիստական և ռեկրեացիոն գործունեության տարբեր ձևերի ազդեցության չափորոշիչները /ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական, մշակութային, տնտեսական/ անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա տուրիստական և ռեկրեացիոն գործունեության ազդեցության գնահատման, տարածքի ծանրաբեռնվածությունը որոշելու և սահմանափակումները կիրառելու, մոնիթորինգի, վիճագրական տվյալների հավաքագրման և տարածքների օգտագործման սկզբունքների մշակման և կիրառման համար:

Դրանց ընտրությունը իրականացվում է տեղական պայմաններին համապատասխան և ենթակա է փոփոխությունների և ճշգրտումների: Դրանք սահմանվում են կոնկրետ ազդեցության տեղերին, ձևերին, ծավալներին և ժամանակին համապատասխան: Ազդեցության հիմնական թիրախներն են տուրիստական բոլոր տիպերի ենթակառուցվածքները /գիշերելու և սնվելու վայրեր, արահետներ, հանգստի տաղավարներ/, պատմամշակութային և բնության հուշարձանները, գետերի հունները, տեղանքի բնորոշ կենսաբազմազանության տեսակների ապրելավայրերը, տուրիզմի բնապահպանական արդյունավետությունը և այլն:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն են թողնում արահետների բարեկարգումը /կառուցումը/, տրոքումը, նորերի ստեղծումը, այցելությունների կենտրոնների, կացարանների, դիտակետերի և այլ ենթակառուցվածքների կառուցումը, տարածքների յուրացումը, ազդեցությունները վայրի կենդանիների բնակմիջավայրերի վրա, մարդկային խմբերի առկայությունը, աղմուկը, կենդանիների անհանգստացումը, ջրահեռացման և կոյուղու համակարգերի կառուցումը, տեխնիկայի և ավտոմեքենաների առկայությունը, ջրերի օգտագործումը, աղտոտումը, էրոզիայի առաջացումը, կենցաղային աղբի կուտակումը և հեռացման խնդիրները, ացդեցությունները բուսածածկի վրա, բույսերի հավաքը, հրդեհավտանգության բարձրացումը և այլ գործոններ:

7.22. Էկոտուրիզմի ազդեցությունների մոնիթորինգ

Արգելոցի անձնակազմից պահանջվում է տուրիզմի հետ կապված ազդեցությունների գնահատում և կառավարում: Պետք է իրականացնել համապատասխան ինդիկատորների պարբերաբար դիտանց, տուրիզմի ազդեցության վերաբերյալ տվյալների հավաքագրում, վերլուծություն և գնահատում: Դրա արդյունքում որոշվում և պլանավորվում են խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները:

Տուրիզմի ձևերի, ինչպես նաև տրամադրվող ծառայությունների սահմանումն ու վերահսկումը տուրիզմի կառավարման հիմնական բաղկացուցիչներն են: Ծառայությունների որակի մոնիթորինգը ներառում է այցելուների կարիքների բավարարման վերաբերյալ տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և գնահատումը: Արգելոցի անձնակազմը պետք հավաքագրի, վերլուծի և գնահատի նաև էկոտուրիզմի ենթակառուցվածքների վիճակի և դրանց վրա ազդեցությունների հետ կապված տեղեկատվությունը, մշակի դրանց կանխարգելման և վերացման միջոցառումներ:

Տուրիզմի հետ կապված հիմնական ազդեցություններն են՝
ա/ բնապահպանական՝ կապված բնության վրա բացասական ազդեցության հետ,
բ/ սոցիալ մշակութային՝ կապված մշակութային արժեքների և տեղական համայնքների բնականոն կյանքի վրա բացասական ազդեցության հետ:

Բնապահպանական նպատակներով տուրիզմի ազդեցության գնահատման և մոնիթորինգի իրականացման հիմնական թիրախներն են ենթակառուցվածքը, արահետները, հանգստի և գիշերանցի տեղամասերը, բնության և պատմության հուշարձանները, կենսաբազմազանությունը և առանցքային բնակմիջավայրերը:

Դրանց վրա էկոտուրիզմի բացասական ազդեցությունների գնահատման չափանիշները տարաբաժանվում են հետևյալ տեսակների.

Ֆիզիկական /թափոնների և աղբի գոյացում, ջրային պաշարների օգտագործման քանակական փոփոխություններ, ջրահեռացման և կոյուղու համակարգի փոփոխություններ, արահետների տրորում և նորերի գոյացում, ենթակառուցների տակ հողաձածկույթի օգտագործում, բնության և պատմության հուշարձանների խաթարում, խարույկների /հրդեհների/ առկայություն:

Կենսաբանական /այցելությունների հետևանքով բուսածածկի և անտառների խախտում, ջրային պաշարների որակական փոփոխություններ, թռչունների բնադրավայրերի կրճատում, կենդանիների զբաղեցրած արեալների փոփոխություններ և դրանց անհանգստացում, ֆլորայի և ֆաունայի ինվազիոն տեսակների ազդեցություն, հրդեհների քանակության և հաճախականության ավելացում/:

Սոցիալ-տնտեսական նպատակներով տուրիզմի ազդեցության գնահատման և մոնիթորինգի իրականացման հիմնական ինդիկատորներն են հարակից համայնքների վիճակագրական տվյալները և դրանց դինամիկան, տուրիզմի ոլորտում ներգրավված բնակիչների և կազմակերպությունների եկամուտները, ծառայությունները և դրանց արդյունավետությունը, այցելուների տիպերը, քանակը ամսվա և սեզոնի կտրվածքով, էկոտուրիզմի ֆինանսական արդյունավետությունը:

Ազդեցությունները տարաբաժանվում են հետևյալ տեսակների.

սոցիոմշակութային /պատմամշակութային ժառանգության վիճակը, հոդօգտագործման տեսակների և ծավալների փոփոխությունը, տուրիզմի հետ կապված ապրանքների և ծառայությունների մատուցման ծավալները, տեղական բնակչության և տուրիստների միջև փոխհարաբերությունները, ազդեցությունները տեղական բնակչության կենսամակարդակի, վարքագծի և ավանդույթների վրա/:

տնտեսական /նոր աշխատատեղերի և եկամտի աղբյուրների առկայությունը, ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները, տուրիզմի կառավարման նպատակներով ծախսվող միջոցները, ապրանքների և ծառայությունների մատուցման գների

փոփոխությունները, ենթակառուցվածքների քանակը և որակը, հյուրատների, ռեստորանների և սպասարկման այլ կետերի առկայությունը, տեղական արհեստների զարգացումը /կրճատումը/, սովորույթների վրա ազդեցությունները և այլն:

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

Աղյուսակ 20- «Շիկահող» արգելոց ՊՈԱԿ - ում այցելությունների կազմակերպման գործողությունների ծրագիր

ՀՀ	Գործողություն	Կատարման ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուր
1.	Կառուցվածքային բարելավում			
	«Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի էկոտուրիզմի կառավարման բաժնի ստեղծման վերաբերյալ առաջարկությունների մշակում:	2014թ	ՀՀ ԲՆ «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ	Պետ. բյուջե՝ պահպանման ծախսեր, ծրագրային ֆինանսավորում
	«Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի նոր կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատում:	2014թ	ՀՀ ԲՆ	Պետ. բյուջե՝ պահպանման ծախսեր
	«Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրվող ծառայությունների ցանկի և սակագների հաստատում	2014թ	ՀՀ ԲՆ	Պետ. բյուջե՝ պահպանման ծախսեր
2.	Կարողությունների հզորացում			
	«Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի էկոտուրիզմի կառավարման բաժնի անձնակազմի վերապատրաստում:	2014-2016թթ	ՀՀ ԲՆ, «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ	Պետ. բյուջե՝ պահպանման ծախսեր, ծրագրային ֆինանսավորում և միջազգային ֆինանսավորում
	Անձնակազմի համար ուսումնական ուղևորությունների իրականացում:	2014-2016թթ	ՀՀ ԲՆ	Պետ. բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում և միջազգային ֆինանսավորում
	ՊՈԱԿ-ի էկոտուրիզմի կառավարման բաժնի համար գույքի և հանդերձանքի ձեռք բերում:	2014թ	ՀՀ ԲՆ «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ	Պետ. բյուջե՝ պահպանման ծախսեր, ծրագրային ֆինանսավորում և միջազգային ֆինանսավորում
	Էկոտուրիզմի ենթակառուցվածքների զարգացում:	2014-2018թթ	ՀՀ ԲՆ, ՀՀ ՏԿՆ, «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ, հարակից համայնքներ, մասնավոր սեկտոր	Պետ. բյուջե՝ պահպանման ծախսեր, ծրագրային ֆինանսավորում և միջազգային ֆինանսավորում, հարակից համայնքների, համապատասխան կազմակերպությունների սեփական միջոցներ
	Գովազդային նյութերի և վեբկայքի ստեղծում:	2014-2018թթ	ՀՀ ԲՆ, «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ	Պետ. բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում և միջազգային ֆինանսավորում
	Էկոտուրիզմի վերաբերյալ ազգաբնակչության իրազեկության բարձրացում:	2014-2018թթ	ՀՀ ԲՆ, «Շիկահող» պետական արգելոց»	Պետ. բյուջե՝ պահպանման ծախսեր, ծրագրային ֆինանսավորում և

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

ՀՀ	Գործողություն	Կատարման ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուր
3.	Արգելոցի, արգելավայրերի և նրանց պահպանման գոտու տարածքներում տուրիստական հիմնական ենթակառուցվածքների /այցելուների կենտրոն, ճանապարհներ, արահետներ, ուղեփակոցներ, տաղավարներ, կացարաններ և այլն/ կառուցման կամ վերանորոգման նախագծերի մշակում:	2014-2018թթ	ՊՈԱԿ ՀՀԲՆ, «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ	միջազգային ֆինանսավորում
	Արգելոցի, արգելավայրերի և նրանց պահպանման գոտու տարածքներում տուրիստական ենթակառուցվածքների կառուցում /ձեռք բերում/ կամ վերանորոգում:	2014-2018թթ	ՀՀԲՆ, «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ	Պետ. բյուջե՝ ծրագրային ֆինանսավորում, միջազգային ֆինանսավորում

ԳԼՈՒԽ 8. «ՇԻԿԱՀՈՂ» ԱՐԳԵԼՈՑԻ, «ԶԱՆԳԵԶՈՒՐ», «ԽՈՒՍՏՈՒՓ» և «ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ» ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ 2014 - 2018թթ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

8.1.«Շիկահող» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակ

Սույն աղյուսակում տրված է պաշտոնների անվանումը ըստ հաստիքացուցակի, ինչպես նաև հաստիքային միավորների թիվը 2014 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ: «Շիկահող» ՊՈԱԿ-ում նախատեսվում է ընդամենը 85 հաստիք:

Աղյուսակ 21

N/N	Պաշտոնների անվանումը ըստ հաստիքացուցակի	Հաստիքային միավորների թիվը 2014 թվականի հունվարի 1-ի
1	2	3
1	Տնօրեն	1
2	Գլխավոր հաշվապահ	1
3	Հաշվապահ	1
4	Գործավար	1
5	Տնտեսագետ	1
6	Ինժեներ մեխանիկ	1
7	Տնտեսվար-պահեստապետ	1
8	Վարորդ	3
9	Հավաքարար	2
10	Պահակ	3
11	Տնօրենի տեղակալ գիտության գծով-գիտական բաժնի պետ	1
12	Առաջատար մասնագետ-բուսաբան	1
13	Առաջատար մասնագետ-կենդանաբան	1

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

14	Առաջատար մասնագետ-լանդշաֆտագետ	1
15	Այցելուների սպասարկման բաժին	1
16	Ուղեկցող	3
17	Տնտեսուհի-այցելության կենտրոնի	1
18	Տնօրենի տեղակալ պահպանության գծով-պահպանության բաժնի պետ	1
19	Առաջատար մասնագետ-անտառագետ	1
20	Առաջատար մասնագետ-պահպանության ինժեներ	1
21	Տեսուչ բուսական և կենդանական աշխարհի պահպանության գծով	2
22	Շիկահողի տեղամասի պետ	1
23	Շիկահողի տեղամասային տեսուչ	5
24	Մթնածորի տեղամասի պետ	1
25	Մթնածորի տեղամասային տեսուչ	5
26	«Մոսու պուրակ» արգելավայրի պետ	1
27	«Մոսու պուրակ» արգելավայրի տեսուչ	2
28	«Մոսու պուրակ» արգելավայրի բանվոր	2
29	«Խուստուփ» արգելավայրի պետ	1
30	«Խուստուփ» արգելավայրի Քաջարանի տեղամասի պետ	1
31	«Խուստուփ» արգելավայրի Քաջարանի տեղամասի տեսուչ պահպանության/որսահսկողական	3
32	«Խուստուփ» արգելավայրի Գեղի տեղամասի պետ	1

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

33	«Խուստուփ» արգելավայրի Գեղի տեղամասի տեսուչ պահպանության/որսահսկողական	3
34	«Զանգեզուր» արգելավայրի պետ	1
35	Որսահսկողական խմբի պետ	1
36	Տեսուչ որսահսկողական	4
37	Գեղիի տեղամասի պետ	1
38	Գեղիի տեղամասի տեսուչ պահպանության	5
39	Քաջարանի տեղամասի պետ	1
40	Քաջարանի տեղամասի տեսուչ պահպանության	5
41	Տաթև տեղամասի պետ	1
42	Տաթև տեղամասի տեսուչ պահպանության	4
43	Միսիանի տեղամասի պետ	1
44	Միսիանի տեղամասի տեսուչ պահպանության	4
45	Բանվոր-հակահրդեհային	2
	Ընդամենը	85

8.2. «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի գործուղման ծախսերի հաշվարկ

Սույն աղյուսակում տրված է 2013 թ. և 2014 թ. համար նախատեսված գործողումների տևողությունը, մեկնողների թիվը, գործուղման վայրը, համապատասխան ծախսերը և ծախսերի տարբերությունը:

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

հազ. դրամ																
N/N	Գործուղման վայրեր	2013 թ.							2014 թ.							Ծախսերի տարբերությունը
		Գործուղման տևողությունը	Գործուղման մեկնողների թիվը	Օրապահիկ	Գիշերավարձ		Ճանապարհաձև 1 անձի համար մեկ ուղղությամբ	Ընդամենը ծախսեր	Գործուղման տևողությունը	Գործուղման մեկնողների թիվը	Օրապահիկ	Գիշերավարձ		Ճանապարհաձև 1 անձի համար մեկ ուղղությամբ	Ընդամենը ծախսեր	
					Վճարը 1 օրվա համար	Ընդամենը						Վճարը 1 օրվա համար	Ընդամենը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1	Երևան	4	15	120.0	5.0	225.0	3.5	450.0	4	15	120.0	5.0	225.0	3.5	450.0	0.0
2	Երևան	3	9	54.0	5.0	90.0	3.5	207.0	3	9	54.0	5.0	90.0	3.5	207.0	0.0
3	Երևան	4	4	32.0	5.0	60.0	3.5	120.0	4	4	32.0	5.0	60.0	3.5	120.0	0.0
4	Երևան			0.0		0.0		0.0	3	1	6.0	5.0	10.0	3.5	23.0	23.0
5	Երևան			0.0		0.0		0.0	3	1	6.0	5.0	10.0	3.5	23.0	23.0
	Ընդամենը		28	206.0		375.0	10.5	777.0			218.0		395.0	17.5	823.0	46.0

8.3. «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի վարչական շենքերի և շինությունների՝ 2014 թվականի ջեռուցման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկ

Սույն աղյուսակում տրված են «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի վարչական շենքի և այլ գործող շինությունների, այցելուների կենտրոնի, «Զանգեզուր» արգելավայրի երկու տեղամասի համար պահպանության կորդոնների, «Խուստուփ» արգելավայրի երկու տեղամասի համար պահպանության կորդոնների՝ 2014 թվականի ջեռուցման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի ծախսերն ըստ շենքի տեսակի, ծավալի, զբաղեցրած տարածքի, ջերմային էներգիայի տարեկան ծախսի նորմի: Ջեռուցման համար էլեկտրաէներգիայի ընդհանուր ծախսը կկազմի 1267.7 հազար դրամ:

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

Ն/Ն	Բնակավայրը	Շենքի տեսակը (քար / պանելային, միաձույլ)	Շենքի ծավալը (խոր/մետր) հաշվարկված արտաքին չափերով	այդ թվում՝ գբաղեցրած տարածքի ծավալը (խոր. մետր)	Ջերմային էներգիայի տարեկան ծախսի նորմը կվտ.ժ/ խոր.մետր	Ընդամենը տարեկան ծախսի նորմը (կվտ.ժ)	Ընդամենը ջեռուցման համար էներգիայի ծախս (հազ. դրամ)
1	2	3	4	5	6	7	8
1	Վարչական շենք և այլ գործող շինություններ	քար	2030	1130	31.3	35369.0	1061.1
2	«Շիկահող» ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոն	քար	200	100	31.3	3130.0	93.9
3	Պահպանության կորդոններ «Զանգեզուր» արգելավայրի 2 տեղամասի համար	փայտ	120	60	31.3	1878.0	56.3
4	Պահպանության կորդոններ «Խուստուփ» արգելավայրի 2 տեղամասի համար	փայտ	120	60	31.3	1878.0	56.3
	Ընդամենը	x	x	x	x	42255.0	1267.7

8.4.«Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի 2014 թ.-ի էլեկտրաէներգիայի ծախսերի /բացառությամբ ջեռուցման/ հաշվարկ

Սույն աղյուսակում տրված են էլեկտրաէներգիայի ծախսերը առանց ջեռուցման ծախսերի: Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսը 2014 թ.-ին կկազմի 876.5 հազար դրամ:

Աղյուսակ 24

		Համակարգիչների քանակը (հատ)	Հզորությունը	Շահագործման ժամերի տարեկան քանակը	Շենքերի և շինությունների մակերեսը (քառ/մետր)	Տարեկան ծախսի նորմը (կվտ.ժ)	Ընդամենը տարեկան ծախսի նորմը (կվտ.ժ)	Ընդամենը էլեկտրաէներգիայի ծախս (հազ. դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Լուսավորության և կենցաղային սարքերի ծախսի, օդի լավորակման դեպքում՝ շենքերի և շինությունների 1քառ/մետր մակերեսի համար	x	x	x		29.32	0.0	0.0
2	Լուսավորության և կենցաղային սարքերի ծախսի, առանց օդի լավորակման դեպքում՝ շենքերի և շինությունների 1 քառ/մետր մակերեսի համար (գործող շինությունների համար)	x	x	x	682.7	21.4	14609.8	438.3
	Շիկահող ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոն	x	x	x	100	21.4	2140.0	64.2
	Պահպանության կորդոններ «Զանգեզուր» արգելավայրի 2	x	x	x	60	21.4	1284.0	38.5

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

	տեղամսի համար							
	Պահպանության կորդոններ «Խուստուփ» արգելավայրի 2 տեղամսի համար	x	x	x	60	21.4	1284.0	38.5
3	Համակարգիչների՝ 1 հատի համար, որը ներառում է տպիչ սարքերի և այլ կազմտեխնիկայի ծախսը, 8-ժամյա աշխատանքային օրվա համար (գործող)	3	x	x	x	1100	3300.0	99.0
	Շիկահող ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոն	2	x	x	x	1100	2200.0	66.0
	Պահպանության կորդոններ «Զանգեզուր» արգելավայրի 2 տեղամսի համար	2	x	x	x	1100	2200.0	66.0
	Պահպանության կորդոններ «Խուստուփ» արգելավայրի 2 տեղամսի համար	2	x	x	x	1100	2200.0	66.0
4	Այլ հատուկ սարքեր /վերելակներ, ներքին հեռախոսակայաններ, արտաքին լուսավորություն և այլն/		0.0	0.0	x	x	0.0	0.0
	այդ թվում՝							0.0
4.1		x			x	x	0.0	0.0

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

4.2		x			x	x	0.0	0.0
4.3		x			x	x	0.0	0.0
4.4		x			x	x	0.0	0.0
	Ընդամենը		x	x	x	x	29217.8	876.5

8.5.Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ - ի ջրօգտագործման նորմայի հաշվարկ

Մույն աղյուսակում տրված է «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի հաստիքային յուրաքանչյուր միավորի համար սահմանված ջրօգտագործման նորման՝ օրական, ամսական և տարեկան կտրվածքով, ինչպես նաև տարեկան նորման խմ-րով, և ջրմուղ-կոյուղուց օգտվելու սակագինը: Ջրմուղ-կոյուղուց օգտվելու վարձի վճարման ընդհանուր ծախսը 2014 թվականի համար կկազմի 79. 7 հազար դրամ:

Աղյուսակ 25

Կազմակերպություն	Աշխատողների թվաքանակը տարվա հաշվարկով /մարդ/	Հաստիքային յուրաքանչյուր միավորի համար սահմանված ջրօգտագործման նորման /լիտր/			Տարեկան նորման խմ-րով	Տարեկան ծավալը հաստիքային բոլոր միավորների համար /խմ/	Ջրմուղ-կոյուղուց օգտվելու սակագինը /դրամ/	Ջրմուղ-կոյուղուց օգտվելու վարձի վճարման ընդհանուր ծախսը 2014 թվականի համար /հազ.դրամ/
		Օրական*	ամսական	տարեկան				
«Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ	85	30	651	7812	7.812	664.0	120.00	79.7

8.6. «Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի 2014 թվականի կապի ծառայությունների վճարների հաշվարկ

Մույն աղյուսակում տրվում է կապի ծառայությունների վճարների հաշվարկը ըստ բաժանորդային վարձի, հեռախոսային խոսակցությունների, փոստային ծառայությունների և հատուկ հեռախոսակապի հաստիքի/ների կամ ստորաբաժանման համար: Կապի ծառայությունների ընդհանուր վճարը տարեկան կկազմի 1193797.6 դրամ առանց ԱԱՀ և 1432557.1 ներառյալ ԱԱՀ:

Աղյուսակ 26

h/h	Հաստիքը կամ ստորաբաժանումը		Բաժանորդային վարձ														Հեռախոսային խոսակցություններ				Փոստային կապի ծառայություններ	Հատուկ հեռախոսակապ	Ընդամենը կապի ծառայությունների վճարները (տարեկան)
			Փոքր ունակությամբ (PABX) հեռախոսակապայաններ չշահագործող մարմինների սովորական հեռախոսի բաժանորդային վարձ (տարեկան)		Փոքր ունակությամբ (PABX) հեռախոսակապայաններ շահագործող մարմինների սովորական հեռախոսի բաժանորդային վարձ (տարեկան)		Ընդամենը սովորական հեռախոսի բաժանորդային վարձ (տարեկան)	Տեղական ելից հեռախոսային խոսակցություններ					միջքաղաքային և դեպի բջջային ցանց ելից հեռախոսային խոսակցություններ, այդ թվում՝ ֆաքսի միջքաղաքային հաղորդագրություններ	միջքաղաքային ելից հեռախոսային խոսակցություններ, այդ թվում՝ ֆաքսի միջքաղաքային հաղորդագրություններ	Ընդամենը հեռախոսային խոսակցությունների համար սահմանված վճար	Հեռախոսային խոսակցությունների տարեկան սահմանաչափ							
			քանակը	(դրամ)	քանակը	(ս.6 x գինը x12) դրամ		(դրամ)	(րոպե)	դրամ	դրամ	(դրամ)					(դրամ)	(դրամ)	(դրամ)	(դրամ)			
1	2	3	4	5	6	7	8	9				10	11	12	13	14	15	16	17				
	Մինչև 10 հաստիքային միավոր վարչական ապարատ ունենալու դեպքում	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	50000						

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

	10-20 հաստիքային միավոր վարչական ապարատ ունենալու դեպքում																		
	10-20 հաստիքային միավոր վարչական ապարատ ունենալու դեպքում	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	100000		100000
	20 հաստիքային միավորից ավելի վարչական ապարատ ունենալու դեպքում	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	200000		
	Ղեկավար	1		60000.0	3		60000.0	3000	10500	5170.8	15670.8	0.0	8000.0	0.0	23670.8	284049.6	x	0.0	344049.6
	Ղեկավարի տեղակալ	2		0.0			0.0	1500	0	5170.8	5170.8	0.0	4000.0	0.0	9170.8	220099.2	x	0.0	220099.2
	Կազմակերպության վարչական ապարատի ինքնուրույն ստորաբաժանումներ և տարածքային ստորաբաժանումներ	3		60000	3		180000.0	2250	4875	5170.8	10045.8	0	3000	0	13045.8	469648.8	x	0	529648.8
	Տեսչական և հսկողական գործառնություններ իրականացնող անձնակազմի կողմից օգտագործվող կապի հատուկ միջոց		x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	
	Կապի այլ ծառայություններ /թվարկել և ներկայացնել	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	0.0

«Շիկահող» արգելոց ՊՈԱԿ-ի կառավարման պլան

	պայմանագրերը/																		
	ինտերնետ կապ, հեռախոսակապ ինտերնետի համար	Ըստ կնք ված պայ ման ագր երի	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x				
	ռադիո կամ այլ կապի անձնական օգտագործման հատուկ միջոց/րոպե/	1300 րոպ ե	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x				
		x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	
		x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	
	Ընդամենը առանց ԱԱՀ	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	1193 797.6
	Ընդամենը՝ ներառյալ ԱԱՀ	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	1432 557.1

8.7.«Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ-ի տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերի հաշվարկ

Սույն աղյուսակում տրված է տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերի հաշվարկը ըստ բենզինի, ավտոգազի, շարժիչի յուղի, արգելակման հեղուկի, անտիֆրիզի համար նախատեսված ծախսերի: Ընդհանուր ծախսը կկազմի 9240.2 հազար դրամ:

Աղյուսակ 27

N / N	Տրանսպորտի անվանումը	Պետ համարանիշը	Տարեկան վազըը կմ	Բենզին				Ավտոգազ	Շարժիչի յուղ				Արգելակման հեղուկ			Անտիֆրիզ			ԸՆԴՀԱՄԵՆԸ /հազ.դրամ/
				լ / 100կմ	քանակը /լ/	միավորի գինը (դրամ)	գումարը (հազ.դրամ)		գումարը (հազ.դրամ)	100լ բենզինի քանակը	միավորի գինը (դրամ)	գումարը (հազ.դրամ)	լ / տարի	միավորի գինը (դրամ)	գումարը (հազ.դրամ)	լ / տարի	միավորի գինը (դրամ)	գումարը (հազ.դրամ)	
1	ՌԱԱ - 315142	971ՍԼ51	6000	17	1020.0	420	428.4		3.5	126	500	63	6	1665	10	10	600	6	507.4
	ՌԱԱ - 315142	971 ՍԼ51	9000					450.0											450.0
2	ՌԱԱ - 315143	280SU51	14400	17	2448.0	420	1028.2		3.5	126	500	63	6	1665	10	10	600	6	1107.2
3	Նիսան-պատրուլ	664 SU51	10000	13	1300.0	420	546.0		3.5	126	500	63	6	1665	10	10	600	6	625.0
